891.99
प-99

digitised by A.R.A.R.@

XVI, 1 4/0

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

Վ Ր Ձ Ի Ն

ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ

Дозволено цензурою. Тифлисъ, 2 декабря 1903 года.

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան Վրաց Հր. Ընկ. || Типог. Груз. Изд. Т-во.
1904

digitised by A.R.A.R.@

12 SEP 2013

Дозволено цензурою. Тифлисъ, 2 декабря 1903 года.

digitised by A.R.A.R.@

ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ

LXXXIII

(17 *մարտի* 1902 *թ.*, *«Մշակ»* № 59)

Ես գնացել էի երկու օրով Բագու։

Վերջին անգամ, ինչպէս յիշում են իմ ընթերցողները, ես այցելել էի Բագուն նաւթային ահռւրդների ժամանակ։ Ես նկարագրել էի այն ժամանակ իմ տպաւորութիւնները և ներկայացրել իմ ընթերցողներին այն տենդային դրութիւնը, որի մէջ գտնվում էին բագուցիները։

Իսկ այժմ։

Այն ժամանակ և այժմ՝ մեծ տարբերութիւն կայ նրանց մէջ։

Նաւթը, որ այն ժամանակ օրհնանքների և սրբազան պաշտամունքի առարկայ էր, այժմ անէծքի և հայհոյանքի է ենթարկվում ամեն մի վայրկեան։

Նաւթի շաղրվանը, որ այն ժամանակ հիացմունքի և ոգևորութեան ներշնչումն էր առաջ բերում, այժմ սարսափի և յուսահատութեան հառաչանքներ է ծնեցնում։

—Մեր Բագուն կամաց-կամաց «Պղնձէ քաղաքն» է դառնում, ասաց ինձ մի հին բագուեցի, Բագուն կամաց-կամաց մարում է ու անշարժանում։

—Բայց նորից կը վերակենդանանայ մի քանի ժամանակից յետոյ, յուսադրեցի ես։

—Այդ երբ կը լինի՝ չը գիտեմ, շարունակեց բագուեցին, բայց հիմի շատ սովել ու թմրել է։ Սև քաղաքի գործարանների մեծ մասը կանգ է առել, Բիբի-Հէյբաթի նոր հանքերումգործ չը կայ, Բալախանիում ամեն բան մէջումէջ է դարձել։

—Ինչպէս թէ մ է ջ ու մ է ջ, հետաքրքրվեցի ես։

—Մէջումէջ է էլի. այսօր կայ, վաղը չը կայ. միւս օրը էլի կայ կամ չը կայ։ Մեր քաղաքումն էլ ամեն մի գործ, ամեն մի առևտուր, ամեն մի աշխատանք, եթէ բոլորովին չէ խափանվել, մէջումէջ է դարձել։

Մէջումէջ բառը ճիշդ էր բնորոշում Բագուի գործերի մի նշանաւոր մասը։ Մարդիկ յոյսի ու յուսահատութեան մէջ մի քայլ առաջ են անում, մի քայլ յետ, իրանք էլ չը գիտենալով իրանց արածը։

Տեսնվեցի շատերի հետ։ Գանգատներ ու հառաչանքներ լսեցի։ Իմացայ շատ գաղտնիքներ, որոնք ծածկված էին մինչև այժմ ընդհանուրի ուշադրութիւնից...

—

Շատերի հետ տեսնվելուց և խօսակցելուց յետոյ ես մի խառն գաղափար կազմեցի ներկայ բագուեցու մասին։

Բագուեցին այժմ ընդհանրապէս այն տպաւորութիւնն է գործում, ինչ որ պատռված մի աշակերտ, վայր գլորված մի ըմբիշ «փահլևան», ապտակ կերած մի խիզախ, զէնքն ու

digitised by A.R.A.R.@

ձին կորցրած մի ասպատակող, թղթախաղից փետրած մի հիւր ընթրիքի սեղանի կողքին։

—Վնասւել են ամեն տեսակ ռիսկ անող մարդիկ, բայց նրանց հետ վնասւել են և շատ անմեղներ, ասում էր ինձ մասնաւոր դասերով ապրող մի ուսուցիչ։

—Նաւթի հանքը և գործարանը, ասաց մի գործակատար, կանգ են առել, նրանց հետ միասին կանգ են առել և երկաթավաճառի գործը և հորեր փորողի պարապմունքը և բանւորի աշխատանքը։

—Ես անցեալ տարի լաւ դասեր ունէի, միջամտեց ուսուցիչը, իսկ այս տարի ստիպւած եմ համաձայնել ամեն տեսակ առաջարկութիւնների։

Այդպէս և ուրիշները։

Խօսակցութիւնների մէջ մի բան աչքի է ընկնում, որ մարդիկ ուշադիր են դարձել և բաւական պարզախօս։ Այն մարդը, որ անցեալ տարի խորհրդաւոր կերպով միայն ակնարկներ անել գիտէր, այժմ ձեզ հետ խօսում է, ձեր առաջ իր սիրտը բաց է անում, իր դարդերն է պատմում։ Նա, որ երէկ ձեզ չէր կարողանում ճանաչել, այսօր խոնարհ և հեզ հայեացքով ինքն է ձեզ մօտենում և ողջունում։

—Այժմ, ասում էր ինձ մի երիտասարդ, Բագւում կարելի է և մի որ և է հասարակական ու մտաւոր խնդիրների մասին էլ խօսք բանալ մէկի հետ։ Առաջ ո՞ւմ կարելի էր մօտենալ։ Ամեն մարդ մի անառիկ բերդ և մի անընկճելի պետութիւն էր։ Իսկ այժմ նա իրան զգում է շատերից մէկը և վախենում է, որ այդ շարքիցն ու պատւիցն էլ չընկնի։

—Ի՞նչ դրութեան մէջն է ձեր հետազօտու-

digitised by A.R.A.R.@

թիւնը նաւթացաւի մասին, հարցրի ես իմ բարեկամ բժշկից, որի մասին անկասկած յիշում են իմ ընթերցողները։ Այլ ես, երևի, նաւթացաւ չը կայ այստեղ ձեր հիւանդների մէջ։

—Ընդհակառակը, պատասխանեց բժիշկը, շատ բան, ինչ որ տեսնում էք, նաւթացաւի կերպարանափոխութիւնների շրջաններն է ներկայացնում։ Այս իբր թէ հանգստացած և խեղճացած մարդիկը վաղը կարող են և սաստիկ տենդի բռնվել ու ջղային ցնցումների ենթարկվել, ինչպէս առաջները։ Հէնց որ բորսայում մի յուզող լուր է ստացվում, հէնց որ արտասահմանեան մի ընկերութիւն սկսում է բանակցութիւն անել նաւթահանքեր գնելու համար, հէնց որ նաւթի գնի բարձրանալու որ և է յոյս է սկսում ծագել մի որ և է տեղից, իսկոյն մարդիկ փոխվում են, նրանց աչքերը բոցավառվում են, երակները սկսում են ուժգին զարկել, և ահա՝ նաւթացաւի նշանները հանդէս են գալիս իրանց բոլոր բնորոշ առանձնայատկութիւններով։

— Երևի, առարկեցի ես, մարդիկ այսուհետև աւելի զգոյշ և լուրջ կը լինեն. Նրա՛նք փորձվեցին, պատժվեցին, չար ու բարիներ շատ տեսան։

—Ի հարկէ, յայտնեց բժիշկը, մի փոքր կը փոխվի ցաւի արտայայտութիւնը. բայց նրա հիմնական բնաւորութիւնը մնացել է և կը մնայ նոյնը. գոնէ մերձաւոր ապագայում։

—

Ես ասացի, որ Բագւում լսեցի շատ գաղտնիքներ։

Թէ անցած և թէ ներկայումս գոյութիւն ունեցող գործերի և գործողների մասին իմացայ այնպիսի բաներ, որ նրանցից կարելի էր «հա-

digitised by A.R.A.R.@

վար ու մէկ գիշերների» հեքիաթների մի նոր հատոր կազմել։

Պատմեմ արդեօք այդ գաղտնիքները։

Դուք կը սարսափէք, տեղեկանալով, թէ ինչ գործեր են կատարվել նաւթային շրջանում ոսկիներ յափշտակելու նպատակով։

Ոչ դիրքը, ոչ կրթութիւնը, ոչ կրօնը, ոչ ազգութիւնը և ոչ մի բան արգելք չեն եղել դժոխային պարեր պարելու։

Բանը հասել է այնտեղ, որ մարդիկ այլ ևս չեն քաշվում և մի քանիսը նոյն իսկ բացարձակ միմեանց անուանում են գող, սրիկայ, խարդախ…

Ոչ, ես չեմ պատմի։ Նրանք շատ շատ են, մէկը միւսից բնորոշ և զազրելի։

—Միթէ բացառութիւններ չը կան, կը հարցնէք դուք։

Անկասկած կան, կը պատասխանեմ ես։

Բայց դա ինչ մխիթարութիւն է։

—

Բացառութիւններ կան և համակրական ծրագիրներ են մշակվում խելացի գործունէութեան համար։

Սակայն նոր ջանքերը առ այժմ նախնական փորձերի շրջանումն են գտնվում։

Ի՞նչ կը դուրս գայ նրանցից։

Ցանկանք աջողութիւն և սպասենք։

—

Մի քանի տեղ հիւր եղայ և հետաքրքրական խօսակցութիւն ունեցայ մեր երիտասարդների հետ։

Վերջին անգամ մենք տեսնվեցինք մի ճաշկերոյթում, որի մասին ես մի քանի խօսք կասեմ։

digitised by A.R.A.R.@

Ճաշկերույթը կազմվեց թէև յանպատրաստից, բայց շատ արագ և աջող։ Երիտասարդները հրաւիրվեցին տէլէֆօնի միջոցով։

Ճաշկերույթին ժողովված էր մինչև քսանհինգ հոգի։

Խօսում էինք օրվայ հարցերից, Բագուի չար ու բարից։

Ես պատմում էի Թիֆլիսի մասին, գրական հասարակական մի քանի երևույթների մասին։

Երիտասարդներից մէկը առանձին ոգևորութեամբ խօսում էր Շամախու երկրաշարժի առաջ բերած հասարակական շարժման մասին։

—Մեր այս ծանր օրերում, ասաց նա, Բագուն ցոյց տուեց բարոյական և մարդասիրական մեծ դիւրազգացութիւն։ Ամեն մարդ աշխատում էր մի բաժին հանել երկրաշարժից վնասվածների օգտին. Նուէրներ ժողովող կոմիտէտը անկարող էր լինում նպաստները ցուցակագրել և ընդունել։

—Շատերը պատրաստականութիւն յայտնեցին, նկատեց մի ուրիշը, գնալ երկրաշարժի շրջանը և այնտեղ գործել տառապեալների համար։

—Թուրքերի մէջ, վրա բերեց առաջինը, մենք նկատեցինք մինչև այժմ չը տեսնված մի բան. Նրանք ևս սկսեցին ինտելիգէնտներ հանդէս բերել, մամուլի միջոցով գործել, հասարակական գործերի ձեռնարկել։

—Այդ այդպէս է, խօսքը կտրեց երրորդը, բայց նրանք ցոյց տուին և բացասական կողմեր, նրանք դեռ չեն կարողանում նեղ կրօնական համակրութիւնների շրջանից դուրս գալ աւելի լայն ասպարէզ։

digitised by A.R.A.R.@

—Այդ էլ ժամանակով, նկատեց առաջինը, կը դրատվի։

—Գուցէ, առարկեց երրորդը. բայց մենք, այսօրվայ գործողներս, ցանկանում ենք, որ կարողանայինք մեր հարեան Թուրք ինտելիգէնտների հետ միասին գործել, ղեկավարվելով անաչառութեան և լայն մարդասիրութեան գաղափարներով։

Վէճը չարունակվեց։

Մի բան յամենայն դէպս պարզ էր, որ Թուրք ինտելիգէնտները և Թուրք տարրը այլ ևս մըտադիր չէին առաջվայ նման քաշված կեանք վարել և ձգտում են հրապարակի վրա գործել և հասարակական գործերում որոշ տեղ և դիրք բռնել։

—

Ճաշկերոյթի ժամանակ խօսք բացվեց այն մերկացումների և յարձակումների մասին, որոնք երևում են մամուլի մէջ Բագուի երիտասարդների վերաբերութեամբ։

Մի քանիսը լաւ և նպատակայարմար էին համարում այդ երևոյթը, միւսները ոչ։

Մանաւանդ շատ դէմ էր այդ յարձակումներին մի նախկին ազատամիտ ուսանող, Կանեփեան, որ իր ժամանակ սաստիկ պաշտպան էր ամեն տեսակ մերկացումների և քննադատութեան։

Կանեփեանը զարմացրեց միւսներին իր բռնած դիրքով։ Նրանից այդ բանը չէին սպասում։

—Կամ պէտք է գնալ ժողովրդի մէջ և այնտեղ գործել անձնուէր կերպով և կամ պէտք է լռել, բացականչեց նա։ Ես այդպէս եմ հասկանում բանը։ Դուք մտէք իմ կաշուի մէջ և

digitised by A.R.A.R.@

գործեցէք և, եթէ կարող էք, ձեր քարոզած լաւ բաները իրագործեցէք։ Ի՞նչ օգուտ ձեր մերկացումներից։

—Երբ որ, պարոններ, ասացի ես, մենք մերկացնում էինք մեր հասարակական հին ախտերը, դուք մեզ ողջունում էիք, երբ մենք մտրակում էինք մեր գիւղական հարստահարողներին, մեր չարչի վաճառականներին, մեր տգէտ հոգևորականներին, դուք մեզ ծափահարում էիք և շնորհաւորում։ Իսկ երբ մամուլը սկսեց և երիտասարդներիդ քննադատութեան ենթարկել, այն ժամանակ փոխեցիք ձեր լեզուն։

—Մի ընդհանրացրէք, խօսքս կտրեց մէկը։

—Չեմ ընդհանրացնում, պատասխանեցի ես, իմ ասածը պէտք է հասկանալ «ըստ պատկանելոյն»։ Պարոններ, ձեր Բագուն ծծել է իր մէջ մեր Անդրկովկասի բոլոր անկիւններից երիտասարդներին։ Հայոց նախկին դպրոցների ուսուցիչները, զանազան պաշտօնեաներ, իրաւաբաններ, բժիշկներ, և առհասարակ ամեն տեսակ անձինք, որոնք որ և է պատճառով չեն ցանկացել մնալ իրանց տեղերում, վազել, եկել են Բագու։ Ես այլ ևս չեմ խօսում ինժէնէրների մասին, որոնց համար Բագուն աւետեաց երկիր է ըստ մասնագիտութեան։ Բագուի մէջ են և մեր գիւղական ազգաբնակութեան աչքաբաց ներկայացուցիչները, եռանդոտ, ձեռնարկու ոգի ունեցող գիւղացիները։

—Այո, մեր Բագուն մի սպունգ է, նկատեց մէկը, որ ծծել է իր մէջ երկրի հիւթերի մի նշանաւոր մասը։

—Դուք այդ բոլորը, շարունակեցի ես, ժողովել, կենտրոնացրել էք ձեր քաղաքում և

digitised by A.R.A.R.@

չէք կամենում, որ մենք նոյն իսկ մերկացնենք իրերի դրութիւնը և բողոքենք անպատեհութիւնների դէմ։ Մեր գաւառը զրկուել է իր շատ ոյժերից և դուք ցանկանում էք, որ մենք ձեզ վրա ոչ մի պարտաւորութիւն չը դնենք, ձեզնից պահանջներ չանենք, ձեր արարքները չը քննադատենք և ձեզնից չը պահանջենք, որ դուք յիշէք ձեր մայրենի երկրի կարիքները, ձեր գիւղերը և հայրենի օջախը։

Այնուհետև մենք խօսեցինք մամուլի և գրական խօսքի նշանակութեան մասին։ Կանեփեանը մտածմունքի մէջ ընկաւ։ Ուրիշները տաք տաք խօսում էին։

—Ես յետ եմ վերցնում իմ խօսքերը, բացականչեց յանկարծ Կանեփեանը։ Իմ մէջ աննըկատելի կերպով խօսում էր ինքնապաշտպանութեան, ինքնարդարացման զգացմունքը։ Չէ, պէտք է անկեղծ լինել։ Ձեր բողոքը իբրև սուր խոցոտում է։ Չէ, բողոքով կարելի է փոքր ի շատէ մարդկանց սթափեցնել։ Կարելի է թըմրած խիղճը արթնացնել. քննադատեցէք և մերկացրէք եղածը, յորդորներ կարդացէք մարդկանց, հրաւիրելով գործի և աջակցութեան։ Եթէ այդ բողոքները և յորդորները չը լինեն, կարող է ամեն տեղ տիրել մեռելութիւն։

Կանեփեանի խօսքերը տպաւորութիւն գործեցին։ Նրա մէջ զարթնեց հին ուսանողը և նա երկար ու երկար չարունակեց՝ աւելի ու աւելի ոգեւորուելով։

Շուտով ես թողի Բագուն։

---

digitised by A.R.A.R.@

LXXXIV

(24 *մարտի* 1902 *թ.*, *«Մշակ»* № 65)

Երկաթուղու վագոնում նստած՝ ես երկար ժամանակ գտնվում էի Բագուի տպաւորութիւնների ազդեցութեան տակ։

Ծնչված, սնանկացած Բագուն ինձ վրա աւելի ուժեղ տպաւորութիւն գործեց, քան անցեալ տարվայ փարթամ և յաղթական Բագուն։

Նաւթային աշխարհը գերել է մարդկանց և բռնել նրանց իր վրա։

—Ո՞ւր գնանք, հարցնում էին ինձ երիտասարդները։ Կամայ ակամայ պէտք է մնանք այստեղ։

—Ո՞ւր գնան։

Այդ հարցը, ճիշդ է, տալիս են միմեանց երիտասարդները, բայց չեն սիրում նրան մանրամասն քննել և նրանով լուրջ զբաղվել։

—Ո՞ւր են գնացել ձեր բանւորները, հարցրի ես նրանցից։

—Իրանց գիւղերը, պատասխանեցին ինձ։ Բանւորը քիչ պահանջ ունի և ամեն տեղ կարող է իր ձեռքի աշխատանքով ապրել, իսկ մենք...

—Իսկ դո՞ւք, կրկնեցի ես։

—Մենք ընդարձակ ասպարէզ չունենք ամեն տեղ, առարկեցին նրանք։

—

digitised by A.R.A.R.@

Ասպարէզ չունենք։

Մի՞թէ ճիշդ է։

Մի՞թէ աշխատող ինտելիգէնտ մարդը մեր երկրում համակրելի, խելացի գործ չի գտնի իր համար։

—Մենք բժիշկ չունենք, աղաղակում են մեր երկրի բոլոր անկիւններից։

—Մենք գիւղատնտեսների աջակցութեան և խորհրդին ենք կարօտ, գանգատւում են գիւղերից։

—Մենք պաշտպան-իրաւաբաններ չունենք, որոնք մեզ մատչելի լինէին և մեզ օգնէին, գանգատւում են գաւառներից։

—Մենք մարդիկ չունենք տեղական տանուտէրի, գիւղական դատաւորի, գաւառական քաղաքի մէջ գործող ձայնաւորի և պաշտօնավարների համար, աղաղակում են ամեն տեղից։

—

Նաւթային աշխարհի տպաւորութիւններից յետոյ ինձ մեծ հաճութիւն պատճառեցին երեք գաւառական ձայներ, որոնք խօսում էին մոռացված գործի և մոռացված աշխարհի մասին։

—Ի՞նչ ձայներ են և ինչ մոռացված աշխարհ, կը հարցնէք դուք։

Ձայներից մէկը Ախալքալաքի գաւառից էր, միւսը Շուշու, իսկ երրորդը Սուրմալուի գաւառից։

Նրանք խօսում էին մեր գիւղական կարիքների մասին։

Ես աչքի առաջ ունեմ այն երեք խոշոր յօդուածները, որոնք վերջին չաբաթվայ ընթացքում տպվեցին «Մշակի» մէջ, այն է—

«Գիւղական ցաւերից»։

«Գիրք և հող» և

digitised by A.R.A.R.@

«Գիւղական լրագրի կարիքը»։

Շօշափված առարկան ընդհանուր է, բայց նա լուսաբանված է բոլորովին տարբեր տեսակէտներով։

Ես կը խօսեմ նրանց մասին։

—

—Ո՞վ պէտք է քաղաքագլուխ լինի Թիֆլիսում առաջիկայ քառամեակին։

—Իսկ ո՞վ Բագւում։

—Իսկ ո՞վ Երեւանում, Գանձակում։

—Իսկ ո՞վ գաւառական քաղաքներում՝ Ալէքսանդրօպօլում, Ախալքալաքում, Ախալցխայում, և ուրիշ քաղաքներում։

Այդ հարցերը հետաքրքրում են շատերին։

Միթէ չը գիտենք, որքան մարդիկ են գլուխ պատռում քաղաքագլուխ, քաղաքային վարչութեան անդամ և պաշտօնավար լինելու։

Ինքնավարութիւն է՝ հանաք բան չէ։

Ասպարէզ կայ գործելու մայրենի քաղաքի համար, նրա բարեկարգութեան նպաստելու, նրա շահերը պաշտպանելու...

Ասպարէզ կայ ձայն ունենալու, գործերի վրա ազդելու, պաշտօններ բաժանելու։

Այդպէս է քաղաքներում։

Սակայն ի ն ք ն ա վ ա ր ո ւ թ ի ւ ն վաղուց գոյութիւն ունի և գիւղերում։

Այո, ինքնավարութիւն։

Եւ այնպիսի ինքնավարութիւն, որտեղ իւրաքանչիւր գիւղացի հաւասար ձայն ունի և կարող է անմիջապէս մասնակցել բոլոր հասարակական ժողովներին, ընտրել իր համար տանուտէր, դատաւոր և ամեն տեսակ գիւղական պաշտօնավարներ։

Որքա՜ն գործ և արդիւնաւէտ գործ կարող էր

digitised by A.R.A.R.@

կատարել գիւղական ինքնավարութիւնը, եթէ գիւղում լինէին բանիմաց, հասկացող մարդիկ։

Ահա այդ հարցն է դնում առաջին յօդուածը մեր առաջ։

Արդարև իւրաքանչիւր գիւղ առանձին և մի քանի գիւղեր միացած՝ մի ընդհանուր հասարակութեան անունով՝ կարող էին իսկապէս կերպարանափոխել մեր գաւառական խուլ անկիւնները։

Ա. գիւղում չը կայ դպրոց։

Բ. գիւղի ճանապարհները վատ են և անկարելի է սայլ բանեցնել։

Գ. գիւղի կամուրջը խախտուել է և չէ կառուցվում։

Դ. գիւղի եկեղեցին նորոգութեան կարօտ է։

Ե. գիւղում ճահիճներ են գոյացել, որոնցից առաջանում են հիւանդութիւններ գիւղում։

Զ. գիւղում ջրի մեծ պակասութիւն կայ, իսկ մերձակայ սարի մօտ կայ ջրառատ աղբիւր, որից կարելի էր ջուր բերել գիւղը։

Է. գիւղում վարակիչ հիւանդութիւն է երևացել, որը տանում է բազմաթիւ զոհեր։

Ը. գիւղում հացի շտեմարանի պակասութիւն կայ։

Եւ այլն և այլն։

Գիւղական ի ն ք ն ա վ ա ր ո ւ թ ի ւ ն ը, գիւղացիների խելացի, համերաշխ և փոխադարձ գործունէութիւնը կարող է հրաշքներ անել, կարող է այդ կարիքները հոգալ, բոլոր ձախորդութիւնների առաջն առնել, կարող է մի շարք հասարակական բարեփոխութիւններ մտցնել գիւղում։

—

Բազուկից շատ բանուորներ վերադարձան ի-
րանց հայրենիքը, իրանց գիւղական տները։

Բազուկի դժբաղդութիւնը սթափեցրեց այն-
տեղ վազող գիւղացիներին։

Սկսեցին այդ գիւղացիները հաշւել, ծանր ու
թեթև անել խոշոր ու մանր մաղել և եկան այն
եզրակացութեան, որ գիւղումն էլ կարելի է
փոքր ի շատէ բաւարար ապրել, եթէ կատա-
րելագործութիւններ մտցնվեն արհեստի մէջ,
եթէ, օրինակ, հողը աւելի լաւ մշակվի, գոր-
ծադրվեն լաւ գութաններ և ուրիշ գործիքներ,
եթէ բուսցնվեն նոր արմտիներ, եթէ աւելի
նուրբ և մաքուր կերպով մշակվեն արդիւնք-
ները։

Ահա այդ հարցն է գնում երկրորդ յօդուածը։

Եւ նա ահա ինչով է վերջացնում իր խօս-
քերը։

«Տուէք գիւղական արդիւնաբերութեան վե-
րաբերեալ հանրամատչելի գրքեր... Հայ գրա-
գէտներ, թարգմանիչներ, հրատարակիչներ, բա-
ւարարութիւն տուէք այդ արդարացի պահան-
ջին»։

Այդ կոչը նա անում է լսելով գիւղացիների
զանգատները և աղերսանքները։

Մենք դրան կաւելացնէինք՝ տուէք գրքեր և
նրանց հետ միասին տուէք գործնական ղեկա-
վարների, որոնք ցոյց տային գիւղացուն գործ-
նական և համոզեցուցիչ կերպով, թէ ինչպէս
կարելի է մտցնել այս կամ այն կատարելագոր-
ծութիւնը, ինչպէս բժշկել այս կամ այն հի-
ւանդութիւնը...

—

—Մեր ձայնը հասցրէք լրագրին։

—Մեր թշուառ կացութեան, մեր զրկանք-

digitised by A.R.A.R.@

ների, մեր տանջանքների, մեր օրվայ ցաւերի մասին յայտնեցէք լրագիր կարդացողներին։

—Մեր կեղեքողների անունները և արարքները հրապարակ հանեցէք։

Ահա այս ձեւով գիւղացիները յաճախ դիմել են երրորդ յօդուածի հեղինակին։

Եւ նա բերում է մի շարք սրտաճմլիկ դէպքեր գիւղական առօրեայ կեանքից։

Գիւղացին իր զրկանքների և թշուառութեան մէջ հաւատում է, որ հրապարակական խօսքը, չարիքի մերկացումը, կարօտեալի պաշտպանութիւնը կարող են դրական հետևանքներ առաջացնել։

1001 / 3997

Կեղեքիչը կը զսպվի, հարստահարողը կը վախենայ պատասխանատուութիւնից։

Կառավարիչը կը սանձահարվի և զրկվածի դատը պաշտպաններ կը գտնէ իր համար։

Գիւղացու մէջ կազմվել է մի այդպիսի հաւատ դէպի հրապարակական խօսքը... Նա զգում է, որ այդտեղ մի կենսական մեծ ույժ կայ...

Գիւղական մասսայի այդ հաւատը դէպի մամուլը և գրականութիւնը մի շատ համակրելի և մխիթարական երևոյթ է։

Դա ժամանակի նորագոյն պատգամներից մէկն է։

Նշանակալից է։

Այդտեղ մի բան սակայն բնորոշ է։

Այն ժամանակ, երբ մեր գիւղացին սկսում է հաւատալ մամուլի կոչման և գնահատում է մամուլի մերկացումները, մեր ինտելիգէնտների և դիպլօմաւորների մի մասը շատ կը ցանկանար ճնշել և խեղդել մամուլի ձայնը։

digitised by A.R.A.R.@

Եւ աշխատում է ամեն ոյժով։
Ի՞նչ կասէք դուք այդ բանին։

—

Վերջացնեմ իմ խօսքը մի փոքրիկ յիշողութիւնով։

Երկու տարի սրանից առաջ ես առիթ ունեցայ այցելել Ախալքալաքի գաւառը երկրաշարժից յետոյ։

Երկրաշարժից վնասված շրջանում կազմակերպված էր օգնութեան գործը։

Գիւղերում բացվել էին ճաշարաններ և կարօտեալներին բաժանվում էր հաց։

Մի յատուկ բժիշկ պտտում էր գիւղերը և բժշկական օգնութիւն էր հասցնում հիւանդներին։

Մի ուրիշ բժիշկ հիւանդանոցում խնամում էր վիրաւորվածներին։

Հետազօտողների մի խումբ ցուցակագրում էր գիւղացիներին և տեղեկութիւններ ժողովում նրանց կարիքների մասին։

Վարչութիւնը ուշի ուշով հետևում էր գիւղի կարիքներին և խնդրում գիւղերի համար մի շարք դիւրութիւններ։

Տեղական կօմիտէտը մի շարք միջոցներ էր մշակում գիւղացիներին սերմացու տալու, նոր ցանքսերի համար, աւելի բարեկարգ և ամուր տներ շինելու վնասված գիւղերում...

Գիւղի և քաղաքի, գիւղական ժողովրդի և ինտելիգէնտ ու վարչական մարդկանց մէջ հաստատվել էր մի համերաշխութիւն, փոխադարձ յարգանքի և համակրութեան մի մխիթարական զգացմունք։

Գիւղացին սկսել էր հաւատալ ինտելիգէն-

digitised by A.R.A.R.@

տին. Ինտելիգէնտը ոգևորված էր գիւղացու համար գործելու գաղափարով։

Այդ ժամանակաւոր փորձը փայլուն կերպով լուսաբանեց, թէ ինչպէս կարելի էր գործել գաւառում։

—

Որքա՜ն գործ կայ կատարելու։

Ի՜նչ մեծ ասպարէզ կայ գործելու։

Ո՜ւր էր, թէ մեր երիտասարդութիւնը խոր կերպով զգար, թէ ինչ մեծ և գրաւիչ կոչում է վերապահված նրա համար մեր ազգաբնակութեան կեանքի մէջ։

digitised by A.R.A.R.@

LXXXV

(30 *մարտի* 1902 *թ.*, *«Մշակ»* № 70)

Այսօր հողին ենք յանձնում մի սիրելի անձնաւորութիւն, մի հազուագիւտ գործողի։

Քրիստափոր Կարա-Մուրզան, իբրև գործող, մի վերին աստիճանի մխիթարական և ուսանելի երևոյթ էր ներկայացնում մեր հասարակութեան մէջ։

Ես ծանօթացայ Նրա հետ 1885 *թուին Նրա գործունէութեան սկզբին, երբ Նա կազմակերպում էր իր առաջին երգեցիկ խմբերը։*

Այնուհետև տարիների ընթացքում ականատես էի և հետևում էի Նրա եռանդուն և անխոնջ գործունէութեան, որ եղաւ այնքան բեղմնաւոր և արդիւնաւոր։

Կարա-Մուրզայի ջանքերով հայկական երգեցողութիւնը որոշ պատկառելի դիրք ստացաւ մեր հասարակական զարգացման տարրերի շարքում։

Դա մեծ ծառայութիւն էր, որի համար մեր հասարակութիւնը Նրան երբէք չի մոռանայ և կը յարգէ մշտապէս Նրա յիշատակը։

—

Ես մի քանի անգամ ներկայ եմ եղել այն դէպքերին, երբ Կարա-Մուրզան երգեցիկ խմբեր էր կազմակերպում։

Գալով մի նոր քաղաք՝ Նա իր դիտաւորու-

digitised by A.R.A.R.@

թիւնը յայտնում էր մի քանի անձանց, հասկացնում էր, որ կարճ միջոցում կարելի էր հանել գործնական հետեւանքի։

—Երևելի ձայներ չունենք, առարկում էին նրանք։

—Այդ մենք կը տեսնենք յետոյ, երբ ձայները կը փորձենք, պատասխանում էր նա։ Շատերը ունենն ձայն, որ միայն մշակված չէ։ Խըմբական երգեցողութեան մէջ իւրաքանչիւր ձայն իր համապատասխան տեղը կը բռնէ։

—Պէտք է փորձել, համաձայնում էին։

—Այո, փորձը միշտ բարենպաստ է եղել, պատասխանում էր Կարա-Մուրզան։ Ուրեմն դէպի գործ. ժողովվենք։

—Ե՞րբ ժողովվենք։

—Հէնց այսօր, պատասխանում էր նա։

—Այսօ՞ր, այդպէս շուտ, երբ ոչ ոքի դեռ չենք տեսել և իմաց չենք տուել, առարկում էին նրանք։

—Այո, այսօր, պնդում էր նա։ Որքան շուտ՝ այնքան լաւ։ Այսօր կը փորձենք առաջին եկողների ձայները, իսկ վաղը միւսներինը։

Մի քանի ժամից յետոյ սկսվում էր ձայների փորձը։

—Դուք առաջին ձայնի համար շատ յարմար էք, դուք երկրորդ, երրորդ, չորրորդ։

Եւ ահա դրվեց նոր երգեցիկ խմբի նախնական հիմքը։

—Փորձենք երգել, ասում էր նա՝ դիմելով գործի։ Առաջին ձայն, երգեցէք՝

«Մեր հայրենիք թշուառ անտէր»։

—Դուք այդպէս էլ կերգէք. իսկ այժմ, երկրորդ ձայն, դուք կերգէք այսպէս...

Երգում էին։

digitised by A.R.A.R.@

Նույնը կատարվում էր երրորդի, չորրորդի հետ առանձին-առանձին։

—Այժմ բոլորդ միասին, կարգադրում էր նա, տալով բոլորին համապատասխան նշաններ և եղանակներ։

—Առաջին փորձը լինում էր անկատար, լի խոշոր թերութիւններով. բայց բոլորը ոգևորված են, որովհետև տեսնում են արդիւնք, տեսնում են գործը իրականացման շաւղի վրա դրած, տեսնում են իրանց ձայները բանի պէտքական։

—Վաղը կը շարունակենք և վերջնականապէս կը կազմակերպվենք, յայտնում էր նա։ Այնուհետև ձեր աշխատանքից է կախված ամենը։

—

Խմբեր կազմելը կատարվում էր մի այնպիսի արագութեամբ, որ զարմանք էր պատճառում բոլորին։

Պատանիներ, հասակաւոր երիտասարդներ, օրիորդներ, տիկիններ գրաւվում էին գործով և գնում էին մասնակցելու։

Մարդիկ ժողովելու և խմբեր կազմելու գաղտնիքը Կարա-Մուրզայի գործունէութեան ամենանշանաւոր յատկութիւններից մէկն էր։ Նրան աջողվում էր միացնել դասակարգեր ու հասակներ և ենթարկել նրանց զարմանալի դիսցիպլինայի։

Նա այնքան արագ կազմում էր խմբեր և տալիս էր համերգներ, որ շատ անգամ իր տեղափոխութիւնների և համերգների մասին հաղորդում էր հեռագրերով։

Կարա-Մուրզան, չը նայելով իր չափազանց բարի ու սիրալիր բնաւորութեանը, մի և նոյն ժամանակ չափազանց լուրջ և պատկառելի մի

digitised by A.R.A.R.@

դէմք էր, որից քաշվում էին շրջապատողները, և որի հետ չէին թոյլ տալիս «ֆամիլիարու-թիւն», որին այնքան սովոր են արևելցիները։ Գիտենալով նրա անսահման բարիութիւնը, նրա մանկական անմեղութիւնը և անկաշառու-թիւնը՝ բոլորը ներում էին նրա արդար ցասումնքների արտայայտութիւնները, որոնք բանկվում էին նրա ջղային և արագ գործու-նէութեան միջոցին։

Գործում էին խմբերը կամ մի քանի շաբաթ կամ մի քանի ամիս, նայած թէ որտեղ որքան ժամանակ կարող էր Կարա-Մուրզան մնալ։

—

Անկասկած, արագ և շտապ կերպով կազ-մված խմբերը չէին կարող կատարեալ համերգ-ներ արգիւնաբերել։ Եւ գաւառական համերգ-ները յաճախ լինում էին պակասաւոր։

Սակայն գաւառի համար նրանք լինում էին բաւարար և առաջ էին բերում մեծ հետա-քրքրութիւն։

Ամեն տեղ զգվում էր բարի սերմ, որ պէտք է ապագայում աճէր և զարգանար։

Ամեն տեղ ժողովրդականանում էր կանոնա-ւոր երգեցողութեան գաղափարը։

Ամեն տեղ հայկական ժողովրդական երգը բարձրացնվում էր պատկառելի դիրքի։

Եւ ահա տասնեօթ տարվայ ընթացքում հայ-կական խմբական երգեցողութիւնը Կարա-Մուր-զայի ղեկավարութեամբ պատուաստվեց յիսու-նից աւելի քաղաքներում և գիւղերում։

Կարա-Մուրզայի երգեցիկ խումբը վերջապէս համդէս եկաւ անցեալ տարի կովկասեան ցու-ցահանդէսում, ուր նա արժանացաւ մեծ հա-մակրութեան, Օգոստափառ Հիւրերի հաւանու-

digitised by A.R.A.R.@

թեան և ցուցահանդէսի գնահատող յանձնաժողովի գովասանքին։

Իր վերջին կօնցերտների հետ միասին Կարա-Մուրզան տուել է մօտ 300 կօնցերտ, որոնցով մեծապէս ժողովրդականացաւ հայ երգեցողութեան գաղափարը մեր երկրի բոլոր մասերում։

—

Նա մշակում էր և ժողովրդականացնում էր երգը․ բայց մի և նոյն ժամանակ նա ինքը երաժիշտ էր, գեղարուեստի մարդ, որ ստեղծագործում էր ինքնուրոյն կերպով։

«Մշակի» մէջ դուք կարդացիք, որ Կարա-Մուրզան մշակել է 320 երգ և հեղինակել է 67 երաժշտական գործեր։

Դրանց թւումն է և նրա հեղինակած «Շուշան» օպերան, որի կտորները մի քանի անգամ երգվել են համերգներում և հաւանութիւն գտել։

Մահից մի քանի ժամանակ առաջ ես հանդիպեցի Կարա-Մուրզային Գօլօվինսկի պրօսպէկտում։

Նա չափազանց գունատ էր, վշտադէմ և մըտախոհ։

Այդպէս նա լինում էր շատ քիչ դէպքերում։

Նա պատմեց, որ բժիշկները գտել են նրա մօտ սրտի հիւանդութիւն և խորհուրդ են տալիս չերգել, այլ միայն ղեկավարել խումբերը։

—Ինձ առաջարկում են, գանգատվեց նա, չանել այն, ինչ որ իմ էութիւնն է եղել մինչև այժմ։ Ծանր է։

Ինձ համար էլ շատ ծանր էր լսել այդ խօսքերը․

Ես աշխատեցի հանգստացնել և խօսեցի նրա

digitised by A.R.A.R.@

աշխատութիւնների հրատարակութիւնների մասին։

Նա ոգևորվեց, և նրա մեղամաղձոտ հայեացքը ստացաւ իր նախկին փայլը և ժպիտը։

—Նախնական պատրաստութիւնները արված են, յայտնեց նա. բայց ես կը ցանկանայի նորից վերաքննել, վերստուգել, խմբագրել և յետոյ հրատարակութեան տալ։ Այդ իմ վաղուցվայ իղձն է։ Միայն փող է հարկաւոր։

—Այդ կը գտնենք, դուք հանգիստ եղէք, մի վրդովվէք, մխիթարեցի ես։

—Ուրեմն այդ բանի մասին կը խօսենք։

—Երբ կամենաք։

Բաժանվեցինք այն յոյսով, թէ Կարա-Մուրզան ինքը իր ձեռքով պէտք է կատարէ իր հրատարակութիւնը և իր աչքերով տեսնէ իր աշխատութիւնների տպագրութիւնը։

—

Բայց մի՞թէ մեր հասարակութիւնը այժմ չէ կարող իրագործել Կարա-Մուրզայի իղձը, որ և մեր բոլորի իղձն է։

—

Այդպէս է այն անձնաւորութիւնը, որից բաժանվում ենք մենք։

Նա գեղարուեստագէտ էր և սիրելով երգը, նրան ըմբռնում էր լայն մտքով, նկատելով իբրև կրթութեան մի տարր, իբրև հասարական զարգացման անհրաժեշտ պարագաներից մէկը։

Նա հայոց ժողովրդական երգին տուեց նրա արժանաւոր բարձրութիւնը և ստեղծեց նրա համար մի որոշ դիրք թէ մեր հասարակութեան և թէ օտարների առաջ։

Նա իբրև քարոզիչ տարածեց կանօնաւոր

digitised by A.R.A.R.@

հայկական երգը մեր երկրի հեռաւոր անկիւններում, սկիզբ դնելով մի գործի, որ ապագայում պէտք է ընդարձակվի, ծաղկի և բարգաւաճի։

Կարա-Մուրզան ապացուցեց, որ սիրելով գործը, հաւատալով գաղափարի յաղթանակին, անձնուէր և անշահասէր կերպով աշխատելով երկրի մէջ՝ կարելի է մի պատկառելի ձեռնարկութիւն ստեղծել, մի ժողովրդական մեծ պահանջի բաւարարութիւն տալ։

Ուսանելի գործունէութիւն էր, որ օրինակ կարող է ծառայել մեր երիտասարդութեան համար։

—

Արդեօք կը գտնվի՞ մօտ ապագայում նրան փոխարինող անձնաւորութիւն։

Մեծ կսկիծ է մեզ համար Կարա-Մուրզայի կորուստը։

---

digitised by A.R.A.R.@

LXXXVI

(7 *ապրիլի* 1902 *թ.*, *«Մշակ»* № 76)

—Թատրոն թատրոնի մէջ։

Այդպէս բացականչեց իմ ծանօթ նկարիչը, որի հետ միասին նստած էինք Արտիստական Ընկերութեան թատրոնական դահլիճում։

Տալիս էին թուրքերէն ներկայացում։

Բնորոշ էր այդ ներկայացումը։

Մենք հետաքրքրված էինք թէ թատրոնական բեմով, թէ հանդիսականներով և թէ ամբողջ ներկայացման կազմակերպութեամբ։

Նկարիչը հրաւիրում էր իմ ուշադրութիւնը ամեն մի փոքր և մանաւոր գծի վրա, որ նա նկատում էր թատրոնական դահլիճի մէջ։

—Դուք առանձին ուշադրութիւն դարձրէք օթեակների վրա, ասաց նա՝ ուժգին ինձ հը-բելով։

—Դարձրել եմ, վրա բերեցի ես։

—Տեսնում ե՞ք այս վարագոյրները, հարցրեց նա՝ իմ ուսը թօթվելով։

—Ինչպէ՞ս չէ. մի՞թէ կարելի էր չը նկատել։ Այնքան օտարոտի է և անսովոր։

Օթեակների մի մասի համար չինվել էին յա-տուկ այդ ներկայացման առիթով վ ա ր ա-գ ո յ ր ն ե ր։

—Ինչո՞ւ համար, կը հարցնէք դուք։

Որպէս զի օթեակներում գտնվող թուրք ըն-

digitised by A.R.A.R.@

տանիքը կարողանար իրան ծածկած պահել հասարակութեան հայեացքներից։ Թրքուհին չը պէտք է երեսբաց դուրս գար ուրիշների առաջ։

Եւ սակայն՝

Սակայն ոչ ոք Թրքուհիներից չէր իջեցնում վարագոյրը, չէր ծածկում իր դէմքը։

—Ես երբէք չեմ կարծել՝ թէ այսքան Թըրքուհիներ կան Թիֆլիսում եւրոպական հագուստով, բացականչեց նկարիչը։

Թրքուհիները եւրոպական և վրացական հագուստով էին, իսկ մի քանիսը բուն Թուրքական։

—Տեսէք, շարունակեց նկարիչը, նրանք արդէն բաւական ազատ են պահում իրանց։

—Ժամանակի յայտնութիւններից մէկն է դա, պատասխանեցի ես։ Մի քանի տասնեակ տարի սրանից առաջ մեր երկրի Թուրքը նոյն իսկ լսել չէր ուզում կնոջ եւրոպական կրթութեան և նիստ ու կացի մասին։ Առաջին Թուրք կրթված երիտասարդները, որոնք պսակվեցին կրթված մահմեդականուհիների հետ, ստիպված էին փակել իրանց կանանցը։ Հասարակական կարծիքը Թուրքերի մէջ թոյլ չէր տալիս կնոջը երեսբաց լինել։

Մեզ մօտեցաւ մի կրթված Թուրք և խառնվեց մեր խօսակցութեան։

—Այժմ էլ, նկատեց նա, նախկին հասարակական կարծիքը շատ ուժեղ է և այսօրվայ ձեր տեսածը մի անսպասելի նորութիւն է։ Մենք՝ կրթվածներս՝ խօսեցինք, յորդորեցինք, կըշտամբեցինք, համոզեցինք։ Հազիւ հազ գլուխ եկաւ գործը։ Արդիւնքը արդարև անսպասելի աջող դուրս եկաւ։

digitised by A.R.A.R.@

Թուրքը պատմեց մեզ ներկայացման մասնակցողների մասին։

—Կանանց դերերի համար անկարելի էր յոյս կապել թրքուհիների վրա։

Դա չափազանց յանդուգն քայլ կը լինէր նրանց կողմից։

—Այդ էլ ժամանակով, ասաց նա։ Արդէն այն հանգամանքը, որ մեր թուրքերը և թըրքուհիները տեսնում են բեմի վրա դերասանուհիների, կին խաղացողների, դա մի նորութիւն է, որ խօսակցութեան առիթ է դարձել։ Բոլորը հետաքրքրվում են, թէ ովքեր են մասնակցողները։

Եւ նա պատմեց շատ բնորոշ խօսակցութիւնների և լսած կարծիքների մասին։

—Մեզ օգնեցին ռուսները և հայերը իրանց մասնակցութեամբ, աւելացրեց նա։ Դուք մեզանից աւելի առաջ էք գնացել, օգնեցէք մեզ, մինչև որ մենք էլ կարող կը լինենք սեփական ոյժերով առաջ գնալ։

Մենք բաժանվեցինք թուրքից և շարունակեցինք մեր խօսակցութիւնը։

Փափախաւոր և զանազան տարազով թուրքեր բազմել էին օթեակներում և աթոռների վրա և հետաքրքրութեամբ նայում էին բեմին և միմեանց վրա։

Դէմքերի վրա դրոշմված էին զարմանքի, վարանման, ինքնագոհութեան նշաններ։ Շատերը հաշիւ չէին տալիս իրանց և դեռ որոնում էին իրանց տպաւորութիւնները։ Նրանց դէմքերը կարծես ասում էին ներկայ եղած օտարներին, թէ «մենք էլ յետ չենք մնում, մենք էլ կարող ենք ձեզ նմանվել, երկրաշարժից վնասված

digitised by A.R.A.R.@

չամախեցիների համար ներկայացում տալ մեր լեզուով և մեր ներկայութեամբ։

Թատրոնական դահլիճում ժողովված էին մահմեդականների զանազան խաւերը։ Այդտեղ կային պարսից և Թիւրքաց հիւպատոսարանների պաշտօնեաները, բէգեր, Թաջիրներ, ալաֆներ, Թուրք զինուորականներ, ստորճանաւորներ, ուսանողներ։

—Միթէ ճիշդ չասացի, հարցրեց ինձ վերջում նկարիչը, որ սա մի Թատրօն է Թատրօնի մէջ, մի բեմ է բեմի վրա։

—Եթէ սա Թատրօն է Թատրօնի մէջ և բեմ է բեմի վրա, առարկեցի ես, իսկ ո՞վ է հանդիսականը։

—Հանդիսականը, հանդիսականը, մրմնջաց նկարիչը և կանգ առաւ։

—Այո, հանդիսականը։

—Մեզնից իւրաքանչիւրը, վրա բերեց նա, ով նայում է դիտողի և հանդիսականի աչքով։

—

Ներկայացումը վերջացաւ։

Դուրս եկանք Թատրօնից և զբօսնեցինք։

—Անկասկած, մենք աւելի առաջադէմ ենք, քան Թուրքերը, ասացի ես նկարչին, բայց մենք մեր Թատրօնական գործին մինչև այժմ չենք կարողացել տալ մի հաստատ կազմակերպութիւն և նա դեռ սիրողների ներկայացումների բնաւորութիւն է կրում։

—Ահա կազմվում է հայոց դրամատիկան ընկերութիւն, նկատեց նկարիչը։

—Այո, կազմվում է, ասացի ես, շատ ուրախալի է և մենք բոլորս ողջունեցինք նրան։

digitised by A.R.A.R.@

—Երևի շուտով կը սկսէ իր գործունէու-
թիւնը։

—Պէտք է ենթադրել, յայտնեցի ես։ Սակայն կը գտնվեն արդեօք եռանդոտ, ուժեղ, անձնուէր գործողներ, որոնք գործի վրա նայէին գ ո ր ծ ի տեսակէտից, որոնք հ ա ս ա ր ա կ ա կ ա ն բնաւորութիւն տային իրանց գործառնութիւններին և չը գրաւվէին մասնաւոր նըկատումներով։ Մեր իրականութեան փաստերը թելադրում են, որ Նոր ընկերութեան գործողները զգան սկսվող գործի լրջութիւնը և համապատասխան աշխատեն։

—Ուրիշ կերպ չէ էլ կարելի, նկատեց նկարիչը։

—

Այժմ անցնեմ մի բոլորովին ուրիշ առարկայի։ Քիչ մնաց, որ մի խոշոր սխալի մէջ ընկնեմ։ Մի քանի օր սրանից առաջ ես ստացայ Երևանից մի հեռագիր, որի մէջ ասված էր հետևեալը՝

«Կայացաւ ընտրողական ժողով և հոգաբարձուներ ընտրվեցին ժողովրդի ցանկացած անձինք։ Ժողովում տիրում էր օրինակելի կարգապահութիւն։ Նախագահը ոչ մի ճնշում գործ չը դրեց»։

Ստորագրութիւն։

Հեռագիրը շատ մխիթարական էր։

Ուրեմն թիւրիմացութիւնները վերջացան, անտեղի սպառնալիքները՝ նշանակովի հոգաբարձութիւն կազմելու մասին, վերացան։

Բայց ինչպէս տեղի ունեցաւ այդպիսի յանկարծակի փոփոխութիւն։ Արդեօք փոխանորդը փոխվեց, թէ նրա հաշիւները փոխվեցին, թէ

digitised by A.R.A.R.@

վերջապէս ժողովրդի արդար ձայնը լսելի դարձաւ։

Ինչ և լինէ՝ հեռագիրը լաւ հեռագիր էր և ես ուրախացայ, որ արդար գործը վերջ ի վերջոյ տարաւ իր յաղթանակը։

Այդպէս էլ պէտք է լինէր։

Ես նորից կարդացի հեռագիրը և իմ մտքում շնորհաւորեցի Երևանի պատգամաւորներին։

Մինչ ես զբաղված էի հեռագրով՝ իմ սենեակի դուռը բացվել էր և իմ բարեկամ Սարեկեանը դռնամէջ կանգնած ինձ դիտում էր։

—Այդ ինչ հեռագիր է, որ այդքան քեզ զբաղեցրել է, հարցրեց նա։

Ես սթափվեցի։

—Այդ դու ես, վրա բերեցի ես։ Մի լաւ հեռագիր եմ ստացել Երևանից։

Կարդացի հեռագիրը։

—Ես եկել էի, յայտնեց նա, նոյն տեսակ մի լուր տալու քեզ։

—Ի՞նչ լուր, հետաքրքրվեցի ես։

Սարեկեանը ժպտաց և լռեց։

—Չը գիտեմ, կը հաւատաս արդեօք ասելիքներիս, ասաց նա խորամանկ հայեացքով։

—Ասա, տեսնենք։

—Դու գիտես, սկսեց նա, որ մեր Ներսիսեան դպրոցը վերջին եօթ ութ տարին կանոնաւոր կերպով առաջ է տանում իր գործերը— և ստացել է փոքր ի շատէ նախանձելի վիճակ։

—Առանց առաջաբանների, կտրեցի ես նրա խօսքը, այդ բոլորը յայտնի է...

—Ես էլ գիտեմ, որ քեզ յայտնի է, վրա բերեց նա։ Քեզ յայտնի է և այն, որ հոգաբարձութիւնը երկիւղ էր կրում վտանգաւոր միջամտութիւնից, որովհետև նրան «առաջադրել»

digitised by A.R.A.R.@

էին այլ ևս չր խառնվել տեսչի ընտրութեան գործի մէջ։ Բայց դու չը գիտես այն, որ այժմ հոգևոր իշխանութիւնը այդ սպառնալիքը թողել է և հոգաբարձութիւնը առաջվայ պէս ինքը պէտք է ընտրէ իր ցանկացած արժանաւոր անձին։

—Ի՞նչ ես ասում, բացականչեցի ես։ Ճիշդ որ այդ չը գիտէի։ Որքան ուրախալի է։ Որքան ուրախալի է։ Չէ, մի բան փոխվել է։

—Ես այդ չեմ կարծում, քմծիծաղով նկատեց Սարեկեանը։

—Բայց ինչո՞վ ես բացատրում այդ յանկարծակի փոփոխութիւնները։

—Ինչո՞վ, ծաղրեց Սարեկեանը։ Քո դիւրահաւատութեամբ։ Միթէ մոռացել ես, բարեկամ, որ այսօր ապրիլի մէկն է։

—Ուրեմն։

—Այդ բոլորը կատակ է։ Իրականութիւնը նոյնն է։

Արդարև մի քանի ժամանակից յետոյ բերին մեզ համար հեռագիրներ, նամակներ՝ մէկը միւսից հրապուրիչ բովանդակութիւններով։

Բայց մենք գիտէինք, որ դրանք կատակներ էին և միայն հետաքրքրվում էինք այն բանով, թէ ով ինչ իղձեր ունի մեր կեանքի զանազան երևոյթների և խնդիրների վերաբերութեամբ։

Դուք էլ ստացած կը լինէք նոյնանման հեռագիրներ և նամակներ։ Դուք էլ ձեր երևակայութեան մէջ ունէք հազար տեսակ իղձեր և տենչանքներ։

Մենք գործ ունենք սակայն իրականութեան հետ։

---

digitised by A.R.A.R.@

LXXXVII

(13 մարտի 1902 թ., «Մշակ» № 81)

Ես գիտէի, որ ընդունուած սովորութեան համաձայն՝ պէտք է բաժանէի զանազան նուէրներ:

Ձեռքս առի գրիչը, որպէս զի նշանակեմ, թէ ում ինչ պէտք է տամ կամ բարեմաղթեմ։

Իմ մտածմունքի առաջին առարկաներն էին մեր ժողովուրդը և մեր երիտասարդութիւնը։ Որքան ցանկալի կը լինէր, որ մեր երիտասարդութիւնը զգար իր ժողովրդի ցաւերը, հոգսերը և կարիքները, ընկղմվէր ժողովրդական ովկիանոսի մէջ և օգնէր նրան դուրս գալու խաւարից և թշուառ կացութիւնից։ Առաջին բարեմաղթութիւնը երիտասարդութեանը պէտք է անէի։

Յետոյ կը յիշէի կարգով ուրիշներին։

Բարի ցանկութիւնները անսպառ էին։

Ես սկսեցի նշանակել.

Երիտասարդներին՝ անձնուէր աշխատանք ժողովրդական մասսայի համար։

Բժիշկներին՝ առողջապահական գիտութեան այնպիսի զարգացում, որ հիւանդութեան դէպքերը դառնան հազուագիւտ բացառութիւններ։

Ձայնաւորներին՝ քաղաքի բարեկարգութեան համար գործնական խելացի

digitised by A.R.A.R.@

ծրագիրներ և անմիջական իրագործութիւն։

Կոնսիստորիաներին՝ ազնիւ, ճշգապահ ու համայնքի իրաւունքները յարգող երէցփոխներ։

Մեր կրթված օրիորդներին՝ իդէալիստ փեսացուներ։

Ինձ ընդհատեց իմ բարեկամ Սարեկեանը, որ ներս մտաւ իմ սենեակը։

Ես վերկացայ նրան ողջունելու։

Մենք խօսեցինք օրվայ նորութիւնների և առաջիկայ տօների մասին։

—Արդեօք այս տարի էլ պէտք է զատկական նուէրներ բաժանես, հարցրեց նա։

—Այո, պատասխանեցի ես։ Դա էլ մի սովորութիւն է։ Առանց այդ չի լինի։ Քո գալուց առաջ սկսել էի գրել և ընդհատեցի քո գալու պատճառով։

—Հետաքրքրական է, բացականչեց նա, կարդա, տեսնենք։

Ես կարդացի։

Նա ժպտաց և գլուխը թափ տուեց։

—Այդ բարեմաղթութիւնները լաւ են, ասաց նա, սակայն մի անյարմարութեան մասին դու չես մտածել։

—Ի՞նչ անյարմարութեան, հետաքրքրվեցի ես։

—Այդ յետոյ կասեմ, վրա բերեց Սարեկեանը, իսկ այժմ նշանակիր և իմ բարեմաղթութիւնները կամ նուէրները առանձին թղթի վրա։

—Ասա, տեսնենք։

—Նշանակիր, յայտնեց նա հետևեալը.

Աշուղ Մայիֆին՝ մի դաշնամուր։

Աբարանի գիւղացիներին՝ շոգեշարժ գութան։

Քիւրդերին՝ պօլիտեխնիկում և պարբե-
րական մամուլ։
Փահլիվան Մուստաֆային՝ մի շիշ շամպայն
գինի։
Շամախեցիներին՝ թողնել Շամախին և գաղթել
միւս քաղաքները։
Մօլօկաններին՝ մի մի չաղ գօճի՝ տօներին ու-
տելու։

—Սա ինչ նուէրներ են, բացականչեցի ես. ինչ ես ուզում ասել։

—Այն եմ ուզում ասել, խօսքս կտրեց Սարեկեանը, որ քո նուէրները պէտք է համապատասխան լինեն ստացողի ցանկութեան և ակընկալութեան։ Ի՞նչ օգուտ, եթէ հասարակ աշուղին ես կը տամ դաշնամուր. դա նրա ինչ պէտքն է. դաշնամուրը լաւ բան է. բայց աշուղը աւելի ուրախ կը լինէր, եթէ ես նրան տայի, օրինակ, մի լաւ Թառ։ Ս.բարանի գիւղացուն շոգեշարժ գութանի փոխարէն որ տամ հող և մի զոյգ գոմէշ, նա իսկապէս կուրախանայ։ Քիւրդին ինչ պէտքն է պօլիտեխնիկումը և մամուլը. նա անկասկած կը գերադասէ ստանալ նժոյգներ, ոչխարներ և նախաճաշի համար նոյն իսկ գողացած գառ։ Փահլիվան Մուստաֆան ինչ անէ շամպայնը, երբ նա, իբրև մահմեդական, գինի չէ խմում։ Մօլօկանը ինչ անէ գօճիները, երբ նա նրանց չէ ուտում։ Կամ շամախեցուն ինչ օգուտ քո բարեմաղթութիւնից, երբ նա վճռել է մնալ իր նախկին տեղում։ Կուզես էլի շարեմ։

—Ոչ, բաւական է, յայտնեցի ես։

—Այնպէս էլ քո բարեմաղթութիւնները, շարունակեց Սարեկեանը։ Դու ցանկանում ես երիտասարդներին անձնուէր աշխատանք ժո-

digitised by A.R.A.R.@

զովրդի համար։ Մէկ նրանց էլ հարցրու, թէ նրանք ինչ են ուզում։ Նրանք քեզ ցույց ուղիղ չը պատասխանէին, բայց ինկապէս նրանք կուզենային տաք տեղ, ապահով պաշտօն, օժիտաւոր հարսնացու, և մի այնպիսի մամուլ, որ նրանց փառաբանէր։ Բժիշկները երեւանց ինչ ասէին-չասէին, բայց սրտանց կը ցանկանային որքան կարելի է շատ հիւանդներ լաւ վճարներով։ Կօնսիստորիաները կը ցանկանային այնպիսի երէցփոխներ, որոնք յարմարվել գիտենային։ Օրիորդները կը ցանկանային այնպիսի փեսացուներ, որոնք նրանց չինով ապրեցնէին։ Ջայնաւորները կը ցանկանային իրանց ազգականների մէջ բաժանել քաղաքային ուպրավայում եղած պաշտօնները։

Սարեկեանը պատմեց տէրտէրի մասին, որ քիչ էր մնացել ուրախութիւնից պար գար, որովհետև մի շաբաթվայ ընթացքում մի քանի չաղ մեռելներ էր թաղել։

—Ես հասկանում եմ, նկատեցի իմ կողմից, թէ ինչ ես ուզում ասել։ Անկասկած նուէրը այն ժամանակ հաճելի կը լինի ստացողի համար, երբ համապատասխանում է նրա ճաշակին և ակնկալութեան։ Սակայն նուէրը պէտք է հաճելի լինի և գրողի համար։ Ես չեմ կարող ցանկանալ թափառականին «գողացած զառ», թէկուզ դա շատ ախորժելի լինի նրա համար։ Ի միջի այլոց այն էլ պէտք է ասեմ, որ քո նըշանակած նուէրներից մի քանիսը զաւակական չեն, որովհետև քո փաշինյան Մուստաֆան և քիւրդերը, իբրև մահմեդականներ, չեն մասնակցում մեր զատկական տօնին։

—Ես իբրև օրինակ յիշեցի այդ նուէրները,

digitised by A.R.A.R.@

նկատեց Սարեկեանը, որպէս զի պարզեմ իմ ասելիքը։

Այնուհետև ամեն մի բարեմաղթութեան, որ ես նշանակում էի թղթի վրա, Սարեկեանն էլ իր կողմից աւելացնում էր իր խմբագրածը։ Այդպիսով առաջ էին գալիս երկու տեսակ բարեմաղթութիւններ։ Ես գրում էի օրինակ՝

Իրաւաբաններին՝ ազնիւ դատերի պաշտպանութիւն և առանց ստորին ագենտների գործավարութիւն։

Սարեկեանը աւելացնում էր իր խմբագրածը այսպէս՝

Իրաւաբաններին՝ չաղ չաղ պատառներ ամեն տեսակ գործակալների միջոցով։

Որպէս զի կրկնութիւններ չանեմ, ես այստեղ միանգամից կը յիշեմ երկու խմբագրութիւններն էլ, նախ իմը և ապա Սարեկեանինը։

Տգէտ տիրացուներին—թողնել եկեղեցին և զբաղվել որ և է արհեստով։

—Ձեռք չը վերցնել եկեղեցուց, կարգին աջահամբոյրով ձեռնադրվել քահանայ և ապա ստանալ խաչ և կամիլավկա։

Կրիզիսի ենթարկվածներին՝ ազնիւ կերպով մաքրել հաշիւները, թէկուզ սպառնայ սնանկութիւն։

—Կեղծ կերպով սնանկանալ և ազատել սեփական անձը զրկանքներից, ուրիշ խօսքով «տակումն անել»։

Կօշկակարներին՝ կատարելագործել արհեստը և մրցել արտասահմանեան վարպետների հետ։

—Թողնել սեփական արհեստը և զբաղվել ա-

digitised by A.R.A.R.@

մէն բանով և ի միջի այլոց գրականութեամբ։

Դերասաններին՝ մշակել ամպլուա, սովորել դերերը և չը յափշտակվել շողոքորթութիւններից։

—Հրաւիրել ծափահարողների կամ կլակեօրների և կրիտիկոսների բերանը ծեփել արհեստական ցոյցերով։

Երևանի թեմակալին՝ յարգել ժողովրդի իրաւունքը և կազմել կանոնաւոր կերպով ընտրվածներից հոգաբարձութիւն։

—Այլացնել, կոնդակներ ձեռք բերել և իր մարդկանց անցկացնել, և ահա նոր հոգաբարձութիւն։

Գողերին՝ ձեռք վերցնել անարգ պարապմունքներից և համարձակութիւնը, եռանդը ու հնարագիտութիւնը գործ դնել կուլտուրական գործի վրա։

—Շարունակել նոյն արհեստը ծպտեալ կերպով երէցփոխի, գանձապահի, կառավարչի, քարտուղարի և ուրիշ պաշտօնների վարագոյրի տակ։

Միլիօնատէրերին՝ գոնէ միլիօններ դիզելուց յետոյ պակասեցնել ագահութիւնը և ձեռնարկել կենդանութեան օրով բարի գործերի՝ նրանց արդիւնքը տեսնելու։

—Շարունակել միլիօններ դիզելը աւելի եւս մեծ ախորժակով և ագահութեամբ, աշխատելով կործանել միւս միլիօնատէրերին։

Մայրերին՝ չը յանձնել երեխաների դաս-

digitised by A.R.A.R.@

տիրականութիւնը ուրիշներին և անձամբ հսկել նրանց վրա։

—Սեփական քէֆի և զուարճութեան ետեւից ընկնել և «էս կինքումը» շատ կեանք տեսնել, իսկ երեխաների համար թող տղամարդի ջանը դուրս գայ ու գուվերնանտկա պահի։

Բանաստեղծներին և վիպասաններին՝ գիտել, ուսումնասիրել, անկեղծ ոգևորութեամբ գրել և չը դիմել ռեկլամի.

—Խնդրել բարեկամներին տեղի-անտեղի գովել նրանց և անկաշառ կրիտիկոսներին հռչակել իբրև չըկամներ։

Ուսանողներին՝ հաստատ գիտութիւն, լուրջ աշխատանք, պատրաստականութիւն գտնել իդէալի համար։

—Դիպլոմ որ և է կերպով, իսկ այնուհետև «ինչ կուլի կուլի»։

Հեռագրական գործակալութեան՝ հեռաքրքրական հեռագրներ թէ ռուսաց և եւրոպական և թէ երկրի կեանքի երևոյթների մասին։

—Ամեն տեսակ անչտապելի լուրեր և ռեկլամներ այս և այն ֆիրմայի և անձի մասին։

Վարդապետներին՝ լինել աւետարանի արժանաւոր աշակերտներ և նուիրել իրանց անձը ժողովրդին։

—Իրաւունքներ առանց պարտաւորութիւնների, հասոյթներ որտեղից կարելի է, յաջորդութիւն, յետոյ առաջնորդութիւն, յետոյ փառաւոր վայելումն։

—

digitised by A.R.A.R.@

Սարեկեանի հետ միասին կազմելով այս ցուցակը, մենք թէև նոր ձև տուինք նուէրներին, բայց շատ էլ բաւական չը մնացինք։

—Ինչո՞ւ, կը հետաքրքրուէք դուք։

—Այն պատճառով, որ շատ անձինք, որոնց վերաբերութեամբ երկու ասելիք չունենք, մնացին առանց նուէրների։

Մեր բազմաթիւ աշխատաւորները, մեր մանուկները, մեր թղթակիցները, մեր ազնիւ գործողները, մեր այն ուսանողները, որոնք ազնիւ և լուրջ կերպով աշխատում են, մեր գիւղական եղբայրները և քոյրերը, մեր հեռաւոր և պանդուխտ մտերիմները, դրանք բոլորը մնացին առանց նուէրների և բարեմաղթութիւնների։

Թող դրանք բոլորը ստանան ինձանից միայն Զատկի շնորհաւորութիւն։ Եւ թող յիշեն, որ Քրիստոսի յարութիւնը յաւիտենական նշան է, որ Գաղափարը չէ կարող մեռնել, այլ նա, եթէ թաղուի էլ մարդկանց ձեռքով, դարձեալ յարութիւն կառնէ։

Շնորհաւոր Զատիկ։

digitised by A.R.A.R.@

LXXXVIII

(21 ապրիլի 1902 թ., «Մշակ» № 83)

Ես կը սկսեմ այսօրվայ իմ խօսքը, յիշեցնելով մի բարոյական պարտաւորութեան մասին։

Իմ մի «Մանրանկարում», խօսելով հանգուցեալ Քրիստափոր Կարա-Մուրզայի մասին, ես յայտնել էի, որ նա մտադիր էր հրատարակել իր նօտագրած երգերը և իր հեղինակած երաժշտական աշխատութիւնները։ Վաղաժամ և յանկարծահաս մահը թոյլ չը տուեց, որ նա իրագործէ իր դիտաւորութիւնը։ Բայց մեր հասարակութիւնը կարող էր իրականացնել այդ դիտաւորութիւնը։

Եւ պէտք է անէ։

Դա բարոյական պարտաւորութիւն է։

Եւ ահա այդ պարտաւորութեան մասին է իմ խօսքը։

Կարա-Մուրզայի մահից առաջացած կորուստը զգացվեց մեր հասարակութեան ամեն խաւերում և շատ հեռաւոր անկիւններում։ «Մշակի» խմբագրութիւնը ստացաւ բազմաթիւ հեռագիրներ, որոնց մէջ յայտնված էին խորին վիշտ նրա վաղաժամ մահվան առիթով և երախտագիտական յարգանք դէպի հանգուցեալի անձնաւորութիւնը և գործունէութիւնը։

Հասարակութիւնը ջերմ վերաբերվեց նրա յիշատակին։

Բայց պէտք է առաջ գնալ և հետեւեալ քայլն անել։

Կարա-Մուրզան թողել է երաժշտական աշխատութիւններ և անապահով զաւակներ։

Մեզնից է կախված այդ աշխատութիւնները հրատարակել և նրա զաւակներին մի որոշ չափով ապահովել։

Այո, մեզնից, մեր նպաստներից, մեր հասարակութեան աջակցութիւնից։

Կատարենք մեր բարոյական պարտաւորութիւնը։

—

Անցնենք մեր ընթացիկ կեանքի մի քանի երևոյթներին։

Մի քանի օր սրանից առաջ, ապրիլի 16-ին, տեղի ունեցաւ հայոց դրամատիքական ընկերութեան առաջին նիստը։

Այդ օրը պէտք է հիմնադիրները ժողովվէին և ընկերութեան սկիզբը դնէին։

Ժողովվեցին և ընտրեցին վարչական կազմի համար անդամներ և փոխանդամներ։

—Վերջապէս, բացականչեց իմ կողքին նստած մի պարոն։

Ես չը գիտէի, թէ ինչ բանին էր վերաբերում նրա բացականչութիւնը։ Ես հետեւում էի քուէների հաշւին։

—Վերջապէս, կրկնեց նա ինձ դիմելով։ Վերջապէս կազմվեց և բացվեց վաղուց ցանկացած ընկերութիւնը։

Ես հաւանութեան նշան արի։

—Մինչև այժմ, շարունակեց հարեւանս, երբ հարց էր լինում մշտական հայկական բեմ պահելու մասին, ամեն անգամ ես լսում էի մի

digitised by A.R.A.R.@

տարկութիւն, թէ անհրաժեշտ է մի որ և է ղեկավարող հիմնարկութիւն, դիցուք մի մասնաժողով, մի ընկերութիւն, մի մշտական գործավար մարմին։ Այժմ մեր առաջ մի ամբողջ ընկերութեան կանոնագրութիւն է, հաստատուած իշխանութիւնից։

—Ցոյց ունէք արդեօք, հետաքրքրվեցի ես, որ գործը աջողութիւն կունենայ հէնց սկզբից։

—Այդ չը գիտեմ, ասաց նա, բայց յամենայն դէպս նոր վարչութեան վրա մեծ պատասխանատուութիւն է ծանրանում։ Պէտք է աշխատել լաւ սկիզբ ունենալու։

—Դա շատ կարևոր է, հաստատեցի ես ևս իմ կողմից։

—Մինչև այժմ ասում էին, որ փող չէ հաւաքվում հայկական թատրոնի համար, չարունակեց հարևանս, այն պատճառով, որ չը կար օրինական կերպով ճանաչված մի հաստատութիւն։ Իսկ այժմ այդ հաստատութիւնը գոյութիւն ունի։

Մեր առաջ նստած մի պարոն անհանգիստ շարժումներ էր անում և ձեռքը թափ էր տալիս։ Վերջապէս նա դէմքը դարձրեց դէպի մեզ և խօսեց.

—Ես հաւատում եմ ընկերութեան ապագային, ասաց նա, բայց չեմ կարծում, թէ նա շուտով կարողանայ ոտքի կանգնել։

—Ինչո՞ւ, հետաքրքրվեցի ես։

—Ինձ այնպէս է թւում, վրա բերեց նա։

—Այդպէս խօսել չէ կարելի, պատասխանեցի ես, դուք արդեօք մի որ և է շարժառիթ ունէք այդպիսի կարծիք յայտնելու։

—Որովհետև, նկատեց նա, ես չեմ տեսնում ոգևորութիւն, ջերմութիւն, անձնուիրութիւն։

digitised by A.R.A.R.@

—Գործը դեռ նոր է սկսվում, միջամտեց հարեւանս, դեռ առիթ չը կայ խօսելու ջերմութեան կամ անձնուիրութեան բացակայութեան մասին։ Անշուշտ այդ բոլորը առաջ կը գայ։

Նախագահը կարդաց թեկնածուների անունները և մեր խօսակցութիւնը խանգարվեց։

Մի քանի ժամանակից յետոյ իմ հարեւանը դիմեց ինձ մի հարցով.

—Խնդրեմ, ասացէք, հարցրեց նա, ով է նոր անդամներին ընտրում։

—Ընդհանուր ժողովը, պատասխանեցի ես։

—Բայց դա անյարմար է, նկատեց նա։

—Այդպէս է հրամայում կանօնադրութիւնը, առարկեցի ես։

—Եթէ այդպէս է, վրա բերեց նա, այն ժամանակ, պէտք է հիմնադիրների ընդհանուր ժողովը իր առաջին նիստում մի անգամից ընդունէր բ ո լ ո ր հ ա յ ե ր ի ն անդամ այդ ընկերութեան և այնուհետև պայման դնէր, որ ով բերէ հինգ ռուբլի՝ նա կը դրվի անդամ։

—Երևի, ասացի ես, այդ նկատումն են աչքի առաջ ունեցել, որ այսօր ամեն մի ցանկացողի, որ հինգ ռուբլի տալիս է, համարում են անդամ։

—Սակայն միթէ հիմնադիրների նախնական ժողով եղել է, հարցրեց հարեւանս։

Ես չը գիտէի և չը պատասխանեցի։

—Իմ առաջարկութիւնը գործնական է, յայտնեց նա։

Ժողովը վերջացաւ, մենք միմեանց շնորհաւորեցինք, ջերմ բարեմաղթութիւններ արինք և լի յոյսերով ցրվեցինք։

—

Անցեալ անգամվայ բաժանած պատկական

digitised by A.R.A.R.@

նուէրները թանգ պէտք է նստեն թէ իմ բարեկամ Սարեկեանի և թէ ինձ վրա։

Բանից դուրս եկաւ, որ շատերը անձնապէս վիրաւորվել են այդ նուէրներից, ընդունելով նրանց իբրև անմիջական ցուցումներ իրանց դէմ։

—Այդ ինչ գործակալների կամ ագենտների մասին է ակնարկում Նուիրատուն, բացականչել է մի իրաւաբան, գիտենք, թէ այդ ինչ քամի է փչում և որտեղից։ Մենք էլ լռեցնելու հնարը գիտենք։

—Մենք հասկացանք, թէ ինչ կեղծ սնանկութեան մասին է խօսում Սարեկեանը։ Հասկացանք, թէ ինչ տիկնոջ մասին է ասված, որ թրև է գալիս փողոցներում ու վեչերներում, և մոռանում է իր երեխաներին։ Հասկացանք, թէ ինչ գրական գործողի է խայթում, ասելով, որ ինքնագովութեամբ է զբաղված։ Հասկացանք, թէ որն է այն տգէտ քահանան, որ իր ձեռնադրութիւնը աջողեցրել է առատ աջահամբոյրի միջոցով։ Հասկացանք, թէ ինչ երէցփոխի մասին է ակնարկում, որ փողեր է կուլ տուել և այլն և այլն։

Երէկ ինձ տեղեկացրին, որ դատարանում շատ գանգատներ կան Սարեկեանի և իմ դէմ։

Բայց ինչն է զարմանալի, որ մի և նոյն նուէրի առիթով գանգատ են տուել մի քանի անձինք։ Օրինակ, երէցփոխական նուէրի վերաբերութեամբ տրված է 826 գանգատ, իրաւաբանականի վերաբերութեամբ 313 գանգատ, քահանայականի վերաբերութեամբ 1084 գանգատ և այլն։

Գանգատները տրված են օրէնքի 1039 յօ-

digitised by A.R.A.R.@

դուածի հիման վրա, որ կոչվում է դիֆֆամացիայի յանցանք։

Այդ դէպքում մեղադրվածը իրաւունք չունի վկաների ցուցումների դիմելու, այլ պէտք է ներկայացնէ գրաւոր ապացոյցներ, այն էլ միայն այն դէպքում, եթէ այդ ապացոյցները վերաբերում են այնպիսի անձնաւորութիւնների, որոնք որ և է հասարակական պաշտօն են վարում։

Ի՞նչ պէտք է մենք անենք։

Սարեկեանը, որի դէմ գլխաւորապէս ուղղված են գանգատները, թողնում է իր պաշտօնատեղը և պատրաստվում է մի քանի տարի բանտում նստելու։

Ես խորհուրդ տուի, որ նա սպասէ դատավարութեան ելքին։ Գործը նշանակված է մայիսի 7-ին։

Գուցէ կազատվենք։

Կարող էինք մենք արդեօք կարծել, որ մեր նուէրները այդպիսի աղէտ կը բերեն մեր գլխին։

LXXXIX

(28 *ապրիլի* 1902 *թ*., *«Մշակ»* № 89)

Զբաղված լինելով զանազան գործերով ես փոքր ինչ ուշացայ թատրոն գնալու և երբ մտայ դահլիճ, արդէն առաջին գործողութեան մեծ մասը անցել էր։

Շուտով վարագոյրն իջաւ։ Վերնատունը սաստիկ ծափահարեց։

Ես յոգնած էի և մնացի նստած իմ բազկաթոռի վրա։

Իմ ետև, միւս կարգում նստածներից մի քանիսը նոյնպէս չէին դուրս եկել զբօսնելու։ Նրանք բարձրաձայն խօսում, վիճում էին։

Նրանցից մէկը գանգատվեց և դժգոհութիւն յայտնեց, որ տոմսակները թանգացրել են։ Միւսը նրա հետ համաձայնեց։ Երրորդը դիմեց այդ երկուսին մի հարցով։

—Արդեօք եղել էք դուք արտասահմանում, հարցրեց նա։

—Այո, պատասխանեց առաջինը։

—Ոչ, չեմ եղել, յայտնեց երկրորդը։

—Ես յաճախ եղել եմ, ասաց երրորդը, և պէտք է ձեզ ասեմ, որ այնտեղ կենտական մըթերքները շատ թանգ են, օրինակ միսը արժէ 30, 40, 50 *կօպէկ ֆունտը, ցորենը թանգ է քան մեզանում, այդպէս և շատ ուրիշ առարկաներ։ Թանգ է այնտեղ և աշխատող ձեռքը։*

digitised by A.R.A.R.@

—Մենք թատրոնական տոմսակների մասին էինք խօսում, միջամտեց խօսակիցներից մէկը։

—Ես էլ այդ բանի մասին եմ խօսում, վրա բերեց երրորդը։ Ես փոքր ինչ հեռուից սկսեցի։ Համբերութիւն ունեցէք։ Ես ասացի, որ մըթերքները թանգ են և աշխատող ձեռքը աւելի գնահատելի։ Չը նայելով այդ հանգամանքին, ես այնտեղ աւելի էժան կերակուրներ էի ստանում, քան Թիֆլիսի մեր հիւրանոցներում։

—Ճիշդ է, հաստատեց առաջին խօսակիցը, այդ ես էլ եմ նկատել։

—Ինչո՞ւ, հետաքրքրվեց երկրորդը։

—Ահա ինչու, շարունակեց երրորդը։ Այնտեղ ուրիշ կերպ են հաշիւ անում, քան այստեղ։ Մեր Թիֆլիսի հիւրանոցատէրը վերցնում է ամեն մի բիֆստէկսից կամ կալվստէկսից երեսուն կոպէկ օգուտ և եթէ նա մի օրվայ մէջ ծախեց տաս բաժին նա կունենայ երեք րուբլի օգուտ։ Իսկ այնտեղ ամեն մի կերակրից նա վերցնում է տասը կոպէկ օգուտ, երբեմն և աւելի քիչ, հինգ կոպէկ, իսկ օրեկան ծախում է վաթսուն բաժին, հարիւր բաժին։ Եթէ վերցնէք համագումարը, կը տեսնէք, որ վերջիվերջոյ արտասահմանեան հիւրանոցատէրը աւելի զուտ արդիւնք է վերցնում, քան մեր Թիֆլիսինը։

—Ուղիղ հաշիւ է, նկատեց երկրորդը։

—Հիւրանոցը ամեն մի բաժնից այնքան քիչ արդիւնք է վերցնում, շարունակեց երրորդը, որ շատ մարդիկ գերադասում են հիւրանոցում ճաշել, քան տանը ճաշ պատրաստել։ Այնպէս էլ թատրոնական գործում։ Աւելի գերադասելի պէտք է լինի էժան վճարով շատ հանդիսական ունենալը, քան թանգ գնով քիչ հանդիսական։

digitised by A.R.A.R.@

—Անկասկած, նկատեց առաջինը, այսօր աւելի հանդիսականներ կը լինէին, եթէ տոմսակների գները բարձրացրած չը լինէին:

Խօսակիցները սկսեցին մեկնութիւններ և բացատրութիւններ տալ միմեանց։

—

—Դիտէք ինչ, բացականչեց նրանցից առաջինը։ Որքան լաւ կը լինէր, որ աշնանը, երբ սկսվեն կանօնաւոր հայկական ներկայացումները, առհասարակ շատ էժանացնէին թատրօնի մուտքը։

—Ես լսեցի, վրա բերեց երկրորդը, որ այդպիսի դիտաւորութիւն կայ և վարչութիւնը համակրութեամբ է վերաբերվում այդ բանին։

—Ձեզ օրինակ թող լինի, յայտնեց երրորդը, աւչալեան և հաւլաբարեան ժողովրդական բեմերը։ Այնտեղ միշտ յաճախորդներ կան այնպիսի բազմութեամբ, որ երբեմն ասեղ գցելու տեղ չէ լինում և շատերը մնում են թատրօնից դուրս:

—Երևակայեցէք, ն'կատեց առաջինը, որքան գեղեցիկ բան կը լինէր, եթէ աթոռների առաջին կարգը արժենար միայն $1\frac{1}{2}$ րուբլի, միջինները մի-մի րուբլի, իսկ վերջին կարգերը միայն 50 կոպէկ։ Վերնատանը՝ գները կարող էին աւելի ևս էժան լինել։ Այն ժամանակ հայկական մշտական թատրօնի բեմը մասամբ իրագործած կը լինի և ժողովրդական թատրօնի գաղափարը։

—Մենք կունենայինք վերջապէս լիքը թատրօն, բացականչեց երկրորդը. մարդ կարօտ է մնում լիքը թատրօնի, իսկ երբ յաճախորդների թիւը սակաւ է, այն ժամանակ թէ ներկայ ե-

digitised by A.R.A.R.@

ղողների և թէ դերակատարների տրամա-
դրութիւնն էլ դառնում է մելամաղձային։
—Դուք հաւաստացած կացէք, շեշտեց երրոր-
դը, որ վերջիվերջոյ էժանացրած թատրօնը իր
մուտքի համագումարով աւելի արդիւնք կը
գոյացնէ, քան այժմեան մեր թանգ ներկայա-
ցումները։ Դերասաններն էլ ամեն մի ներկայա-
ցումից աւելի քիչ վարձ կը վերցնեն, քան այժմ։
—Ի՞նչու։
—Որովհետև այժմ նրանք պատահաբար մի-
այն տալիս են ներկայացումներ ամբողջ ձմեռ-
վայ մէջ մի քանի անգամ և ուզում են այդ
մի քանի ներկայացումներից մի բան գոյացնել
իրանց ապրուստի համար։ Եթէ ներկայացումը
աջող եղաւ՝ շատ լաւ, իսկ եթէ ոչ՝ այն ժա-
մանակ սկսվում է լաց ու գանգատ։ Իսկ երբ
մշտական բեմ կայ, այն ժամանակ ամեն մի
ներկայացումից քիչ-քիչ ստանալով՝ կը կազմվի
համագումարում փոքր ի շատէ բաւարար վար-
ձատրութիւն։
Ես հետաքրքրութեամբ լսում էի այդ բոլոր
խօսակցութիւնը, որ կատարվում էր այնպէս
բարձր ձայնով, որ կարծես մասամբ ինձ լսեց-
նելու համար էր ասվում։
—Ձեր կարծիքը ի՞նչպէս է, պարոն Վրձին,
յանկարծ հարցրեց նրանցից մէկը։
Ես յետ նայեցի։
Խօսողների հետ անձնական ծանօթութիւն
չունէի, բայց նրանց տեսել էի ընտրողական
ժողովներում և կլուբում։
—Ես հաճութեամբ լսում էի ձեր վիճաբա-
նութիւնը, պատասխանեցի ես։ Ձեր տեսակէտը
ուղիղ է։ Թատրօնը պէտք է ժողովրդական
դառնայ։ Նա պէտք է կազմվի հանդիսականնե-

digitised by A.R.A.R.@

րի ընդարձակ խաւերի հետ։ Թատրոնի գաղափարը պէտք է տարածվի շատ մարդկանց շըրջանում, որպէս զի նա կարողանայ իր բարեբար հասարակական դերը կատարել աջողութեամբ ու պատւով և կազմվի մեզանում թատրոնական հասարակութիւն։

Երաժշտութիւնը խանգարեց մեր խօսակցութիւնը։

Ես դուրս եկայ գահլիճից փոքր ինչ զբօսնելու։

—

Կօրիդօրում պատահեցի դրամատիկական ընկերութեան անդամներից մէկին։ Մենք ողջունեցինք միմեանց և դէսից-դէնից խօսեցինք։

—Ինձ շատ հետաքրքրում է, ասացի ես, ձեր ապագայ ներկայացումների ցուցակը, ձեր ռեպերտուարը։

—Դրա մասին դեռ որոշումներ չունենք կայացրած, յայտնեց նա, բայց շուտով պէտք է զբաղվենք։

—Մենք սպասում ենք աջող ռեպերտուարի, ասացի ես. պէտք է եղած ռեպերտուարը հարստացնել, թարմացնել նոր պիեսներով։ Վերջին ամիսների Արմէնեանի տուած մի քանի ներկայացումները հետաքրքրում էին հասարակութիւնը իրանց նոր ռեպերտուարով։ Այժմ գեղեցիկ պիեսների մեծ պաշար կայ դրամատիկական գրականութեան մէջ։

—Մենք չենք ուրանում ռեպերտուարի մեծ նշանակութիւնը, նկատեց խօսակիցս։

—Բայց արդեօք յոյս ունէ՞ք, հետաքրքրվեցի ես, որ մինչև աշուն էական քայլ կանէք այդ գործում, կա՞ն արդեօք աշխատողներ։

digitised by A.R.A.R.@

—Այդ հարցով կը զբաղվենք, կրկնեց նա իր առաջվա խոսքը և անհետացավ։

Ես հանդիպեցի մի ուրիշ ծանոթի։ Նա խոսում էր վերնատան աղմուկների մասին։

—Այնպէս են իրանց պահում չատերը, նկատեց նա, որ կարծես թէ վարձու ծափահարողներ են, կլակեօրներ. իսկ ես գիտեմ, որ նրանցից չատերը բոլորովին անկեղծ են...

Ես չը կարողացայ լսել նրա խօսքերի չարունակութիւնը։ Ելեքտրական լոյսը մթնեց։ Դա նչան էր, որ պէտք է չուտով վարագոյրը բարձրանար։

Բոլորը չտապեցին դէպի իրանց տեղերը և միզ հրելով ճանապարհ բաց արին իրանց համար։

Ես էլ գնացի դէպի իմ աթոռը։

Վարագոյրը բացվեց։

Մնացածը ինքներդ էլ գիտէք։

XC

(5 *մայիսի* 1902 *թ*., *«Մշակ»* № 95)

Լրագիրները ձեզ տեղեկութիւն տուին այն նոր տեսակի թատրոնի մասին, որ անցեալ շաբաթ, իբրև հիւր, այցելութիւն էր արել Բագու քաղաքին, իսկ ամբողջ վերջին շաբաթը բարեհաճել էր հիւր մնալ մեր քաղաքում, Թիֆլիսում։

Այդ թատրոնը հանդէս եկաւ մի օտարոտի անունով։ Նա մկրտել էր իրան «Сверхъ-Театръ» *անունով։*

Ինչպէս թարգմանենք այդ անունը։

—Գեր-թատրոն, Արտա-թատրոն։

Ուրեմն սովորական թատրոնից վեր, կամ նրանից դուրս մի թատրոն։

Ներկայացումները տալուց շատ առաջ տըպվել էին գրաւիչ յայտարարութիւններ, որոնք տպաւորութիւն գործեցին։

—Ներկայացումները կը շարունակվեն միայն վեց օր, բարբառում էին այդ յայտարարութիւնները։ Ներկայացումները կը սկսվեն երկուշաբթի օր և կը վերջանան շաբաթ օր։

Ուրեմն շտապեցէք։

—Մի երկու պիեսների ներկայացմանը չը պէտք է վերցնել երեխաներին և ուսանողներին, զգուշացնում էին յայտարարութիւնները։

Ուրեմն կան արգելված պտղի մասին պարզ ակնարկներ։

digitised by A.R.A.R.@

Պէտք էր չտապել.
Եւ չտապեցին։
Շատերը շտապել էին մի անգամից տոմսակ-
ներ գնելու բոլոր ներկայացումների համար,
որպէս զի չը լինի թէ զրկվեն եդեմական
դրախտի հաճոյքներից։
Եւ այդ արել էին դեռ ոչինչ չը տեսած,
միայն յայտարարութիւնների ազդեցութեան
տակ։
Այդ հանգամանքը շատ համապատասխան մի
բան էր այն ներկայացումներին, որոնք տըր-
վում էին գեր-թատրոնում կամ արտա-թատ-
րոնում։
—Ի՞նչպէս, կը հարցնէք դուք։

—

Գնացի տեսայ այդ ներկայացումները։
Եւ դժգոհ մնացի։
Պիեսների մի մասը անմեղ բովանդակու-
թիւն ունէր, միւսը նշանակված էր զգայական
հետաքրքրութիւն շարժելու։
Միայն մի երկու դերասան խաղում էին հըմ-
տութեամբ, նուրբ և սրամիտ կերպով, միւս-
ները տուել էին դերերին կոպիտ, անճոռնի
կլոունական ձև։
—Շատ փոշմանել ենք, որ գրաւվելով յայ-
տարարութիւններից, գնել ենք տոմսակներ
հետևեալ օրերի համար, ասում էին շատերը։
—Ի՞նչ անհամ բաներ են, ասում էին մի քա-
նիսը, դատարկ, անբովանդակ պիեսներ են, ո-
րոնք շատ շուտ յոգնեցնում են մարդու։
Եւ այցելուներից շատերը չէին սպասում
մինչև ներկայացման վերջը և տուն էին գնում։
Զանազան խօսակցութիւններից և զրոյցնե-

րից ինձ համար պարզվեց յամենայն դէպս մի բան։

Շատերը ձանձրանում էին անհամ և դարդակ բովանդակութիւնից։

Շատերը զզվում էին անվայել ակնարկներից և տեսարաններից։

Բայց մի բան գրաւիչ էր և հաշտեցնում էր մարդկանց այդ գեր-թատրօնի և արտա-թատրօնի հետ։

Դա պիեսների ծիծաղաշարժ լինելն էր։

—Մարդ մի կուշտ ծիծաղում է, ասում էին մի քանիսը։

—Լարված ջղերը հանգստանում են, ասում էին միւսները։

—Բայց շատ են դարդակ, շատ են անիմաստ, հակառակում էին դժգոհները, մինթէ կարելի է ամբողջ երեկոյ. շարունակ վեց գործողութիւն լսել դատարկաբանութիւն և յաճախ անվայել ակնարկներ. ձանձրալի է։

—Այդ այդպէս է, առարկում էին ուրիշները, սակայն ո՞վ է մեղաւոր, որ այնպիսի պիեսներ չեն գրում, որոնք կարողանային լրջութեան հետ միասին և ծիծաղ յարուցանել։

—

Այն ծիծաղը, որ դրված էր Գեր կամ Արտա-թատրօնի պիեսների մէջ, մեծ մասամբ անառողջ, չինծու, արհեստական ծիծաղ էր։

Այդպիսի ծիծաղը միշտ առաջ է բերում հակառակ զգացմունք։ Ծիծաղից յետոյ դուք զգում էք զզուանք, յոգնածութիւն, կամ իսկոյն մոռանում էք ձեր բոլոր տեսածը, իբր թէ ոչինչ չէք տեսել։

Մի անգամ, երկու անգամ կարող էք լսել

digitised by A.R.A.R.@

այդպիսի պիեսներ և յետոյ այլ ևս չէք զգայ որ և է հաճոյք նրանց տեսնելու։

Մինչդեռ մեր կեանքը լի է այնպիսի երևոյթներով, որոնք ծիծաղելի են իրանց արտայայտութեամբ, բայց կրում են իրանց մէջ նիւթ լուրջ մտածմունքների համար։

Այդ երևոյթները ձեզ կը ծիծաղեցնեն, բայց յետոյ ծիծաղը կը սառչի ձեր շրթունքների վրա, երբ դուք նրան վերլուծութեան կենթարկէք։

—

—Ի՞նչ է ծիծաղելին, կը հարցնէք դուք։

Այդ հարցին ես չեմ տայ այսօր լիակատար պատասխան։ Դրա մասին ես գրում եմ մի մանրամասն հետազօտութիւն, որ պէտք է ներկայացնեմ մրցանակի։

Այսօր այսքանս կասեմ, որ ծիծաղ յարուցանում է շատ անգամ այն, ինչ որ համապատասխան չէ բնական կարգին, կամ ընդունված ձևին, ինչ որ օտարոտի է և անսովոր։

Օրինակներ։

Երբ որ մի փոքրիկ մանուկ հագնում է իր հօր վերարկուն և կրկնակօշիկները, դնում է գլխին հօր մեծ գդակը և ձեռքն առնելով նրա ձեռնափայտը՝ հպարտ-հպարտ ման է գալիս, նա ծիծաղ է յարուցանում։

Երբ որ դուք սխալմամբ պապիրօսը դնում էք ձեր բերանը ծխախոտի կողմից և վառում էք նրա խողովակի ծայրը—դա ծիծաղեցնում է։

Երբ դուք փոխանակ ձեր վերարկուի՝ հագնում էք ուրիշինը և փողոց դուրս գալիս—դա կարող է ծիծաղ յարուցանել։

Երբ որ բժիշկը մոռանում է իրան և զարկերակը որոնում է ոտքում, նա ծիծաղելի է։

digitised by A.R.A.R.@

Երբ որ դուք գրաւվելով Գեր կամ Արտա-թատրոնի մասին յայտարարութիւնից գնում էք մի անգամից շատ տոմսակներ և յետոյ հիա-թափվում էք, որովհետև չէք գտնում ձեր սպասածը—այդ հանգամանքը կարող է ծիծաղ շարժել։

Երբ որ մի փոքրիկ փոխանորդ սկսում է իրան ինքնիշխան ճանաչել և զօրքայ հրամաններ արձակել, նա ծիծաղ է յարուցանում։

Երբ որ մի ուսուցիչ՝

—

Ուսուցիչ ասացի, միտքս եկան Երևանի հըռչակաւոր ուսուցիչները։

Նրանք իրանց անմահացրին միայն մի նամակով։

Մի փոքրիկ նամակով։

Դուք այդ կարդացած կը լինէք «Մշակի» երէկվայ համարում։

Այդ նամակը ահա այն նամակներիցն է, որ և ծիծաղեցնում է և տխրեցնում։

Նամակը ծիծաղելի է. գրողները ծիծաղելի գրութեան մէջ են։

Բայց մի և նոյն ժամանակ տխուր է այդ նամակը և նրա գրողները թշուառ վիճակի մէջ են։

Եթէ այդ ուսուցիչների աշակերտները գրած լինէին մի այդպիսի նամակ, այն ժամանակ ուսուցիչները պէտք է մ ի ա ւ ո ր ն ե ր շարած լինէին և փոքր ինչ էլ մտածէին նրանց բարոյականի մասին։

—Լեթված աշակերտներ են, կամ ինչպէս մի ժամանակ էջմիածնում գրում էին՝ լպիրշ, ժպիրհ և իմաստակ։

digitised by A.R.A.R.@

Բայց դրանք աշակերտներ չեն։ Այլ ուսուցիչներ։

Ուսուցիչներ, որոնցից ձուկ են խնդրում, իսկ նրանք տալիս են օձ։

Դրանք էլ Գեր-ուսուցիչներ կամ Արտա-ուսուցիչներ են։

Ժամանակի ծնունդ, մոդայի ապրանք։

Եւ ծիծաղելի է և տխուր։

—

Ես չեմ մոռանում մի Գեր-քարոզ, որ Մեծ-Պասի ժամանակ ասվեց Թիֆլիսի Շամքոռեցոց եկեղեցում։

Քարոզիչ քահանան պատմեց հետևեալը։ «Մի աշխարհական մարդ սպանել է միւսին և նրան կտոր-կտոր արել։ Եկել է մի քահանայ, հաւաքել այդ սպանվածի մարմնի մասերը, կանոնաւոր տեղաւորել նրանց և յետոյ խաչակնքել։ Մեռելը կենդանացել է»։

Ծխականները շատ ուրախացել են, որ քահանան այդ տեսակ բժշկութիւններ կարող է գործել և վճռել են այնուհետև այլ ևս բժշկի չը դիմել, այլ միշտ իրանց քահանային։

—Էժան էլ կու պրծնինք ու մէկ էլ վուր նրա լիզուն լաւ հասկանում ինք։

Պէտք է խոստովանել, որ տէր հայրը ժողովրդի հետ խօսում է հասկանալի ոճով, Հաւլաբարի բարբառով։ Ճշմարիտ է, նրա քարոզներից մէկը լաւ չէր հասկացել մի հարս ու կռուել էր իր սկեսրոջ հետ, բայց տէրտէրը հետևեալ քարոզում կշտամբեց այդ հարսին անհասկացողութեան համար։

—Այ, էտէնց բանիր պիտի միզ քարոզին, վուր աթմորթին մխիթարվի. մարդը կտուր-

digitised by A.R.A.R.@

կտուր է էլի ու տէրտէրը նրան մէրաչ ծառի նման կանգնեցնում է։

Ես ուզում եմ ծանօթանալ այդ նշանաւոր գեր-տէրտէրի հետ և տեսնել արդեօք կարող կը լինի նա իրօք զանազան տեղերի մեռած կտորներից կենդանի մարմիններ գոյացնել։

Գեր թատրոն, գեր-ուսուցիչ, գէր-տէրտէր, գեր-քարոզ...

Ծիծաղը սառչում է մեր շրթունքների վրա։

Մենք կարող էինք ամբողջ թերթեր լցնել գեր-գործողներով և գեր-երեւոյթներով։

Դիտեցէք ձեր շուրջը։

digitised by A.R.A.R.@

XCI

(12 *մայիսի* 1902 *թ*., *«Մշակ»* № 101)

Երեք օր առաջ ինձ այցելեց մի երիտասարդ, որ նոր էր եկել արտասահմանից, ուր նա մինչև այժմ ուսանում էր։

—Մեզ չեն ճանաչում արտասահմանում, ասաց նա, և Իսլանդիայի բնակիչների մասին աւելի ճիշդ գաղափար ունեն, քան մեր մասին։

—Այո, համաձայնեցի ես, Եւրոպայում միայն նորերս, սարսափելի արհաւիրքներից յետոյ, փոքր ինչ ընդարձակ գաղափար կազմեցին մեր մասին։

—Ես վճռել եմ այդ առիթով մի աշխատութիւն հրատարակել Եւրոպայում, յայտնեց նա։

—Ի՞նչ տեսակ աշխատութիւն, հետաքրքրվեցի ես։

—Մի աշխատութիւն, որի մէջ ցոյց կը տամ մեր արած կուլտուրական առաջադիմութիւնները։

—Իսկ ինչ էք կարծում, մեր արած առաջադիմութիւնները մեծ են, հարցրի ես։

—Ես բաւական մեծ եմ համարում, պատասխանեց նա ուժգին շեշտելով։ Հայերը ունեն մամուլ, թատրոն, դպրոց, խմբական երգեցողութիւն, նկարիչներ, երգիչներ, ամեն տեսակ մասնագիտութեան անձինք, գրքեր, գրագա-

digitised by A.R.A.R.@

րաններ, ընթերցարաններ, բարեգործական հիմնարկութիւններ և այլն և այլն։

—Այդ բոլորը կայ, բայց դեռ սաղմնային վիճակի մէջ, նկատեցի ես։

—Ինչու էք եղածը նուազեցնում, վրդովված բացականչեց նա։

—Ես չեմ ուզում նուազեցնել, յայտնեցի ես, միայն բարի խորհուրդ եմ տալիս՝ ձեր աշխատութեան մէջ ոչինչ չը չափազանցնել, որովհետև մեր արած առաջադիմական քայլերը շատ թոյլ են և դեռ խախուտ հողի վրա են կանգնած։

Երիտասարդը ինձ հետ չէր ուզում համաձայնել և երկար ժամանակ վիճում էր։

—

Մենք սկսեցինք դիմել իրական կեանքի փաստերին։

—Դեռ ոչ մի լրագիր և ոչ մի ամսագիր մեր մէջ, ասացի ես, չէ կարողանում առանց նիւթական զոհաբերութեան առաջ տանել իր հրատարակութիւնը։

—Անհաւատալի է, բացականչեց երիտասարդը, իսկ ես լսել եմ, որ մեծ եկամուտներ են ստացվում և տասնեակ հազարներ են յետ գցվում։

—Շատ բան կը լսէք, ասացի ես, բայց պէտք է լսածը ստուգել։ Մեր ընթերցող հասարակութիւնը մինչև այժմ դեռ ոչ մի թերթի չէ տուել երեք հազար բաժանորդ։ Իսկ կէս դարից աւելի է, որ մենք մամուլ ունենք և ամեն տեղ լուր ենք տարածել, թէ մենք շատ գրագէտ և ընթերցասէր մի ազգ ենք։

Երիտասարդը աւելի բարձր կարծիք ունէր մեր տպագրական գործի աջողութեան մասին։

digitised by A.R.A.R.@

—Մեզանում, բացատրեցի ես, գրքերը շատ սակաւ դէպքերումն են իրանց ծախքը հանում և չահ տալիս հեղինակին։ Միայն դասագրքերը և մի երկու վէպեր։ Մնացածը տարիներ և երբեմն տասնեակ տարիներ մնում են ընկած գրավաճառանոցներում։ Գիրքը մեզանում տըպւում է առհասարակ ոչ աւելի քան 1200 օրինակ և շատ սակաւ դէպքերում է նա արժանանում երկրորդ հրատարակութեան։

Երիտասարդը չէր ուզում հիասթափւել· բայց նրա առաջ դրված էին փաստեր։

—Գրադարանները և ընթերցարանները մեր մէջ շատ սակաւաթիւ են, շարունակեցի ես, և նրանք էլ պահպանվում են մասնաւոր օժանդակութիւններով։ Ընթերցողների թիւը քիչ է և նրանց բաժանորդագնով անկարելի կը լինէր ապահովել այդ տեսակ հիմնարկութիւններ։

—Իսկ ինչպէս բացատրել մասնաւոր գրադարանների գոյութիւնը, հարցրեց երիտասարդը։

—Այդպիսիները չը կան, պատասխանեցի ես, իսկ եթէ մի երկուսը գոյութիւն ունեն, նրանք էլ առաջ են գնում դարձեալ զոհաբերութիւններով։ Ես այլ ես չեմ խօսում այն բանի մասին, որ ընդարձակ, լիակատար, հարուստ գրադարան-ընթերցարան ամենեւին չունենք, եթէ չը հաշուենք Բագուինը, որ միայն համեմատաբար ճոխ է և բաւարար։

—

—Նայեցէք մեր բարեգործական ընկերութիւններին, ասացի ես, տեսէք ինչ սահմանափակ գործունէութիւն ունեն։ Այնտեղ, ուր նրանք պէտք է մի քանի հազար անդամներ ունենային, միայն մի քանի տասնեակը ունեն և շատ քիչ նուիրատուութիւններ են ստանում

իրանց գործունէութիւնը զարգացնելու համար։

—Ժամանակով գործը կը զարգանայ, նկատեց Թոյլ ձայնով Երիտասարդը։

—Անկասկած, ժամանակով կը լինի, բայց այժմ դեռ նա Թոյլ է և սահմանափակ։

Մենք ուշադրութեան առինք վերջին տարիների ընթացքում տեղի ունեցած մի քանի աննպաստ և բարեպատեհ դէպքեր և վերջ ի վերջոյ համաձայնեցինք, որ ինքնագործութեան ոգին դեռ Թոյլ է մնզանում։

—Դուք խօսում էք մեր խմբական երգեցողութեան մասին, չարունակեցի ես։ Բայց նա դեռ չէ պատուաստվել մեր երկրում և միայն մի երկու տեղ կազմվել են երգեցիկ խմբեր, որոնք սակայն դեռ հաստատ կազմակերպութիւն չունեն և կախված են կամաւորների բարի ցանկութիւնից մասնակցելու կամ չը մասնակցելու։ Պէտք է յամենայն դէպս նկատել, որ այդ գործը գոնէ հարուստ եկեղեցիների վերաբերութեամբ կարելի կը լինէր կազմակերպել, որովհետև այնտեղ դրամական միջոցներ կարող են գտնվել այդ գործի համար։

—

Երիտասարդի հետ մենք անցանք այն նկարչական ցուցահանդէսը, որ ներկայումս բացված է Թիֆլիսում։

—Տեսէք, դիմեց Երիտասարդը, այստեղ կան բաւական աջող նկարներ։

—Այո, համաձայն եմ, նկատեցի ես, բայց հարցրէք նկարչից, Թէ ինչ աջակցութիւն է նա գտնում հասարակութիւնից։

Մենք դիմեցինք նկարչին մեր հարցով։

—Գալիս են, ասաց նա, այցելուներ, գովում են, ձեռքս սեղմում են, շնորհաւորում են և

digitised by A.R.A.R.@

յետոյ անվերադառնալի կերպով անհետանում։ Մեծ նկարները մնացել են անվաճառ, իսկ ծախվել է փոքրիկների, էժանագինների միայն մի մասը։ Նկարիչը պէտք է կարողանայ իր արհեստով ապրել, նրա եկամուտներով իրան ապահովել։ Դա գեղարուեստի յարատեւութեան պայմանն է։ Իսկ մեր հասարակութիւնը պահանջում է, որ մենք նկարենք, կատարելագործվենք, ճանապարհորդութիւններ կատարենք և մեր նկարչական տպաւորութիւնների պաշարները հարստացնենք, բայց նա միայն լսէ մեր մասին և հեռուից հեռու հրճվի։ Այդպիսով գեղարուեստը չէ կարող զարգանալ և հաստատ հող բռնել մեր երկրում։ Նկարիչներից մէկը, միւսը մի քանի տարիներ զոհաբերութիւններ կանեն, բայց չեն կարողանայ դիմանալ և կը հեռանան ասպարէզից։

—Ճիշդ է, համաձայնեցինք մենք և ծանր տրամադրութեամբ հեռացանք։

—

Խօսքը անցաւ թատրոնին։

—Ահա, այս ասպարէզում, ասաց երիտասարդը, բաւական գործ կայ կատարված։ Մենք ունեցել ենք Ադամեանի նման նշանաւոր դերասան, այժմ էլ ունենք աչքի ընկնող դերասանական ոյժեր։ Մենք ունենք Սունդուկեանցի կօմեդիաները և թարգմանել ենք ուրիշ լեզուներից շատ պիէսներ։

—Այդ ճիշդ է, համաձայնեցի ես, բայց և այնպէս հայկական թատրոն չունենք մինչև այժմ։ Հայ դերասանական ոյժերը մինչև այժմ չեն կազմել մշտական որոշ խմբեր։ Եւ միայն

digitised by A.R.A.R.@

նոր-նոր նշմարվում են թատրոնական գործի հաստատ կազմակերպության ուրուագծերը։

—Շուտով կունենանք և մշտական թատրոն, նկատեց երիտասարդը, այժմ այդ բանի մասին մեծ հոգ է տանում նոր բացված դրամատիկական ընկերությունը։

—Բարի աջողություն, բացականչեցի ես։

—Ուրեմն այդ գործը կարելի է համարել ապահովված և գրեթէ իրականացած։

—Գրեթէ, կրկնեցի ես, բայց երբ արդեօք կարող կը լինենք ասել նոյնը առանց «գրեթէ»-ի։

—

Մենք մանրամասն կանգ առինք և դպրոցական խնդրի վրա։

Մեզ հետաքրքրում էր մեր թեմական դպրոցների ներկայ վիճակը։ Մենք չէինք կարող հրճվել Երևանի և Շուշու թեմական դպրոցների գլխով անցած ողբերգական պատմութիւններով։ Բայց ստիպված էինք խոստովանել, որ համեմատաբար փոքր ի շատէ բաւարար վիճակի մէջ է եղել վերջին տարիները Ներսիսեան դպրոցը։

—Սակայն տէրտէրները, որոնք մուտք են գործել, կը քանդեն և այդ դպրոցը, ասացի ես։

—Ի՞նչ են անում նրանք, հետաքրքրվեց երիտասարդը։

—Ամեն կերպ աշխատում են խառնաշփոթել, բացատրեցի ես։ Նրանցից մէկը հնարել է և տուել հոգաբարձութեանը մի անհիմն մեղադրական զեկուցում դպրոցի մանկավարժական և այլ կարգերի մասին։

—Ի՞նչ նպատակով, զարմացած հարցրեց երիտասարդը։

digitised by A.R.A.R.@

—Աղմուկ յարուցանելու, պղտոր ջրեր առաջ բերելու, որոնց մէջ կարելի լինէր ձկներ որսալ։

—Իսկ մինթէ առաջնորդական փոխանորդը, որ հոգաբարձութեան նախագահն է, չէ նկատում այդ բոլորը։

—Նկատում է, վրա բերեցի ես, և պէտք է խոստովանեմ, որ ներկայ դէպքում նա իրան լաւ է պահում։ Նա տէրտէրներին սկզբում լսեց, բայց յետոյ համոզվեց, որ չար գազանների հետ գործ ունի։ Այժմ նա լաւ ճանաչում է նրանց։ Բայց կարծեմ արդէն ուշ է։ Տէրտէրները Թիֆլիսից դուրս աշխատել են և աշխատում են։

—Ինչու այդքան ուշ նա ճանաչեց նրանց, հետաքրքրվեց երիտասարդը։

—Իրան հարցրէք, պատասխանեցի ես։ Տեսական եթերներից երբ որ երկիր իջաւ և երբ տեսաւ, թէ կրօնի և աստուածապաշտութեան վարագոյրի ետև թագնված տէրտէրները ինչ գիտումներ են առաջ տանում կեանքի մէջ, այն ժամանակ հասկացաւ։

—

Այնուհետև անցանք մեր կեանքի միւս կուլտուրական արտայայտութիւններին։ Ամեն տեղ կան սկիզբներ, կան գործունէութեան սաղմեր. բայց դեռ ոչ մի կուլտուրական գործ խոր արմատներ չէ գցել կեանքի մէջ։

—Գրեցէք մեր կուլտուրական ձգտումների մասին, եզրափակեցի ես, արձանագրեցէք գոյութիւն ունեցող մխիթարական փաստերը, ողջունեցէք կուլտուրական մտածողութեան և փորձերի արտայայտութիւնները. բայց մի չա-

digitised by A.R.A.R.@

փաղանցնէք։ Ինծէ հարկաւոր է, որ մեզ ուրիշները ճանաչեն, թող մեզ ճանաչեն այնպէս, ինչպէս որ կանք։ Մենք դեռ շատ քիչ ենք արել և շատ քիչ ենք առաջ գնացել։

—Բայց ապագայ առաջադիմութեան յոյսեր տալիս ենք պարզորոշ կերպով։

—Ապագան ուրիշ բան է, նկատեցի ես. ապագայի մասին երազներ ունենալը այդ ձեր գործն է, ձեր ճաշակի բանն է։

Ներկան ջոկ, ապագան ջոկ։

---

digitised by A.R.A.R.@

XCII

(19 *մայիսի* 1902 *թ.*, *«Մշակ»* № 106)

Երրորդ զանգը տուին. չոգեկառքի սուլոցը պատռեց օդը իր սուր ձայնով. գնացքը շարժվեց.

—Դէպի ու՞ր, հարցրի ես կառքի մէջ նստած իմ հարևանից։

—Դէպի Երևան, պատասխանեց նա, իսկ դո՞ւք։

—Ես ևս Երևան։

—Այդ լաւ է, յայտնեց նա, մենք ուղեկիցներ կը լինենք մինչև վերջ։

Ծանօթացանք և մեր ծանօթութիւնից գոհ մնացինք։ Շատ բան ունէինք միմեանց պատմելու և միմեանցից լսելու։

Երկաթուղու գնացքը Թիֆլիսից դուրս է գալիս երեկոյեան։ Մենք վճռեցինք մեր գրոյցները յետաձգել մինչև առաւօտ և շտապեցինք յարմարեցնելու մեր տեղերը հանգստութեան համար։

Գնացքի օրօրը շուտով գցեց մեզ քաղցր նիրհի մէջ։

—

Առաւօտը վաղ զարթեցինք։ Մեր առաջ բացվել էին և անդադար բացվում էին նորանոր հրաշալի տեսարաններ։

digitised by A.R.A.R.@

Ո՞րքան գեղեցիկ է այն ճանապարհը, որ ընկած է Սանահնի և Մեծ-Ղարաքիլիսայի մէջ։

Կանաչապատ լեռներ, նեղ ու լայն ձորեր, կարկաչահոս վտակներ և գետեր, երկար ու երկար ձգվող անտառներ, վայրենի ժայռեր և քարակոյտեր, տեղ-տեղ մարդկային բնակութեան և գործունէութեան վկայութիւններ... այդ բոլորը միանգամից գրաւում են մարդու և տանում նրա ամբողջ ուշքը դէպի բնութեան ծոցը։

Իսկ քանի մօտենում ենք Շիրակին, այնքան բնութիւնը դառնում է միակերպ և նիւթ չէ տալիս մարդու աչքերին։ Այդտեղ սկսում է ձեզ հետաքրքրել հ ո ր ի զ ո ն ը։ Դուք դիտում էք հեռաւոր դաշտավայրերը, հսկայական բարձրութիւնները և շուտով յոգնում էք։

—

Ես չեմ նկարագրի իմ ճանապարհորդական տպաւորութիւնները, Ալէքսանդրօպօլում անցկացրած մեր մի քանի ժամերը, երկաթուղային նոր գծի անյարմարութիւնները և...

Այդքան ժամանակ չունեմ։

Ես ուրիշ զրոյցներ ունեմ անելու։

Իմ ուղեկիցը պատմում էր ինձ իրանց Երեւանի գործերի, Էջմիածնում տեղի ունեցած դէպքերի մասին և տալիս էր հետաքրքրական մեկնութիւններ։

Նա բացատրեց, թէ ինչու են արված վերջին ժամանակների մի քանի կարգադրութիւնները, ինչու են ճանապարհորդում հոգևորականները Էջմիածնից Թիֆլիս և այստեղից այնտեղ։

—

—Ի՞նչ էք կարծում, հարցրեց ինձնից իմ ու-

digitised by A.R.A.R.@

ղեկիցը, ո՞վ պէտք է համարվի լաւ հոգեորական։

—Ի՞նչ հարց է, զարմացայ ես։

—Չէ, պնդեց նա, դուք պատասխանեցէք.

—Ի հարկէ, կմկմացի ես, ով որ լաւ է հովվում իր ժողովուրդը, արդարադատ է, աղնիւ է, անձնուէր է, բարեսիրտ է։

—Դուք միամիտ էք, նկատեց նա։ Ինչ օգուտ այդ տեսակ հոգեորականից մի իշխանաւորի համար։ Հասոյթներ են հարկաւոր հաճելի լինելու համար։ Մի օր չըհասի խնդրի լուծում, միւս օր մի ագէտ տիրացուի ձեռնադրութիւն, երրորդ օրը մի խաչի և կամիլավկայի մասին միջնորդութիւն, չորրորդ, հինգերորդ օրերը զանազան յանձնարարութիւններ այս ու այն վանքում, թեմում... Ի հարկէ վերադիրներով։

—Դուք չափազանցնում էք, խօսքը կտրեցի ես։ Տխուր բացառութիւններ ամեն տեղ եղել են և կը լինեն։

Ուղեկիցս սկսեց շարել միմեանց ետեւից փաստեր, որոնցով նա փչացրեց իմ տրամադրութիւնը։

Ես փոխեցի խօսակցութիւնը և մենք զբաղվեցինք քիւրդերով, որոնց վրանները երեւում էին կառքի լուսամուտի միջով։

—

Ուղեկիցս շատ լաւ ծանօթ էր քիւրդերի կեանքին և պատմեց հետաքրքիր բաներ։

Քիւրդերը շատ սիրում են և շատ գնահատում են Արագածի արօտները։ Քիւրդերը շատ մեծ դժուարութեամբ ձեռք կը քաշեն Արագածից։ Մի ժամանակ, ինչպէս ասում են, Հասան-խանի ժամանակ, քիւրդերը անբաւական

digitised by A.R.A.R.@

լինելով տեղական վարչութիւնից, թողնում են իրանց գիւղերը և տեղափոխվում են Թիւրքիա։

Լուրը հասնում է Հասան-խանին։

—Քիւրդերը փախան գնացին, ասում են նրան։

—Իսկ Ալագեազ (Արագած) սարը ո՞րտեղ է, հարցնում է խանը, մի՞թէ նա էլ է փախել։

—Ոչ, նա իր տեղն է հաստատ, պատասխանում են խանին։

—Ուրեմն, քիւրդերը նորից կը գան, կտրական յայտնում է խանը։ Քիւրդերը Ալագեազից չեն բաժանվի։

Արդարև մի քանի ժամանակից յետոյ քիւրդերը վերադառնում են։

Արագածը սիրելու սար է։

Ուղեկիցս կատակով պատմում էր երկու քիւրդի մէջ տեղի ունեցած հետևեալ վէճի մասին։

—Ոչխարին մորթելուց առաջ պէտք է նրան կուշտ ուտացնել, ասում է մի քիւրդ։

—Չէ, պնդում է միւսը, հարկաւորութիւն չը կայ կերակրելու, մի և նոյնն է ոչխարի համար։

—Մորթվելը մորթվում է, առարկում է առաջինը, թող վերջին անգամ լաւ ուտէ, յետոյ մորթվի։

—Ինչո՞ւ զուր տեղը խոտը վատնվի, յայտնում է միւսը։

—Բայց դա անխղճութիւն է, բացականչում է առաջինը։

—Հէր օրհնած, պատասխանում է միւսը, թէ խղճմտանքից ես խօսում, էլ ինչո՞ւ ես մորթում։

—Աքա չը մորթենք ոչխարին, զարմանում է

digitised by A.R.A.R.@

առաջինը, ոչխարը մորթելու համար է, էլ ու-րիշ ինչ բանի համար է նա ստեղծված։

Յետոյ ուղեկիցս սկսեց այս պատմութիւնը յարմարեցնել մեր կեանքի մի քանի դէպքերին։

—

Իմ ուղեկցի հետ ունեցած խօսակցութիւն-ները անսպասելի կերպով փոխեցին մեր ճա-նապարհորդութեան ծրագիրը։

Նա խորհուրդ տուեց իջնել վերջընթեր կա-յարանում և գնալ Էջմիածին։

—Ես ժամանակ չունեմ այնտեղ մնալու, յայտնեցի ես։

—Մենք միայն կանցնենք Էջմիածնով, նկա-տեց նա, և կիմանանք վերջին եղելութիւնները։

Ես համաձայնեցի։

Վաղարշապատում մենք իջանք իմ ուղեկցի մի բարեկամի մօտ։

Ուղեկիցս իսկոյն ուղարկեց իր ծանօթների ետևից, որոնց թւում էր և մի վարդապետ։

—Ի՞նչ նորութիւններ ունէք, հարցրինք մենք։

—Նորութիւններ շատ կան, պատասխանեց վարդապետը։ Հիւրեր է, որ մի գլուխ գալիս են։ Տօ ինչ ցաւ ու հոգս դարձաւ ձեր այդ եր-կաթուղին։ Հա՛ գնում են ու հա գալիս։ Մեր Երևանն էլ կայ ու կայ առաջվայ պէս, իբրև մեր մշտական հիւրերի բունը։

—Ի՞նչ նորութիւններ կան, հարցրեց ուղե-կիցս։

—

Վարդապետը պատմեց ամուսնալուծութեան խնդրի վերաբերութեամբ մի քանի բնորոշ դէպ-քեր, որոնց մասին սակայն ես ստիպված եմ լռութիւն պահպանել։

Գոնէ առ ժամանակ։

Յետոյ գուցէ և պատմեմ։

digitised by A.R.A.R.@

Վարդապետը հետաքրքրվում էր և հնութիւններով ու ձեռագիրներով։

—Չը գիտէք արդեօք, հարցրեց նա ինձնից, թէ ինչ եղան այն թղթերը և ձեռագրերը, որ Մակար կաթողիկոսը պահանջել էր Արսէն քահանայ Բագրատունուց։

—Չը գիտեմ, պատասխանեցի ես։

—Ինձ մօտ կայ այդ մասին մի կոնդակ, նըկատեց վարդապետը, և ես հետաքրքրվում եմ այդ հարցով։

Վարդապետը հանեց գրպանից մի կոնդակի պատճէն։ Կոնդակը հին էր, 1889 թուի յունիսի 19-ից։

—Ես կարծում եմ, ասացի ես, որ դուք պէտք է դիմէք ձեր հարցով այն անձանց, որոնց անունը յիշված է կոնդակում։

Վարդապետը որոնում էր իր յիշած թղթերի մէջ մի քանի կարևոր ցուցումներ։

Բայց հարց է, թէ որտեղ են մնացել այդ թղթերը։

—Ինչ է ասված կոնդակի մէջ, հարցրեց ուղեկիցս։

—Ահա ինչ, վարդապետը կարդաց կոնդակը՝

> Առաջնորդական գրագրութիւնք Մեր և բազում կարևոր նամականիք ամփոփեալք ի միում յարկեղ՝ և եդեալք ի պահեստի ի Հայրապետական ամարանոյին Բիւրականայ, յայսմ ամի անհարազատ ձեռօք հրոյ ճարակ եղեն. արդ՝ կամելով մեր գիտել թէ օրպիսի գրագրութիւնք կամ նամականիք այրեցան ի նմին ամարանոցի և որպիսիք մնան առ քեզ յարկեղ գրեանց մերոց, վասնորոյ՝ առաքեցաք առ քեզ զարժանապատիւ զԳիւտ քահանայ Աղանեանց՝ յաղագս բերելոյ զգրա-

digitised by A.R.A.R.@

ւոր գործս և դնամականիս առ քեզ եղեալս. քանզի՝ մենք մտաբերեմք, զի յերկոսին կաչեալ պայուսակս այնպիսի գրագրութիւնք ամփոփեալք, եղեալք են յարկեղ գրոց մերոց. զայսոսիկ զերկոսին զպայուսակսն՝ յանձնեսցես յիշեալ քահանային՝ վասն հասուցանելոյ առ մեզ.

—Կոնդակը շատ պարզ է, նկատեցի ես, և յայտնի է, թէ ում պէտք է դուք դիմէք։

Վարդապետն էլ գիտէր, թէ ում պէտք է դիմել և նա քաղաքականութիւն էր միայն գործ դնում։

Պէտք է խոստովանեմ, որ ինձ համար բաւական դժուար էր ըմբռնել այն բոլոր խօսակցութիւնները, որոնք տեղի ունէին իմ ուղեկցի բարեկամի մօտ Վաղարշապատում։

Նրանք խօսում էին պայմանական ոճերով, իրանց միայն յայտնի ածականներ գործածելով և յաճախ միայն ակնարկներ անելով։

Միայն այն դէպքերում, երբ նրանք կամենում էին ինձ մի որ և է բան բացատրել, պատմում էին հանգամանօրէն։

---

digitised by A.R.A.R.@

XCIII

(2 յունիսի 1902 թ., «Մշակ» № 116)

Առաւօտեան մենք ճանապարհ ընկանք դէպի Երևան։

Հրաշալի օր էր։ Գարնանային թարմութիւնը, մեր առաջ բացված ընդարձակ հօրիզօնը, հսկայ Մասիսը իր լուսավառված գագաթով և գիւղական տեսարանները կլանեցին մեր ուշքն ու միտքը և մենք, անձնատուր եղած բնութեան հմայքին, չիմացանք, թէ ինչպէս անցկացրինք ամբողջ ճանապարհը։

Ահա և Երևանի այգիները։

Մենք սկսեցինք զբաղվել Երևանով։ Իմ ուղեկիցը պատմեց այն փոփոխութիւնների մասին, որոնք տեղի են ունեցել վերջին ժամանակները Երևանում։

—Քաղաքը փոքր ինչ կենդանութեան նշաններ է ցոյց տալիս, ասաց նա։

—Օրինակ, հարցրի ես։

—Շարժումը և երթևեկութիւնը մեծացել են. քաղաքը ընդարձակվում է. շինվում են նոր տներ, բացվում են մեծ խանութներ։ Այժմ ունենք բանկային հաստատութիւններ։ Շուտով կունենանք ջրանցք, ձիաքարշ, այգեգործական դպրոց։

—Այնպէս որ ընդհանրապէս լաւ տրամադրութեան մէջ էք, հարցրի ես։

digitised by A.R.A.R.@

—Չէ կարելի ասել, մրմնջաց նա, մեզ շատ տխրեցնում են մեր Թեմական դպրոցի վիճակը, ագէտ քահանաների ձեռնադրութեան չը դադարելը և ծխական իրաւունքների ոտնատակ տալը։

Հասանք քաղաք և միմեանցից բաժանվեցինք, պայմանաւորվելով հանդիպելու միմեանց նոյն օրը և տեսնվելու շատ մարդկանց հետ։

—

Երևանցիների վրա ծանր տպաւորութիւն է գործել ուսուցիչների շարադրած հրապարակական այն անմիտ նամակը, որ նրանք լոյս ընծայեցին իրանց ստորագրութեամբ։

—Շատ բաներ կատարվեցին այստեղ, ասում էին ծանօթներս, շատ բնորոշ դէպքեր տեղի ունեցան, որոնք մեզ են միայն յայտնի և մամուլի նիւթ չը դարձան։

Եւ ինձ պատմեցին մի շարք եղելութիւններ, որոնք առանձին լոյս էին սփռում գործող անձնաւորութիւնների վրա։

Սակայն ես անկարող եմ բոլոր մանրամասնութիւնները արձանագրել և խօսել մի քանի թէև բնորոշ, բայց այնպիսի առարկաների մասին, որոնց լոյս տեսնելը անյարմար է։

—Պատմական դարձած նամակը, որ տպվեց, ապաթէօզն էր այն տարտամ վիճակի, որի մէջ գտնվում էր դպրոցը։

—Ստրկահոգի մի նամակ էր, նկատեցի ես, և որքան ինձ յայտնի է, նա ամեն տեղ շատ վատ տպաւորութիւն է գործել։ «Մշակի» խմբագրութեան մէջ նամակի հեղինակների դէմ ստացվել էին շատ բողոքներ, որոնք սակայն չը հրատարակվեցին։

—Մեզ համար մանաւանդ ցաւալի էր այն, ասացին խօսակիցներս, որ ուսուցիչներից մի

digitised by A.R.A.R.@

քանիսի վրա մենք մեծ վստահութիւն ունէինք, իսկ նրանք չը քաշվեցին խ ա խ ո ւ տ քայլերից և ճահիճի մէջ գլորվեցին։

Խօսակիցներս վիճաբանութեան մէջ ընկան։ Մի քանիսը բացարձակ մեղադրում էին ուսուցիչներին, միւսները դպրոցում տիրող մթնոլորտը և կարգերը, որոնք ստեղծել են մի անտանելի դրութիւն մարդկանց համար։

—

—Ամեն մարդ հերոս լինել չէ կարող, ասում էր մի պարոն, իսկ մեր իրականութիւնը ամեն մի քայլում աւելորդ զոհեր է պահանջում և հերոսական գործերի է սպասում։ Հերոսներ չը կան։ Միջակութիւններ են, որոնք կեանքի նըպաստաւոր հանգամանքներում դեռ կարող են օգտաւէտ գործողներ լինել, իսկ եթէ փորձութեան մէջ ընկան, իսկոյն կընկճվեն և վատ դեր կը կատարեն։

—Եթէ լաւ հերոսներ լինել չեն կարող, առարկում էին ուրիշները, գոնէ վատ հերոս լինելուց հրաժարվէին։ Միթէ մեծ հերոսութիւն էր հարկաւոր, օրինակ, չը ստորագրել այն կասկածելի որակութեան նամակին, որ տպվեց լըրագրում, կամ չը զբաղվել ստոր զրպարտութիւններով իրանց ընկեր ուսուցիչների վերաբերութեամբ։

—

Գովեստներ լսեցի մի երէցփոխի եռանդի մասին, որ թողած իր սեփական գործերը երեսի վրա, անձնուիրաբար զբաղվել է եկեղեցական շինութիւններ անելով։

—Ո՞վ է ձեզանում Թիֆլիսում վճռում և թոյլատրում երէցփոխին ծախքեր անել—ծխա-

digitised by A.R.A.R.@

կան ժողովը, թէ կօնսիստորիան, հարցրին նըրանք ինձնից։

Ես պատմեցի մեր Թիֆլիսի մասլահաթները, Քամոյեանց եկեղեցու և ուրիշ եկեղեցիների շինութիւնների դէպքերը և յայտնեցի իմ տեսակէտը, որ ծախք անել կարելի է միայն ծխական ժողովի որոշումներից յետոյ։

—Անհրաժեշտ է, ասաց խօսակիցներիցս մէկը, այնպէս գործը կազմակերպել, որ մեր երէցփոխը չենթարկվի զրպարտութիւնների։ Օրինակ, եթէ մէկը առարկէ, թէ կատարվող շինութիւնները կարելի է աւելի էժան կերպով գլուխ բերել, ինչ պէտք է մենք նրան պատասխանէինք։ Կարող են առարկել, որ գուցէ կարելի կը լինէր աճուրդով տալ աւելի ձեռնտու պայմաններով։

—Զրպարտութիւնները կան ու կան և կը լինեն միշտ, նկատեցին միւսները։ Բայց ճիշդ է, որ պէտք է ապացոյցներ ունենալ զրպարտութիւնները ցրելու համար։

Այնուհետև սկսեցին երկար պատմութիւններ անել տպարանական հաշիւների մասին, հարցնում էին, թէ ինչու 40 մատեանի համար տալիս են 48 րուբլի, երբ կան տպարաններ, որոնք մի մի րուբլիով են տպում։ Տուին ազգանուններ, արին զանազան բացատրութիւններ, բայց ես չուզեցի այդ հարցերի քննութեան մէջ մտնել։

—

Հոգաբարձուներից մէկը ինձ պատմեց, որ վերջին ուսուցչական գործի առիթով այնքան բացատրութիւններ են գրվել, որ կարելի է մի լաւ հատոր կազմել։

digitised by A.R.A.R.@

—Ի՞նչը եղաւ սակայն այդ գործի սկզբնապատճառը, հարցրի ես։

—Մի կաթիլ ջուր, բայց կասկածելի որակութեան ջուր։ Ագապեան ուսուցիչը անձնապէս վիրաւորված լինելով ուսուցիչ Պապօվեանի մի նկատողութիւնից, յայտնում է իր ընկերներին, որ այդ Պապօվեանը Թիֆլիսում եղած ժամանակ մասնաւոր խօսակցութեան մէջ նկարագրել էր Երեւանի մանկավարժական կազմը շատ վատ գոյներով, չը խնայելով նախագահին, անուանելով տեսչին «փ ա լ ա ս», իսկ ուսուցիչներից մի քանիսին «ա պ ու շ»։ Ահա դա է կաթիլ ջուրը։ Այդ մասնաւոր խօսակցութեան տեղ հասցնելը առիթ դարձաւ մի շարք բացատրութիւնների...

—Սակայն Ագապեանը յայտնելով այդ մասին, նկատեց մէկը, մասնաւոր բնորոշումը դարձրել է բոլորի սեփականութիւն և հազիւ թէ լաւ ծառայութիւն է մատուցել իր ընկերներին։

Ես յոգնեցի Երեւանի ասէկօսէներից։ Եւ որ աւելի ծանրագոյնն է, այդ այն է, որ վերջ չէ տեսնվում այդ խառնփնթորութեանը։ Կանցնեն մի շաբաթ, մի ամիս, մի քանի ամիսներ և գործը կը մնայ նոյն տարտամ, նոյն անմխիթար վիճակի մէջ։

Եւ հասկանալի է, թէ ինչո՞ւ։

Որովհետև կարգ ու կանօնը չեն որոշում իրերի դրութիւնը, այլ քմահաճոյքները և կամայականութիւնները։

Ես հրաժարվում եմ Երեւանի դպրոցի և կօնսիստորիայի շուրջը կատարվող միւս գործերի

digitised by A.R.A.R.@

մասին խօսելուց։ Խոշոր և մանր երևոյթները, սկզբունքի և մասնաւոր նկատումների արտա-յայտութիւնները, լուրջ բողոքները և բամբա-սասիրական ասէկոսէները խառնվել են միա-սին և առաջացրել մի յուզված վիճակ, բայց և մի և նոյն ժամանակ մի յոգնած դրութիւն հասարակութեան շրջաններում։

Երևանը վերջ ի վերջոյ ծանր տպաւորու-թիւն թողեց ինձ վրա։

digitised by A.R.A.R.@

XCIV

(2 յունիսի 1902 թ., «Մշակ» № 122)

—Այս երեք պարոնները մեր գլխաւոր սիօնիստներն են, որոնք ամեն ճիգ թափում են մեր յաջորդին այստեղ պահելու, իսկ ժողովրդի մի մեծ մասը հակասիօնիստական տրամադրութիւն ունի։

Խօսակցութիւնը տեղի ունէր Նոյ Նահապետի հիմնած Հին-Նախիջևան քաղաքում, ուր ես գնացի Երևանից։

Մի պարոն, որ վերցրել էր իր վրա ուղեկցի դեր, պատմում էր ինձ իրանց քաղաքի և գաւառի եղելութիւնների և օրվայ հարցերի մասին։

Սիօնիստները և հակասիօնիստները, որոնց մասին խօսում էր իմ ուղեկիցը, հրէաներ չէին և ոչ մի կապ չունէին հրէական սիօնիզմի հետ։ Հին-Նախիջևանի սիօնիստները հայեր էին, այնպիսի հայեր, որոնք պաշտպանում են իրանց յաջորդ Սիօն վարդապետին, իսկ հակասիօնիստ նրանք, որոնք նրա դէմ են և նրան չեն համակրում։

Սիօնիստ խօսքը միայն մի զուգադիպութեան արգիւնք էր։

—Հին-Նախիջևանի ժողովուրդը, նկատեց մի սիօնիստ, ընդունակ չէ գնահատելու Սիօնի

digitised by A.R.A.R.@

արժանիքները և հետամուտ է միայն մի բանի, այն է նրան հեռացնելու մեր քաղաքից․

—Թող այդ չը գնահատվածը, պատասխանեց մի հակասիօնիստ, հետևի աւետարանական խրատին և, թօթափելով իր կօշիկներից հողը, հեռանայ ուրիշ տեղեր, ուր նրան կը գնահատեն։

—

Իմ ուղեկիցը առաջարկեց շրջագայել քաղաքի մի քանի տեղերում։ Ես ուրախութեամբ համաձայնեցի։

—Ահա մեր շուկան, յայտնեց նա, որ յայտնի է այստեղ «Ղափանի տակը» անունով։ Տեսէք, ինչ լաւ մրգեր ունենք․ կեռաս, ծիրան, նօվրաստ, գէօվջի։ Քթոցներ և տաշտեր լիքն են մրգերով։ Իսկ շուտով կը գան խաղողը և բօստանների պտուղները...

Մինչ ես ուսումնասիրում էի վաճառանոցը, մօտեցաւ մէկը իմ ուղեկցին և ծածուկ խօսեց։

Բանից դուրս եկաւ, որ այդ ձևով միմեանցից տեղեկանում են ընթացիկ եղելութիւնների մասին։ Իմ ուղեկիցը յայտնել էր իմ մասին, որ մի ճանապարհորդ եմ դէպի Պարսկաստան։

—Նայեցէք այս արևելցի խանութպանին, ասաց իմ ուղեկիցը։

Ես նայեցի։

—Ուշադրութիւն դարձրէք, շարունակեց նա, նրա արածի վրայ։ Խանութպանը մի գլուխ ճանճեր էր քշում կշեռքից։

—Ի՞նչ մի առանձին բան կայ դրանում, զարմացած հարցրի ես։

—Տեսէք, վրա բերեց ուղեկիցս, խանութպանը ճանճերը, ճիշդ է, քշում է կշեռքից, բայց ոչ հաւասարապէս կշեռքի ամեն մի կողմից։ Նա

digitised by A.R.A.R.@

թոյլ չէ տալիս, որ ճանճերը նստեն այն կողմի լարերի վրա, որտեղ կշռելու քարերն են, և քշում է այդտեղից, իսկ ամենևին չէ խանգարում, որ նրանք նստեն ապրանքի կողմում եղած լարերի և չղթաների վրա։

—Ի՞նչ նպատակով, հետաքրքրվեցի ես

—Որպէս զի կշեռքի այն կողմում մի որոշ ծանրութիւն աւելի լինի և ապրանք քիչ պահանջվի հաւասարակշռութեան համար։

—Անհաւատալի է, բացականչեցի ես, դա շատ չնչին մի տարբերութիւն կունենայ։

—Որքան էլ չնչին լինի, առարկեց նա, դարձեալ տարբերութիւն անում է. իսկ կան ասողներ, որ երբ թէ մինչև մի ութերորդական ֆունտ կազմվում է այդպիսով։

Թէև ուղեկիցս խօսում էր լուրջ, այնուամենայնիւ ես համարում եմ նրա հաղորդածը, եթէ ոչ մոլորութիւն, գոնէ չափազանցութիւն. իսկ զրպարտութիւն չեմ կարող անուանել, որովհետև չեմ կասկածում նրա ազնւութիւնը։

—

Անցանք դարբնոցները, գինետները, ոսկերիչների խանութները, շրջեցինք մի քանի տեղեր, խօսեցինք մի քանի գիւղացիների հետ և ուղևորվեցինք դէպի քաղաքային այգին։

Իմ ուղեկիցը պատմեց այգում եղած պարսկական բուդկայի մասին մի քանի այնպիսի մանրամասնութիւններ, որոնք ես չեմ կարող ձեզ հաղորդել։

Այնուհետև մենք դուրս եկանք քաղաքի սահմանից և ուղղվեցինք դէպի շրջակայ տեղերը։ Ես կը հաղորդեմ միայն մի քանի անմեղ բաների մասին։

—

—Մեր գիւղում, պատմեց մի գիւղացի, այս ձմեռ հետեւեալ դէպքը պատահեց։

—Ձեր գիւղը ո՞րն է, հարցրի ես։

—Կուլիբէգ-գիզա գիւղը. պատասխանեց նա։ Մեր գիւղացիներից մէկի տանը մեռաւ մի փոքր երեխայ։ Նրա պապը՝ Ստեփան Յակոբեանը, դիմեց գիւղի Տէր Սիմօնին, որ թաղէ երեխային. բայց սա հրաժարվեց յայտնելով, որ ինքը մկրտութեամբ է զբաղված և բացի այդ՝ նա երեխայի ծխատէր քահանան չէ, ուստի կարող է թաղել երեխային միայն այն ժամանակ, եթէ նա այդ մասին թուղթ ունենայ ծխատէր քահանայից։ Ստեփանն էլ ջղրվեց ու տարաւ ինքը երեխային թաղեց։

—Յետոյ։

—Յետոյ ծխատէր քահանան եկաւ Մազրա գիւղից, հաշտեցրեց Տէր Սիմէօնին ու Ստեփանին, աջահամբոյրը ստացաւ ու գնաց։

—

—Գաղթականները ապերախտ գտնվեցին դէպի մեզ, յայտնեց կատակով մի գիւղական գըրագիր։

—Ի՞նչպէս։

—Նրանցից շատերը, ցրվելով մեր գիւղում, ստանձնում էին ժամհարի, դպիրի, տիրացուի պաշտօններ։ Եւ երեւակայեցէք, եկւոր տիրացուն որքան ապերախտ դուրս եկաւ. նա ուղղում էր մեր տէրտէրի սխալները։ Ի՞նչ անենք, թէ մեր տէրտէրը տգէտ է. տիրացուն դարձեալ նրան չը պէտք է ուղղէր։ Խեղճ ժամհարներ ու դպիրներ. նրանք առաւօտից մինչև երեկոյ առանց մի րոպէ հանգստանալու ամեն տեսակ ծառայութիւններ են անում իրանց

digitised by A.R.A.R.@

տէրտէրին, նրանց որդկերանց ու հարսներին, և վայ է թէ նրանք դժգոհութիւն յայտնեն, իսկոյն նրանց դուրս են անում...

—

Նախիջևանում շատ են սիրում ամէն մի բան բացատրել չար մտքով։

Օրինակ, որ և է տէրտէր խաչ է ստանում, իսկոյն լուր է տարածվում, թէ այդ խաչի համար այս և այն աջահամբոյրն է տրված։

Լաւ է, որ մեծ գումարների անուններ չեն տալիս և, օրինակ, բաւականանում են տասնհինգ րուբլիով կամ դրա մօտ մի գումարի անուն տալով։

Բաւական է, որ մի հոգևորական ասում է մի տիկնոջ, թէ ձեր աչքերը շատ նման են իմ հանգուցեալ կնոջ աչքերին, իսկոյն պատրաստ է բամբասանքը և վատ ենթադրութիւնների չարքը։

Սիօնիզմի շուրջը կատարվող անթիւ և անհամար խօսակցութիւնները, անկասկած, նախանձի և չկամութեան արդիւնք են, որին զոհ են գնում անմեղ գառներ։

Խեղճ անմեղ գառներ։

—

digitised by A.R.A.R.@

XCV

(16 *յունիսի* 1902 *թ.*, *«Մշակ»* № 128)

Վերջացնում եմ իմ ճանապարհորդությունը։

Ջին-Նախիջևանից ես ուղղվեցի դեպի Պարսկաստան։ Իմ ճանապարհորդության վերջակետը պետք է լիներ Թավրիզը։

Ինձ այնպես էր թվում, որ Թավրիզ գնալը մի առանձին դժվարություն է ներկայացնում. մինչդեռ փորձը ցույց տվեց, որ դա շատ հեշտ և յարմար մի ճանապարհորդություն է։

Պարսկաստան գնալը, Թավրիզը և Սալմաստը այցելելը, չը գիտեմ ինչու, հերոսությունների կարգն էր դասված։

—Ա-ն ուղևորվում է Պարսկաստան, Բ-ն ճանապարհ ընկաւ դեպի Թավրիզ, Գ-ն արդէն հասել է Թավրիզ և այնտեղից նամակ է գրել, Դ-ն մտադիր է գնալ Սալմաստ, Ե-ն, Զ-ն այցելել են Հաֆթվան ու Սավրի գիւղերը... Թ-ն, Լ-ն և այլուրենի բոլոր անունները վերադառնում են Պարսկաստանից...

Պարսկաստանի այս և այն կէտի այցելելը չափազանցրած ձևով տպաւորվում էր մարդկանց երևակայութեան մէջ։ Պարսկաստան գընալը կազմում էր ամբողջ առաքելութիւնների իննսուն իննը տոկոսը...

Բանից դուրս եկաւ, որ Թավրիզ գնալը այնքան մի թեթև բան է, որ մարդ քաշվում է

նոյն իսկ նրա մասին յիշելուց։ Արաքսի ափերից, մեր սահմանագլխից մինչև Թաւրիզ միայն մի 127 վերստ տարածութիւն է, որ կարելի է հեշտութեամբ անցնել թէ ձիով և թէ կառքով։

Մանաւանդ այժմ, երբ եւրօպական կառքեր են երթևեկում Արաքսի և Թաւրիզի մէջ, կարելի է ճանապարհորդել, աննկատելի կերպով անցնելով այդ փոքր տարածութիւնը մի 10—12 ժամվայ ընթացքում։

—

Ես մենակ չէի։ Ինձ հետ միասին Թաւրիզ էր գնում մի բելգիացի, որ Պարսկաստանում ապրում է մի քանի տարիներից ի վեր։ Նա բաւական տեղեակ էր երկրի հանգամանքներին։

—Ուշ արթնացաւ Պարսկաստանը, ասում էր նա ինձ։ Երկիրը հարուստ է և ապագայ զարգացման համար ունի առատ նիւթ. բայց շատ է յետ մնացել իր վարչական կարգերով և ժողովրդի կրթութեան աստիճանով։

—Մի՞թէ հին պարսկական կուլտուրան նպաստաւոր հետքեր չէ թողել, հարցրի ես։

—Ինչպէ՜ս չէ, վրա բերեց նա։ Ժողովուրդը կուլտուրական շատ բարեմասնութիւններ ունի։ Նա գեղեցիկ կերպով մշակում է իր այգիները և բուսցնում է հրաշալի մրգեր։ Նա ունի արհեստներ, օրինակ գորգագործութիւն, շերամապահութիւն, որոնց արդիւնքները նա կարող է վաճառահանել և վաճառահանում է նոյն իսկ այժմ։

Մենք տեսանք բազմաթիւ գիւղեր հորիզոնի վրա, տեսանք մշակած դաշտեր, կանաչաւէտ այգիներ, բոստաններ։

digitised by A.R.A.R.@

Գետերի և գետակների շատ քիչ էինք հան-դիպում, բայց երկիրը ոռոգված էր։

—Ահա պարսկաստանցու ամենամեծ ընդունակութիւններից մէկը, ընդգծեց բելգիացին, տեսէք ինչ վարպետութեամբ նա որսում է ստորերկրեայ ջրերը և նրանցով ջրում իր հացերը։ Դարերի փորձը նրան շինել է այնպիսի ինժեներ, որի հետ չէ կարող մրցել մեր եւրոպացի մասնագէտը։ Պարսկաստանցին, իբրև մի խլուրդ, փորփրում է հողի ներքին շերտերը և ճանապարհներ բաց անում ջրերի համար։

Այնուհետև մենք խօսեցինք պարսկաստանցու սակաւապետութեան, չարքաշութեան և համբերատարութեան մասին։ Եւրոպացին դիտելու ընդունակութիւններով օժտված մի մարդ էր։ Նա պատմում էր շատ բնորոշ դէպքերի և երևոյթների մասին։

—

Ես հաղորդեցի բելգիացուն այն ամենը, ինչ որ ինձ յայտնի էր պարսկահայերի կրթական գործի և ուրիշ կուլտուրական փորձերի մասին։

—Սիւրպրիզների երկիր է Պարսկաստանը, ասաց նա։

—Ի՞նչպէս։

—Այստեղ կարող էք ազատ կերպով դպրոցներ բանալ և այդ դպրոցներում ձեր ցանկացած ծրագիրները իրագործել, դուք կարող էք ազատ կերպով ժողովվել, խօսել, դասախօսութիւններ կարդալ, գրքեր հրատարակել, պարբերական թերթեր լոյս ընծայել, ոչ ոք գրաքննութեան չի ենթարկի ձեր մտքի արդիւնքները և նոյն իսկ կարող են ձեզ խրախուսել և օգնել. բայց դուք չը պէտք է զարմանաք, եթէ յանկարծ մի առաւօտ կարգադրութիւն լինի

digitised by A.R.A.R.@

այդ բոլորը արգելելու և սահմանափակելու մասին։

—Կարող է պատահել, համաձայնեցի ես։

—Այդ է այս երկրի ցաւոտ խոցը, նկատեց նա։ Բոլորը կախված է քմահաճոյքից և բարեհայեցողութիւնից։ Հաստատ կուլտուրական սկզբունքներ չը կան։

Ես յիշեցի Ասիայի հին կեանքի ծանր երեւոյթները, բայց ոչինչ չասացի բելգիացուն. Նա ինձնից լաւ գիտէր։

—

Թաւրիզը ասիական քաղաք է։ Դա արեւելքի մի խորշն է բնորոշ գծերով. Վաճառանոցում տիրում է մեծ կենդանութիւն։ Աղմուկ, շարժում, երթեւեկութիւն, բոլորը խառնված միասին՝ մի մեծ ճանճանոցի տպաւորութիւն են թողնում։ Փողոցները նեղ են և ծուռ։ Տների պատերը ծածկում են ձեզնից մարդկանց բնակարանները։ Որքան փողոցի կեանքը բաց է, այնքան ընտանեկան կեանքը ծածկված է օտարի հայեացքից։

Կան և եւրոպական ձևի շինութիւններ, բայց քիչ թւով։

Ծանօթացայ քաղաքի հետ և առանձնապէս հայերի հետ։ Ուսումնասիրեցի տեղական գործերը և հարց ու փորձեր արի Ատրպատականի վիճակի մասին։

Պէտք է խոստովանեմ, որ եթէ դէն դնենք մի քանի բացառութիւններ, առհասարակ ես հիասթափվեցի։

Շնորհիւ այն ամեն տեսակ լուրերի և ծրագիրների, որոնք պտտում են Պարսկաստանի գործերի շուրջը, մի այնպիսի տպաւորութիւն

digitised by A.R.A.R.@

էր իմ մէջ գոյացել և խտացել, որ եթէ թէ այդ երկրի հայերի կեանքի մէջ կուլտուրական առանձին գործեր են կատարված։

Սակայն ինչ պարզվեց։

Տխուր իրականութիւն։

Թաւրիզից դուրս շատ քիչ տեղերում կան դպրոցներ, ինտելիգէնտ գործողներ։ Ամբողջ Ղարադաղը թաղված է թանձր խաւարի մէջ։ Սալմաստի և Ուրմիի շրջականներում կատարվող կրթական ջանքերը հոգեվարքի մէջ են։ Ժողովուրդը ճնշված, յուսահատ, հիասթափված՝ չէ հաւատում վաղվայ օրին։

Պարսկահայը կամ հասարակ, հլու աշխատաւոր է և կամ մի զարմանալի քաղաքագէտ անձ։ Ես առիթ ունեցայ այդ քաղաքագէտներից մի քանիսի հետ միասին այցելութիւններ անել զանազան անձանց և տեղական գործողների։ Պարսկահայը մի և նոյն երևոյթի և գործի մասին ինձ մի բան էր ասում, տեղական իշխանաւորին մի ուրիշ բան, պարսկին մի տարբեր բան, եւրօպացուն բոլորովին հակառակը, ուբանն, ուրանցին տալիս էր մի մեկնութիւն, արհեստաւորին մի ուրիշ մեկնութիւն... Առաւօտից մինչև երեկոյ քաղաքագիտութեան արհեստին վարժվելով, նա այլ ևս չը գիտէ, թէ ինչ ասէ իր տանեցիներին, երբ երեկոյեան տուն է վերադառնում։

—Հանգամանքներն են մեզ ստիպում այդպէս անելու, բացատրում էին ինձ։

Բայց երբ հանգամանքները շատ խիստ կերպարանք են ստանում և դանակը ոսկորին է դիպչում, այն ժամանակ այլ ևս անկարելի է դառնում մարդկանց զսպել և նրանք խօսում են։

Այդպիսի մի հանգամանք մեծ իրարանցումի

և խոսակցության առարկայ էր այս գարնան։

Դա մարաղացիների գանգատի և բողոքի գործն էր։

Բնորոշ գործ է, ուստի կանգ կառնեմ նրա վրա։

Դժբաղդաբար չարիքի հերոսը մի կովկասահայ էր եղել—Միրզա Աֆթանդիլեան։

Այդ Աֆթանդիլեանը, հաստատվելով Մարաղայում թաջիրբաշի, թոյլ է տալիս մի շարք այնպիսի հարստահարութիւններ, կեղեքումներ և չարագործութիւններ, որ խայտառ յուսահատեցնում է ժողովրդին։

Ո՞ւմ դիմել, ինչ անել։

Մարաղացիները գանգատվում են, ում որ կարող են։ Նրանք դիմում են Ատրպատականի առաջնորդին, որը խոստանում է օգնել ժողովրդին։

Ինձ պատմեցին այն խոսակցութիւնները, որոնք տեղի են ունեցել առաջնորդարանում Միրզա Աֆթանդիլեանի և Մարաղայի հինգ ներկայացուցիչների մէջ, ներկայութեամբ Աղա Զաքարիա Թաջիրբաշու և բժիշկ Փաշայեանի։

—Մարաղացիները ապերախտ են, ասում է Աֆթանդիլեան, ես նրանց լաւութիւն շատ եմ արել, նրանք բոլորը մոռացել են և այսօր ինձ դէմ գանգատաւոր են։

Մարաղայի ներկայացուցիչները կամ ինչպէս այստեղ նրանց անուանում են՝ «աղսախկալները» վրդովված են Աֆթանդիլեանի խօսքերից։

—Թոյլ տուէք ինձ, յայտնում է աղսախկալ Ա. Վարդանեանը, որ ես պատմեմ դրա լաւութիւնները։ Աֆթանդիլեանը այն մարդկանցից է, որ ծածուկ մտնում է մարդկանց խաների առաջ ու յետոյ հրապարակով գալիս է և խընդ-

digitised by A.R.A.R.@

բամատոյց լինում խաներից՝ ազատելու վնասվածին։ Հէնց ես 1901 թւի ջրօրհնէքի թաթախման գիշերը դրա յորդորանքով ֆարրաշների ձեռքն ընկայ, բանտ նետվեցի և իմ ոտքերը գելարանում փակվեցին։ Միւս առաւօտ Աֆթանդիլեանը ինձ համար բարեխօսեց, ես տուգանք տուի և ազատվեցի։ Որքան այսպիսի փաստեր կան։

—Թողէք, ես էլ ասեմ, յայտնում է Մահտեսի Ղալան։ Աֆթանդիլեանը ինձ դէմ այնպիսի մեքենայութիւններ լարեց, որ ես սնանկ հրատարակվեցի, չը նայելով այն բանին, որ իմ պահանջներս շատ աւելի մեծ էին, քան իմ պարտքերը. յետոյ նորից յարուցեց 24 թումանի պարտքի հարց, որը կրկնապատկեց և ստանալուց յետոյ էլ իմ մուրհակը չը վերադարձրեց։

—Միթէ ինձ հետ էլ Աֆթանդիլեանը նոյնը չարաւ, միջամտեց Ն. Բաղալեանը և իմ մուրհակն էլ մինչև այժմ չէ վերադարձնում ինձ։

—Իսկ ինչ անուն տալ Աֆթանդիլեանի այս վարմունքին, բացականչեց պ. Եսայեանը։ Նա անմեղ տեղից բանտարկել տուեց ուսուցիչ Վարդանեանին, ֆարրաշներով լցնելով ուսումնարանի շինութիւնը։

—Ինչո՞ւ, միջամտեց Ա. Խուդիեանը, ինձ բանտարկել տուեց այդ արիւնարբուն, ինչո՞ւ 100 թումանի տուգանք վերցրեց ինձնից, ինչո՞ւ գինետների վրա աւելորդ հարկեր է դրել սահմանվածից աւելի։

Այնուհետև հանդէս են բերվում բազմաթիւ պարտամուրհակների, ղաբալաների, բանտարկութիւնների, մատնութիւնների հարցեր, որոնց մասին յիշատակութիւնը աւելորդ է։

digitised by A.R.A.R.@

—Ինչո՞վ վերջացաւ այդ բոլորը, հետաքրքրվեցի ես։

—Մարաղայինները, բացատրեց ինձ գործին ծանօթ մի պարոն, տեսնելով, որ ելք չէ տեսնվում, դիմեցին ռուսաց հիւպատոսին և խընդրեցին նրա աջակցութիւնը։ Նա ծանօթացաւ բոլոր գործի հետ, պաշտօնանկ արաւ Միրզային և առաջարկեց մարաղայիններին նոր թաջիրբաշի ընտրելու իրանց համար։

Մարաղացի աղսախկալների Մարաղա վերադառնալը և Մարաղա մտնելը մի յաղթական պատգամաւորութեան կերպարանք է ստացել։ Նրան դիմաւորելու համար առաջ են գնացել թէ հայեր և թէ թուրքեր, որոնք ազատվել են վերջապէս Միրզայից և նրա սարսափելի պահակախմբից։

Ես կանգ առայ Մարաղայի ներկայ գործի վրա ցոյց տալու համար, թէ ինչ տեսակ գործեր կարող են այստեղ կատարվել օրը ցերեկով և թէ ինչ անօգնական վիճակի մէջ է գտնվում այստեղի ժողովուրդը, երբ նա ընկնում է ասիական կեղեքողի ձեռքը։

—

Թաւրիզի հայերի խօսակցութեան առարկաներից մէկը ապագայ կենտրոնական դպրոցն է։

Առհասարակ համակրութեամբ են խօսում, բայց երկիւղ են կրում, թէ դպրոցը գուցէ գումարներ շատ պահանջէ, քան հաշված է և գումարներ ժամանակին չը հաւաքվին։ Պէտք է նկատել, օրինակ, որ կենտրոնական դպրոցի բացման գաղափարը չէ ուրախացնում ուսուցիչներից մի քանիսին։

Պէտք է դպրոցներ բանալ գիւղերում և այնտեղ ուղարկել ուսուցիչներից շատե-

digitised by A.R.A.R.@

րին։ Բայց գիւղերի մասին այստեղ թէև շատ յաճախ խօսում են, բայց շատ քիչ հոգ են տանում իրապէս։

Թաւրիզում կարդացվում են երբեմնապէս հասարակական դասախօսութիւններ, տրվում են ներկայացումներ, գոյութիւն ունեն մի քանի ընկերութիւններ, որոնց մէջ մասնակցում են ոչ միայն տղամարդիկ, այլ և կանայք։ Բայց ընդհանրապէս կեանքը մեռած է։

Յամենայն դէպս այդ կուլտուրական փորձերը մխիթարութիւն են պատճառում այն թանձր մթնոլորտի մէջ, որտեղ այնպէս է թւում, որ հասարակական կենդանի գործը գոյութեան իրաւունք չունի։

Ես կամաւ կանգ չեմ առնում կուլտուրական այստեղի փորձերի վրա։ Յարգելի պատճառներ ունեմ։

Իմ ներկայ ճանապարհորդութիւնը միայն մի նախաբան էր։ Ապագայում, յոյս ունեմ, ես առիթ կունենամ խօսելու Ատրպատականի գործերի մասին։

Վերջացնելով իմ գործերը, ես ճանապարհ ընկայ դէպի Կովկաս։ Երրորդ օրը արդէն Թիֆլիսումն էի։

digitised by A.R.A.R.@

XCVI

(23 յունիսի 1902 թ., «Մշակ» № 134)

Իմ ճանապարհորդութեան առիթով ես ստացայ մի շարք գրութիւններ, որոնք լրացնում էին իմ տպաւորութիւնները և ժողոված նիւթերը։

Ես կօգտվեմ ժամանակով այդ գրութիւններից և կը հաղորդեմ ընթերցողին այն, ինչ որ բնորոշ և հետաքրքրական կը գտնեմ նրանց մէջ։

Մի պարոն ինձ ուղարկել է մի ցուցակ, որտեղ նշանակված են անուններ և գումարներ։

Այդ ցուցակից ես չեմ օգտվի, որովհետև տեղեկութիւնները ժողովված են գաղտնի և ոչ մի գրաւոր հետք չը կայ նրանց ճշդութեան մասին։

Գուցէ բոլոր թւերն էլ զուտ ճշմարտութիւններ են, բայց նրանց ճշդութիւնը չէ կարելի ապացուցանել։

—Ի՞նչ ցուցակ է, կը հարցնէք դուք։

Դա մի ցուցակ է, որտեղ նշանակված են ամուսնալուծութեան սակագներ, տգէտների ձեռնադրութեան աջահամբոյրներ, խաչերի և կամիլաւկաների փոխադարձ տրիտուրներ և ուրիշ այդ տեսակ ցուցմունքներ։

Մանրամասն է ցուցակը։

Այդ ցուցակից, ինչպէս ասացի, ես չեմ օգտա-

digitised by A.R.A.R.@

վի։ Թող ներէ ինձ նրա հեղինակը. նա արդարև մի ծանր աշխատութիւն է կատարել այդպիսի մի վիճակագրութիւն կազմելով. բայց այդ աշխատութիւնից օգտվելը դժուար է։ Դա պատասխանատու գործ է։

—

Կանգ առնեմ մի գրութեան վրա, որ ուղարկված է Երևանից։ Գրողը՝ Ռուբէն Հասան-Ջալալեան խօսում է մի լուրջ և կարևոր հարցի մասին։

Գրողը իրաւացի նկատողութիւն է անում։

Վարչական և դատաստանական հիմնարկութիւններում թարգմանները մեծ դեր են կատարում, մինչդեռ մինչև այժմ հաստատ կազմակերպութիւն չէ ստացել կանոնաւոր և բարեխիղճ թարգմանութիւններ անելու կարևոր խնդիրը։

Նամակագիրը ուղարկել է թարգմանութեան մի նմուշ, որ իր տարօրինակութեամբ ծիծաղ է շարժում, բայց մի և նոյն ժամանակ տխուր մտածմունքների առիթ է տալիս։

Այդ նմուշը մի յայտարարութիւն է, որ կախված է պատից Երևանի գաւառական հաշտարար դատաւորի ատեանում։

Ահա նա.

Объявленіе

Эриванскій уѣздный мировой судья симъ доводитъ до всеобщаго свѣдѣнія:

1) Судебныя засѣданія мирового судьи присходятъ, исключая табельныхъ дней, ежедневно,

Յայտարարութիւն

Երևանու գաւառի հաշտարար դատաւորն հանձնում է Ամենին տեղեկութեան։

1) Հաշտարար դատատրն դատաքննութեան Ատեանըն լինում է ամեն օր 10 ժամից առաւօտեան

съ 10 часовъ утра и продолжаются до окончанія всѣхъ дѣлъ, по коимъ явились вызванныя лица.

և շարունակւում է մինչի ամէն գործերի վերջանալն, որունքում մարդիքն եկել են բացի տօնի օրերից։

2) Письменныя просьбы, жалобы и сообщенія принимаются имъ, въ предѣлахъ ввѣреннаго ему мироваго отдѣла вездѣ и во всякое время.

2) Գրաւոր խնդիրքներն գանգատներն և այլ յարակցութիւնք ընդունում՝ են նոքայ իրանց հպատակ տեղերումն, որոնք ստորադրեալն նորա. հաշտարար կառավարութիւնն ամէն տեղ և Ամեն ժամանակ։

3) Словесныя просьбы, жалобы и сообшенія приносятся ему въ присутственной его камерѣ во время судебнаго засѣданія, съ 10-ти до 12-ти часовъ утра, а внѣ этого времени, лишь только въ случаяхъ, не терпящихъ отлагательства.

3) Լեզուաւոր գանգատներն և խնդիրքներն ընդունում է նայ իրան տատաքննութեան Ատենումն 10 ժամից մինչև 12 ժամն առաւօտեան և թէ էն ժամանակումն չը լինի միմեան այն օր չէր սպավիլ փոքր ինչ ետանալ։

и 4) Стороны, свидѣтели, свѣдущія лица, равно чиновники административной и полицейской власти, при представленіи мировому судьѣ своихъ объясненій, показаній, излагаютъ оныя стоя, при объявленіи же имъ рѣшеній и приговоровъ, съ своихъ мѣстъ встаютъ и всѣ присуствующіе.

և 4) Դատախազքն, վըկայքն, իմացողքն, նմանապէս ծառայողքն պոլիցիական առաջարկելով հաշտարար դատաւորին իրանց բացատրութիւններն, ցուցմունքներն և վերջաբանութիւն-շարունակելով առելով կանքնած և վճռօքն յայտնելուն ամեն յատեան լինողներն և տեղներից կանքնում են։

Արդեօք կարելի է մի բան հասկանալ հայերէն թարգմանութիւնից։

digitised by A.R.A.R.@

Ինչպէս տեսնում էք, ո՛չ. չէ կարելի։

Պէտք է գիտել ռուսերէն բնագրին իմաստը ըմբռնելու համար։ Իսկ թարգմանութիւնը արուած է այն անձանց համար, որոնք ռուսերէն չը գիտեն։

Ուրեմն էլ ինչո՞ւ համար են թարգմանել։

Եւ գիտէք ինչ։

Բանից դուրս է գալիս, որ այդ յայտարարութիւնը ամբողջ 31 տարի է, որ կախված է ատեանում և ոչ ոքի խելքին չէ գալիս նրան դէն չպրտելու և կարգին թարգմանութեամբ փոխարինելու։

—

Երևանից ստացած միւս գրութիւնների մասին ուրիշ անգամ, եթէ յարմարութիւն կը լինի։ Նախ քան վերջացնեմ, անհրաժեշտ եմ համարում հետևեալ ծանօթութիւնն անել՝ Յայտարարութեան թարգմանութեան մէջ բոլոր ընդգծումները ինձ են պատկանում։

digitised by A.R.A.R.@

XCVII

(7 յուլիսի 1902 *թ.*, «*Մշակ*» № 146)

Ինչպէս յիշում էք, իմ կատարած ճանապարհորդութեան առիթով ես ստացել էի մի քանի գրութիւններ։ Ես ծանօթացրի ձեզ, ընթերցող, Երևանից ստացած գրութիւնների հետ։ Այժմ առաջ կը բերեմ Հին-Նախիջևանից ստացածները։

Ընդամենը ութ գրութիւններ եմ ստացել, որոնցից երեքը շատ մեծ, իսկ միւսները համառօտ։ Ես կը հաղորդեմ միայն նրանց էական մասերը։

—

Գրութեան մէկը ասում է՝

Դուք նկարագրեցիք մեր քաղաքի բազարը, մեր փողոցները, մեր քաղաքային այգին, մեր սիօնիստների և հակասիօնիստների բռնած դիրքը։ Այդ լաւ է։ Ինչո՞ւ սակայն չը մնացիք մի երկու օր էլ աւելի և չայցելեցիք մեր գիւղերը։

Դուք կը տեսնէիք մի անօգնական վիճակ։ Դուք կը պարզէիք մի շարք այլանդակութիւններ ժողովրդական կեանքի մէջ, որոնք ուժասպառ են անում խեղճ աշխատաւորին։

Մխիթարութիւն ոչ մի կողմից։

Գիւղից փախչում են նրա զաւակները։ Բաղդ որոնելու նպատակով պանդխտութեան են դիմում ոչ միայն աւելորդ երիտասարդ ոյժերը,

digitised by A.R.A.R.@

այլ և տան մշակները, նոյն իսկ հասակաւորները և ծերերը։

Ցաւ է, եթէ պանդուխտը աջող գործ չէ գըտել և անկարող է հեռուից օգնել իր ընտանիքին։

Բայց երբեմն ցաւ է նաև այն ժամանակ, երբ նա առանձին մի բաղդի է հանդիպել. նա իր մօտ է տեղափոխում և իր կնոջ ու երեխաներին, իսկ հողը յանձնում է հարևանին կամ բարեկամին։

Որքան կանայք, որքան երեխաներ սպասում են իրանց ամուսիններին և հայրերին։

Որքան արտասուք, որքան կարօտ, որքան երկմտութիւն—վշտի մի ծով է պանդխտի ընտանիքը։

Յիշեմ մի դէպք, որ տեղի ունեցաւ անցեալ տարի։

Մի գիւղում, որ հինգ վերստ Նախիջևանից հեռու է, գիւղացի Սարգսի ընտանիքը ամբողջ ութ տարի է սպասում էր իր պանդխտին։ Կինը և երկու մանուկները ամէն տեսակ զրկանքներ տանում էին, հաւատալով, որ այսօր-էգուց կը գայ տան տէրը։ Սարգիսը փող չէր ուղարկում, բայց գլանում էր նաև մի երկու տողով միամտացնել իր մասին։

Վատ լուրեր էին պատում Սարգսի մասին։ Ասում էին, որ իրան արբեցողութեան է տւել և վատնում է իր ստացածը։

Ցանկարծ մի օր լուր տարածվեց քաղաքում, որ Սարգսին էտապով բերել են Նախիջևան, որտեղից նա պէտք է գիւղ գայ։ Պէտք էր տեսնել, թէ այդ լուրը ինչ մեծ ցնծութիւն և ուրախութիւն էր պատճառել նրա կնոջ և երեխաներին։

digitised by A.R.A.R.@

—Վերջապէս կը տեսնենք նրան, մեր կարօտածին, մեր մտերիմին, մեր տան գլխին, ասում էին կինը և մանուկները։

Երեք օր անցաւ. Սարգիսը չը կայ։ Ի՞նչ եղաւ նա։ Չը կայ ու չը կայ։

Մարդ ուղարկեցին տեղեկանալու։ Եւ ինչ իմացան։

Սարգիսը չէր ցանկացել իր գիւղը գնալու։ Սիրտն էր կարծրացել, ամօթն էր նրան յաղթահարել, դատարկաձեռն լինելն էր նրան ճընշել, թէ վերջնականապէս փչացել էր—այդ ոչ ոք չէր կարողանում բացատրել։ Միայն յայտնի եղաւ, որ նա Ջուղայի վրայով փախել էր Պարսկաստան։ Մարդ ուղարկեցին, որ նրան յետ բերեն։

—

Միւս գրութիւնը, որ իր մեծութեամբ կարող էր մի հատորիկ կազմել, շատ կծու և վիրաւորական խօսքերով նկարագրում է Հին-Նախիջևանի գործողներին, վերագրելով նրանց մի շարք յանցանքներ և անազնիւ արարքներ։

—Լսել էք, գրում է նա իր առաջաբանում, որ մեր Նախիջևանի մօտ կայ Ղարղաբազար կոչված տեղ։ Նա ոչ մի բանով նշանաւոր չէ։ Բայց մեր Նախիջևանը ինքը իսկական Ղարղաբազար է՝ «ագռաւների շուկայ»։ Կուզէ՞ք ապացոյցներ։ Ահա ձեզ մի անվերջ շարք այդ ապացոյցների։

Եւ նա պատմում է բնորոշ դէպքեր իրանց ագռաւների կեանքից և արարքներից։

Սակայն այդ դէպքերի լոյս ընծայելը կը բարձրացնէ այնպիսի ագռաւային մի աղաղակ, որ նրանց նկարագրողը յուսահատութիւնից կը խելագարվի, եթէ չարունակէ մնալ նոյն քա-

digitised by A.R.A.R.@

ղաքում, ժամանակով ես կօգտվեմ «ադաւագրքի» նիւթերից, երբ հանգամանքները այդ պահանջեն։

—

Երրորդ գրութիւնը հաւաքական մի նամակ է, որ ուղարկված է իբրև ներքում տպվելու համար։

Այդ նամակը ստորագրել են չորս տէրտէր՝ Նախիջևան քաղաքի Սարգիս Տէր-Իսահակեան և Յակովբ Տէր-Մինասեանց, Ջահուկ գիւղի Արաքէլ Մէլիք-Աղասեանց և Աստապատ գիւղի Աբրահամ Ջալալեանց։

Տէրտէրների հաւաքական այդ նամակը ինձ շատ ուրախացրեց։ Նրանից ես տեղեկացայ, որ նրանք հետևում են եղել մեր լրագրութեան և հետամուտ են ճշմարտութեան յաղթանակին, որ նրանք նախանձախնդիր են հոգևոր դասի պատուին և որ վերջապէս սխալ և սուտ են Նախիջևանում պտտող լուրերը, որ իբր թէ քահանաները աջահամբոյրներ են տուել խաչ ստանալու համար։

Տէրտէրները իրանց ներքման մէջ գրում են՝

«Ոչ երբէք փողի կամ նուէրի խնդիր տեղի չէ ունեցել մեր և ոչ մէկի վերաբերմամբ. բայց մեր մէջ միտք է յղացել գոնէ մի պարզ հիւրասիրութեամբ՝ երախտագէտ գտնուիլ դէպի նա (վիճակի փոխանորդ Սիօն վարդապետը), սակայն հայր փոխանորդը քաջ տեղեակ լինելով մեր վիճակին՝ միշտ բացասել է և այն։ Թող ներուի մեզ ասել հրապարակաւ, որ Սիօն վարդապետը՝ իր կրթութեան և փորձառութեան շնորհիւ՝ կարեկից հայր է ժողովրդեան և նախանձախնդիր եկեղեցւոյ և իւր կոչման ու պաշտաման»։

digitised by A.R.A.R.@

Ուրախալի է, որ Նախիջեւանում շատ տարածված և յամառ կերպով գոյութիւն պահպանող այդ լուրերը սուտ դուրս եկան։

Ես ինքս, Նախիջեւան եղած ժամանակս, կասկածներ էի յայտնում այդ լուրերի վերաբերութեամբ. բայց պատմողները չէին զբաղվում։ Նրանցից մէկը մինչև անգամ մի այս տեսակ հարց էր տալիս, թէ խաչերի մի մասը նշանակվել է Նախկին փոխանորդի ջանքերով, իսկ ինչու աջահամբոյրը պէտք է ստանայ նրա յաջորդը։

Մի ուրիշն էլ չարախնդայ ոճով ասում էր, թէ խեղճ քարտուղարի անունը պատրուակ դարձրած կորզվել են ռուբլիներ, որոնցից սակայն ոչ մի կոպէկ էլ չէ հասել քարտուղարին։

Այժմ այդ հարցը վերջնականապէս լուծվեց։ Տէրտէրի նամակով զրպարտութիւնը հերքվեց և ոչնչացաւ։

Տէրտէրների նամակի այդ մասը, որ փաստական հերքում է պարունակում իր մէջ, հասկանալի է մեզ համար։

Բայց ես համաձայն չեմ նամակի այն մասի հետ, որտեղ հերքող տէրտէրները դատողութիւն են տալիս և յաջորդին համարում են «**կարեկից հայր ժողովրդեան**»։

Այդտեղ թիւրիմացութիւն կայ։

Ես Նախիջեւանում չը լսեցի, որ ժողովուրդը անուանում լինէր յաջորդին «հայր ժողովրդեան»։

Հերքում գրող տէրտէրները պէտք է նեղութիւն չը քաշէին ժողովրդի անունից խօսելու և սրա փոխարէն յաջորդին «ժողովրդեան հայր» հռչակելու։

Յամենայն դէպս տէրտէրների նպատակը բարի է եղել։

digitised by A.R.A.R.@

Չորրորդ գրութիւնը պատմում է մի դէպք, որի թէ հերոսը և թէ նահատակն է Շեմահմուդ գիւղի Տէր-Գաբրիէլը։

Ո՞վ է Տէր-Գաբրիէլը։

Դա մի տէրտէր է, որ այժմ ենթարկվել է յաջորդի ցասման և բարկութեան և որը սակայն մէկն է այն ութ սիօնիստ անձնաւորութիւններից, որոնք այս ձմեռ Կորիւն վարդապետին հեռագիր տուին, յայտնելով թէ ժողովուրդը գոհ է Սիօնից։

Տէր-Գաբրիէլը սիրված էր յաջորդից, իսկ այժմ հալածանքի տակ է։

Ի՞նչ է պատճառը։

Գուցէ այն, որ Սիօնը լինելով անաչառ մի հովիւ, ամենևին չէ խնայում նոյն իսկ իր կողմնակցին, երբ նկատում է զանցառութիւններ։

Քննութիւնը կը պարզէ Տէր-Գաբրիէլի յանցանքները։

Սիօնը ձմեռվայ սկզբին դիմել էր Տէր-Գաբրիէլին ց ա խ գնելու իր համար։ Տէր-Գաբրիէլը չտապում է ուղարկել իր ցախերից մի սաժէն։ Անցնում են ամիսներ։ Տէր-Գաբրիէլը գրում է Սիօն վարդապետին, թէ ցախի գինն է 24 րուբլի։ Թանգ է այդ գինը թէ էժան, ես չը գիտեմ. միայն Սիօնը ճշդապահութեամբ իսկոյն ուղարկում է փողը տէրտէրին։

Ուրեմն անձնական թիւրիմացութիւնների տեղիք չէր կարող լինել։ Մէկը առել է, միւսը ծախել է, մէկը գին է նշանակել, միւսը վճարել է։ Անձնականը պէտք է դէն գնել։

Բայց Շեմահմուդ գիւղից սկսում են գանգատներ տեղալ յաջորդին իրանց տէրտէրի վրա։ Յաջորդը յանկարծ յիշում է, որ Տէր-Գաբրիէլը

digitised by A.R.A.R.@

ձեռնադրված է եղել Խալիլու փոքրիկ գիւղի վրա, ուստի կարգադրում է, որ Տէր-Գաբրիէլը տեղափոխվի Խալիլու։ Ցեառոյ խղճալով, փոքր ինչ մեղմացնում է բարկութիւնը և հրամայում է կրօնուսոյց Տէր-Սահակին օրինաւոր քննութիւն կատարել Տէր-Գաբրիէլի գործերի վրա։

Նախիջևանում այժմ չը գիտեն, թէ ո՞րն է աւելի պատուաբեր՝ տէր-Գաբրիէլի յանցաւոր, թէ արդար դուրս գալը։ Եթէ նա յանցաւոր դուրս գայ, որքան հեղինակաւոր կը լինի ութ սիօնիստների տուած հեռագիրը Կորիւնին, իսկ եթէ արդար, ուրեմն ինչու պէտք է տէրտէրը յանկարծ հալածանքի ենթարկվէր։

—

Դուք սպասում էք, ընթերցող, որ ես պատմեմ, թէ ինչ էին պարունակում միւս չորս գրութիւնները։

Նրանք վերաբերում են Ջահուկին, Ապրակունիսին, Երնջակի վանքին և Կզնութ գիւղին։

Թէ ինչ են նրանք պարունակում իրանց մէջ, թող գաղտնիք մնայ առ այժմ։

digitised by A.R.A.R.@

XCVIII

(14 *յուլիսի* 1902 *թ*., *«Մշակ»* № 152)

Իմ ստացած նամակները այսօր կը տանեն մեզ դէպի Պարսկաստան։

Հետեւենք այդ նամակներին։

Նամակներից մէկը գրված է Թաւրիզից և խօսում է պարսկահայերի կատարելիք դերի մասին։

—Ես, ասում է նամակի հեղինակը, մեծ համակրութեամբ եմ վերաբերվում դէպի մամուլի այն յօդուածները, որոնք հրաւիրում են պարսկահայերին սթափվելու և կուլտուրական կոչում վերցնելու իր վրա, բայց մեծ յոյսեր չունեմ։ Պարսկահայը շատ է թ ո յ լ, շատ է ա ղ ք ա տ և շատ է տ գ է տ մի այդպիսի կոչման համար։ Նա իր վրա զգում է դարերի ճնշումը և շատ հեռու է քաղաքացիական արիութիւնից և ինքնավստահութիւնից։ Իբրև քաղաքացի, նա երկչոտ է և տատանվող, իբրև հասարակութեան անդամ, նա ձգտում է միայն համակերպվել ուրիշներին։ Ես ասացի, որ նա աղքատ է։ Այո, ընդհանրապէս նա աղքատ է։ Նա հազիւ կարողանում է իր ապրուստը հայթայթել։ Ճիշդ է, պարսիկ ամբոխը ընդհանրապէս աղքատ է, բայց պարսիկ կալուածատէրերի, վաճառականների և արհեստաւորների մէջ կան շատ հարուստներ։

digitised by A.R.A.R.@

Հայերը դեռ այնպիսի դիրք չեն ձեռք բերել, որ պարսիկ շրջանները նրանցից պատկառեն։ Ես ասացի նաև, որ հայը և տգէտ է։ Եւ դա ճիշդ է․ Դուք գուցէ կը զարմանաք, որ տարիներ շարունակ լսում էք մեր դպրոցների և առաջադիմութեան մասին։ Բայց չը կայ այն առաջադիմութիւնը, որ կարող է ստեղծագործող, կենսարար և շինարար դեր կատարել․ Մեր մանուկները գրագէտ են և ոչ աւելի։ Նրանք անընդունակ են այն դերի համար, որ մամուլը պահանջում է պարսկահայից։ Կուլտուրական դեր կատարելու համար պէտք է լինել աւելի ուժեղ և պատրաստուած։

Ինչպէս տեսնում էք, իմ նամակագիրը շուտ թանկվող և գրաւվող մարդկանցից չէ․ Եւ նա իրաւունք ունի։

Որպէս զի պարսկահայը կարողանայ եւրոպայու դեր կատարել Պարսկաստանում—դեռ շատ ժամանակ է հարկաւոր․ Նա պէտք է լուրջ և երկարատև աշխատանք վերցնէ իր վրա։

—Եկէք օգնելու, ասում է նամակագիրը իր երկար նամակի վերջում. գուցէ դուք, ռուսահայերդ, միացած եւրոպացիների հետ կազմակերպէք մի շարք կուլտուրական գործեր, որոնց պարսկահայն էլ մասնակից լինելով՝ ընտելանայ աւելի արժանաւոր դեր կատարելու։ Իսկ այժմ պարսկահայը մի խեղճ արարած է։

Իսկ մենք, ռուսահայերս։

—

Իմ առաջն է գրած մի նամակ, գրված Խոյից։

Կարդում եմ և չեմ հաւատում իմ կարդացածին։

digitised by A.R.A.R.@

Հայի կուլտուրական դերի մասին երազները իսկապէս դեռ երկար ժամանակ երազ կը մնան։ Ի՞նչ է ասում Նամակը։

Նա մի ապտակի պատմութիւնն է անում, մի վիրաւորական և տխուր դէպքի նկարագրութիւնը։

Լսեցէք և դուք։

Սէյիդաւադ գիւղի ծերունի եօթանասնամեայ քահանան պսակում է մի թիւրքահայ գաղթականի, որը 10—12 տարի դեգերելով Խոյ գաւառի գիւղերը, մի տեղ տիրացութեամբ և միւս տեղ տիրացու-վարժապետութեամբ է պարապվելիս եղել։

Այդ պսակը դուր չէ գալիս Խոյի տէր-Վահան քահանային, որին առաջուց դիմած է եղել տիրացուն, խնդրելով պսակ կատարել։ Տէր-Վահանը կասկած է յարուցանում տիրացուի ամուրիութեան վերաբերութեամբ և չէ պսակում։ Տիրացուն գնում է Սէյիդաւադ, ցոյց է տալիս ծերունի քահանային իր ամուրիութեան վկայականը և գործակալի հրամանագիրը։ Քահանան պսակում է։

Անցնում է մի քանի ժամանակ, Խոյի կողմերն է գալիս Մակուի ս. Թադէոս-Առաքեալ վանքի վանահայր Գէորգ ծայրագոյն վարդապետ Նալբանդեանց, որը յայտնում է այդտեղի հայ ժողովրդին, թէ նա պէտք է հովվէ այդտեղի հօտը և ժողովէ հասոյթները։

Թող այդպէս լինի, թող հովվէ, թող պաշտպանէ իր հօտը։

Խոյի տէր-Վահանը գանգատվում է հովւին Սէյդաւադի քահանայի վրա նրա կատարած պսակի համար։

digitised by A.R.A.R.@

Հովիւը խոստանում է քննել և «տնօրինել զարժանն»։

Երբ հովւելով իր հօտը՝ ծայրագոյն վարդապետը գնում է Սէյիդաւագ, այնտեղ նա հարց ու փորձի է ենթարկում Ստեփանոս քահանային։ Մինչ ծերունին բացատրում է իր արածը, յանկարծ «չ ր ա խ կ»... ծայրագոյն վարդապետը վեր է կենում և մի ա պ տ ա կ խփում եօթանասնամեայ ծերունուն, ներկայութեամբ տեղական ժողովրդի ներկայացուցիչների և գանգատվող քահանայի։ Մի բոպէ սարսափած՝ շըրջապատողները ապշած մնում են, յետոյ մէջ են ընկնում և ծերունուն ազատում յետագայ ապտակներից։

—Իշխանաւոր է, ինչ կարող ենք ասել։

Լաւ է, եթէ բանը դրանով վերջանար։ Ծայրագոյն վարդապետը պահանջում է իբրև տուգանք 10 թուման (մօտ 20 ռուբլի) փող։ Ծերունին առաջարկում է գոմէշը ծախել և գոյացած գումարից վերցնել տուգանքը։ Վարդապետը ուզում է ամբողջ գոմէշը վերցնել և տանել վանք։ Ծերունին խնդրում է խնայել իրան և այդքան խիստ զրկանքի չենթարկել։ Վերջապէս աջողվում է տուգանքը 12 դրանով սահմանափակել։ Որքա՜ն զիջում, որքա՜ն բարութիւն, որքա՜ն կարեկցութիւն։

Լսեցի՞ք դուք։ Արդեօ՞ք հաւատում էք։

Թէև նամակ գրողը հաւատացնում է, որ նրա գրածը զուտ ճշմարտութիւն է, բայց ես դարձեալ չեմ հաւատում և նրա վրա եմ թողնում ամբողջ պատասխանատուութիւնը։

—

Երրորդ նամակը գրված է մի հեռաւոր ան-

digitised by A.R.A.R.@

կիւնից, Բարանդուզից, որ գտնվում է Ուրմիի գաւառում։

Բարանդուզը ձգտում է մոռացված աշխարհների հաշուից դուրս գալ։

Այնտեղ սկսել է թափանցել լոյսի առաջին բարակ նշոյլը։

Ահա ինչ է պարունակում իր մէջ նամակը՝

Մինչդեռ մեր թեմական հոգևոր կառավարութիւնը միայն խօսքով երբեմն յիշում էր հեռու տեղերը և մեր Բարանդուզը իր հայ-ազգաբնակութեամբ, ահա մեզ օգնութեան հասաւ Թաւրիզի Հայ. ընկերութիւնը, որը բաց արեց այս թրքախօս և ասորախօս վայրում երկու ուսումնարան, մինը Դիզա-Թափէ, իսկ միւսը Բաբառու գիւղերում։ Մի տարուց յետոյ այդ ուսումնարանները վերածվեցին երկսեռի՝ առանձին վարժուհիներով։ Այս չորրորդ տարին է, որ այդ ուսումնարանները, որոնցից օգտվում են նոյնպէս ասորի տղաներ և աղջիկներ, շարունակում են իրանց գոյութիւնը բաւական արդիւնաւոր կերպով։ Այսօր աշակերտները ազատ խօսում են իրանց մայրենի լեզուով։ Ինչ վերաբերում է աշակերտուհիներին, նրանք դեռ այնքան առաջադէմ չեն, որովհետև նրանք անկանոն են երթևեկում և տարվայ մէջ հազիւ երեք ու կէս ամիս պարապվեն (ձիւնն ընկնելուց մինչև վերանալը գալիս են ուսումնարան), սակայն ձեռագործի մէջ լաւ առաջադիմել են (կէս օրից յետոյ պարապում են այս առարկայով), այնպէս որ կարելի եղաւ ձեռագործներից՝ մի սեղանի ծածկոց և մի բարձ, իբրև աչքի զարնող իրեր, նուէր մա-

digitised by A.R.A.R.@

տուցանել վալիաթին (Թագաժառանգ) անցեալ աշնան, երբ նա Բարանդուզից անցնում էր։ Վալիաթը շնորհակալութեամբ ընդունեց այդ նուէրը, ինչպէս նաև հաճութեամբ լսեց այդ երկու ուսումնարանների աշակերտների երգեցողութիւնը, երբ նրանք իրանց ուսուցիչներով եկած էին դիմաւորութեան։ Պէտք է նկատել, որ Դիզա-Թափէի և Բաքառուի երկսեռ ուսումնարանների ծախսերը հոգում է Տ. Աֆրիկեանը։ Աւելացնեմ և այն, որ Թաւրիզի Հայ. Միացեալ ընկերութիւնը մի արական ուսումնարան ևս բաց արեց Բարանդուզի Թումաթար գիւղում վերջին ուսումնական տարւայ սկզբին։

Սա է նամակի բովանդակութիւնը։

Նա շատ մխիթարական տպաւորութիւն է թողնում։

Դեռ որքան այդպիսի հեռաւոր անկիւններ և մոռացված տեղեր սպասում են լոյսի առաջին ճառագայթների յայտնվելուն։

—

Չորրորդ նամակը խօսում է Թաւրիզի կենտրոնական դպրոցի մասին։ Նամակի հեղինակը, որ ծածկվել է «Սամուէլեան» կեղծանունով, պահանջում է գործնական վերաբերմունք դէպի գործը։

Յայտնի է, ասում է նա, որ Շահի շնորհած ֆիրմանը իրաւունք է տալիս հայերին գործել թէ առևտրական և թէ կրթական ասպարէզներում։ Մինչև այժմ գործնական ոչինչ չէ արված։ Ճիշդ է, ծրագիրներ կազմվեցին, աղմուկներ բարձրացան, բայց իրականութիւնը նոյնն է։ Այժմ միայն Թաւրիզի կենտրոնական

digitised by A.R.A.R.@

դպրոցի խնդիրն է արծարծվել առաջնորդ Մուրադեանի ջնորհիւ։ Կենտրոնական ուսումնարանը պէտք է ունենայ մասնագիտական բաժիններ, որոնց համար, մեր կարծիքով, հարկաւոր է տանուաղն 80—100 հազար րուբլի, իսկ այժմ կանխիկ դեռ շատ չունենք։ Մենք հակառակ չենք կենտրոնական դպրոցին։ Եթէ նա հիմնվի, շատ երիտասարդներ ապահով պարապմունք կունենային, կը բարեփոխվէր ժողովրդի թէ մտաւոր և թէ նիւթական վիճակը. բայց դպրոցի ապահովութեան համար պէտք է ունենալ որոշ դրամական ապահովութիւն։ Գործը վեհ է և գովելի, և ցանկանալով առաջնորդին ամբողջ հոգւով աջողութիւն, կը կամենայինք տեսնել նրա մէջ աւելի հեռատեսութիւն, լուրջ վերաբերմունք և գործնականութիւն։ Թաւրիզեցին, ինչպէս և ամեն մարդ, սիրում է գործնական բան տեսնել. նա կշտացել է խոստումներից և երբ նա տեսնում է մի շարք խոստումների անկատար մնալը՝ նա սկսում է երկմտութեամբ, կասկածով և թերահաւատութեամբ վերաբերվել։

Նամակ գրողը յայտնում է, որ խոստումների շուտ չիրագործելը կարող է հիասթափեցնել շատերին։

—

«Մշակի» ներկայ համարում տպված է Ց. Կարախանեանի նամակը Թաւրիզից, որ գրված է իմ «Մանրանկարի» առիթով։ Նա ասում է, որ ես գրել եմ, թէ «Թաւրիզի հայ շրջաններում խօսակցութեան միակ առարկան ապագայ կենտրոնական դպրոցի խնդիրն էր»։

Ես այդպիսի բան չեմ գրել։ Ես ասել էի, որ «խօսակցութեան առարկաներից մէկը (և ոչ

միակը) ապագայ կենտրոնական դպրոցն է»։

Այնուհետեւ նա յայտնում է, որ կենտրոնական դպրոցի գաղափարին հակառակ են ոչ թէ ուսուցիչներից մի քանիսը, ինչպէս ես հաղորդել էի, այլ բոլորը, գրեթէ առանց բացառութեան։

Դա նորութիւն է ինձ համար և ես կարձանագրեմ։

Սակայն աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ Կարախանեանի բերանով խօսում է բոլոր ուսուցչական խումբը, գրեթէ առանց բացառութեան, և նրա կարծիքը «Թաւրիզի սակաւաթիւ ինտելիգենցիայի հայեցակէտն է միանգամայն», փոքր ինչ կանգ կառնեմ յարուցած խնդրի վրա։

Կարախանեան, իբրև հակադրութիւն կենտրոնական դպրոցի, խօսում է գաւառական դպրոցների անհրաժեշտութեան մասին։ Մենք կատարելապէս համակրում ենք այդ դպրոցների բացվելուն, խնդիրը համարում ենք շատ լուրջ և անյետաձգելի, բայց չենք ընդունում նրանց իբրև հակադրութիւն կենտրոնական դպրոցի։ Մենք զատում ենք այդ երկու գործը։

«Մշակը» յաճախ խօսել է Պարսկաստանի գիւղական դպրոցների կարևորութեան մասին։ Դարձեալ յիշեցնենք։

Սպահանի շրջանում սկիզբն է դրվում կազմելու դպրոցական մի ցանց։ Թաւրիզի համար հերթական հարց է դարձել այդ քաղաքի երկու դպրոցների միացումը մի կենտրոնական մեծ բարեկարգ դպրոց հաստատելու համար։ Այնուհետև Ատրպատականի զանազան տեղերում դպրոց բանալու և եղածները պահպանելու խնդիրը դարձել է մի անհրաժեշտու-

digitised by A.R.A.R.@

թիւն, որի մասին հոգատարութիւնը չէ կարող յետաձգվել անորոշ ժամանակով (№ 87)։ Ատըրպատականի զանազան գիւղերում արդէն գոյութիւն ունեն դպրոցներ, որոնք սակայն բաւարար կերպով չեն ապահովված և կարօտ են աւելի հմուտ մանկավարժական ղեկավարութեան։ Եղած դպրոցների բարեկարգութիւնը և նորերի բացումը—դրանք հերթական հարցերն են Ատրպատականի հայ ժողովրդի և առաջնորդարանի համար (№ 99)։

Կենտրոնական դպրոցը մի շարք տարրական դպրոցների հետ միասին պէտք է կազմեն կըրթական հաստատութիւնների մի ցանց, որ մատակարարէ պարսկահային թէ տարրական և թէ միջնակարգ ուսում. (№ 111)։

Եւ վերջապէս նոյն «Մանրանկարում» շատ որոշ կերպով ընդգծված է այդ բանը։ Այնտեղ ասված է հետևեալը։

Ամբողջ Ղարադաղը թաղված է թանձր խաւարի մէջ. Սալմաստի և Ուրմիի շրջականներում կատարվող կրթական ջանքերը հոգեվարքի մէջ են... Ի հարկէ, կարելի էր դպրոցներ բանալ գիւղերում և այնտեղ ուղարկել ուսուցիչներից շատերին։ Բայց գիւղերի մասին այստեղ թէև շատ յաճախ խօսում են, սակայն շատ քիչ հոգ են տանում իրապէս։

Մենք շատ որոշ խօսքերով ձևակերպել ենք մեր կարծիքը։

Մենք չենք հակադրում կենտրոնական դըպրոցը և գաւառական դպրոցները միմեանց դէմ։ Մենք բոլոր սրտից կը ցանկանայինք, որ Բարանդուզի դպրոցների օրինակները (որոնց մասին վերև յիշեցինք) կրկնվէին բոլոր հայ գիւ-

digitised by A.R.A.R.@

ղերում։ Այդ գործը համարում ենք և անհրաժեշտութիւն և անյետաձգելի գործ։ Սակայն դա չէ բացատում կենտրոնական դպրոցի գաղափարը։

Եթէ Անդրկովկասում Ալէքսանդրօպօլը, Ախալցխան, Դերբենդը և ուրիշ քաղաքներ ձգտում են գիմնազիաներ ունենալ, եթէ սրանից մի քանի տասնեակ տարի առաջ մենք պահանջ ունէինք Թիֆլիսում, Շուշում, Երևանում թեմական դպրոցներ բանալ, եթէ մեր քաղաքներից մի քանիսը բացել են դպրոցներ գիւղատնտեսական և արհեստագործական բաժիններով. ինչո՞ւ Թաւրիզի նման մի խոշոր և կենտրոնական քաղաքում պէտք է այդքան օտարոտի երևայ մի կենտրոնական դպրոցի հիմնարկութիւնը։

Ինչո՞ւ։

Եւ դեռ ուզում ենք քաղաքակրթող դեր կատարել Պարսկաստանում։

Ի՞նչպէս չէ։

digitised by A.R.A.R.@

XCIX

(21 յուլիսի 1902 թ., «Մշակ» № 158)

—Ինչու գաղտնիք մնայ, ինչու չը յայտնվի։

Այդ խօսքերով դիմեց ինձ հին-Նախիջևանցի մի պարոն, որի հետ պատահեցինք փողոցում։

Ես չը հասկացայ նրա հարցը։

—Ի՞նչ էք ուզում ասել, դիմեցի ես նրան, ինչ գաղտնիքի մասին էք դուք խօսում։

—Ձեր ակնարկած գաղտնիքների մասին, պատասխանեց նա, որոնք վերաբերում են մեր Նախիջևանի գաւառին։

Բանից պարզվեց հետևեալը։ Իմ վերջին Մանրանկարներից մէկում, որտեղ ես յայտնել էի, թէ ստացել եմ ութ գրութիւն Նախիջևանի և նրա գաւառի մասին, ես մէջ էի բերել միայն չորսը, իսկ միւսների մասին լռել էի, նկատելով թէ թող նրանց բովանդակութիւնը «գաղտնիք մնայ առ այժմ»։

—Առանձին գաղտնիք չը կայ, բացատրեցի ես, բայց ես անյարմար էի համարում գրութիւնները առանց կրճատելու հրատարակել, որովհետև նրանք պարունակում են մի շարք այնպիսի փաստեր, որոնց լոյս աշխարհ հանելը ունի իր գործնական անպատեհութիւնները։

—Չէ, չէ, ա պ ա ռ ի կ թողնելը լաւ չէ, պընդեց խօսակիցս, ասացէք պրծէք, մեզ հետա-

digitised by A.R.A.R.@

քրքրում են մեր գաւառին վերաբերեալ գրութիւնները։

Ես չը խոստացայ հրատարակել լիակատար կերպով բոլոր գրութիւնները։

Ես վճռեցի նրանցից անել քաղուածքներ, որ և ներկայացնում եմ։

—

Մի գրութիւն, որ ստացել եմ Ապրակունիսից, նկարագրում է գիւղական հարստահարութիւնների մի քանի բնորոշ դէպքեր, որոնք տեղի են ունեցել թէ այդ գիւղում և թէ շըրջակայքում։

Սակայն իմ թղթակիցը խոստովանում է, որ անկարելի է դօկումենտներով ապացուցանել կեղեքման և վաշխառութեան դէպքերը, որովհետև զոհերը վախենում են հարստահարողներից և չեն վստահանում արձակ համարձակ կռիւ մղել նրանց դէմ։

Թղթակիցը յայտնում է անուններ և ազգանուններ, բայց ես չեմ կարող օգտվել նրա հաղորդած տեղեկութիւններից, որովհետև կեղեքողների համար դժուար չէ ասել, թէ այդ բոլորը զրպարտութիւն է և հնարված է նրանց վարկը վայր գցելու նպատակով։

—

Մի ուրիշ գրութիւն պարունակում է իր մէջ զաւեշտական պատմութիւններ տեղական կեանքից։

Թղթակիցը, ի միջի այլոց, պնդում է, որ հոգևորականները պէտք է պարապվեն մեղուապահութեամբ։

«Մոմը, ասում է նա, հարկաւոր կը գայ եկեղեցիներին, իսկ մեղրը կարելի է և ուտել և ծախել և նուէր ուղարկել»։

digitised by A.R.A.R.@

ի միջի այլոց, նա ուղարկել է ինձ մի բնորոշ նամակ, որը գրել է Նորս գիւղի Ղեոնդ քահանայ Սմբատեանցը Նախիջեւանի նախկին ֆելդշէր Ալէքսանդր Մելիք-Փիլինազարեանին։ Ահա այդ նամակը։

Պ. Աղէքսանդր.

«Հարկաւոր գործով գնացել էի Արինջ՝ գործակալ Տէր-Խաչատուրի մօտ. Ստանալով Ձեր նամակը, կարդացի ինչ որ հարցրել էիք։ Տէր Խաչատուր հայրը, թէպէտ կամենում էր պատասխանել Ձեզ, բայց ժամանակ չէր գըտնում գրելու. Ձեռքերը սաստիկ դողդողալու համար՝ ինձ խնդրեց Ձեզ եւ տեղեկութիւն տամ, որ Ձեր քահանան ամօթանք չը քաշի վարդապետի կամ քարտուղարի մօտ գնալ և իր խաչն ստանալ։ Տէր-Խաչատուրը ասում է, որ երբ որ իմ կօնդակը եկել էր՝ Տէր-Մարկոսը (հոգեւոր կառավարութեան նախկին անդամը) գրել, շնորհաւորել էր իմ կօնդակը 10 ֆունտ լաւ մեղրով։ Ասում է՝ մտածեցի, որ էս հայու անդամն է 10 ֆունտով շնորհաւորում, բա յաջորդին և քարտուղարին ինչ անեմ, ինչպէս տեսնեմ. մտածեցի, որ աւելի լաւ է էլի իմ ճանճերին խնդրեմ, որ նրանք գլխիս ճարը տեսնեն, թէ չէ ինձի բիաբուռ կանեն. սկսեցի փեթակները քըքրել, մանդալ. էլի լաւ էր 10 ֆունտ մեղր յաջորդին, 10 ֆ. Տէր-Մարկոսին և 10-ի մօտ էլ քարտուղարին դզեցի ու էսպէս երեսս պարզ գնացի Նախիջեւան... Մոռացայ գրել, որ ինչպէս Տէր-Խաչատուրն է ասում, բացի սրանցից դուզ տասնեհինգ մանէթ էլ մեղրի հետ քիսաս դարդակեցի վարդապետի սեղանի վրա. դեռ 20 մանէթ էին ուզում,

digitised by A.R.A.R.@

որ կոնդակը տային. հազիւ հազ 15 մանէթով էլ պրծայ ձեռներից, դուրս փախայ, ստանալով կոնդակը»։

Այս է նամակի բովանդակութեան էական մասը։ Պէտք է նկատել, որ ինձ ուղարկված է իսկական նամակը և ոչ թէ պատճէնը։

Սակայն մի՞թէ ճիշդ է այս բոլորը։ Ես չեմ ուզում հաւատալ։ Մի՞թէ դա մի թիւրիմացութիւն չէ։

Ես չեմ հաւատում և այն պատճառով, որ միշտ յիշում եմ չորս տէրտէրների ուղարկած հերքումը։ Մի՞թէ չորս տէրտէր միասին հաւաքված, սառն դատողութեամբ, քննելով, մտածելով, չափելով և կշռելով կարող էին սուտ մոգոնել։ Դա անկարելի է։ Այդ պատճառով ես անպայման կերպով համարում եմ ներկայ նամակի բովանդակութիւնը կատարեալ գրպարտութիւն։

Չէ եղել և չէր կարող լինել։

Երրորդ գրութիւնը խօսում է գիւղական այրիների մասին։

Այրի տղամարդիկ շատ չը կան գիւղերում, որովհետև նրանք շուտով պսակվում են և այն էլ շատ անգամ մատաղահաս օրիորդների հետ։ Բայց կայ այրիացած տղամարդկանց մի դասակարգ, որ օրինական ձև չունի պսակվելու՝ դա այրիացած քահանաներն են։ Դրանց թիւը շատ մեծ է Նախիջևանի գաւառում։

Իմ թղթակիցը ահա այդտեղ բաց է անում մի շատ մեծ բոխչա և ամէն տեսակ պատմութիւններ է անում։

Ես անյարմար եմ համարում նրանց առաջ բերել։

digitised by A.R.A.R.@

Թղթակիցը իր երկար նամակի վերջում մի այսպիսի հարց է դնում—«միթէ ժամանակը չէ այրիացած քահանաների պսակվելու թոյլտւութեան հարցը դրականապէս լուծելու։ Գայթակղութիւնը շատ մեծ է, հասարակ ժողովուրդը վրդովվում է ապօրինի կենակցութիւններից։ Ինչու գայթակղութեան առաջը չառնել»։

Ես առաջ չեմ բերում և այն փաստերը, որոնք վերաբերում են մի շարք վավաշոտ եղելութիւններին։

Լռութիւն։

Նոյն թղթակիցը պատմում է Կզնութ գիւղի մէջ տեղի ունեցած մի շարք դէպքեր, նկարագրում է ջրի վերաբերութեամբ տեղի ունեցած բազմաթիւ իրարանցումները և բացատրում է, թէ ինչու նրանց կրթված քահանան հեռացաւ գիւղից և գործակալութիւնը յանձնեց տէր-Թադէոսին, նախկին պօչտալիօնին։

—

Չորրորդ գրութիւնը Ջահուկից է, այն գիւղից, որի պատմութիւնները երեք օր և երեք գիշեր չեն պատմվի։

Թղթակիցը պատմում է մի հարսնախօսութեան բնորոշ դէպքը, գիւղի մէջ գոյութիւն ունեցող հակասիօնիստական տրամադրութեան և վերջապէս մի մատուռի վերանորոգութեան մասին։

Ջահուկ գիւղի հոգաբարձուները և երէցփոխը երկար ժամանակ չէին կարողանում բացատրել, թէ ինչու է հերթական դարձել մի հին մատուռի վերանորոգութեան հարցը և թէ ինչու Տէր Արսէն քահանան այնքան սաստիկ կպել է այդ հարցին։

digitised by A.R.A.R.@

Ցեռոյ բացատրվեց։

Տէրտէրը շատ բարեպաշտ, կրօնասէր, հեզաբարոյ մի անձն լինելով, մտադիր է եղել մի աստուածահաճոյ լաւ գործ կատարել։

Դա այն նշանաւոր չորս տէրտէրներից մէկն է, որ համոզեցուցիչ հերքում էին ուղարկել իմ հաղորդածների դէմ և որը տպվելով իմ «Մանրանկարի» մէջ, ցրվեց բոլոր կասկածները և գրպարտութիւնները Նախիջևանի խաչ ստացողների մասին։

Բայց որքան ապերախտութիւն Երևանի կօնսիստօրիայի կողմից։ Նա, թոյլատրելով օծել նորոգած մատուռը, պատուիրեց օծումից յետոյ իսկոյն բանալիները յանձնել երէցփոխին և հոգեորականութեանը՝ ժամանակին բարդութիւններ չառաջացնելու համար։

Թղթակիցը, բանաստեղծական ոլորապտոյտներով, նկարագրում է մատուռի օծումը, յաջորդի գալ-գնալը, ուխտաւորների զուարճութիւնները և բնորոշ տեսարանները։

Ձը նայելով գեղեցիկ եղանակին, զուռնայի զիլ ձայնին, ուխտաւորների երգ ու պարին, յաջորդը, որ գնացած է եղել Ջահուկ մատուռը օծելու, մնում է դժգոհ ջահկեցիներից։ Նրան շատ սառն են ընդունում։ Հակասիօնիստական տարրը ուժեղ է Ջահուկում։ Հոգաբարձուները և երէցփոխը կծու ճշմարտութիւններ են յայտնում, երբ Տէր-Արսէնի բոլոր ջանքերը մնում են իզուր։

—Մի՞թէ կարելի է, բացականչում է թղթակիցը, մի՞թէ տօնի խաթրու գոնէ չէր կարելի մոռանալ անհաշտութիւնները և միմեանց ներելով մի լաւ քէֆ անել։ Հակասիօնիստութիւնը այնքան կուրացրել է ջահկեցիներին, որ

digitised by A.R.A.R.@

նրանք չեն ուզում լսել Տէր-Արսէնի ջատագովութիւնները։

Մատուռի անունը դրվել է Ս. Ստեփանոս։ Այդպէս էին թելադրել երազատես կանայք։

Թղթակիցը այնուհետև պատմում է Ջահուկի ասէկօսէները գիւղի եղելութիւնների մասին։ Նա, ի միջի այլոց, հիմնվելով Ջահուկի փորձերի վրա, խորհուրդ չէ տալիս, որ ժամհարների կանայք եկեղեցին աւլեն, որովհետև դա ժամհարների անմիջական պարտաւորութիւնն է։

—

Սրանով ես կը բաւականանամ։ Ուրիշ քաղուածքներ մտադիր չեմ ներկայացնելու իմ ստացած գրութիւններից։

Պէտք է խոստովանեմ, որ այսօր թէև շատ բաների մասին աշխատեցի քօղարկված անցնել, բայց և այնպէս ստիպված էի մի այնպիսի վարագոյրի եզրը բարձրացնել, որի ետևում շատ կան անախորժ տեսարաններ։

Ինձ վրա նրանք ծանր են ազդել և ես հանգիստ կը զգայի ինձ, եթէ երկար ժամանակ առիթներ չունենայի «ագռաւագրքի» նիւթերին դիմելու։

digitised by A.R.A.R.@

C

(28 յուլիսի 1902 թ., «Մշակ» № 163)

Նորերս ես այցելեցի մի քանի գիւղեր և լսեցի գանգատներ *նորաձևութիւնների* վերաբերմամբ.

—Մեր կանայք սկսել են քաղաքի կանանց օրինակով քարեղէններ ձեռք բերել, թանգագին օղեր գործածել, շքեղ հայելիներ գնել տալ, թանգ կերպասներից շորեր կարել տալ։

—Մեր տղերքը սկսել են հագուստի վրա շատ ծախսեր անել, ժամացոյցի թանգագին շղթաներ գնել, գեղեցիկ կօշիկներ հագնել, զանազան կօնեակներ, լիկէօրներ և եւրօպական խմիչքներ գործածել։

—Մեր հարսանիքները թանգացել են, մեր խնջոյքները և հիւրասիրութիւնները ճոխացել. մեր երթևեկութիւնները ձիուց և սայլից փոխվել են ֆայետօնի և զանազան տեսակ կառքերի։

Այս և սրանց նման գանգատներ լսում էի մեծ քանակութեամբ գիւղացիների կողմից։

—Նորաձևութեան ստրուկ մի ազգ ենք մենք, ասում էին գանգատվողները։

—Կապկութիւն անելը մեր մշտական թուլութիւնն է եղել, աւելացնում էին միւսները։

—Մարդամիջից, ուրիշներից յետ չը մնալ և գերազանցել նիստ ու կացով, արդու զարդով—դա մեր ընդհանուր ձգտումն է։

—

Նոյն խօսակցութիւնները տեղի ունեն մեր քաղաքներում և մեր Թիֆլիսում։

—Նայեցէք այս տիկնոջ զգեստին, ասաց ինձ կլուբում իմ ծանօթ մի վաճառական։

—Ի՞նչ էք ուզում ասել, հարցրի ես, տիկինը հագնուած է շքեղ և փառահեղ։

—Բայց գիտէք, թէ ո՛րտեղ է կարված այդ զգեստը։

—Ես ինչ գիտեմ, պատասխանեցի ես։

—Իսկ ես գիտեմ, վրա բերեց վաճառականը, այդ զգեստը Պարիզումն է կարված։ Տիկինը այնտեղ թողել է չափը և այժմ միշտապէս պատուէրներ է տալիս թողած չափի համաձայն։

—Ցիրաւի գեղեցիկ զգեստ է, նկատեցի ես։

—Գեղեցիկը գեղեցիկ է, զայրացած խօսեց վաճառականը, բայց այդքան էլ կապկութիւն, այդքան էլ ջանք նմանվել պարիզուհիներին, այդքան էլ վատ օրինակ ուրիշների համար։

—Եւ, ի հարկէ, համապատասխան ծախսեր, աւելացրի ես։

—Հէնց գլխաւորը այդ է, հէնց դրան էլ պիտի գայի։

Այս ասելով՝ վաճառականը խփեց ձեռքը աթոռի կողքին ու լռեց։

—

—Ահա՛, նայեցէք և այս երիտասարդին, սթափվելով բացականչեց վաճառականը. սա մի այնպիսի բնակարան է վարձել, մի այնպիսի տուն է սարքել, որ կը զարմանաք, եթէ տեսնէք։ Ամեն տեսակի նորութիւն և ճոխութիւն կը գտնէք այնտեղ։ Պահում է սեփական

digitised by A.R.A.R.@

կառք և ազնիւ տեսակի ձիեր։ Ջոհարար բերել է տուել մայրաքաղաքից և ամեն օր մի չնաշխարհիկ բան է ցոյց տալիս իր հիւրերին։

—Ես ճանաչում եմ այդ պարոնին, ասացի ես, շատ բան եմ լսել նրա մասին։

—Իսկ մեր երիտասարդներից շատ շատերը, եթէ չեն անում դրա արածը, նրանք էլ հետեւում են նրան մեծ կամ փոքր չափով։ Նորաձեւութիւն, ուրիշների հետ մրցութիւն, շքեղութեան մէջ գերազանց փայլ—դա շատ տարածւած մոլութիւն է մեզանում։

—

Ես շատ եմ լսել գանգատներ հայի նորասիրութեան մասին։

Բայց մի բան միշտ աչքի է ընկել, որ լուրջ, կուլտուրական գործերում նորաձևութիւնները շատ դանդաղ են պատուաստվում մեր կեանքում։

Գիւղացին դեռ շատ քիչ դէպքերում է մըտցրել եւրոպական ձևեր իր գիւղատնտեսութեան մէջ։ Նա դեռ չէ գործածում մեքենաներ, չէ բարեփոխել իր հողագործութիւնը և անասնապահութիւնը։

Մեր արհեստաւորը դեռ շարունակում է հին եղանակով առաջ տանել իր արհեստը և անկարող լինելով աւելի կատարեալ և նուրբ արդիւնքներ պատրաստել՝ ստիպված է տեղի տալ ուրիշներին՝ կամայ-ակամայ սահմանափակելով իր արհեստը և բաւականալով իր աշխատանքի աւելի նուազ վարձատրութեամբ։

Մեր վաճառականը չէ իւրացնում եւրոպական առևտրի սկզբունքները և կամայ-ակամայ դուրս է մղվում այդ ասպարէզից, որտեղ նա կարող էր երկրի արդիւնահանութեան համար

digitised by A.R.A.R.@

օգտավէտ դեր կատարել, եթէ հետեւէր գործավարութեան աւելի խելացի և աւելի օրինաւոր եղանակների։

Մեր կրթված երիտասարդը չէ կարողանում դարձնել իրան երկրի աղը։ Նա ըստ մեծի մասին բուրժուական ձգտումներ ունի։ Նա շուտով մոռանում է սրբազան խօսքերն ու երդումները և իր ջանքը ուղղում է մի նպատակի— անձնապէս վայելուչ և ապահով կեանք ստեղծել իր համար։ Նա կուլտուրական, խելացի նորամուծութիւններ չէ ընդունում։ Նա յաճախ ծանօթ չէ իր երկրի, իր ժողովրդի հետ, նա չունի նոյն իսկ անհրաժեշտ հետազօտութիւններ իր գրադարանում և սակաւ դէպքերում նոյն իսկ գրադարան ունի, և յամենայն դէպս ոչ-մայրենի գրականութեան գրադարան։ Այդ նորաձեւութիւնները գոյութիւն չունեն նրա համար։

Նորաձեւութիւն և կայ և չը կայ։

Կայ չքեղութեան, արտաքին փայլի և ճոխ նիստ ու կացի նորաձեւութիւն. բայց չը կայ խելացի, կուլտուրական բարեփոխութիւնների նորաձեւութիւն։

Անկասկած կան բացառութիւններ, կան խելացի նորամուծութիւնների օրինակներ, բայց նրանք այնքան քիչ են և հազուադէպ, որ ընդհանրապէս մեր գիւղը իր տնտեսութեամբ դեռ խոր նահապետական բնաւորութիւն է կրում, ժողովրդական արհեստը քայքայման վիճակի մէջ է, երիտասարդութիւնը, իբրև ժողովրդի մտաւոր բարեկամ, նրա օգնական և ներկայացուցիչ, գործնական դեր չէ խաղում կեանքի մէջ։

— Եթէ նորասէր ենք, նորասէր լինենք խելացի և կուլտուրական գործերում, կը բացականչէք դուք։

Համաձայն եմ։

digitised by A.R.A.R.@

CI

(4 օգոստ. 1902 թ., «Մշակ» № 169)

Ամարանոցի ծառաստանի մէջ, ընդարձակ սաուէրում, գցված էր սեղանը։ Մենք, չոգից և քաղաքի փոշիներից տանջված հիւրերս, մի առանձին հաճութեամբ հետեւում էինք տանտիրոջ «համեցէքներին»։ Թամադան ոգեւորված առաջարկում էր կենացներ։ Վերջացնելով սեղանակիցների շրջանը՝ նա սկսեց խմել հասարակութեան յոյսերի կենացը. էլ երիտասարդութիւն, էլ մամուլ, էլ գրականութիւն, էլ հոգեւորականութիւն, էլ ժողովուրդ—ոչինչ չը մնաց, որ վրիպէր նրա ուշադրութիւնից։

Հիւրերի մէջ կար և մի նորաւարտ ուսանող հիւսիսից եկած։ Նա շատ զգացվեց այն բուռն ոգեւորութիւնից, որով ընդունվում էին Թամադայի առաջարկած կենացները։

—Շատ լաւ եմ զգում ես ինքս ինձ, չնչայ նա իմ ականջին. ախորժելի է տեսնել այսպիսի ոգեւորութիւն և մտերմութիւն։

—Վաղուց է արդեօք, որ Կովկասում չէք եղել, հետաքրքրվեցի ես։

—Չորս տարի, պատասխանեց նա, զբաղված էի ուսանողական գործերովս և չէի կարողանում այցելութիւն անել հայրենիքիս։ Ուրախութիւնից յետոյ ես մի առանձին ջերմութիւն, փայփայանք և գգուանք եմ զգում այստեղ։

digitised by A.R.A.R.@

—Հա, միր Թամադէն լաւ վարպիտն է, միջամտեց մեր միւս հարեւանը. չնուրքով է մարթը, ճառ ասիլն էլ գիտէ, կենացներ առաջարկիլն էլ։

—Ոգեորված է, նկատեց ուսանողը։

—էհ, դրա բանը ուրիշն է, վրա բերեց մեր հարեւանը։ Դա խուրը տկիրէմէն էնէնց բանիր դուս կու բերի, վուր խակի լսած չըլիք։ Օրը չուրս ջեր վուր Թամադութին անէ, ամեն անգամին էլ նուր-նուր մասլահաթնիր կու գնէ քու առաջ։ Փէշակ է դարձի էդ մարդու համա։ Էդ էլ դրա չինն է մէբաշ։

Այդ գովասանքը ոչ միայն չը գոհացրեց ուսանողին, այլ և հիասթափեցրեց մի որոշ աստիճանով։ Հիւրը տրամադիր էր Թամադայի ասածների մէջ տեսնել մի տեսակ անմիջական ոգեորութիւն, զգացված վերաբերմունք դէպի իր ասածները. իսկ բանից դուրս էր գալիս, որ փքուն կենացներ ու ճառեր ասելը մշտական սովորութիւն է եղել Թամադայի համար։

—Չեմ կարծում, յայտնեց նա, որ ամեն մի ընկերութեան մէջ էլ Թամադան այնպէս խօսէ, ինչպէս մեր մէջ։

—Արա ինչ էիր փիքր անում, վրա բերեց հարեւանը, ամենքին իր գօրա կու կառավարի. թէ լաւ խմուղնիրի ու քէֆ անուղնիրի ռաստ էկաւ՝ էն վուխտը մեծ թամաշա է. էնէնց բանիր կու մօգօնի, վուր մինչի լուս կու նստեցնի առանց բեզրեցնելու. էս հանգի փօկուսնիկն է։

Այս նոր բացատրութիւնները աւելի ևս ծանր տպաւորութիւն գործեցին ուսանող հիւրի վրա և նրա տրամադրութիւնը փոքր ինչ խանգարվեց։

digitised by A.R.A.R.@

—Ես աւելի ուրախ կը լինէի, մրմնջաց նա, որ Թամազան աւելի քիչ վարպետ լինէր և աւելի նուազ ֆօկուսնիկ, իսկ դրա փոխարէն աւելի սիրասիրտ լինէր, աւելի անկեղծ։

—Էհ, հիմի ո՞վ է նստի նրա սրտումը, նըկատեց մեր հարևանը, ու ինչ միր բանն է էդ քըքըրելը՝ Դարդիմանդ մարդ է...

—Տուգանք, տուգանք գոռաց Թամազան, այդ ինչ մասնաւոր խօսակցութիւններ են։

—Ես ասում էի, վուր միր Թամազէն դարդիմանդ մարդ է, արդարացրեց իրան մեր հարևանը։

—Որ դարդիմանդ եմ, հրամայեց Թամազան, դատարկիր քո բաժակը։

Ուսանողը յանկարծ թափ տուեց գլուխը և հանգստացաւ։

—Ես իմ հարևանից շատ շնորհակալ եմ, ասաց նա ինձ. նա իր գովասանքներով բնորոշեց Թամազային և ես այժմ գիտեմ, թէ ինչ տիպի հետ գործ ունեմ։ Բայց ինձ այժմ մտատանջում է մի հարց, միթէ այս մեր սեղանակիցներն էլ նոյնպէս միայն սովորութիւն են շինել իրանց համար կենացները խմել այնպիսի բացականչութիւններով, ինչպէս այսօր այդ տեղի ունի։ Մի քանիսը այնպիսի ոգևորութիւն ու հրճուանք են ցոյց տալիս, որ կարծես սեղանից առաջ նրանք զբաղված են եղել բոլոր ժամանակը սրբազան պարտաւորութիւնների խնդիրներով և կարծես սեղանից յետոյ պէտք է շտապեն գործի ձեռնարկելու ընդհանուրի օգտին։

Մեր հարևանը, որ տուգանքը խմելուց յետոյ նորից սկսել էր մեզ ականջ դնել, լսեց միայն

digitised by A.R.A.R.@

խօսակցութեան վերջը և իր պարտքը համարեց իր կողմից պատասխան տալու։

—Ճաշինք—պրծնինք, իժում կու տէհնինք, ասաց նա, թէ գուղխս մէ քիչ թուղթ կու խաղանք, ան նարդի կու չրըլխկեցնինք. թէ չէ րօմով չայն էլ վատ չէ կակալի ծառի տակին։

—Ես այդ բանի մասին չէի հարցնում, նկատեց ուսանողը։

—Աբա՞։

—Ես հարցնում էի այս մեր սեղանակիցների մասին, որոնցից շատերին ես չեմ ճանաչում։

—Հա, էդ ուրիշ բան է, ճաշու վերջը ծանօթութին արա. լաւ մարդիկ ին, դարդիմանդ ին, անմիղ աղիրք ին, էսօր էսքան վուր խօսեցան ու բղաւեցին, էգուց խոնարհ իրանց գործքերի վրա կու գնան, մինչի մէկ էլ մէ ուրիշ օր մէ մնձրէքում պատահին։

Ճաշից յետոյ մենք առանձնացանք ուսանողի հետ։

Մենք խօսեցինք մեր հասարակական գործերի, մեր երիտասարդութեան, մեր գործիչների մասին։

—Արդեօք կեանքի մէջ էլ նոյնը չէ կրկնւում, հարցրեց նա, ինչ որ այսօրվայ ճաշկերոյթին, արդեօք այնտեղ էլ միայն սովորութիւն չէ դարձել խօսելը և զանազան տենչանքներ յայտնելը։

—Դժբախտաբար, համաձայնեցի ես, շատ դէպքերում նոյնն է կատարւում և կեանքի մէջ։ Թամադայական վերաբերմունքը շարունակւում է և հացկերոյթից դուրս։ Ճաշի ժամանակ եղած բարեմաղթութիւններին ոչ ոք լուրջ նշանակութիւն չէ տալիս։ Այդ բարեմաղթութիւնները այնտեղ ծնւում են, այնտեղ

digitised by A.R.A.R.@

էլ մնռնում։ Բայց արդարև ցաւալի է, որ գործնականութեան մէջ շատ քիչ դէպքերումն ենք մենք տեսնում, որ բարեմաղթութիւնները հանդէս գային, իբրև լուրջ մտածողութեան արդիւնք և լինէին գործելու պատրաստականութեան արտայայտութիւն։ Ես արդէն սովոր եմ ճաշկերոյթների ճառերին և նրանց նշանակութիւն չեմ տալիս․ բայց սպասում եմ ուրիշ ճառերի, պատասխանատու խօսքերի և դրական գործունէութեան։

—Անկասկած, ասաց ուսանողը, ես իրաւունք չունէի ճաշի ճառերից շատ բան սպասելու, բայց ինձ շուարացրեց մարդկանց առանձին ոգևորութիւնը, որ պատշաճ է աւելի լուրջ դէպքերին և առիթներին։ Սակայն երբ պէտք է այդ լուրջ առիթներին համապատասխան գործ կատարվի։

—Դա հարց է։

CII

(11 օգոստ. 1902 թ., «Մշակ» № 175)

Երեք տասնեակ տարիներ սրանից առաջ, երբ հայ աղքատիկ թատրոնը փորձեր էր անում հանդէս բերել մեր կեանքի մէջ գտնւող տիպերը, մի օր էլ բեմ դուրս եկաւ մշակ Կիվկիվը։

Ո՞վ էր նա։

Թիֆլիսում մշակութիւն, սպասաւորութիւն անող մշեցին, թիւրքահայ պանդուխտը։

Իր քօլօզով, իր չարուխներով։

Ծպիտներ երեւացին հանդիսականների շըրթունքների վրա։

—Վա՜, մշակ է կանգնած բեմի վրա։

Սպասում էին մի ծիծաղաշարժ տեսարանի։

Մշեցի Կիվկիվը աւլեց սենեակը, կանգ առաւ, նայեց իր շուրջը, ծանր ախ քաշեց ու սկսեց խօսել։

—Եաման մըր մամլաքեաթ, եաման. քու փող ու ջրին ղուրբան...

Պանդուխտը յիշեց իր թողած գիւղը, իր կնոջը, իր երեխաներին, որոնց կարօտը մաշում էր նրան։

—Օխտը տարի է՝ մեր տնէն ելեր եմ, յայտնեց նա հասարակութեան։

Մշեցին յիշեց իրանց դաշտերը, տան անասուններին, ամբողջ տնտեսութիւնը, այն ամե-

digitised by A.R.A.R.@

նը, ինչի հետ նա կապված էր իր ամբողջ էութեամբ՝ իր մանկութեամբ, իր մտերմական կապերով, իր սրտով ու հոգով։

Քօլօզը ու չարուխը, կռօի բարբառը առաջ ծիծաղեցրին հասարակութեանը, բայց Կիվկիվի խօսքերը սթափեցրին նրան։

Կիվկիվի վիշտը յետ փախցրեց ժպիտները շրթունքներից։

Կիվկիվի դարդը—դատարկ մի խօսք չէր, նա տանջվող սրտի հառաչանք էր։

Իսկ երբ մշեցին սկսեց իր զգացված երգը՝ «Իմուն Կիվկիվ», հանդիսականների աչքերի վրա երևացին արտասունքներ։

Բեմ դուրս եկաւ մի ուրիշ պանդուխտ, սանխեր Ցարօն, որ նոր եկել էր հայրենի գիւղից, մխիթարեց Կիվկիվին իր խաբրիկներով։

Կիվկիվին սպասում են գիւղում։

—

Գնում էին, գալիս էին պանդուխտները երկար տարիների ընթացքում։

Եթէ պանդուխտը աջողութեան էր պատահում և շուտով կարողանում էր փող վաստակել, նա աւելի վաղ էլ տուն էր վերադառնում, իսկ եթէ այդ չէր աջողվում՝ նա երկար տարիներ տանջվում էր օտար երկրի մէջ,

Շլինքը արևառ,
Քրտինքը երեսին,
Բեռը շալակած,

մինչև որ այլ ևս անկարելի էր դառնում նրա մնալը և նա վերադառնում էր։

Ծանր էր պանդխտութիւնը, ծանր էր ճանապարհը մամլաքեաթից մինչև մեր քաղաքները, բայց կարիքը, մտերիմներին պահել-օգնելու

digitised by A.R.A.R.@

անհրաժեշտութիւնը ամեն բան դարձնում էին տանելի։

Եւ երբ պանդուխտը ողջ առողջ տուն էր հասնում և իր օջախն ու իր մտերիմներին ուրախացնում էր իր բերած նպաստներով, նա մոռանում էր բոլոր նեղութիւնները և զըրկանքները։

—Միայն թէ տունը չը քանդվի, չաւերվի, մտերիմները կարօտութեան մէջ չը լինեն։

—

Անցան ժամանակներ։

Յանկարծ մի չար և աղետաբեր մրրիկ բարձրացաւ պանդուխտների մայր երկրի մէջ։

Ես այդ չեմ պատմի, չեմ նկարագրի։

Դուք այդ գիտէք։

Մրրիկը ուղղված էր օջախի դէմ և սասանեցնում էր բոլորին։

Ամեն մարդ փրկութիւն էր որոնում։

Մարդիկ տասնեակներով, հարիւրներով և հազարներով՝ թողած տուն ու տեղ՝ արտ ու դաշտ, միայն մի բանի էին ձգտում—ազատել իրանց անձը, պահպանել իրանց կեանքը։

Դրանք պանդուխտներ չէին, այլ փախչողներ, ապաստարան որոնողներ։

Նրանք յայտնի դարձան մեզանում «գ ա ղ թ ա կ ա ն ն ե ր» անունով։

Սակայն նրանք գաղթականներ չէին և նպատակ չունէին գաղթելու իրանց երկրից առմիշտ։ Գոնէ մեծամասնութիւնը գաղթելու ցանկութիւն չունէր։

Շատերի ընտանիքը, կինը, երեխաները մնացել էին հայրենիքում մի որ և է տեղ թաքնըված և պատսպարված։

digitised by A.R.A.R.@

ժամանակամիջոց պէտք էր վաստակել մինչև մրրիկը անցնի, մինչև անդորրութիւն տիրի նորից երկրի մէջ։

Ծանր էր փախստականների վիճակը։ Նրանք կարօտ էին ապաստարանի, հացի, հագուստի։

Կառավարութիւնը ընդունեց նրանց, հասարակութիւնը նպաստներ ժողովեց նրանց օգտին, զանազան հիմնարկութիւններ իրանց վրա աշխատանք վերցրին կազմակերպելու օգնութեան գործը, գիւղացիները տեղ տուին կարօտեալներին իրանց տներում։

Դէպքը ծայրայեղ էր։ Հասարակութիւնն էլ ծայրայեղ կերպով լարեց իր ոյժերը և կարողացաւ ամոքել կարօտեալների յուզմունքը։

Սուր կարիքը անցաւ։

Ժամանակի ընթացքում փախածներից շատերը գտան իրանց համար պարապմունք և հնարաւորութիւն ստացան ապրուստ ունենալ առանց կողմնակի նպաստների։

Որքան սրտաճմլիկ տեսարաններ, որքան բազմազան հոգեկան արտայայտութիւններ։

Ես շատ անգամ լսել եմ գանգատներ գաղթականների վերաբերութեամբ։ Ինձ պատմել են անախորժ դէպքեր, երբ այս կամ այն անձը թոյլ է տուել իրան անշիտակութիւն, չափազանց աներեսութիւն, անվայել արարքներ։ Բայց լաւ ծանօթ լինելով այդ գաղթականների մեծամասնութեանը, ես առանձին կարևորութիւն չեմ տուել այդ յայտնութիւններին։

Տեսել եմ գաղթականների, որոնք օրեկան հացի կարօտ լինելով ամաչել են դիմել ուրիշի օգնութեան, և երբ ստացել են այդ օգնութիւնը, կար

—Մեզ գործ տուէք, փող մի տաք, լսել եմ չատերից, մենք մուրացկան չենք, մենք ձեռք ու գլուխ ունենք, կաշխատենք ու կապրենք մեր աշխատանքով։

Տեսել եմ բազմաթիւ գաղթականներ ցրված Կարսի նահանգի գիւղերում երկրագործական աշխատանքների մէջ, որոնք իրանց քրտինքով ձեռք էին բերում իրանց ապահովութիւնը։

—Դժուար է առանց հողի, յայտնում էին նրանք ինձ. հողն է մեր կեանքը։ Հող տուէք, որ նրանով զբաղվենք և մխիթարվենք։

Անկասկած գաղթականների բազմութեան մէջ պէտք է լինէին և արատաւորներ։ Եւ նրանք կային։ Բայց այդպիսիները բացառութիւններ էին և նրանց մեծ մասը այն անձանց շրջանից, որոնք հանգամանքների շնորհիւ դուրս էին չպրտված սովորական կեանքի հոսանքից։

—

Անցան տարիներ։

Գաղթականների մի մասը վերադարձաւ հայրենիք, իսկ մի մեծ բազմութիւն մինչև այժմ մնացել է մեր երկրում։

Մեր կառավարութիւնը, որ ապաստարան տուեց նրանց, ասում է թէ՝ ժամանակն է որոշ մի դրութիւն ստեղծելու. կամ պէտք է վերադառնաք ձեր հայրենիք, կամ գրվէք հպատակներ իմ երկրում։ Ընտրեցէք, որը ցանկանում էք։

Գաղթականները ցանկանում են վերադառնալ հայրենիք, բայց Թիւրքաց կառավարութիւնը չէ ցանկանում նրանց նորից ընդունել իր պետութեան սահմանների մէջ։

—Ես ընդունեցի ռուսահպատակութիւն և գրվեցի այստեղի վրա, ասում էր ինձ մի գաղ-

digitised by A.R.A.R.@

թական, որովհետև յոյս չունեմ, թէ անդորր պէտք է ապրեմ իմ նախկին հայրենիքում և նորից սովորված չը պէտք է լինեմ փախչելու այնտեղից։ Գտել եմ գործ, արհեստ և կապրեմ իմ այստեղի եղբայրակիցների մէջ։ Ուրիշ ելք չը գտայ։

—Մենք պէտք է վերադառնանք մեր գիւղե-րը, ասում էին ինձ ուրիշները, ինչ լինի չը լինի—պէտք է փորձենք այնտեղ գնալու։ Թո-ղել ենք այնտեղ տուն, տեղ, հող և ուրիշ կալուածք։ Այնտեղ են մեր մտերիմները։ Այն-տեղ է մեր օջախը։ Այնտեղ ծնվել ենք, այն-տեղ էլ կը մեռնենք։ Մենք չենք թողնի մեր ծննդավայրը։

—

Մեր հասարակութիւնը, որ պատսպարեց, խնամեց գաղթականներին, կարողութիւն տը-ւեց նրանց ազատել իրանց կեանքը չար մրրի-կի խիստ օրերում, թող իր նպաստներով օգ-նէ, որ իր եղբայրակիցը, եթէ վճռել է գնալ իր ծննդավայրը, կարողանայ առանց նիւթա-կան զրկանքների տեղ հասնել և նորից հաս-տատվել իր քանդված օջախում։

CIII

(14 օգոստ. 1902 թ., «Մշակ» № 477)

Գաղթականները գնում են։

Զորս օր է, որ Կարսի երկաթուղու վագոնները լցված են գնացող թիւրքահայ գաղթականներով։

Մինչև այժմ 1000—1200 *մարդ դուրս է եկել մեր քաղաքից։ Նրանք մեծ մասամբ գնում են Կարս, որտեղ պէտք է սպասեն իրանց ընկերներին։*

Կարսումն էլ, ինչպէս լսվում է, ժողովվել են բացի այդ ուրիշ տեղերից մօտ 1500 *անձ և շարունակում են հաւաքվել։*

Խմբված միասին, մի քանի օրից յետոյ, թիւրքահայերը կուղղվեն դէպի սահմանագիծ։

Նրանք յոյս ունեն, որ բաղդը իրանց կը ժպտայ և իրանք կարող կը լինեն անփորձ իրանց հայրենիք հասնել։

Բայց եթէ երկիւղներ էլ հանդէպ գան, նրանք պէտք է շարունակեն ճանապարհը։ Մի անգամ որ շարժվել են, պէտք է փորձեն առաջ գնալու։

—

Գաղթականները շատ խորհրդակցութիւններ ունեցան միմեանց հետ այս վերջին օրերը։

Կան նրանց մէջ այնպիսիները, որոնք ունեն օրինաւոր անցաթղթեր և կարող են միայն մեր

digitised by A.R.A.R.@

քաղաքում։ Բայց միւսները օտարոտի են գըտնում նրանց մնալը։

—Գնալ է, գնանք միասին, ասում են նրանք։ Անցաթուղթ ունենալը դա միայն մի պատահմունք է։ Մենք բոլորս միատեսակ մարդիկ ենք, մէկ երկրի ժողովուրդ։ Ապրել է, մեռնել է բոլորի համար է—պէտք է միասին լինենք։

Ասում էին, վիճում, միմեանց համոզում։

—Այստեղ գործ ունենք սկսած, ինչպէս թողնենք մենք նրան. ինչ օգուտ մեր գնալուց, առարկում էին մնալ ցանկացողները։

—Այն ժամանակ մեզ համար էլ մնալու ճար արէք, պատասխանում էին անցաթուղթ չունեցողները։

Մնալ ցանկացողներից շատերը, տեսնելով, որ իրանց պատճառով կանգ է առնում միւսների տեղից շարժվելը, յայտնեցին գնալու յօժարութիւն։

—

Մօտ քսան ընտանիքաւոր մարդկանց մի խումբ թուփ է եղել ունեւոր գաղթականներից մէկի, Մ. Վարդանեանի շուրջը։

—Մենք առանց քեզ չենք գնայ, ասում էին նրանք։

Վարդանեանը ունի թէյի գործատուն և դերձականոց, ունի աջող առևտուր։ Ապրում է Թիֆլիսում օրինաւոր անցաթղթով և կարող է անարգել մնալ։ Բայց միւս ընտանիքները նրան են սպասում, որ իրանք էլ ճանապարհ ընկնեն։

—Ես պատրաստ եմ գնալ, յայտնում է Վարդանեանը։

Նրա հետ ճանապարհ են ընկնում և միւսները։

—

digitised by A.R.A.R.@

Մի քանի նոր կազմված ընտանիքներում, նորապսակ զոյգերի շրջանում, որոնց ամուսնութիւնը կատարվել է վերջին տարիները մեր երկրում, դժկամակում էին գնալ։

—Ո՞ւր պիտի գնանք, հարցնում էին նորահարսները․ ինչ է մեզ արդեօք այնտեղ սպասում։ Միթէ չէ կարելի մնալ։ Ի՞նչ վնաս, եթէ մնանք, ինչ ենք կորցնում։ Մնանք, հաստատվենք այս երկրի մէջ։

—Այնտեղ թողել եմ իմ եղբայրներին, իմ ազգականներին, իմ տունը, իմ հողը, պատասխանում էին մոլորված ամուսինները։ Չէ կարելի նրանց թողնել։

Օրերով վիճում էին, միմեանց հակաճառում, միմեանց համոզում։

—Պատրաստ եմ գնալու, վճռում էր վերջապէս նորահարսը, քոնն եմ, քեզ հետ էլ գնալու եմ․ սեղանի առաջ երդուել եմ բաղդ ու սև օր միասին տանելու և միասին բաժանելու։ Գնանք։

—

Երկաթուղու կայարանում սրտաճմլիկ է հրաժեշտի տեսարանը։

Խրատներ են տալիս միմեանց, յորդորներ են կարդում, ապսպրանքներ են անում։

—Երկու օրից յետոյ մենք էլ կը գանք, լըվում է մի ձայն։

—Տեղեկութիւն ուղարկիր ձեր մասին, ասում է մի ուրիշ ձայն։

Մի քանիսը ուրախադէմ, ժպտալով, երիտասարդական աշխոյժով կարգադրութիւններ են անում և ուրիշներին օգնում, իսկ մեծամասնութիւնը մտախոհ է։

digitised by A.R.A.R.@

—Եարաբ, ի՞նչ պիտի լինի մեր վերջը, հարցնում է մէկը։

—Ինչ լինի չը լինի՝ պէտք է պատրաստ լինենք տանելու, պատասխանում է միւսը։

Երրորդը լուռ կերպով ձեռքը բարձրացնում է դէպի երկինք և հառաչում։

Իմ կողքին կանգնած մի երիտասարդ կցկըտուր նկատողութիւններ է անում։

—Թիւրքահայ հուգենոտները, մրմնջում է նա ինքն իրան, փորձում են վերադառնալ իրանց երկիրը. բայց արդեօք կընդունեն նրա՞նց։

Վերջին զանգը տուին։

Սեղմում էին միմեանց ձեռքեր, համբուրվում, միմեանց վզով փարում։

Գնացքը շարժվում է։

Գնացին։

digitised by A.R.A.R.@

CIV

(18 *օգոստ.* 1902 *թ.*, *«Մշակ»* № 181)

Մենք ճանապարհ գցեցինք Թիւրքահայ գաղթականներին։

Մեծ-մեծ խմբերով գնում են նրանք, աշխատելով զանազան կողմերից մտնել իրանց երկիրը։

Գաղթականները վերադառնում են իրանց հայրենիքը չորս ճանապարհով։

Ամենից մեծ մասը գնում է Կարսի վրայով։

Միւսը Բաթումի վրայով։

Երրորդը Սուրմալուի վրայով։

Չորրորդը Պարսկաստանով։

—Ո՞ր ճանապարհն ամենից ապահովն է, հարցրի ես գաղթականներից։

—Ոչ մէկը, պատասխանեցին նրանք։ Ամեն մէկն էլ ունի իր երկիւղները։ Փորձել ենք բոլոր ճանապարհներով էլ։

—Արդեօք վերջին տարիները եղա՞ն ձեզնից գնացողներ իրանց երկիրները, հարցրի ես։

—Այո՛, եղան մարդիկ, որոնք փորձեցին գընալ և հասան իրանց նպատակին, բայց դժուարութիւններով և ծանր զոհաբերութիւններով։

—Իսկ այժմ, անկասկած, դուք պէտք է գընաք ոչ թագուն, այլ ակնյայտ կերպով։

—Ի հարկէ, պատասխանեցին նրանք։ Այժմ

digitised by A.R.A.R.@

չատոնք ենք և բեռնաւորված ենք կանանցով և երեխաներով։

—

Կարսի վրայով գնում են նրանք, որոնք պէտք է ուղևորվեն դէպի Մուշ, Բուլանըխ, Էրզրումի շրջակայքը և այդ նահանգի արևելեան և հարաւային մասերը։ Այդ գաղթականների մէջ չատ կան ուժեղ, ամրապինդ մարդիկ, սովոր աշխատանքի և չարքաշութեան։

Բաթումի վրայով գնացողները նպատակ ունեն նաւերով գնալ մինչև Փոքր-Ասիայի ծովափեայ քաղաքները, գլխաւորապէս Տրապիզօն, ու այնտեղից անցնել դէպի իրանց ծննդավայրերը։ Բաթումի մէջ ներկայումս ժողովված են գաղթականներ մասամբ Թիֆլիսի և Քութայիսի նահանգներից, իսկ մեծ մասամբ Սևծովեան նահանգի քաղաքներից և գիւղերից, որտեղ նրանք գտել էին իրանց համար ապաստարան և որ և է զբաղմունք, որ նրանց տալիս էր ապրուստի միջոց։ Նրանք մեծ մասամբ Փոքր-Ասիայի հիւսիսային մասի բնակիչներից են։

Սուրմալուի գաւառի վրայով գնացողները դիւրութիւն ունեն հասնելու Ալաշկերտի շրջանի գիւղերը։ Նրանք այդտեղով կարող են անցնել թէ Վանի կողմերը և թէ Մուշի դաշտավայրի գիւղերը։

Պարսկաստանի վրայով գնում են նրանք, որոնք դիտաւորութիւն ունեն ժամանակաւորապէս պատսպարվել Ատրպատականի զանազան տեղերում։ Այդ ճանապարհով գնում են յաճախ Վանայ լճի բոլորտիքում և Միջագէտքում գտնված գիւղերի և քաղաքների բնակիչները։

Կանօնաւոր ուղիներ չատ քիչ են։ Գնացող-

digitised by A.R.A.R.@

ները ստիպված են անցնել ամայի տեղերով, սարերով, ձորերով, անընակ լեռնադաշտերով, աւազականոցներով և սպանդանոցներով։

—

—Արդեօք ճիշդ է, որ գաղթականների մի մասը ցանկանում է հաստատուել Պարսկաստանում։

Այդ հարցով դիմեց ինձ մի պարսկաստանցի, որ վաղուց է ինչ ապրում է մեր քաղաքում։

—Որքան ինձ յայտնի է, պատասխանեցի ես, թիւրքահայ գաղթականները ոչ մի ուրիշ երկիր չեն ուզում տեղափոխուել, այլ ցանկանում են մնալ իրանց բնիկ երկրում։ Բայց եթէ նրանց հայրենիքում չը հաստատուի խաղաղ և անդորր կեանք և նոր աղետաբեր մրրիկներ բարձրանան, նա պատրաստ կը լինի գաղթել առմիշտ Պարսկաստանի և Անդրկովկասի այն տեղերը, ուր ազատ հողեր կը գտնուեն բնակութեան համար։ Եթէ այժմ էլ Անդրկովկասում նրանց առաջարկուէին ազատ հողեր, անկասկած, գաղթականների մի մասը կը մնար և կը հաստատուէր մեր երկրում։

—

—Գիտէք, ինչ, ասաց իմ խօսակիցը, յարմար տեղեր շատ կան Պարսկաստանում նոր գիւղեր գնելու համար։ Բայց առանց էական մեծ աջակցութիւնների տեղական իշխանութիւնների կողմից անկարելի կը լինի գործ աջողեցնել։

—Բացատրեցէք ձեր միտքը։

—Հրաշալի, ընդարձակ հողեր կան Սօմայում, Սօվուջբուլաղում, Մակուի խանութեան մէջ, որոնք յիշեցնում են Շիրակի դաշտերը, յարմար երկրագործութեան և անասնապահութեան համար. բայց շրջակայքում ամեն տեղ

digitised by A.R.A.R.@

վխտում են քիւրդական հրոսակներ, որոնք հանգստութիւն չեն տալիս ոչ միայն ուրիշներին, այլ նաև իրանց ցեղակիցներին։

—Ուրեմն, ինչ պէտք է անել, հարցրի ես։

—Պէտք է, ինչպէս ասացի, ձեռք բերել տեղական իշխանութեան առանձին հովանաւորութիւնը և օգտվել նրա անմիջական աջակցութիւնից թիւրիմացութիւնների և խոչընդոտների դէմ մաքառելու համար։

—

—Մեր սեփական երկիրը—աննման երկիր է, ասում էին ինձ գաղթականները, բարեբեր, հացաւէտ, խոտաւէտ... Բայց տուրք ու հարկը մեծ է, իսկ փարան քիչ։ Ստիպված ենք փարայ վաստակելու համար Պօլիս գնալու, Կովկասի քաղաքները գալու։

—Ուրեմն, նորից պէտք է մեզ մօտ վերադառնաք, հարցրի ես։

—Ի հարկէ, պէտք է վերադառնանք, յայտնեցին նրանք. բայց ինչպէս, մենք էլ չը գիտենք։ Մեր տեղական իշխանութիւնը անցաթուղթ չէ տալիս ոչ Պօլիս, ոչ էլ Կովկաս գնալու։ Իսկ երկրի մէջ արհեստ չը կայ, առուտուր չը կայ, աշխատանքի աղբիւր չը կայ բացի հողագործութիւնից։ Եթէ մեր երկրում Թիֆլիսի նման մէկ քաղաք գոյութիւն ունենար, մենք մեր գիւղի արդիւնքները այնտեղ կը ծախէինք և կընդարձակէինք մեր արդիւնագործութիւնը։ Այն ժամանակ ինչու մենք կը հեռանայինք մեր երկրից։

—Պէտք է, ուրեմն, ջանք գործ դնէք, որ ձեզ անցաթուղթ տալը չը մերժեն։

—Ի հարկէ, այդ բանի մասին պէտք է առանձին հոգատարութիւն ունենանք։

digitised by A.R.A.R.@

—Թող երկաթուղի չինեն մեր երկրում, միջամտեց մի գրագէտ գաղթական, այն ժամանակ մեր երկրի մէջ էլ աշխատանք կը բացվի։

—Է՛հ, դա չը լինելու բան է, վրա բերեցին միւսները. դու հիմիկվայ մեր վիճակից խօսիր։

—Չէ, խօսում են երկաթուղու մասին, պընդեց գրագէտը, ես կարդացել եմ։

—Երբ որ կը չինեն, կը պրծնեն, նկատեցին միւսները, այն ժամանակ կը խօսենք։ Հիմի դա դատարկ մխիթարութիւն է։ Ի՞նչ պէտք է ասեմ հարկահաւաքին, երբ գայ դրանս առաջ կանգնէ և փող պահանջէ. քո երկաթուղին խօ չի օգնի։ Մենք դեռ պանդխտութեան ծառաներ ենք, դեռ առանց այստեղի մշակութեան կառավարվել չենք կարող։

—

Գաղթականները, կամ աւելի ճիշտն ասած, փ ա խ ս տ ա կ ա ն ն ե ր ը գնում են։ Սակայն նըրանց մէջ նստած պ ա ն դ խ տ ո ւ թ ե ա ն ո գ ի ն քշում է նրանց դարձեալ մեր երկիրը։

Գաղթականը հայրենիք կը վերադառնայ։

Փախստականը յետ կը քաշվի ասպարէզից։

Իսկ պ ա ն դ ո ւ խ տ ը նորից մեզ մօտ կը գայ աշխատանքի համար։

digitised by A.R.A.R.@

CV

(22 օգոստ. 1902 *թ*., «*Մշակ*» № 183)

Ես առիթ ունեցայ ճանապարհորդակից լինել թիւրքահայ գաղթականների մի խմբի, որ գը-նում էր դէպի Կարս։

Երկաթուղու կայարանում, ուր հաւաքված էին մեծ թւով գաղթականներ, չտապով անց ու դարձ էին անում գաղթականների գլխաւոր ներկայացուցիչները կամ հոգատարները և, մօտենալով այս ու այն խմբին, տեղեկութիւններ էին ժողովում գնացողների ու մնացողների և ընթացիկ պահանջների մասին։

—Դուք արդեօք բոլորդ էլ այսօր էք գնում, հարցնում է հոգատարներից մէկը՝ մօտենալով գաղթականների մի խմբի։

—Բոլորս էլ։

—Շատո՞նք էք։

—Քսաներկու հոգի։

—Տոմսակներ գնել էք։

—Գնել ենք։

Մի ուրիշ խմբում յուզմունք է տիրում։ Գաղթականներից մէկը յուսահատ ձևերով ինչ որ յայտնում է, միւսները անհանգիստ շար-ժումներ են անում։

—Ի՞նչ կայ, ինչ է պատահել, հարցնում է նրանցից հոգատարը։

—Ի՞նչ պէտք է լինի, պատասխանում է գաղ-

digitised by A.R.A.R.@

թականներից մեկը, չորս հոգի առանց տոմսակի են մնացել։

—Ինչպե՞ս։

—Փողները պակասել է, բացատրում են գաղթականները։

—Որոնք են կարօտները։

—Ահա սրանք։

Առաջ են գալիս անտոմսակ մնացածները։ Հոգատարը նայում է նրանց, ճանաչում է նրանցից երեքին, իսկ չորրորդի մասին հարց ու փորձ է անում։

—Դուք երկուսդ կարօտների ցուցակում գրված էք. իսկ դուք, միւսներդ, պէտք է փող ունենայիք, վաղուցվայ աշխատաւորներ էք, գործ-աշխատանք ունէիք։

—Այդ ճիշդ է, բացատրում են հարց ու փորձի ենթարկված երկու գաղթականները, մենք փող պէտք է ունենայինք, բայց չունենք։ Մեր փողը տասն օր առաջ երկիր ուղարկեցինք։ Ի՞նչ գիտէինք, թէ պէտք է մեզ փող հարկաւոր գայ այստեղ։ Մեր ձեռքին մի քանի կոպէկ է մնացել միայն։ Թող մեզ փող տան պարտքով։

Փոքր ինչ խորհրդակցութիւնից յետոյ հարցերը վճռվեցին։ Երկու գաղթականները իրանց համագիւղացիներից ստացան պարտքով հարկաւոր փողը և չտապեցին տոմսակ գնելու։

—Իսկ դուք երկուսդ եկէք իմ ետևից, ասաց հոգատարը երկու կարօտներին։

Նա տարաւ նրանց կայարանի երրորդ դասի դահլիճում կանգնած մի մեծ խմբի մօտ։ Այդտեղ ժողովված էին այն գաղթականները, որոնք իրանց սեփական միջոցներով անկարող

digitised by A.R.A.R.@

էին տոմսակ գնել։ Դարձյալ մոտենում էին նոր կարոտեալներ։

Հոգատարներից երկուսը, «Մշակի» խմբագրութեան ներկայացուցչի հետ միասին, ստուգում էին ցուցակները և հարց ու փորձեր էին անում։

—Քանի՞ հոգի էք բոլորդ։

Հաշուեցին։

68 հոգի։

Դուրս եկաւ, որ կարօտեալների թիւը աւելի մեծ էր, քան այդ օրվայ համար նշանակված էր նպաստի փող նուիրատուութեան գումարներից։

—Ճիշդ է, բացատրեց նպաստ բաժանողը, եղած փողով կարելի է տոմսակներ գնել բոլորի համար. բայց մի քանիսին, ինչպէս պարզվեց, պէտք էր և ուրիշ օգնութիւն հասցնել, որովհետև բոլորովին զուրկ են դրամական որ և է միջոցներից, իսկ ահա այն մէկն էլ գնում է ընտանիքով և խեղճ մարդ է։

Գաղթականներից մի քանիսը յետաձգեցին իրանց գնալը մինչև հետեւեալ օրը։

Գնացողների համար գնվեցին տոմսակներ և կարօտների համար բաժանվեց նպաստ։

—

—Գիտէ՞ք ինչ, դիմեց ինձ հոգատարներից մէկը։ Այսօր առաւօտ Թիւրքիայից եկան Թիֆլիս երկու նոր մարդ մեր գաղթականներից և զարմանքով իմացան, որ նրանք պէտք է նորից վերադառնան։

—Առանց անցաթղթի՞, հարցրի ես։

—Առանց անցաթղթի, թագուն կերպով, բացատրեց հոգատարը։ Նրանք ծախսել են մօտ երկու ոսկի մինչև հասել են այստեղ։ Նրանց օգնել էր մի քիւրդ, որ առաջնորդել էր մինչև

սահմանագիծ և ստացել իր վարձատրութիւնը։

—Եւ այժմ պէտք է վերադառնան հետաքըր-քրվեցի ես, թէ ուրիշ դիտաւորութիւն ունեն։

—Կը վերադառնան, բայց ոչ մի միջոց չունեն. պէտք է նրանց էլ օգնել։ Նրանք ունեւորներից չեն իրանց գիւղում, բայց լաւ աշխատողներ են։

—Ի հարկէ, պէտք է օգնել նկատեցի ես։

—Այդ պանդուխտներն էլ են եկել այսօր այստեղ կայարան, աւելացրեց հոգատարը. բայց ոչ գնալու, այլ իրանց հետաքրքրութիւնը լցուցանելու նպատակով։ Նրանք կը գնան մի քանի օրից յետոյ։

—

Գնացքը շարժվելու րոպէին ամբողջ կայարանը դղրդաց խառն բացականչութիւններով։

Գնացողները և մնացողները միմեանց տալիս էին հրաժեշտի ողջոյններ։

Բաժանվեցին։

Ձայները խլացան և մարեցին։

Իւրաքանչիւր մարդ զբաղվեց իր համար տեղ ապահովելու և ննջելու տեղ պատրաստելու հոգսով։

Ինձ հետաքրքրում էին գաղթականները։ Մի քանի ժամանակից յետոյ ես գնացի նրանց վագոնների մէջ այցելելու։

Գաղթականները տեղաւորվել էին, ով ինչ կերպ կարողացել էր։

Մի քանի նստարանների վրա յարմարեցրել էին տեղեր երեխաների համար և նրանց պառկեցրել այնտեղ։ Մեծերը նստոտած կողքերին նրանց քնացնում էին։

Մի երեք տարեկան փոքրիկ չէր ուզում քնել և խաղում էր իր պապի ծնկների վրա։ Պապիկը

digitised by A.R.A.R.@

շոյում էր փոքրիկի գլուխը և փաղաքշական խօսքերով նրան համոզում էր քնելու։ Փոքրիկը հետաքրքրված էր իր շուրջը կատարվող իրարանցումով և ցանկութիւն չունէր դեռ քնելու։

Վագօնում կանգնած էր սաստիկ ծուխ, որ առաջացել էր ծխախոտից։ Գաղթականների մի մասը շարունակում էր ծխել։

—Բաւական ծխեցիք, բացականչեց ընտանիքաւոր մի գաղթական, երեխաները խեղդվում են ձեր ծխից։

—Շուտով կը քնենք, յայտնեց մի ձայն մթութեան միջից, այլ ես ծխող չի լինի։

Ես կանգ առի շատ գաղթականների մօտ և հարց ու փորձեր արի նրանց տրամադրութեան և մտածմունքների մասին։

Նրանցից շատերը չէին կարողանում իրանց հաշիւ տալ կատարվող եղելութիւնների մասին։ Նրանք իրանց զգում էին առաջ մղված մի ինչ որ խմբական, ընդհանուր հոսանքից, որ տանում էր դէպի անորոշ մի արշաւանք։

—Ի՞նչպէս կերթանք, ո՞ւր կը հասնենք, ինչ աջողութիւն կունենանք՝ ինքներս էլ չը գիտենք։

Այդպէս էին պատասխանում շատերը իմ հարցին։

—

Մի բանիմաց, փորձված և դեռ երիտասարդ գաղթական գրաւեց իմ առանձին ուշադրութիւնը։ Նա եղել էր Անդրկովկասի զանազան կողմերում՝ Բաթումում, Սուխումում, Թիֆլիսում, Բագւում և ուրիշ տեղերում։ Նա պատմեց ինձ հետաքրքրական տեղեկութիւններ գաղթականների մասին։

—Մենք մեր աշխատանքով ամեն տեղ կա-

digitised by A.R.A.R.@

թող ենք մեր երեսը պարզ անել, շեշտեց նա։ Մենք մեր քրտինքով ամեն տեղ կարող ենք հաց վաստակել։

—Ուրեմն, ամեն տեղ էլ գաղթականները գործ գտել էին իրանց համար, հարցրի ես։

—Ամեն տեղ էլ, վրա բերեց նա։ Կոտորածից յետոյ, երբ սարսափած փախանք մենք մեր երկրից, ճիշդ է մենք ծանր բեռն դարձանք ձեզ համար։ Մենք առանց հացի, պաշարի էինք, մենք մերկ էինք և զուրկ ամեն բանից։ Մեզ օգնեցիք։ Բայց շուտով մեր աշխատանքի շնորհիւ մենք ոտքի կանգնեցինք։

—Ճիշդ է։

—Մենք սկսեցինք աշխատել, շարունակեց նա, թէ իբրև մշակներ և թէ մասամբ իբրև արհեստաւորներ։ Կամաց-կամաց մենք ձեռք բերինք այնքան փող, որ նոյն իսկ կարող եղանք մի մասը երկրում մնացածներին ուղարկել։

—Արդեօք ձեր գիւղերը նորից կենդանութիւն են ստացել։

—Կան և շատ և քիչ վնասված գիւղեր, ասաց նա, բայց վերականգնելու վրա են։ Շատ վնասվածների մէջ դեռ ակներև երևում են ջարդի և հալածանքի նշանները. իսկ միւսները կարողացել են արդէն իրանց կարգի բերել, լցրել են ամբարները ցորենով, տուն ու տեղ շէնացրել են և չէք հաւատայ, եթէ ասեմ, որ դարձեալ նախանձ են շարժել։ Մեր գիւղի մօտ գտնվող քիւրդերը ինձ իրանց զարմանքն էին յայտնում մեր գիւղացիների վրա. Նրանք չէին կարողանում հասկանալ, թէ ինչպէս գիւղերը շուտով դրստվեցին և այնպէս իրանց ապահովեցին, որ նրանց հետ համեմատած քիւրդ ու-

digitised by A.R.A.R.@

թիւրքը դարձեալ ստոր են իրանց ապահովութեան աստիճանով:

—Դուք ի՞նչ պատասխանեցիք ձեր հարեաններին, հարցրի ես։

—Ես ասացի, վրա բերեց խօսողը, որ հայի ձեռքը, նրա աշխատանքն ու քրտինքը կը յաղթեն վերջ ի վերջոյ, նրանք ամեն մի աւերակ կը շէնացնեն, ամեն մի ամայի տեղ արգաւանդ կը դարձնեն։ Քիւրդը զգաց իմ խօսքերի ծանրութիւնը և լռեց։

—Արդեօք չեն փոշմանել քիւրդերը իրանց արածի վրա, հետաքրքրվեցի ես։

—Ով գիտէ, գուցէ և փոշմանել են, որովհետև նրանցից շատերը իրանց մի տեսակ մեղաւոր են զգում. բայց ի՞նչ երաշխաւորութիւն կայ, որ վաղը նրանք, եթէ խրախոյս ստանան, չեն կրկնի նորից նոյնը առաջվայ կատաղութեամբ։ Բայց այժմ մենք այդ բանի մասին չենք մտածում։ Մենք վճռել ենք գնալ և գընում ենք։ Գնանք մեր օջախը և յետոյ տեսնենք, թէ ի՞նչ ենք կարգադրում։ Մենք աշխատանքի մարդիկ ենք, անգործ չենք կարող մնալ։ Եթէ անցաթղթեր տային՝ նորից պանդխտութեան դուռը կը բռնէինք։ Ո՞վ պէտք է մեր մասին հոգայ։

—Գուցէ պատրիարքարանը, նկատեցի ես։

—Շատ է հեռու, ժպտաց գաղթականը, նա մեր ձայնը չէ լսում։ Եւ այսօր աւելի քան 20,000 աշխատաւոր ձեռքեր վերադառնում են իրանց տները աշնան սկզբին, երբ գիւղում գործ չը կայ և պէտք էր ուրիշ տեղ գնալ աշխատանքի։

—

Մենք հասանք Ջանդար կայարանը։

digitised by A.R.A.R.@

Մեր խօսակցութիւնը դադարեց։

Գաղթականներից շատերը արդէն քնել էին։ Ընտանիքաւորները հանգստացրել էին իրանց փոքրիկներին և իրանք էլ պատրաստւում էին քնելու։ Արթուն էր միայն այն փոքրիկը, որի մասին յիշեցի։ Նա շարունակում էր նստել իր պապի ծնկների վրա և նայել իր չուրջը։

—Պապիկ, ջուր տուր, խնդրեց մանուկը։

—Ջուր չը կայ, բալամ, այստեղ, պատասխանեց պապը։

Մանուկը շարունակում էր ջուր ուզել։ Պապը յամառում էր, չէր ուզում տալ։

—Ինչու, Սիմօն, չես ուզում ջուր տալ, միջամտեց մի գաղթական։

—Վատ տեղեր են, առարկեց Սիմօնը (պապի անունն էր), ջուրը այստեղ աղի է, վնասակար է, կարող է ջերմացնել երեխային։

Գաղթականներից մէկը շիշով ջուր ունէր վերցրած հետը Թիֆլիսից։ Նա բերեց շիշը և տուեց Սիմօնին։

Փոքրիկը խմեց, հանգստացաւ և համաձայնեց քնելու։

—Քնիր, բալաս, մրմնջաց Սիմօնը, երանի քեզ, ոչինչ չես հասկանում։

Սիմօնը համբուրեց երեխայի մազերը և տուեց նրան իր հարսին։

Ես բաժանվեցի գաղթականներից և գնացի իմ տեղը։

digitised by A.R.A.R.@

CVI

(25 *օգոստ.* 1902 *թ.*, *«Մշակ»* № 186)

Զբաղված թիւրքահայ գաղթականների վերադարձի գործերով, ես լուսթեան տուի մի եղելութիւն, որ տեղի ունեցաւ նոյն այն օրը, երբ գաղթականները պէտք է վճիռ կայացնէին մնալու կամ գնալու մասին։

Եթէ չէք մոռացել՝ գաղթականների համար պայմանաժամի օր նշանակված էր Թիֆլիսում օգոստոսի 10-ը։

Նոյն այդ օգոստոսի 10-ին զինաթափութեան օր էր նշանակված Թիֆլիսում ապրող այն անձանց համար, որոնք սովորութիւն ունէին զէնք կրել իրանց զգեստի վրա։

Գաղթականների հարցը շատ մեծ հարց էր․ ես զբաղվեցի նրանով։

Այսօր ես մի քանի տող կը նուիրեմ զինաթափութեան։

—

—Վաղուց պէտք էր այդ զինաթափութիւնը կատարել, ասում էր ինձ ամարային կլուբի այգում իմ ծանօթներից մէկը։

—Վերջապէս կազատվենք դաշոյնաւորների կատարած անմիտ և խայտառակ սխրագործութիւններից, վրա բերեց մի ուսուցիչ։ Մինթէ փոքր ի շատէ կուլտուրական հասարակութեան մէջ թոյլատրելի կարող էր լինել զինվածների

digitised by A.R.A.R.@

խումբ, որը խօսքի տակին ու գլխին դիմէր իր դաշոյնին։ Դա ոչ միայն անպատեհութիւն էր, այլ և վիրաւորական մի հանգամանք այն բոլոր քաղաքացիների համար, որոնք ամենևին մտադիր չեն թրով համեմել իրանց խօսակցութիւնները և վէճերը։

—Էհ, ինչ էք մեծ նշանակութիւն տալիս խանչալ կապելուն, միջամտեց երրորդը։ Դա սովորութեան նման մի բան է, աւելի ոչինչ։ Խանչալ կապելը մի քանիսի համար այնքան էլ զուգսի պահանջ էր, որքան փողպատ կապելը։ Շատերի խանչալը իսկի որ ասես կարգին կտրել էլ չէ կարողանում։ Այնպէս մարդ էլ կայ, որի խանչալը փայտից է շինված. Նա խանչալ կապում է, որովհետև մօդա է, ընդունված է խանչալ կապելը։

—Այդ այդպէս է, վրա բերեց առաջին խօսակիցը, կան մարդիկ, որոնք միայն ձևի համար են խանչալ կապում, բայց կան և շատերը, որոնք պատրաստ են իրանց կրած զէնքը գործի դնել և ինչպէս տեսնում ենք շատ անգամ էլ գործ են դրել հարբած կամ զայրացած ժամանակը։ Վերջապէս, այդպիսի անմիտ մօդաները, որքան շուտ վերացվեն, այնքան աւելի լաւ։

Խօսակիցները պատմեցին դէպքեր Թիֆլիսի առօրեայ կեանքից, որտեղ զէնք կրողների շնորհիւ տեղի են ունենում մի շարք դժբաղդութիւններ և տխուր եղելութիւններ։

—

Մեր խօսակցութեան ժամանակ մեզ մօտեցաւ մեր կլուբի յայտնի յաճախորդ Բուղդան Բուղդանիչը։

Նա լուռ լսում էր խօսակցութիւնները, ժպտում էր և գլուխը թափ տալիս։

digitised by A.R.A.R.@

—Ես վաղ իմ փիքր արի էդ բանի վրա, յայտնեց նա։

—Ի՞նչ բանի վրա, հետաքրքրվեցինք մենք։

—Այ, էդ խանչալ ու թուր կապելու վրա, բացատրեց նա։

—Ինչպէ՞ս։

—Այ, ինչպէս, պատասխանեց նա։ Ես էրկու ամիս սրամէն առաջ մէ քանի կնեազների յիդ սորվեցրի խանչալ կապիլը։ Թէ ղուզիք՝ կու պատմիմ։

—Լսում ենք։

—

Բուղդան Բուղդանիչը պատմեց հետեւեալը։

«Էրկու ամիս սրանից առաջ մէ իրիգուն կանգնած էի միր Գօլօվինսկի պրօսպէկտի վրա։ Էդ վուխտը անցկացան չուրս կնիազնիր մանր կնիազներեմէն։ Նրանցը մէ քիչ ճանչնում էի։ Իրիքը խանչալով էին, մէկը անխանչալ։ Հէնց վուր ինձ մօտեցան, իս առաջնիրը կտրեցի ու հանաքով խօսեցի.

—Դուք ինձ կու բաշխիք, ասեցի, մէ բան պիտի ձիզ ասիմ։ Ամա չը նիղանաք։

—Ի՞նչ բան, հրամայէ, ջուղաբ տու ին կնիազնիրը։

—Ձիզմէն էս մէկը, ասեցի իս, էն մէկէլ իրիքի վրա խնլօք է ինձ էրեւում։ Բեդամաղ չըլիք, թէ բեդամաղ իք ըլում՝ մինավաժ իմ։

—Չէ, բեդամաղ չինք ըլում, ասեցին նրանք, ամա ինչ իս ուզում դուն ասի, ինչ նուր բան իս մօզօնի։

—Այ ինչ, ասեցի նրանցը, ձիզմէն էս մէկը վուր կայ՝ սա առանց դուշմանի է ման գալի, համա դուք համաչա ձիր դուշմանը ձիզ հիդ ման իք ածում։

digitised by A.R.A.R.@

—Ի՞նչ դուշման, արմըցան նրանք, ինչ ես դուս տալի։

—Արա դուշման չէ ինչ է էս ձիր խանչալը, ասեցի ես նրանցը։ Գանա չինք գիդի դրա գժութիւնները։ Թէ մէ բերնֆութին պատահից, թէ մէկը քու պատուին ու դամաղին դիպաւ, էն նմուտին թուրը խաղում է. մէկ էլ տէհար խանչալը փուրը մտաւ։ Ուրիշին էլ սպանեցիր ու քիզ էլ կորցրիր ու կորցրիր։ Ամա սա վուր կայ, էս անխանչալ ազնիւը, չի կորչի ու չի կորցնի ոչովլի։ Կու խփին՝ նա էլ կու խփէ, կօսին՝ նա էլ կօսէ, ուշունց կու տան՝ նա էլ ուշունց կուտայ, անմիղ կու սկսվի ու անմիղ էլ կու վիրջանայ։

—Դրուստ է ասում Բուղդան Բուղդանիչը այ, վրա բերեց նրանցից մէկը։

—Արա դրուստ չիմ, մէ լաւ փիքր արէք։

Զիք հաւտա, վուր ասիմ, թէ էրկու օր էդնէն նուր մէկանց ռաստ էկայ միր ազնիւներուն, ու ինչ տեհայ, խանչալնիրը դէն էին գցի։

—Բու խօսքը լսեցինք, ասեցին նրանք ու խանչալը գցեցինք ու շատ էլ լաւ է։

Հիմի տեհնում իք, պարծեցաւ Բուղդան Բուղդանիչը, վուր ես վաղ իմ էդ բանը փիքր արի ու ջէր ուրիշներին էլ խիլքի իմ բերի։

—

Բուղդան Բուղդանիչը պատմեց մի քանի ծիծաղաշարժ պատմութիւններ խանչալաւորներմասին։ Շատ բնորոշ էին այն պատմութիւնները, որոնք ցոյց էին տալիս խանչալ կրողներից մի քանիսի չափազանց վախկոտ և թուլասիրտ լինելը։ Դրանց մասին էլ մէկ ուրիշ անգամ։

digitised by A.R.A.R.@

CVII

(1 սեպտ. 1902 թ., «Մշակ» № 192)

Մեր խոսակցությունները շարունակվեցին։

—Սեպտեմբերը այս տարի մեզանում աղմկալի և հետաքրքրական պետք է լինի, ասաց ինձ մի խոսակից՝ լրագրական գործող։

—Ի՞նչ կողմից, հետաքրքրվեցի ես։

—Զայնաւորների ընտրությիւններ, բացատրեց նա, պետք է տեղի ունենան Թիֆլիսում և Երևանում։ Թիֆլիսի ընտրությիւնները խոստանում են շատ հետաքրքրական լինել։ Նրանք պետք է նոր ձևով կատարվեն—ընտրողական երեք ժողովներում։

—Այդ գիտեմ, խոսքը կտրեցի ես. յետոյ էլ ինչ նորությիւնների մասին էիք ակնարկում։

—Սեպտեմբերին տեղի կունենան այն կոմիտէտների նիստերը, որոնք պետք է զբաղվեն տեղական գիւղատնտեսական կարիքների ուսումնասիրութեան խնդիրներով։

—Յետո՞յ։

—Սեպտեմբերին մեր հոգևոր դպրոցները, թէ Թիֆլիսում և թէ Երևանում, պետք է կարողանան Սցիլլայի և Քարիբդայի ալիքների միջից ազատ դուրս բերել իրանց նաւերը։

—Տօ, էդ ինչ նամազուլ բանիր ասեցիր, միջամտեց Բուղդան Բուղդանիչը։ Ի՞նչ նաւիր,

ինչ բան։ Շկոլը ինչ հէսաբ ունի նրանց մօտ։ Ասիլդ ինչ է։

Մենք բացատրեցինք, թէ ինչ բան է Սցիլլան և Քարիբդան։

Բուղդան Բուղդանիչը խորամանկութիւն էր անում։ Նա հասկացել էր բանի էութիւնը։ Նա միայն ցանկանում էր աւելի որոշ կերպով իմանալ, թէ ինչ է մեր դպրոցների կեանքում Սցիլլան և ինչը Քարիբդան։

—Այս սեպտեմբերին, շարունակեց մեր խօսակիցը, կորոշվի թիւրքահայ գաղթականների վերադարձի դժուարացած հարցը։ Այժմ գաղթականները կանգնած են իրանց հայրենիքի դռան առաջ, բաղխում են նրան և չը գիտեն, թէ ինչպէս կը մտնեն այդ դռնով և ինչ ընդունելութիւն կը գտնեն այնտեղ։

Խօսեցինք փոքր ինչ գաղթականների մասին։ Յայտնեցինք միմեանց մեր ունեցած տեղեկութիւնները։

—Ներկայ սեպտեմբերին կը սկսվի հայոց մշտական թատրօնի գործունէութիւնը, շարունակեց մեր խօսակիցը։ Տեսնենք, ինչպէս են տանում գործերը։ Կատարւում են արդեօք տըւած խոստումները։

Մենք համոզվեցինք, որ արդարև ներկայ սեպտեմբերին կարևոր հետաքրքրական նիւթեր շատ կան հրապարակում։

—

—Գանա դրուստ է, հարցրեց Բուղդան Բուղդանիչը, վուր մի յաջորդ Գարեգին վարդապետին էջմիածին են տանում։

—Այո, պատասխանեցինք մենք։ Նա նշանակված է «Արարատի» խմբագիր։

digitised by A.R.A.R.@

—Էդ ինչ թավուր բան է, վուր ամեն մի ամիս թազադան փոխում ին խմբագրին ու նուր նուր մարդիկ ին նշանակում էդ «Արարատի» վրա։ Հալբաթ էտէնց է դրանց ղայդէն։

—Էջմիածնից եկած թղթի մէջ ասված է, բացատրեց ուսուցիչը, որ Գարեգին վարդապետը, ունենալով թոյլ կազմուածք և առողջութիւն, անկարող կը լինի Ներսիսեան դպրոցի գործերով զբաղվելու, ուստի նշանակվում է «Արարատի» խմբագիր։

—Վա՛յ, բացագանչեց Բուղդան Բուղդանիչը. իս չէի գիդի, թէ էդ «Արարատը» հիւընդի դիղ է։

—Չէ, բացատրեց ուսուցիչը, թղթի միտքն այն է, թէ «Արարատի» խմբագրութիւնը չէ պահանջում շատ աշխատանք, հոգս, յուզմունք և զբաղմունք։

—Է լաւ, էտէնց ըլի, համաձայնեց Բուղդան Բուղդանիչը, իս մէ քիչ դժար իմ գլխի ընգնում, դրուստն ասիմ հիմա էլ կարգին չը նըստից իմ գօգրումը։

—

Խօսակցութիւնը անցաւ Գարեգին վարդապետի վրայ։

—Քանի որ Գարեգին վարդապետը, ասաց լրագրական գործողը, չէր խանգարում մի որոշ խմբակի կատարել մութ և կասկածելի գործեր, նրան պահպանում էին և գովում էին, բայց հէնց որ նա փորձ փորձեց կաշառակերին ու բանսարկուին յետ կանգնեցնել, իսկոյն նախկին բարեկամները սկսեցին իրանց ատամները և ճանկերը ցոյց տալ նրան և այժմ արդէն

digitised by A.R.A.R.@

յաղթութիւնը տարած՝ խնճոյքներ են սարքում։

—Լաւ չէր ճանաչում իր իբր—կուսակիցներին, բացատրեց ուսուցիչը։

—Այո, միջամտեցի ես, Գարեգին վարդապետը լաւ չէր ըմբռնել մեր մէջ գոյութիւն ունեցող հասարակական հոսանքները։ Նա, գալով Թիֆլիս, հաւատում էր, թէ այն մարդիկ, որոնք այստեղ խօսում էին կրօնի, Էջմիածնի և աւանդութիւնների սրբութեան անունից, թէ այդ մարդիկ իսկապէս անձնուէր հոգատարներ էին ժողովրդի համար և ընդհակառակը, ժողովրդին թշնամի են բոլոր այն անձինք, որոնք այդ բառերով չեն ասպարէզ եկել և անողոք մտրակում են դիմակաւորներին և խաչագողներին։ Նա յետոյ ուշ սկսեց հասկանալ հասարակական հոսանքների բուն նշանակութիւնը։ Նա մի մեծ սխալ էլ թոյլ տուեց իրան հեղինակ հանդիսանալով մի այնպիսի տխուր կարգադրութեան, ինչպէս էր Ալիշանի համար հոգեհանգիստներ արգելելը։

—Այո, դա ճակատագրական սխալ էր, վրա բերեց լրագրական գործողը։

—Բայց պէտք է խոստովանել, աւելացրի ես, որ Գարեգինը չէր պատկանում կաշառակերների խմբին և սկսեց մաքառում այդպիսիների դէմ, երբ կամաց-կամաց ուսումնասիրեց շըրջապատողներին և տեսաւ, թէ ինչպիսի աւազակներով է նա շրջապատուած։ Ահա այդտեղ պէտք է սկսվէր նրա հասարակական բարի դերը։ Բայց հէնց այդտեղ էլ կտրեցին նրա գործունէութեան թելը։ Նրանից խլեցին թեմը։

digitised by A.R.A.R.@

—Ճիշդ է արդեօք, հարցրեց ուսուցիչը, որ Գարեգին վարդապետը դիտաւորութիւն ունի մի ամփոփ զեկուցում ներկայացնելու Թիֆլիսի կօնսիստօրիայում տիրող անկարգութիւնների մասին։

—Ես էլ եմ լսել նոյնը, պատասխանեցի ես։

Բայց հետաքրքրական է, թէ սինօդը կը զբաղուի այդ զեկուցումով և վերջ կը դնէ անկարգութիւններին։

—Ո՞վ գիտէ։

—Էհ, բան չունիս, նկատեց Բուղդան Բուղդանիչը։

---

digitised by A.R.A.R.@

CVIII

(8 սեպտ. 1902 թ., «Մշակ» № 198)

—Բոլորովին չուարել եմ. գանգատվում էր ինձ մի գործակալ՝ քահանայ Վանքի եկեղեցու բակում։

Գործակալը գաւառական գործակալներիցն էր։

—Ինչո՞ւ, հարցրի ես։

—Դատեցէք ինքներդ, ասաց նա. ես զեկուցում ունեմ անելու մի կարևոր գործի մասին Թեմական առաջնորդի պաշտօնակատարին։ Պէտք է ներկայանայի Գարեգին վարդապետին։ Ճանապարհին ինձ ասացին, որ Գարեգին վարդապետը այլ ևս իր նախկին պաշտօնում չէ, գնում է Էջմիածին և ես պէտք է դիմեմ կօնսիստորիայի անդամին։ Գալիս եմ Թիֆլիս. ինձ ասում են, որ պէտք է ներկայանամ նորահաստատ Մամբրէ վարդապետին։ Պատրաստվել էի այսօր ներկայանալու այդ վերջինին։ Ինձ ասացին, որ այժմ նա չէ նախանդամի պաշտօնում, այլ Արսէն վարդապետ Ղլթճեան։ Այժմ չը գիտեմ, թէ մինչև առաջնորդարանում ընդունվելս արդեօք չեն լինի նոր փոփոխութիւններ։

—Շարժում, փոփոխութիւն, յուզմունք—դրանք առաջադիմութեան նշաններ են, նկատեց ժպտալով մի հասակաւոր պարոն.

—Ձեզ ինչ վնաս, դիմեց գործակալին մի ե-

digitised by A.R.A.R.@

րիտասարդ, դուք ձեր զեկուցումը արէք, ձեր ասելիքը ասացէք:

—Ես ի՞նչ գիտեմ, պատասխանեց գործակալը. ամեն մէկը իր բնաւորութիւնը ունի, իր պահանջը մեր պարտականութիւնների մասին:

Գործակալը պատմեց մի քանի դէպքեր, որոնց վերաբերութեամբ զանազան որոշումներ են կայացել կօնսիստօրիայում և առաջնորդի մօտ: Մէկի օրով քահանայութեան համար անարժան ճանաչվածները համարվել են միւսի օրով արժանաւոր. մէկի չըհասը միւսի համար դարձել է հաս. մէկի պահանջած տուրքը միւսի մօտ յայտարարվել է ապօրինի: Ահա ձեզ նոր փաստեր:

Մենք լսեցինք մի շարք փաստեր, մէկը միւսից աւելի բնորոշ և համոզեցուցիչ:

—Մի և նոյն դէպքի վերաբերութեամբ ահա ձեզ մի քանի հակառակ որոշումներ,

—Երևի տեսակէտները տարբեր են, նկատեց երիտասարդը:

—Անշուշտ տեսակէտները դեր են խաղում, կրկնեց մի ուրիշը:

—Ես ի՞նչ գիտեմ, ասաց գործակալը, կամ ի՞նչ իրաւունք ունեմ գիտենալու.

Մեր մօտ կանգնած մի գիւղացի, որ Բօրչալուի գիւղերից մէկիցն էր եկել և լուռ լսում էր մեր խօսակցութիւնը, յանկարծ սթափվեց և դիմեց մեզ:

—Հի՞նչ ղադ ա էդ «տ ե ս ա կ է տ ը», հարցրեց նա զգացված ձայնով:

Երիտասարդը սկսեց բացատրել գիւղացուն, բայց ոչինչ չը կարողացաւ բացատրել:

Գիւղացին մի չըհաս պսակի հարցի լուծման

digitised by A.R.A.R.@

համար էր եկել Թիֆլիս։ Նա դիմեց գործակալի աջակցութեան, բայց գործակալը մերժեց, որովհետև ինքն էլ չը գիտէր, թէ ինչ տեսակէտներ են տիրում այժմ այդպիսի հարցերի վերաբերութեամբ։

—

Հեռացաւ մեզնից գործակալը, հեռացաւ գիւղացին, հեռացան և մի քանի խնդրատուները, որոնք սպասում էին կոնսիստորիայի ատեանի ընդունելութեան։

Մնացինք հինգ հոգի։ Մենք մօտեցանք Կուրի ափին և շարունակեցինք մեր խօսակցութիւնները։

—Թիֆլիսի Թեմի առաջնորդական հարցը առկախ մնաց, յայտնեց հասակաւոր պարոնը։ Այժմ, ինչպէս երևում է, մի քանի ժամանակ պէտք է նախանդամներով կառավարվենք մինչև իսկական առաջնորդի գալը։

—Շատ էժանացաւ առաջնորդի տեղը, նկատեց մի նախկին զինուորական, որ առանձին նշանակութիւն էր տալիս առաջնորդի անձնաւորութեան և նրա դիրքին։

—Առաջնորդը ուժեղ բնաւորութեան և լուսաւոր աշխարհայեացքի տէր պէտք է լինի, նկատեցի ես։ Նա պէտք է կարողանայ աւազակներին դուրս չպրտել Աստուծոյ տաճարից և գործակցութեան հրաւիրել ազնիւ գործողներին։ Թիֆլիսի թեմը դրաւիչ է. բայց նա եթէ փ ա ռ ք ի տեղ է լաւ գործողի համար, նա մի և նոյն ժամանակ դ ա գ ա ղ է թոյլ և խարդախ գործողի համար։ Այդ թեմը չէ կարելի բռնել կողմնակի ազդեցութիւններով, կաշառքներով, հաճոյախօսութեամբ և դիպլօմատութեամբ։ Այս-

digitised by A.R.A.R.@

տեղ կան ժողովրդական հսկող աչքեր, Թափանցիկ դիտակներ... Այստեղ ուղիղ հարց են դնում պաշտօնեայի առաջ. «մոռացիր ես դու մաքրել «աւազակների այրերը», Թէ ներողամիտ աչքով պէտք է նայես՝ ինչպէս անցնում են ժամերը, օրերը և տարիները»։

Մենք խօսեցինք մեր գործողների, մեր փոքր ի շատէ համակրելի հոգևորականների մասին, ասպարէզում դրված կարևոր խնդիրների և մի շարք հերթական գործերի մասին։

Խօսակցութիւնը վերջացաւ ցանկութիւններով։

Ինչպէս միշտ։

---

digitised by A.R.A.R.@

CIX

(22 սեպտ. 1902 թ., «Մշակ» № 209)

—Այս շաբաթ մենք ամեն օր ձեզ հետ պատահում ենք, ասաց ինձ երեկ մի լրագրական գործող։

Ցիրաւի այս վերջին շաբաթվայ բոլոր երեկոներին էլ ես լինում էի զանազան ժողովներում, նիստերում և ներկայացումներում, ուր պատահում էի պարոնին։

—Այո, ամեն երեկոյ, սկսած կիրակի օրից, պատասխանեցի ես։

Եւ որքան միմեանցից տարբեր գործեր տեղի ունէին այս շաբաթ, նկատեց պարոնը։

Մենք այցելել էինք հայոց ներկայացումները, օպերայի ներկայացումները, դումայի նիստը, գիւղատնտեսական ընտրութեան ժողովները, երկրաշարժից վնասվածներին օգնող կոմիտէտի նիստը, քաղաքային ընկերութիւնների նախապատրաստական խորհրդակցութիւնները և մի քանի ուրիշները։

Խօսեցինք մեր տպաւորութիւնների մասին։

—

—Վերջապէս սկսվեցին հայոց կանոնաւոր ներկայացումները, բացագանչեցինք երկուսս միասին։

Մեզ համար ուրախալի էր, որ երկու տարի

digitised by A.R.A.R.@

չարունակ տեղի ունեցող խօսակցութիւնները իրական գործադրութիւն են ստանում։

Առաջին ներկայացմանը հաւաքվել էր բաւական բազմութիւն։

Թատրօնում տիրում էր ուրախ տրամադրութիւն։

Դա նպաստաւոր տպաւորութիւն էր գործում, յոյսեր էր ներշնչում։

—Մանաւանդ այսօր ուրախ են թատրօնական կօմիտէտի անդամները, նկատեց պարոնը։ Տեսէք, ինչ լուսաճաճանչ դէմքեր ունեն նրանք։

Թատրօնը կատարելապէս լիքը չէր, բայց հանդիսականների թիւը այնքան մեծ էր, որ կարելի էր ծածկել բոլոր ծախսերը։ Իսկ դա կարևոր հանգամանք էր։

Այդպէս էր առաջին ներկայացմանը։

Մենք ներկայ եղանք և երկրորդ ներկայացմանը։

Պիեսը նոր էր և հետաքրքրական։ Դերասանները խաղում էին բաւարար։ Բայց հանդիսականների թիւը շատ փոքր էր։

—Մեր հասարակութիւնը սիրում էր գանգատվել, ասացի ես, հայոց ներկայացումների բացակայութեան վրա. իսկ երբ նրանք կանօնաւոր կազմակերպութիւն են ստացել, այդ հասարակութիւնը ինքն է այժմ բացակայ պահում իրան թատրօնից։

—Այո, լաւ չէ, ասաց պարոնը։ Հանդիսականների քչութիւնը ազդել է կօմիտէտի անդամների վրա։ Այսօր նրանք գլուխները քաշ են գցել։ Խօսեցնել չէ կարելի։

—Անկասկած, ասացի ես, մեր հասարակութիւնը պէտք է մտածէ, որ թատրօնի ապահովութիւնը կախված է նրանից, նրա գործակ-

digitised by A.R.A.R.@

ցութիւնից և աջակցութիւնից։ Եւ եթէ նա անտարբեր կը լինի դէպի գործը, նա կը սպանէ մի կարևոր կրթական հասարակական հաստատութիւն։ Զոկ բան է, երբ որ գերասանական խումբը անբաւարար է և ամբողջ գործը վատ կազմակերպված։ Իսկ երբ գործը կանոնաւոր զարգացման շաւղի վրա է, նրան չը պաշտպանելը—յանցանք է։

—Դեռ գործի սկիզբն է, նկատեց խօսակիցս։ Ցետագայ ներկայացումները, երևի, կը դրստեն բանը։

—Ո՞վ չէ ցանկանում, վրա բերի ես։

—

Իմ ծանօթի հետ պատահեցի ես Ծերեթելլի կազմակերպած օպերային ներկայացումներին։

—Շատ գովելի է Ծերեթելլի փորձը, յայտնեցի ես։ Նա փորձ է անում մասնաւոր նախաձեռնութեամբ մի ծանր գործ առաջ տանելու, առանց նպաստների և հովանաւորութեան։

—Միթէ դուք դէմ էք նպաստներ տալու գաղափարին թատրոնական գործում, հարցրեց խօսակիցս։

—Ոչ, պատասխանեցի ես. թատրօնը այնքան կարևոր մի հիմնարկութիւն է, որ նրա պատւաստման և զարգացման համար անհրաժեշտ է նպաստներ տալը այն ժամանակ, երբ նա դեռ անկարող է իր սեփական ոյժերով ոտքի կանգնել և ժողովրդի համար մատչելի դառնալ. բայց երբ մէկը կարողանում է գործ կազմակերպել առանց նպաստների, պէտք է նրան ողջունել և սրտանց շնորհակալ լինել։ Նպաստները լաւ են, որպէս զի թատրօնական գործը կազմակերպվի կատարեալ կերպով, ձեռք բերվեն գերասանական ոյժեր, հօգացվեն բեմա-

digitised by A.R.A.R.@

կան ամեն տեսակ պիտոյքներ և կարելի լինի էժանացնել թատրոնի մուտքը ու այդպիսով բեմական արհեստի արդիւնքները դարձնել ժողովրդական մասսաների սեփականութիւն։ Թէ դպրոցին, թէ թատրոնին, թէ գիտական ընկերութիւններին և թէ բարեգործական հաստատութիւններին տրված նպաստները գովելի են. բայց եթէ հասարակութիւնը այնքան զարգացած է, որ նրա հիմնարկութիւնների մեծ մասը կարող է պահպանել իր գոյութիւնը առանց յատուկ նպաստների, սեփական միջոցներով, դա ապացոյց է, որ գործը հաստատ է ու ամուր և պահանջը այնքան ուժեղ է, որ բնական ճանապարհով նա գտնում է իր բաւարարութիւնը։

—

—Այս տարի քիչ աշխոյժ է նկատվում քաղաքային ընտրութիւնների շուրջը, ասացի ես բարեկամիս՝ երեք խորհրդակցական ժողովների ներկայ լինելուց յետոյ։

—Կարծես թէ քաղաքային գործերը ձանձրացրել են շատերին, նկատեց նա։ Այնքան վըհատեցնող, ձեռք թուլացնող դէպքեր տեղի ունեցան, այնքան բամբասանքներ, ասէկօսէներ տարածվեցին վերջին տարիներում գործողների ու զանազան իրերի վերաբերութեամբ, որ շատերը թէև սիրում են քաղաքային գործերը, բայց չեն վստահանում մօտենալ նրանց։

—Պէտք է ասել, նկատեցի ես, այս անգամ նախապատրաստական խորհրդակցութիւնները շատ անբովանդակ էին և ոչ մի հետաքրքրութիւն չէին ներկայացնում ընտրողների համար։ Սակայն եթէ կարելի լինէր այս անգամ վերջ դնել ազգայնական մրցութեանը և տարիներ

digitised by A.R.A.R.@

շարունակվող թիւրիմացութիւններին—դա արդէն կը լինէր մի փոքր մխիթարութիւն։

—

Ընթերցողը դուցէ զարմանում է, որ Ախալքալաքի գաւառի երկրաշարժից վնասուածներին օգնող մասնաժողովը դեռ շարունակում է գործել։

Երկրաշարժը վաղուց մոռացվել է, մտածում է ընթերցողը, և գիւղերը ապրում են իրանց նախկին կեանքով։

Այո, երկրաշարժը անցաւ։ Բայց նրա աւերած տները դեռ չէին՝ շինվել, և միայն այս տարի շինվեցին։

—Ո՞րքան տուն է շինվել նոր պլանով, հարցրեց իմ խօսակիցը։

— Որքան ինձ յայտնի է ասացի ես, 162։ Նոր յատակագծով շինվածներից մի քանիսը արդէն մի տարվայ գոյութիւն ունեն, միւսները դեռ չեն յանձնվել բնակիչներին։

—Արդեօք նրանք յարմար են ազգաբնակութեան համար, հետաքրքրվեց ծանօթս։

—Դա գործնական կեանքը ցոյց կը տայ, ասացի ես։ Այդ տների կառուցումը մի գործնական մեծ փորձ է մեր գիւղական ազգաբնակութեան համար։ Մեր գիւղացին պէտք է փոխի իր բնակարանների ձևը։ Մնալ հին դրութեան մէջ անկարելի է։ Բայց արդեօք նոր շինած տները կարո՞ղ կը լինեն գոհացնել գիւղացուն, թէ անհրաժեշտ կը լինի մշակել աւելի կատարեալ և նրա կեանքին յարմարեցրած տիպ—դա փորձը ցոյց կը տայ։

—Գործնական կարևոր հարց է, նկատեց խօսակիցս։

—Եւ պէտք է առհասարակ մի շատ մխիթարական և լուսաւոր երևոյթ համարել թէ այդ

digitised by A.R.A.R.@

մասնաժողովի հաստատութիւնը, թէ նպաստ-ներ ժողովելը և թէ մասնաժողովի գործու-նէութիւնը։ Հասարակական ինքնագործութեան դա մի արտայայտութիւն էր։

Ինչպէս ասացի, այս շաբաթ Գիւղատնտեսական ընկերութեան մէջ տեղի ունէին մի շարք նիստեր։

Ի՞նչ նիստեր։

Ընկերութիւնը քննում էր այն ծրագիրը, որ մշակել է Բարձրագոյն խորհրդակցութիւնը։

Ծրագիրը կազմված է բոլոր Ռուսաստանի համար և պարունակում է շատ կէտեր։

Շուտով այս ծրագիրը կը քննվի նահանգա-կան յատուկ կօմիտէտում։ Գիւղատնտեսական ընկերութիւնն էլ իր կողմից ձեռնարկել է նոյն գործին անկախ կերպով։

—Հազիւ թէ Գիւղատնտեսական ընկերու-թեանը աջողվի, ասաց ինձ ծանօթս, քննել այն բոլոր խնդիրները, որոնք շօշափված են Բարձրագոյն խորհրդակցութեան ծրագրում։ Շատ ժամանակ կը պահանջվի։

—Այո, ժամանակը քիչ է, նկատեցի ես. գուցէ աւելի նպատակայարմար կը լինէր ամ-բողջ ծրագրից վերցնել մի քանի այնպիսի կէ-տեր, որոնք առանձին կարևորութիւն ունեն մեր երկրի համար, աւելացնել մի քանի խոշոր խնդիրներ, որոնք անտես են առնված այդ ծրա-գրում, և կազմել մի ամփոփ, բայց լաւ պատ-ճառաբանված և մշակված զեկուցագիր Կովկա-սի կարիքների մասին։

—Լաւ կը լինի, նկատեց ծանօթս, սակայն այդ ո՞վ պէտք է անէ։

Մենք նայեցինք միմեանց երեսին և... ժըպ-տացինք։

Ահա այս շաբաթվայ տպաւորութիւնները։

---

digitised by A.R.A.R.@

CX

(29 *սեպտ.* 1902 *թ.*, *«Մշակ»* № 215)

Այս օրերը ուր որ գնում էի, լսում էի խոսակցութիւններ միայն ընտրութիւնների մասին։

Իմ խօսքը Թիֆլիսի քաղաքային ընտրութիւնների մասին չէ միայն։ Մի քանի տեղում ես ներկայ եղայ նաև տաք-տաք վիճաբանութիւնների Երևանի ընտրութիւնների մասին։

Թէ Թիֆլիսում և թէ Երևանում ձայնաւորների մէջ պառակտում կայ, բայց բոլորովին ուրիշ տեսակի։ Թիֆլիսում ցանկանում են հաշտութիւն և միութիւն կայացնել, բայց չէ աջողվում. իսկ Երևանում մինչև այժմ հաշտութիւն և միութիւն կար, բայց այժմ աշխատում են հակառակութիւններ և պառակտումներ առաջ բերել։

Թիֆլիսում համոզվեցին, որ միմեանց ատելու, միմեանց բամբասելու, միմեանց հակառակելու գործավարութիւնը օգտաւէտ չէ ոչ ոքի համար, առաջ է բերում մի շարք անախորժ թիւրիմացութիւններ, որոնցով թունաւորվում է հասարակական կեանքը։

Իսկ Երևանում, անձնական և մասնաւոր նկատումների շնորհիւ, հող է պատրաստվում այնպիսի գրութեան, որ ապագայում պէտք է

digitised by A.R.A.R.@

անախորժութիւնների մշտական աղբիւր դառնայ։

Ես ասացի՝ «Թիֆլիսում ցանկանում են, Թիֆլիսում համոզվեցին», սակայն դժբախտաբար ցանկութիւնը և համոզմունքը դեռ համապատասխան գործնական արդիւնք չեն ցոյց տալիս։

Ցանկանում են, որ ազգայնական հակառակութիւններ և պառակտումներ տեղի չունենան—բայց չեն կարողանում իրագործել։ Ուզում են զանազան ազգութիւններից արժանաւոր ձայնաւորներ ընտրել, բայց չեն կարողանում համաձայնութեան գալ։ Համոզվել են, որ միմեանց բացասելով և միմեանց ջնջելով հասարակական ասպարէզից, առաջ են բերում վնասակար գրգիռներ, բայց չեն կարողանում գործնական կեանքի մէջ գոյութիւն տալ այն բանին, որ ցանկանում են։

Ինչո՞ւ։

Ուշադրութեան արժանի հարց է։

Ահա ինչու։ Որովհետև կան սխալներ, որոնց չը պէտք է անել։ Կան սխալներ, որոնք խոշոր սխալներ լինելով, այնքան խոր հետքեր են թողնում, որ յետոյ դժուար է լինում նրանց շուտով ուղղելը։

Ազգայնական, ցեղական, կրօնական, դասակարգային թշնամութիւններ սերմանելը—միայն մի հասարակ զանցառութիւն չէ, այլ մի յանցաւոր սխալ, որի ազդեցութիւնը խոր արմատներ է բռնում և շուտով չէ անհետանում։

Մի գրգռէք գազանը, որ ապրում է մարդկանց մէջ, յետոյ դժուար կը լինի նրան շուտով զսպել։

—Թշնամացանք երեկ, եկ այսօր հաշտվենք։

digitised by A.R.A.R.@

Ե՛կ հաշտվենք, համաձայն ենք։

Բայց կան դէպքեր, երբ ամբոխներն են խառնված գործի մէջ, իսկ նրանց շուտով հաշտեցնելը իսկոյն չէ կատարվում և ժամանակ է պահանջում։

Թիֆլիսում մի քանի տարիներ շարունակ ամէն տեսակ խաղեր խաղացին ազգայնական և ցեղական հարցերի շուրջը և ստեղծեցին այնպիսի տրամադրութիւններ, որոնք այժմ արգելք են հանդիսանում մեր բարի միտումներին և համերաշխ գործելու պատրաստականութեանը՝ գործնական արտայայտութիւն ստանալու։

Մի գրգռէք գազանը։

Ո՛րքան պէտք է այժմ աշխատենք ուղղելու այն սխալ քայլերը, որ թոյլ ենք տուել մենք, Կովկասի ազգերս։

Շատ պէտք է աշխատենք։

Գոնէ ապագայի համար խրատված լինենք։

—

Երևանում բոլորովին գլուխները կորցրել են։

Ձայնաւորները չեն մշակել ոչ մի խելացի ծրագիր իրանց գործունէութեան համար, միմեանց միան են ուտում ու միմեանց ոչնչացնում, նպաստելով, որ քաղաքային ինքնավարութեան համար բոլորովին ապարդիւն անձինք, օգտվելով խառնփնթոր վիճակից, սահեն—անցնեն ինքնավարական մարմնի մէջ և ապա իրանց մասնաւոր շահերը առաջ տանեն։

Երևանցիները կանգնած են սխալ քայլերի առաջ, որոնցից եթէ նրանք չը խուսափեն, պէտք է ապագայում մեծ անախորժութիւնների և դժուարուղղելի դրութեան մէջ տեսնեն իրանց։

digitised by A.R.A.R.@

—Յիշեցէք, որ դուք ինքնավարութեան գաղափարը պէտք է բարձր պահէք և նրան չը գցէք այնպիսի մարդկանց ձեռքը, որոնք միայն անձնական և մասնաւոր հաշիւներով են ղեկավարվում իրանց գործառնութիւնների մէջ և որոնք չեն համակված հասարակական շահերի պաշտպանութեան ոգւով։

—

Թիֆլիսը թող օրինակ լինի Երևանի համար իր բացասական գործունէութեան դառն դասերով։

Բայց արդեօք կրքերը կը զսպվեն, գազանը կընկճվի։

digitised by A.R.A.R.@

CXI

(6 հոկտ. 1902 թ., «Մշակ» № 221)

Մի ծանօթ ունեմ, որ միշտ մոռանում է իր նախկին ասածները։

Նա երէկ պախարակում էր այս ինչ գրողին և հասարակական գործողին, իսկ այսօր նա նրանց գովում է ու փառաբանում։ Եւ ընդհակառակը։ Երէկվայ նրա կուռքը այսօր նրա բերանում դարձել է մի ոչնչութիւն։

—Դուք առաջ ուրիշ կարծիքի էիք, նկատում եմ նրան։

—Երբէք, երբէք, բացագանչում է նա. դուք ինձ լաւ չէք հասկացել, դուք իմ խօսքերը սխալ էք թարգմանում։

—Միթէ դուք չէիք, որ հիանում էիք գործողի խելքից և հմտութիւնից, և ցանկանում էիք, որ մենք ամենքս էլ նրան աջակցենք. դեռ մեզ կշտամբում էիք, որ մենք բաւականաչափ սիրալիր և բարեկամ չենք պահում մեզ դէպի գործողը։

—Ոչ, ոչ, ոչ, յայտնում է կտրական տոնով իմ ծանօթը։ Այդպէս բան չէ եղել։

Իմ այդ ծանօթին յիշեցի նորերս, երբ այցելեցի գրամօֆօնների և ֆօնօգրաֆների մի խանութ։

Այնտեղ գործիքների վրայ էին առնված թէ երաժշտական նուագածութիւնները, թէ մարդ-

digitised by A.R.A.R.@

կանց երգերը ու թէ հովտորների ճամբերն ու քարոզները։

—Ո՞րքան լաւ կը լինէր, մտածեցի ես, եթէ իմ ծանօթի խօսածների մի մասը արձանագրըվէր ֆոնոգրաֆի վրա. այն ժամանակ ես լաւ պկայութիւններ կունենայի իմ ձեռքին ապացուցանելու, որ նա կամ չէ յիշում իր նախկին ասածները, կամ լաւ յիշում է ու կեղծում է միայն և կամ վերջապէս նա պարտաւոր չէ համարում յիշել այն, ինչ որ նա խօսում է։

—

Եթէ մի մարդ պարտաւոր չէ համարում յիշել իր երէկվայ ասածը, նա այսօր էլ խօսելիս ամենեւին չէ մտածում իր ասածների պատասխանատուութեան մասին ապագայում։ Դա հեշտացնում է նրա համար խօսելը, բայց լսողի համար շատ դժուարացնում է նրա խօսքին գին տալը։

—Սակայն կարող է արդեօք ֆոնոգրաֆը սթափեցնել հաշա ուտողին կամ խօսքը փոխողին, կը հարցնէք դուք։

Հազիւ թէ։

—

Գրամօֆոնների խանութը ինձ հետաքրքրեց։ Այնտեղ շատ կային այցելուներ։ Մի գաւառացի շատ հրճված ու հիացած էր գրամօֆոններից։ Նա ընտրում էր իր համար հարուստ ցուցակով մի գրամօֆոն։

—Մեզանում ոչ օպերա կայ, ոչ կօնցերտ, կրկնում էր անդադար։ Ահա մենք էլ կը լսենք գրամօֆոնի միջոցով նշանաւոր երգիչների ձայնը և երգեցողութիւնը։

—Այո, կը լսէք, նկատեց մի ուրիշը. բայց դուք գեղարուեստական այն բաւականութիւնը

digitised by A.R.A.R.@

չէք զգայ. ինչ որ տալիս է իսկական երգը՝ բղխած կենդանի մարդու բերանից։ Դուք բաւարարութիւն կը տաք միայն ձեր հետաքրքրութեանը և ոչ գեղարուեստական պահանջքին։ Դուք գաղափար կը կազմէք սրա ու նրա ձայնի, երգելու տեխնիկայի ընդհանուր գծերի մասին, բայց գեղարուեստական զուարճութիւնից զուրկ կը մնաք։

—Մենք, գաւառացիներս, վրա բերեց առաջինը, գրանով էլ կը բաւականանանք մինչև որ մեզ համար էլ բախտը կը ժպտայ։

—Որքան լաւ կը լինէր, միջամտեց մի երաժիշտ, որ մէկը ճանապարհորդէր Կովկասում և ֆոնօգրաֆի վրա վերցնէր տեղական բոլոր երգերը. Դա գեղեցիկ նիւթ կը լինէր թէ այդ երգերը տարածելու համար և թէ նրանցից մշակված երաժշտական երկասիրութիւններ հեղինակելու համար։

—Դա օգտաւէտ գործ է, նկատեց երկրորդ խօսակիցը. դա կօգնէ երաժշտական արհեստին, դա նպաստող մի տարր կը լինի գեղարուեստական արհեստի համար. բայց դա, դարձեալ կրկնում եմ, գեղարուեստ չէ։

—Էհ, լաւ, գեղարուեստ չը լինի, վրա բերեց գաւառացին, թող նրա ստուերը լինի, նրա թոյլ արտատիպը, նրա հեռաւոր յուշարարը։

—

Նոյն տեսակ խօսակցութիւնների ներկայ եղայ և մի ուրիշ խանութում, որտեղ հանդէս են դրված մեծ թւով մանր նկարներ։ Խանութը անուանել է իր ապրանքների հանդէսը պօստկարտերի ցուցահանդէս։

Նա աչքի առաջ ունի միայն առևտրական նպատակ և ոչ մի գեղարուեստական ծրագիր-

digitised by A.R.A.R.@

ների մասին չէ հոգում. բայց ինքը գործը այն-
քան մեծ զարգացում է ստացել Եւրոպայում և
այնքան մեծ ուշադրութեան է արժանացել
հասարակութեան կողմից, որ հարց է ծագում
այդ տեսակ նկարների օգտաւէտութեան մասին։

—Եւրոպական պետութիւններում ներկա-
յումս պօստ-կարտերի առևտուրը միլիօնների
գործեր է կատարում, նկատեց այցելուներից
մէկը։ Ամբողջ արհեստանոցներ են զբաղված
պօստ-կարտեր պատրաստելով, բազմաթիւ նը-
կարիչներ են գիշեր-ցերեկ աշխատում այդ
պօստ-կարտերի նկարների վրա։

—Այդ ճիշդ է, նկատեց մի ուրիշը. սակայն
այդ նկարների կէսից աւելին պէտք է դէն
գցել, որովհետև անհամ և անտեղի գործեր են,
որոնք ոչ միայն ճաշակ չեն զարգացնում, այլ
և փչացնում են։

—Յամենայն դէպս, խօսեց մի երրորդը,
պօստ-կարտերի միջոցով կարելի կը լինէր նաև
լաւ գործեր կատարել, եթէ լաւ աշխատողներ
լինէին։ Ինչու, օրինակ, մեր երկրի տեսարան-
ները, մեր հնութիւնները, մեր հին և նոր գոր-
ծողների պատկերները, մեր ճարտարապետու-
թեան նմուշները չը տարածենք այդ պօստ-
կարտերի միջոցով։

—Ի հարկէ լաւ կը լինի, նկատեց չորրորդը.
բայց ո՞վ պէտք է այդ բոլորը պատրաստէ։ Գոր-
ծել կարելի է ամեն մի ասպարէզում ու նոյն
իսկ մի այսպիսի ըստ երևոյթին փոքր շրջանա-
կում, բայց այստեղ էլ աշխատողներ են հար-
կաւոր։ Այստեղ ոչ թէ զոհ չէ պահանջվում,
այլ նաև կարելի է շահ ունենալ։

Միթէ գործ քիչ կայ—այն էլ աւելի համա-
կրելի ու աւելի կատարելի։ Միայն թէ ցան-
կութիւն լինէր գործելու։

digitised by A.R.A.R.@

CXII

(13 հոկտ. 1902 թ., «Մշակ» № 227)

Մի քանի օր սրանից առաջ «Մշակի» խմբագրատունն էր եկել մի ֆրանսիացի իրաւագէտ Հանրի Լա-Մար՝ տեղեկութիւններ ստանալու մեր երկրի արդիւնաբերութեան ճիւղերից մէկի մասին։

Տեղեկութիւնները տրվեցին։ Նա նշանակեց նրանց իր տետրի մէջ։

—Թոյլ տուէք այժմ, ասաց նա, մի քանի ընդհանուր հարցեր տամ հայերի և Անդրկովկասի մասին։

—Խնդրեմ, ասացի ես։

—Ճի՞շդ է արդեօք, հարցրեց նա, որ հայերի մեծամասնութիւնը ներկայացնում է առևտրական դասակարգ։

—Ոչ, պատասխանեցի ես. առևտրական դասակարգը հազիւ կազմի հայ ազգաբնակութեան մի 10%։ Մնացած 90% գիւղացիներ են և մասամբ արհեստաւորներ։

—Իսկ ինձ, վրա բերեց նա, Թիֆլիսում վստահելի անձինք ուրիշ բան ասացին։

—Աւելի լաւ է, ասացի ես, դիմէք վիճակագրութեանը։ Ռուսաստանում հայերի թիւը հասնում է 1¼—1½ միլիոնի, իսկ քաղաքացի հայերի թիւը աւելի չէ, քան 180,000 հոգի։ Այդ քաղաքացիների մի նշանաւոր մասը ապրում է

digitised by A.R.A.R.@

արհեստով և մի քանի տեղերում, օրինակ, Նոր-Բայազէտում, Ալէքսանդրօպօլում նոյն-իսկ գիւղատնտեսութեամբ, իսկ մնացածը — առևտուրով։ Եթէ քաղաքացիների նոյն-իսկ 2/3 մասը համարենք առևտրական՝ այն ժամանակ էլ առևտրականների թիւը աւելի չի լինի, քան 120,000, որ կազմում է Ռուսաստանի ամբողջ հայ ազգաբնակութեան ոչ աւելի քան 10%-ը։

Ֆրանսիացին ըստ երևոյթին համոզվեց։

—Իսկ որքան ուղիղ է, շարունակեց նա, այն կարծիքը, թէ օտար ձեռնարկողները անկարող են հաստատվել Կովկասում, որովհետև հայերը կազմակերպված մի համերաշխութեամբ՝ աշխատում են վնասել ամեն մի օտարի, որ փորձ է անում սկսել Կովկասում արդիւնաբերութեան մի նոր ձեռնարկութիւն։ Այդպիսով երկրի արդիւնագործական ասպարէզը կաշկանդվում է հայերի շնորհիւ։

—Հայերը, պատասխանեցի ես, առանձին աչքի ընկնող ատելութիւն և թշնամութիւն չեն ցոյց տուել դէպի օտար ձեռնարկողները։ Նրանք, ճիշդ է, մրցում են առևտրի մէջ. բայց նրանք մրցում են թէ տեղական և թէ եկւոր առևտրականների դէմ։ Հայ առևտրականը չէ խնայում մի ուրիշ հայ առևտրականի՝ երբ սա նրա առաջ խոչընդոտ է հանդիսանում։ Դա մրցութիւն է ընդհանուր ոգւով։ Այն հայը, որ կարողանում է մրցութեան մէջ յաղթող հանդիսանալ թոյլ օտարների վերաբերմամբ՝ ընկճվում է Նօբէլների, Ռոտշիլդների, Վիշաուների, Սիմենսների նման ուժեղ օտարների գործունէութիւնից։

---

digitised by A.R.A.R.@

—Իսկ ո՞րքան ուղիղ է, հարցրեց նա, թէ հայերը սիրում են կղզիանալ և առանձնանալ, աշխատում են չը չփվել և չը խառնվել ուրիշ տարրերի հետ։

—Հայերը, ասացի ես, ինչպէս և Կովկասի ուրիշ ցեղերը, ունեն իրանց ազգագրական առանձնայատկութիւնները։ Նրանք յարգում են այդ առանձնայատկութիւնների հիմնական գծերը. Նրանք սիրում են իրանց լեզուն, բանաստեղծութիւնները, կրօնը, տեղային աւանդութիւնները։ Այդ առանձնայատկութիւնների սիրելը ամենևին չը պէտք է խանգարէ, որ բոլոր այդ ցեղերը չփվեն միմեանց հետ, ապրեն մի երկրի զաւակների պէս համերաշխ հասարակական կեանքով։

—Բայց որքան լսել եմ՝ կովկասեան ցեղերը շատ էլ հաշտ չեն միմեանց հետ։

—Այո, յայտնեցի ես. կան անհամաձայնութիւններ, մանր մունր թշնամութիւններ։ Դրանք բոլորը արդիւնք են մեր հին կեանքի, այն դարերի, երբ մեր երկրում չը կար և անկարող էր քաղաքացիական կանոնաւոր կեանք տեղի ունենալ։ Փոխադարձ օգնութեան և համերաշխութեան գաղափարը դեռ նոր է սկսում պատուաստվել։ Եւ մեր հայ գործիչների լաւագոյն մասը ահա տասնեակ տարիներ է, որ քարոզներ է կարդում ազգերի համերաշխութեան մասին։ Մենք շարունակում ենք նոյն քարոզը և այժմ առանց դադարելու, առանց վհատվելու։ Ցամենայն դէպս՝ կարող եմ մի բան ասել, որ հայերի մէջ օտարների հետ շըփվելու դէպքերը աւելի են, քան կովկասեան միւս ցեղերի։ Հայը սերտ շփումներ ունի վրացու, թուրքի, քիւրդի, յոյնի, ասորու, լէզգու,

digitised by A.R.A.R.@

պարսկի հետ և շատ տեղ այնքան մօտ է այդ ցեղերին, որ նոյն-իսկ ապրում է նրանց հետ ընդհանուր կեանքով և սովորութիւններով։

—

Ֆրանսիացին ուրիշ շատ հարց ու փորձեր արեց, աշխատելով պարզ գաղափար կազմել հայերի մասին։ Ես գոհացրի, որքան կարող էի, նրա հետաքրքրութիւնը։

—Մենք դեռ անպատրաստ մի ժողովուրդ ենք, ասացի ես, թերութիւններով և պակասութիւններով, որ ժառանգել ենք խաւար դարերից. բայց ցանկանում ենք լաւ լինել. ցանկանում ենք պատուաստել մեր կեանքի մէջ կուլտուրական մարդկութեան մշակած և ստեղծած բարիքները։ Մենք շատ քիչ ենք արել և ընդհանրապէս դեռ ապրում ենք նահապետական կեանքով, բայց սկսել ենք ոտք դնել առաջադիմական ճանապարհի վրա։

—Արդեօք դուք չէք վախենում, որ գոյութիւն ունեցող մանր մունր անհամաձայնութիւնները և թշնամութիւնները կարող են ապագայում լուրջ կերպարանք ընդունել։

—Ոչ, յայտնեցի ես. դրանք ժամանակաւոր բաներ են, որոնք պէտք է հարթվեն և չքանան նոր կեանքի հոսանքներից։

—

Ֆրանսիացին գնաց։ Ես մտածում էի, թէ որքան գործ կայ կատարելու առաջիկայում։

Բայց ինձ սթափեցրին նոր հիւրերը։ Տէրտէր, տիրացու, դերասան, ուսուցիչ, քաղաքային պաշտօնեայ եկել էին իրանց դարդերի մասին խօսելու։

Եկան և գիւղացիներ։

Նրանք պատմում էին իրանց կարիքների

digitised by A.R.A.R.@

մասին։ Գանգատվում էին իրանց նեղ դրութեան վրա և ցուցումներ էին խնդրում։

Մեր ժողովրդի այդ 90% դեռ չարժանացաւ զօրաւոր օգնութեան իր ինտելիգէնտ եղբայրների կողմից։

Մինչ գիւղացիների հետ խօսում էի՝ Նամակաբերը ներս մտաւ և թափեց սեղանի վրա նամակների մի կոյտ։ Ես վերցրի մի բաց նամակ, որ գրված էր Բագուից, և նրա մէջ կարդացի հետևեալը. «Թոյլ տուէք խնդրել, որ Կովկասեան գիւղատնտեսական կարիքների մասին քիչ բան գրէք»։

Ես կարծեցի, թէ սխալվել եմ, գուցէ Նամակի հեղինակն ուզում է ասել, որ պէտք է շատ գրել։ Ոչ։ Նամակ գրողը, ոմն Գ. Շահնազարեանց, կարծելով, որ չափազանց շատ է գրվում՝ խնդրում է քիչ գրել. Նրան ձանձրացնում են այդ կարիքները։

Իրողութիւն է։

Ամբողջ Ռուսաստանը և տեղական լրագիրները զբաղված են այդ կարիքների քննութեամբ։ Եւ մենք միայն կարող ենք ցաւել, որ մենք բաւական ուշադիր չենք դէպի այդ կարիքները, որոնք մի և նոյն ժամանակ մեր ժողովրդի 90%-ի կարիքներն են։

Արդեօք Շահնազարեանները հազուագիւտ բացառութիւններ են։

Այդ մտադիր չեմ քննել։ Ես արձանագրեցի փաստը, իբրև բնորոշ մի երևոյթ։

digitised by A.R.A.R.@

CXIII

(20 հոկտ. 1902 թ., «Մշակ» № 233)

—Ձմեռը որ մոտենում է՝ ես սարսափում եմ, ասում էր ինձ բազմանդամ ընտանիքի մի հայր։

—Ինչու, հարցրի ես. դուք ապահովված մարդ էք, ինչներդ է պակաս։

—Ոչինչ պակաս չէ, բացատրեց նա. բայց ես չափազանց վախենում եմ երեխաների հիւանդութիւններից։ Հինգ երեխայ ունեմ և կարողացել եմ նրանց անվնաս ու անփորձ մեծացնել. բայց գիտեմ, թէ ինչ սարսափներ կարող է անել մի որևէ դիֆտերիտ, սկարլատինա ու դրանց նման մի ուրիշ հիւանդութիւն։ Կարող է տունս մի քանի օրում սրբվել—դատարկվել։

—Ճիշտ է, ասացի ես. սակայն այժմ գտել են և գտնում են բժշկութեան միջոցներ այդ հիւանդութիւնների դէմ։

—Ի հարկէ, մեծ մխիթարութիւն և թեթևութիւն է մեզ համար, շարունակեց նա, որ գտնում են միջոցներ. բայց դեռ բոլոր հիւանդութիւնները բուժելի չեն դարձել, և վտանգը կայ ու մնում է նաև բժշկութեան ժամանակ։ Լաւ է, եթէ մեր դեղատներն էլ ժամանակին կարողանային բժշկական չինուկ մատակարարել պահանջված քանակութեամբ։

—Բայց և այնպէս, նկատեցի ես, մենք, մեծ

digitised by A.R.A.R.@

քաղաքում ապրողներս, կարող ենք գոհ լինել, որ գոնէ բժշկութեան միջոցներ ունենք մեր տրամադրութեան տակ։

—Ի հարկէ, ի հարկէ, մրմնջաց խօսակիցս և գլուխը թափ տալով հեռացաւ ինձանից։

—

Այդ խօսակցութիւնը ես վերայիշեցի, երբ լսում էի գիւղացիների գանգատները իրանց առօրեայ ցաւերի և կարիքների մասին։

—Երեսուն երեխայ մեռան բկացաւից մեր գիւղում քանհինգ օրվայ ընթացքում, ասաց ինձ մի գիւղացի։

—Ի՞նչ ես ասում, երեսուն երեխայ, բացագանչեցի ես սարսափած։

—Այո, երեսուն, կրկնեց գիւղացին։ Հիւանդութիւնը հնձում էր մեր մատղաշներին անխընայ կերպով։ Ի՞նչ կարող էինք անել. միջոց չը գիտէինք։ Երեխաները մեր ձեռքից գնում էին։

—Ինչո՞ւ չէիք իմաց տալիս ձեր գաւառական բժշկին, հարցրի ես։

—Կանչեցինք բժշկին, բացատրեց նա. բայց չը կարողացաւ շուտով օգնել։ Դեղ բերել տուեց ու սկսեց բժշկել. բայց մինչև դեղը գայ, մինչև բժիշկը դարմանի—հիւանդութիւնը իրանը արաւ։

—Ո՞րքան հեռու էք դուք քաղաքից, հետաքրքրվեցի ես։

—Մի քանհինգ վերստ կը լինի, յայտնեց նա։ Ճանապարհները վատ են և մանաւանդ անտանելի են դառնում անձրևի և ձիւնի ժամանակները։ Բժիշկն էլ անկարող է մի գիւղում երկար մնալ. նա պէտք է քաղաք շտապի, նա պէտք է ուրիշ գիւղեր ճանապարհվի իր ընթացիկ գործերը կատարելու համար։

digitised by A.R.A.R.@

Մի ուրիշ գիւղացի պատմեց, որ նրանք շատ դէպքերում չեն դիմում բժիշկներին և աշխատում են մի կերպ կառավարուել, իրանց գիտեցած տնային միջոցներով բժշկուել։

—Շատ է հեռու մեզնից բժիշկը, բացատրեց նա. շատ անգամ անկարելի է հիւանդին տանել բժշկի մօտ, ամեն ժամանակ հարկաւոր դեղեր չեն գտնւում։ Հաշտւում ենք մեր բախտի հետ ու մի կերպ դիմանում։ Բայց մեղք ենք։ Ճանապարհներ չունենալը մի դժբախտութիւն է մեզ համար։ Ո՜րքան սայլեր ենք կոտրել, որքան եզներ ենք փչացրել, որքան տանջանքներ ենք կրել մենք։

—Ամեն օր գլխի ծանրութիւն, քնափութիւն և թուլութիւն—ահա մեր բոլոր գիւղացիների վիճակը. մեծ ու փոքր ուժասպառ ենք դարձել։

Այդպէս գանգատւում էին Բորչալուից եկած մի քանի գիւղացիներ։

—Ինչու, հետաքրքրւեցի ես։ Գիւղում օդը թեթև է լինում, զով և մաքուր. ինչու պէտք է գլխացաւ ունենաք։

—Մեր արտերում գիժ ցորեն է բուսնում, բացատրեցին գիւղացիները. չուտենք՝ չէ կարելի, իսկ ուտում ենք՝ հիւանդանում ենք։ Այդ ցորենից բոլորս կարծես հարբած, ջարդուած ու ծեծուած լինենք։

—Ինչու չէք մաքրում ցորենը, հարցրի ես. ինչու չէք զատում իսկական ցորենը որոմից։

—Գիժ ցորենը ճիշտ է, տարբեր է իսկականից, բացատրեց գիւղացին, բայց զատելը դժուար է։

—Դժուար չէ, վրա բերի ես, եթէ զատիչ մեքենայ գործ դնէք։

digitised by A.R.A.R.@

Ես բացատրեցի այդ մեքենայի մասին ունեցած տեղեկութիւններս, պատմեցի թէ ինչպէս ուրիշ տեղերում կարողացել են կամաց-կամաց ազատվել գիժ ցորենից և այդպիսով թէ մարդկանց փրկել հիւանդութիւնից և թէ պատրաստել մաքուր սերմացու՝ արտերը ցանելու համար։

—Զատիչ մեքենաներ գնելը ձեռնտու բան է, աւելացրի ես։ Նրա ծախքը մի-երկու տարում կարելի է հանել՝ եթէ մեքենայ գնողը որոշ վարձատրութեամբ վերցնի զատելու և ուրիշների ցորենը։

Գիւղացիները համոզվեցին։

—

Ես չեմ կարող մանրամասն պատմել ձեզ այն տխուր փաստերը, որ լսեցի գիւղացիներից նրանց պարտքերի մասին։

Շատ քիչ տուն կայ գիւղում, որ պարտքեր չունենայ։ Գիւղացիները թէ իրանց առանձին պիտոյքները հոգալու և թէ գիւղական տուրքերը տալու համար պարտքեր են անում, յոյս ունենալով շուտով վճարել։

—Ով կարողացաւ ժամանակին պարտքը տալ—բախտաւոր է։ Իսկ ով չը կարողացաւ, ջուրը եկել է ու նրան տարել։ Պարտքը պարտքի վրա աւելանում է ու բարդվում և դժուարանում է նրանից ազատվելը։

Սովորական տոկոսների մասին, որոնք ընդունված են բանկերում, խօսք չէ կարող լինել մեր յիշած դէպքերում։

—Եթէ քաղաքում չէ կարելի, բացատրում էր մի գիւղացի, վերցնել աւելի քան 12 տոկոս, մեր գիւղում էլ չէ կարող տեղի ունենալ այնպիսի երջանիկ մի դէպք, որ վերցնեն տասն,

digitised by A.R.A.R.@

տասն երկու տոկոս, իսկ դրանից աւելի՝ որքան կուզենաք։

—Օրինակ։

—Կան 15, 20, 30, 40 և աւելի տոկոս տըւողներ։

—Ինչու չէք փորձում, հարցրի ես, հիմնել մի խնայողական-փոխատու ընկերութիւն, մի գիւղական բանկ, որ գիւղացիներին փող բաց թողնէր փոքր տոկոսով։

—Մեզ համար դա բոլորովին անծանօթ մի բան է, պատասխանեց նա։ Եթէ գործի գլուխ կանգնողներ լինէին ու այդպիսի մի բան հիմնէին, այն ժամանակ, ի հարկէ, չէինք ընկնի վաշխառուների ձեռքը, իսկ այժմ կամայ-ակամայ պէտք է նրանց ստրուկը լինենք։

—

Սակայն կարելի է այդպիսի բանկ հիմնել, և նոյն իսկ մեր երկրում կան աջող և ուսանելի փորձեր։

Կարելի է և ուրիշ շատ օգնութիւններ հասցնել գիւղացիներին։ Եւ արժէ գիւղացու կարիքներով զբաղվել։

Ճիշտ է, դա լուրջ գործ է և կարօտ է աջակցող անձերի օժանդակութեան։

Բայց մինթէ մեր ժողովրդի կարիքներին բաւարարութիւն տալու համար չը պէտք է բոլոր ձեռնհաս մարդիկ իրանց եռանդն ու ոյժը գործ դնեն անձնուէր կերպով։

Անկասկած։

—Ուրեմն։

Ուրեմն դրանով պէտք է զբաղվել։

digitised by A.R.A.R.@

CXIV

(27 հոկտ. 1902 թ., «Մշակ» № 238)

—Շնորհաւորում եմ նոր յաղթութիւնը։

Այս խօսքերով մօտեցաւ ինձ Թիֆլիսի ժողովարանում իմ ծանօթ Կօթելեանը։

Կօթելեանի հետ մենք ճանապարհորդել էինք Գօրու գաւառը և զբաղվել այնտեղի գործերով։

Սակայն Գօրու գործերը արդէն լուծում են ստացել և նոյն-իսկ մոռացվել։ Ուրեմն ինչ նոր յաղթութեան մասին կարող է խօսք լինել այժմ։

—Չեմ հասկանում, ասացի նրան. ինչի մասին էք խօսում, ինչ նոր յաղթութեան։

—Ես խօսում եմ, վրա բերեց նա, վերջին դատաստանական գործի մասին, որ քննվեց երեկ նահանգական դատարանում. ես խօսում եմ մեր Գօրու նախկին յաջորդ Եղիշէ վարդապետ Մուրադեանի և Զաքար աղա Ջանփօլադեանի գործի մասին։

—Հասկացայ, հասկացայ։

—Ուրախալի է, շարունակեց Կօթելեանը, որ մամուլի արձանագրած և յարուցած հարցերը այնքան մեծ փաստական հիմունքներ ունեն, որ կարողանում են դիմանալ դատաստանական պահանջներին։

—Շատ անգամ ձևական և բծախնդիր պահանջներին, աւելացրի ես։

—Այո այդպէս, վրա բերեց Կօթելեանը։ Մա-

digitised by A.R.A.R.@

մուլը հասարակական ույժ է. բայց երբ նա կարողանում է դիմանալ և դատաստանին դիմելու սպառնալիքներին՝ այն ժամանակ աւելի ևս զօրաւոր է։

—Բայց կեանքի մէջ, նկատեցի ես, կատարվում են ամեն օր բազմաթիւ զեղծումներ և զանցառութիւններ, որոնց վերաբերութեամբ չը կան այնպիսի ապացուցաթղթեր և վկայութիւններ, որ դիմանային դատարանական ձեւական պահանջներին։ Մինչդեռ մամուլը չէ կարող նրանց չարձանագրել։ Շատ անգամ մամուլը վերցնում է իր վրա մի որոշ զոհաբերութեան պատրաստականութիւն, մի յայտնի աստիճանի րիսկ մի շարք իրողութիւնների և հարցերի վերաբերութեամբ։

—Այո, զոհաբերութիւն է հարկաւոր, մրմընջաց Կօթելեանը, մանաւանդ որ մամուլի դէմ դատ յարուցանողներից շատերը դիմում են դ ի ֆ ա մ ա ց ի ա յ ի օրէնքին, որ պահանջում է մեղադրվողից՝ ներկայացնել իր ասածների հաստատութեան համար գրաւոր ապացուցաթղթեր։

—Մեր խմբագրութիւնը և աշխատակիցները վերջին տարիների ընթացքում դատաստան հրաւիրվեցին մի քանի անգամ «Մշակի» մէջ տպագրված յօդուածների համար։ Ախալքալաքի գաւառի վաշխառուների մասին գրված յօդուածները, Թելաւի ոստիկանական ծառայողների մասին նամակը, Շուշու կօնսիստօրիայի մասին զետեղված թղթակցութիւնը, Կաղզուանի դէպքերի մասին եղած գրութիւնները ստեղծեցին մի շարք դատաստանական գործեր, որոնք պահանջում էին խմբագրութեան և աշխատակիցների կողմից թէ ժամանակ, թէ որոշ ծախք,

digitised by A.R.A.R.@

թէ ապացուցաթղթեր և վկաներ և թէ հոգեկան անհանգստութիւն։

—Եւ երևի դեռ շուտով չէք ազատվի այդ դատերից։

—Մենք անդադար սպառնալիքների մէջ ենք, պատասխանեցի ես։ Ամեն շաբաթ մի որևէ տեղից ստանում ենք սպառնալիք։ Պահանջում են, որ մենք բանանք թղթակցի անունը, որ մենք յետ վերցնենք մեր տպագրածները։

—Իսկ դուք ի՞նչ էք անում, հետաքրքրվեց Կօթելեանը։

—Մենք յայտնում ենք, որ լրագրի էջերը բաց են փաստական հերքումների համար...իսկ եթէ այդ միջոցը անընդունելի է՝ պատրաստ ենք կանգնել դատարանի առաջ։ Մենք լաւ գիտենք, որ յայտնի ձևականութիւններ չը պահպանելու և որոշ դոկումենտներ չունենալու պատճառով կարող ենք տուգանքի և աւելի խիստ զրկանքի ենթարկվել․ բայց մենք չենք կարող մոռանալ այն, որ մամուլը պարտաւորութիւններ ունի և որ իր կոչման բարձրութեան վրա կանգնած լինելու համար նա պահանջում է, որ զեղծումները և զանցառութիւնը մերկացնվեն, վատութիւնը ապտակվի և առաքինութիւնը պաշտպանվի։

digitised by A.R.A.R.@

CXV

(3 Նոյեմբ. 1902 թ., «Մշակ» № 244)

Ես այցելեցի այս օրերը մի քանի նիստեր, որտեղ հետաքրքրված էին ընկերակցութիւններ կազմելու հարցով։

Քննվում էր այն հարցը, թէ կարող են արդեօք աջողութիւն ունենալ մանր ընկերակցութիւններ մեր գաւառների զանազան մասերում.

—Կունենան անպատճառ, ոգևորված պընդում էին մի քանիսը։

—Չեն աջողվի, յայտնում էին միւսները. չեն աջողվի, որովհետև հող չէ պատրաստված այդպիսի կազմակերպութիւնների համար։

Վիճաբանութիւնները անվերջ շարունակվում էին. իւրաքանչիւր մարդ իր ասածն էր պաշտպանում։

—Միթէ մենք մոռացել ենք այն, ինչ որ այս վերջին երեք-չորս տարիներում կատարվեց առաջ Բագւում, բացագանչեց վիճողներից մէկը։ Այնտեղ մի քանի տարի առաջ ով կարող էր մտածել ընկերակցութիւններ կազմելու մասին։ Այդ գաղափարը խորթ էր և կարծես անիրագործելի։ Բայց մենք տեսանք, թէ յետոյ ինչ ոգևորութեամբ, ինչ եռանդով մարդիկ սկսեցին խմբվել և մի շարք ընկերակցութիւններ կազմել։ Սունկի պէս բուսնում էին ընկերակցութիւնները և սկսում գործունէութիւն։

digitised by A.R.A.R.@

—Եւ սակայն ինչ եղաւ հետեւանքը, պատասխանեց միւսը։ Նրանցից շատերը վնասվեցին, լուծվեցին և յետ քաշվեցին։

—Այդ ճիշդ է, առարկեց առաջինը. բայց առ այժմ հարցը այն է, թէ ընկերակցութիւններ կազմելու գաղափարը կարո՞ղ է արդեօք հասկանալի լինել և իրագործվել մեր երկրում թէ ոչ։ Բագուի փորձը ցոյց տուեց այն, որ մարդկանց կարելի է խմբել և խմբական գործունէութեամբ միացնել։

—Բագուի փորձը, միջամտեց մի երրորդը, արդարև դրական փորձ է, որ նպաստաւոր է ընկերակցութիւնների գաղափարի համար. սակայն նա դեռ չէ ապացուցանում, թէ հեշտութեամբ կարելի է ընկերակցութիւններ հիմնել մեր գաւառներում։

—Ինչո՞ւ։

—Որովհետև Բագւում կայ բոլորովին որոշ գործ՝ իր որոշ պարագաներով. օրինակ, պէտք է հորեր փորել, նաւթ տանել և նրանց ծախել։ Դա բոլորովին պարզված, ուսումնասիրված մի խնդիր է, և կան մասնագէտներ, վարպետներ, որոնք կարող են վարել ամբողջ գործը իր մանրամասնութիւններով։ Միայն մի բան է պակաս—փողը, կապիտալը։ Եւ ահա մարդիկ խմբվում են՝ հաւաքական ույժով դրամագլուխ կազմելու և գործին ընթացք տալու համար։ Այնուհետև աջողութիւն—անաջողութիւնը կախված է այն բանից, թէ արդեօք վերցրած հողը, շահագործված նաւթահանքը հարուստ են նաւթով թէ ոչ, արդեօք նաւթը լաւ գին ունի վաճառանոցում թէ ոչ, արդեօք գործավարները բարեխիղճ են եղել իրանց պաշտօններում թէ ոչ։ Իսկ ինչ կարող ենք մենք

digitised by A.R.A.R.@

սել մեր գաւառներում եղած գործերի մասին։ Ո՞վ է հող պատրաստել ընկերակցութիւնների համար, ո՞վ է մեր առաջ դրել մի այնպիսի ծամած ծամծմած, բոլորովին որոշ գործ՝ ինչպէս նաւթային գործն է, որտեղ սակայն չը նայելով նրա այնքան ուսումնասիրված լինելուն՝ տեղի ունեցան և այժմ տեղի ունեն մի շարք անհաչիւ գործողութիւններ, թիւրիմացութիւններ, նիւթական զուր կորուստներ և սնանկութիւններ։

Ճառախօսը բերեց մի շարք օրինակներ իր ասածները ապացուցանելու համար։ Սակայն վիճողները չեկան մի ընդհանուր եզրակացութեան և իւրաքանչիւրը իր կարծիքն էր պաշտպանում։

—Դուք զուր տեղն էք կարծում, յայտնեց առաջին վիճողը, որ գաւառում ոչինչ չէ կարելի անել ընկերակցութիւնների վերաբերութեամբ։ Որքան և աննպաստ են մեր գաւառների պայմանները՝ բայց և այնպէս կարելի է իրագործել շատ բան։

—Օրինակ։

—Օրինակ, շարունակեց ճառախօսը, ահա երեսուն ութ տարի է, որ Բօրչալուի գաւառում գտնվող մի գերմանական գիւղ, Ալէքսանդերսհիլֆ անունով, կազմել է իր գիւղացիներից ընկերակցութիւն և պահում է հասարակական ոյժով մի պանրագործարան, որ պատրաստում է շվէյցարական պանիր։

—Հետաքրքրական է, բացագանչեցին մի քանիսը։

—Ուրեմն, շարունակեց խօսողը, կարելի է և մեր գաւառում կազմել ընկերակցութիւններ։ Ալէքսանդերսհիլֆի գիւղացիները կարողացան

digitised by A.R.A.R.@

իրագործել մի այդպիսի ձեռնարկութիւն և գործնականապէս վճռեցին՝ այժմ ձեր առաջ դրված հարցը իրանց բազմամեայ գործունէութեամբ։

—Նրանք գերմանացիներ են, նկատեց մէկը։

—Այո, գերմանացիներ են. բայց նրանք գործում են մեր երկրում, մեր գաւառական խուլ անկիւնում, մեր տնտեսական պայմաններում։ Ձեր Բագւում էլ առաջին օրինակները ցոյց տուին գուցէ օտարները, բայց յետոյ միւսները հետեւեցին նրանց։ Վերջապէս ես կը յիշեցնեմ ձեզ ընկերակցութիւնների ուրիշ օրինակներ, որտեղ գործում են տ ե ղ ա ց ի ն ե ր։

—Դա աւելի ուսանելի կը լինի, մրմնջաց մէկը։

—Մի քանի տարի առաջ Բուժայիսի նահանգում կազմվեց մի մեծ ընկերակցութիւն, որի անդամների մեծ մասը գիւղացիներ են և մանր կալուածատէրեր։ Նրանք զբաղված են չեւամապահութեամբ։ Գործը գնում է շատ աջող, և ընկերակցութեան անդամների թիւը 1500-ից աւելի է։ Այնտեղ միտք է յղացել այժմ կազմել մի նոր ընկերակցութիւն՝ թռչնապահութեան գործով կանոնաւոր կերպով զբաղվելու համար և արդէն մօտ է իրագործութեան։

—Իրաւի, ուսանելի է, նկատեցին մի քանիսը։

—Մի ուրիշ ընկերակցութիւն, շարունակեց ճառախօսը, կազմվեց Գօրու գաւառում և աջողութեամբ սկսեց իր գործունէութիւնը, սակայն վատ գործավարութեան պատճառով առ այժմ կաղում է։ Դա ժամանակաւոր մի թուլութիւն է, որ կանցնի շուտով. կը յիշեցնեմ նաև Կախեթի գինեգործների այն ընկերակ-

digitised by A.R.A.R.@

ցութեան մասին, որ ներկայումս գործում է «Կախեթիա» անունով։ Այդ ընկերակցութեան պակասութիւնը միայն այն է, որ նրա անդամների թիւը սահմանափակ է։ Կան բացի այդ մի քանի ընկերակցութիւններ, որոնք զբաղված են անտառի շահագործութեամբ, խաղագործութեամբ և ուրիշ արդիւնաբերութիւններով։ Մի բան պարզ է, յամենայն դէպս, որ ընկերակցութիւններ կազմելը և ընկերակցական ձևով գործեր վարելը ամենևին խորթ և անիրագործելի մի ձեռնարկութիւն չէ մեր գաւառում, որ մենք ծալենք մեր ձեռքերը և ոչինչ չանենք, առարկելով, թէ դեռ հող պատրաստված չէ այդ գործի համար։

—Սակայն ով պէտք է գլուխ կանգնէ այդ տեսակ գործերին, ով պէտք է գաւառում նախաձեռնող լինի մարդկանց ժողովելու, նրանց միացնելու և գործը կազմակերպելու, հարցրեց ներկայ եղողներից մէկը։

—Դա կարևոր հարց է, նկատեցին միւսները։

—Կարևոր է, բացատրեց վիճողներից մէկը. որովհետև գաւառում այնքան էլ շատ չէ նախաձեռնող ոգի ունեցող անձանց թիւը։ Ով փոքր ի շատէ կրթութիւն է ստացել և ընդունակ է նոր ձեռնարկութիւններով զբաղվելու, նա աշխատում է տեղափոխվել դէպի աւելի կենտրոնական տեղեր։ Գաւառում մնում են նահապետական տնտեսութեան հետ հաշտվող մարդիկ։

—Այդ ճիշդ է, նկատեց նախկին ճառախօսը. սակայն ընկերակցութիւններ կազմելը կը հանդիսանայ մի խթան, որպէս զի ինտելիգէնտ ոյժերը չը հեռանան գաւառից և գիւղերից, գու-

digitised by A.R.A.R.@

ցէ նոյն իսկ կենտրոններից վերադառնան դէպի երկրի խուլ խորշերը և խելացի յարաբերութիւններ հաստատեն գիւղական արդիւնաբերութեան և կանոնաւոր վաճառանոցի հետ։

—Ի՞նչ եզրակացութիւն, սակայն, պէտք է անել յարուցած հարցի մասին, հարցնում էին ուշադիր լսողները և վիճաբանութեան չը մասնակցողները։

Մի քանի ձևակերպութիւններ արվեցին։

Պարզվեց, որ ընկերակցութիւններ կազմելու առաջարկը—հերթական մի հարց է մեր երկրի համար, որի դրական լուծմամբ կարելի է էական օգնութիւն հասցնել մեր ժողովրդին։

Պարզվեց, որ եղած օրինակները բաւականաչափ պերճախօս կերպով ապացուցանում են, թէ ընկերակցութիւնները կարող են պատուաստվել մեր երկրում։

Պարզվեց, որ գործի աջողութեան համար անհրաժեշտ են բարեխիղճ գործողներ, պատրաստված և հմուտ վարպետներ և մասնագէտներ։

Պարզվեց, որ կարևոր է պետութեան և զանազան հիմնարկութիւնների, օրինակ, բանկերի, գիտնական ընկերութիւնների աջակցութիւնը, որպէս զի նորակազմ ընկերակցութիւնները դժուարութիւններ չը կրեն սկզբնական ծախքերի, կրեդիտի և ուրիշ օգնութիւնների վերաբերութեամբ։

Պարզվեց, որ ընկերակցութիւնների աջող աճման և կազմակերպութեան համար կարևոր է տեղական ինքնագործութեան զարգացումը, տեղական նախաձեռնութեան խրախուսումը հեղինակաւոր շրջանների կողմից։

digitised by A.R.A.R.@

Պարզվեցին և շատ ուրիշ հանգամանքներ։

—Այո, երբ բոլոր նպաստաւոր պայմանները տեղի ունենան, այն ժամանակ ընկերակցութիւնները կարող են աջողվել և շուտով աճել, բացադանչեց կասկածոտ վիճողներից մէկը, բայց այժմ այդ պայմանները չը կան։

—Պէտք է ջանք գործ դնենք, որ այդ պայմանները երևան գան, բացադանչեց նախկին ճառախօսը. բայց այժմ էլ, եթէ լաւ աշխատենք՝ շատ բան կարող ենք իրականացնել։ Միայն թէ լաւ ցանկանանք։

---

digitised by A.R.A.R.@

CXVI

(10 նոյեմբ. 1902 թ., «Մշակ» № 250)

—Ինչո՞ւ ֆրանսիացին պէտք է աննպաստ կարծիք յայտնէ մեր հայերի մասին։ Ի՞նչ վատ բան է նա տեսել մեզանում։ Ինչո՞ւ, ինչո՞ւ։ Այդ պատիւ չէ բերում ֆրանսիացուն։ Ես աւելի բարձր համարում ունեմ ֆրանսիական անկողմնապահութեան վրա։

Այս խօսքերով դիմեց ինձ Արութեանը, ցոյց տալով ինձ ֆրանսիական մի գրուածք։

—Ի՞նչ բան է դա, հարցրի ես։

—Նոր բան չէ, ասաց նա, բայց ես նոր եմ կարդում. դա ֆրանսիացի բարօն Դը-Բայի ճանապարհորդական նկարագրութիւնն է Կովկասի մասին։

—Լսել եմ, նկատեցի ես։

—Նա մեզ հետ, շարունակեց Արութեանը, գործնական հաշիւներ չունէ. նա մեզ հետ ընդհարումներ չէ ունեցել և, ուրեմն, պէտք է անկողմնապահ աչքով նայէր ժողովուրդների վրա. մինչդեռ նրա գրուածքի մէջ երևում է կանխակալ, անհամակրելի տրամադրութիւն դէպի հայերը։ Ֆրանսիացիները այդ չը պէտք է անեն, նրանց չէ սազում։

—Դա լաւ բան չէ անկասկած, նկատեցի ես. բայց չը պէտք է ընդհանրացնէք ձեր խօսքը ֆրանսիացու մասին։ Եթէ մի Դը-Բայ վատ է

digitised by A.R.A.R.@

տրամադրված դէպի հայերը՝ մի շարք նշանաւոր ֆրանսիական անուններ—Անատոլ Ֆրանս, Կլէմանսօ, Պրէսանսէ, Քիյեար, Ժօրէս, Շարմըտան, Սեմբա և շատ ուրիշներ նուիրել են հայերին տպաւորիչ յօդուածներ և ճառեր, որոնց մէջ ոչ միայն գովել են հայերին, այլ և ոգևորված խօսքերով ջատագովել են հայերի կուլտուրական ընդունակութիւնները։ Այդ անունների առաջ չքանում է ձեր ճանապարհորդի ուրոյն կարծիքը։

—Բայց և այնպէս անախորժ է, վրա բերեց Արութեանը։

—Վերցնենք, շարունակեցի ես, մի ուրիշ երկիր, Գերմանիան։ Այնտեղ էլ կան Նաումանի նման հայերին չը սիրող անձինք. բայց դրա փոխարէն կան և այնպիսի մարդիկ, ինչպէս են Ռօրբախ, Լեպսիուս, Լէման և ուրիշներ, որոնք բարձր են գնահատում հայի կուլտուրական ձիրքերը և հաւատում են, որ հայը եւրօպականութեան մշակ կը լինի իր ապրած երկիրներում։ Եթէ նոյն իսկ մեր Կովկասում մեր հարևան վրացիների մէջ կան մարդիկ, որոնք թշնամական տրամադրութեամբ են խօսում հայերի մասին, կան և ուրիշները, որոնք պախարակում են առաջինների վարմունքը։ Եթէ, օրինակ, «Իվերիա» լրագրի մէջ լոյս են տեսնում անարդար յօդուածներ հայերի դէմ, մի և նոյն ժամանակ մի ուրիշ լրագրում, «Ցնօբիս Փուրցելի»-ում հրատարակվում են բողոքներ «Իվերիայի» յօդուածների դէմ և հրաւէր է կարդացվում երկու հարևան ազգերի համերաշխ գործունէութեան մասին։ Ինչպէս գիտէք, ռուս մամուլի մէջ էլ երևաց Վելիչկօի նման մի գրող, որի գրիչը գլխաւորապէս

digitised by A.R.A.R.@

նուիրված էր հայատեցութեան սերմեր տարածելուն. բայց նրա դէմ զինվեց ռուսաց մամուլի մեծագոյն մասը և խիստ պարսաւանքի ենթարկեց տխրահռչակ կուարարին:

—Այդ այդպէս է, վրա բերեց Արութեանը. բայց աննպաստ գրութիւնները դժբախտաբար առանց գործնական հետևանքի չեն մնում և թիւրիմացութիւնների աղբիւր են դառնում:

—Ինչ և լինի, առարկեցի ես, միակ միջոցը թիւրիմացութիւնների առաջն առնելու համար այն է, որ մի կողմից հերքենք զրպարտութիւնները և միւս կողմից ինքներս, իբրև անսասան ապառաժ՝ հաւատարիմ մնանք ազգերի համերաշխութեան գաղափարին, երբէք չը գրաւվելով այն ձայներից, որոնք թշնամութիւն և ատելութիւն են քարոզում դէպի ուրիշները:

—Միթէ տարիներ շարունակ այդ չենք անում, բացականչեց Արութեանը. բայց հակառակ տրամադրութիւնը չէ պակասում օտարների կողմից:

—Մի և նոյնն է, յայտնեցի ես. մենք պէտք է շարունակենք մեր կողմից համերաշխութեան, համաքաղաքացիութեան և փոխադարձ օգնութեան քարոզը առանց յուսահատվելու և դադարելու: Մաքուր և արդար գաղափարը, սիրոյ և եղբայրութեան կոչը վերջիվերջոյ կը յաղթանակեն և այնքան ուժեղ կերպով, որքան դժուարութեամբ նրանք ճանապարհ են բաց արել իրանց համար: Եթէ մենք անկեղծ կը լինենք և մեր գործունէութեան մէջ յամառ. եթէ մենք երկրի համար պիտանի և օգտակար ոյժեր կը լինենք. եթէ մեր գոյութեամբ ոչ

միայն ոչ ոքի չենք խանգարի, այլ և ուրիշների բարեկեցութեան համար ևս նպաստաւոր տարր կը լինենք՝—այն ժամանակ չը գնահատված չենք մնալ և կը կորչեն թշնամութեան վերջին արձագանքները։

—Այդ մի՞թէ միայն մենք պէտք է անենք. իսկ ուրիշները, հարցրեց Արութեանը։

—Մենք մեր կողմից կաշխատենք, պատասխանեցի ես, և մեր կողմերից կը հարթենք ճանապարհը, որքան կարող ենք։ Հաւատացած կացէք, որ նոյն տեսակ գործունէութեան կարևորութիւնը զգացվել է վաղուց ամեն տեղ, և համերաշխութեան գաղափարը դարձել է անհրաժեշտութիւն, միասնակեցութեան և ժողովրդական առաջադիմութեան հիմնական պայման։

—Ուրեմն։

—Ուրեմն պէտք է բոլոր ազգերի լաւագոյն մտածողները, համերաշխութեան գաղափարի պաշտպանները միանան մի ընդհանուր գործի համար և քարոզեն իրանց ժողովուրդների մէջ ընդհանուր կուլտուրական նպատակների և եղբայրութեան մասին։ Հայ, ռուս, վրացի, թուրք, քիւրդ, օս և բազմաթիւ կովկասեան ցեղեր կոչված են միահամուռ ույժերով բեղմնաւորել Կովկասը և տալ նրան մտաւոր, բարոյական և տնտեսական երջանիկ կեանք։ Այդ հաւատով և գաղափարով պէտք է գործել և չը վհատվել ժամանակաւոր անաջողութիւններից, անազնիւ կրքերի բռնկումներից և անարդար վերաբերմունքներից։ Թող իւրաքանչիւրը մեզանից պարծենայ ոչ թէ նրանով, որ նա մի աւելորդ անգամ յաղթեց իր հարևանին, խլելով նրանից նրա երջանկութեան մի մասը, այլ որ նա հա-

digitised by A.R.A.R.@

մերաշխութեան անունով զիջումներ արաւ իր հարևանին և Նրա համար օգտակար եղաւ։

—Կեանքի մէջ ամեն դէպք հեշտ չէ ենթարկւում այդ ընդհանուր ձևակերպութեան, առարկեց Արութեանը․ մեզանից պահանջում են միայն զոհեր և զիջումներ, առանց փոխադարձութեան մասին մտածելու։ Սակայն, անկասկած, շատ թիւրիմացութիւններ տեղի ունեն միայն այն պատճառով, որ մարդիկ չեն ցանկանում միմեանց հասկանալ։

—Ուրեմն անկեղծ կերպով աշխատենք միմեանց հասկանալ և միմեանց հասկացնել։

digitised by A.R.A.R.@

CXVII

(17 Նոյեմբ. 1902 Թ., «Մշակ» № 255)

— Դարձեալ, դարձեալ։

Այս խօսքերով դիմաւորեց ինձ Կօթելեանը։

— Ի՞նչ դարձեալ, հարցրի ես զարմացած, ինչ էք ուզում ասել։

— Դարձեալ քննութիւն, արտասանեց նա գլուխը թափ տալով։

— Որտեղ, ինչ քննութիւն։

— Դարձեալ Գօրիում, վրա բերեց նա շեշտելով։ Այո, դարձեալ քննութիւն, դարձեալ Գօրիում, դարձեալ հին գործերի առիթով։

Լսելով այդքան յաճախ «դարձեալ» բառը՝ ես յիշեցի մի գիծ մեր հայ թատրօնի ներկայացումներից, բայց դրա մասին յետոյ։

— Մի՞թէ նախկին քննութիւնները բաւական չէին, բացագանչեցի ես։

— Ի հարկէ աւելի քան բաւական էին, վրա բերեց նա, բայց ինչ արած, երբ քննութիւն նշանակողը չէ ցանկանում օգտվել քննութեան արդիւնքներից, չէ ցանկանում զսպել մեղաւորին և զեղծում գործողին։ Մնում է ժամանակ վաստակել ձգձգումներով։ Իսկ քննութիւնը այդ ձգձգումների նորագոյն եղանակներից մէկն է։

Ես չեմ պատմի իմ ընթերցողին այն քննութիւնների մասին, որոնք նշանակվել էին Թիֆլիսի կօնսիստօրիայի կողմից Գօրու գործերի

digitised by A.R.A.R.@

վրա։ Դրա մասին գրվել է լրագիրներում, յիշվել է իմ Մանրանկարներում, ասվել-խօսվել է հասարակութեան մէջ։

—Քննութիւնները, նկատեցի ես կատակով, երևի շուտով արտաքին ծիսակատարութիւնների կարգը կանցնեն։ Ինչպէս որ սովորութիւն է դարձել Զատկին կարմիր ձու գործածել, այնպէս էլ Թիֆլիսի կօնսիստօրիան ծէսի և ձևի համար նշանակում է քննութիւններ Գօրիում։

—Սա չորրորդ խոշոր քննութիւնն է, նկատեց Կօթելեանը, նոյն գործերի մասին։ Եւ ի հարկէ սա էլ ոչ մի հետևանք չի ունենայ։

—Ճի՞շդ է արդեօք, հարցրի ես, որ ոչ ոք չէ ցանկանում քննիչ գնալ Գօրու գործերի վրա։

—Ոչ ոք, պատասխանեց Կօթելեանը։ Երկու ամիս առաջ, երբ Կարսից Կիւրեղ վարդապետը եկել էր Թիֆլիս Վեհափառին զեկուցումներ անելու Կարսի նահանգում ապաստան գտած թիւրքահայերի մասին, նրան առաջարկեցին գնալ ժամանակաւորապէս Գօրի քննութիւններ կատարելու, բայց նա խնդրեց իրան ազատ կացուցանելու։ Նորերս առաջարկել են Գօրի գնալ Յ. քահանայ Միրիմանեանին, նա էլ խնդրել է իրան ազատել այդ շնորհքից։ Այժմ առաջարկել են Մամբրէ վարդապետին, որը պատրաստվում է գնալու։ Բայց...

—Ի՞նչ բայց, հարցրի ես։

—Կուտեն խեղճ վարդապետին, մրմնջաց Կօթելեանը։

—Ի՞նչպէս թէ կուտեն, հետաքրքրվեցի ես, ո՞վ կուտէ և ինչպէս կարող է։

—Այդ էլ միւս անգամ, ասաց Կօթելեանը և վազեց դէպի իր պաշտօնատեղը։

—

digitised by A.R.A.R.@

Ես ասացի, որ յիշեցի մեր թատրոնական ներկայացումներից մի գիծ։

Դա գաղտնիք չեմ պահի ձեզնից։ Դուք էլ իմացէք։

Առաջ բեմից մենք լսում էինք որոշ տեղերում «այո» և «ոչ» խօսքերը։ Պատահում էին հաղուագիւտ դէպքեր, որ պէտք էր ասել երկու անգամ «այո» և երկու անգամ «ոչ»։ Այդպէս էլ անում էին։

Բայց այժմ դերասանները ընդհանուր սովորութիւն են դարձրել միշտ կ ր կ ն ա կ ի այո և կ ր կ ն ա կ ի ոչ ասել և այն էլ ոչ թէ առանձին-առանձին, այլ միացրած։

Դերասաններից մէկը, օրինակ, հարցնում է իր դերում միւս դերասանից՝ «գնալո՞ւ էք դուք զբօսնելու»։ Միւսը չէ պատասխանում

Այո կամ ոչ
այլ կրկնակի՝
այո—այո
ոչ—ոչ

Իսկ վերջին ժամանակները այդ ուղղութեամբ առաջ գնալով, դերասանները սկսել են արտասանել՝

այո—այո—այո
ոչ—ոչ—ոչ։

Իսկ ժամանակով նրանք երևի կը սկսեն չորս, հինգ և աւելի այոներ և ոչեր միացնել միասին, որպէս զի... տպաւորութիւնը աւելի ուժեղ լինի և ասածները գեղեցիկ։

—

Հայ թատրոնական ներկայացումները ընդհանրապէս աջողութեամբ են առաջ գնում Թիֆլիսում։ Պիեսները բազմատեսակ են։ Նրանց մէջ կան ուսանելի և խելացի գրուածքներ։

digitised by A.R.A.R.@

կան նորութիւններ, որոնցով ներկայումս հետաքրքրված է և եւրոպական բեմը· Դերասանների խմբում կան աշխատող մարդիկ, որոնք զարգացնում են իրանց տաղանդը· Ուշք է դարձված արդ ու զարդի վրա։ Թատրոնը գրաւիչ է իր յարմարութիւններով, իր լուսաւորութեամբ...

Բայց դեռ կան թերութիւններ, որոնք վնասում են թատրոնի գործին և վատ են ազդում յաճախողների տրամադրութեան վրա։

Ի՞նչ կասէք դուք այս բանին, երբ դուք խօսքերը լսում էք կրկնակի՝ ներկայացման ժամանակ։

Ես «այո» և «ոչի» մասին չեմ խօսում, այլ բոլոր բառերի·

Դուք, ընթերցող, զարմանում էք· Մինչդեռ դա իրողութիւն է·

Իսկ գաղտնիքը ահա ինչումն է·

Դերասանները լաւ չիմանալով դերերը, իրանց յոյսը դնում են յուշարարի վրա։ Իսկ յուշարարն էլ ստիպված է բղաւել։

Հանդիսականը լսում է և յուշարարին և դերասանին·

Ճիշդ է, մի քանի դէպքերում դա շատ յարմար է, որովհետև դերասանը շատ ցածր ձայնով է խօսում և եթէ յուշարարի բարձրաձայն արտասանութիւնը չը լինէր, մենք չէինք իմանայ պիեսի բառերը, բայց բոլոր ժամանակը լսել կրկնակի խօսակցութիւն, շատ էլ ցանկալի չէ։

—Ի՞նչ ես նեղանում, նկատեց ծիծաղելով մի կարբայաւոր, մէկ տուած փուղիդ վրա երկու ջէռ լսում ես. ուփրօ լաւ կու պահիս մտքումըդ·

—Ուրեմն դուք գո՞հ էք, հարցրի ես։

—Խիստ, վրա բերեց նա կատակով· Ամա հանաքը դէնը կենայ՝ բեհեսաբ ին անում՝ վուր

digitised by A.R.A.R.@

ցածրն ին ասում. տօ, խօմ քի համա չիս խօսում, միզ համա իս խօսում, դէ ձէնդ մէ էրևցու է է։

—

Թատրօն յաճախող հասարակութեան այն մասը, որ վերնատանն է լինում, ուշադրութեամբ հետևում է ներկայացումներին։ Նա է ծափահարողը, նա է դերասաններին ոգևորողը, նա է հասարակութեան կողմից կարծիք յայտնողը։

Բայց նա երբեմնապէս դուրս է գալիս այն սահմաններից, որոնք վայելչութեան շրջանին են պատկանում։

Յանկարծ մէկը վերևից կամաւ հաղում է ծիծաղեցնելու նպատակով։

Մի ուրիշը թոյլ է տալիս իրան բարձրաձայն նկատողութիւն։

Երրորդը կանչում է այնպիսի դերասանի, որ այդ երեկոյ չէ խաղում։

Չորրորդը աղաղակում է bis (կրկնութիւն), որ բոլորովին անտեղի է դրամատիկական ներկայացումների համար։

Վերջին ներկայացմանը ներկայ էին մի քանի թուրքեր իրանց ազգային տարազով։ Նրանք եկել էին տեսնելու «Ուրիէլ Ակօստա» պիեսը։ Մէկի խելքին փչեց հանաք անել և նա վերնատանից ասում է թուրքերէն՝ «Մաշադի, այստեղ ինչ ես անում»։

Դա վրդովեցրեց ինձ և ինձ հետ մի քանիսին։

—Այդպիսի վարմունք թոյլ տուողները անհասներ են, առարկեց իմ մէկ հարևանը։

—Այո, պատասխանեցի ես, բայց այդ անհասների պատճառով Թատրօնը վնասվում է ընդհանրապէս։

digitised by A.R.A.R.@

CXVIII

(24 նոյեմբ. 1902 թ., «Մշակ» № 260)

Անցեալ երեկոյ ես հրաւիրված էի նշանդրէքի մի մասնաւոր տուն։

Ասում խօսում էին ուրախ-ուրախ, երգում էին, պարում էին և աշխատում զուարճանալ և միմեանց զուարճացնել։

Ցանկանալով մի քանի րոպէ հանգստանալ այդ աղմկալի զուարճութիւններից՝ ես անցայ միւս սենեակները։ Երկու տեղ հիւրերը նստած կանաչ սեղանների շուրջը թուղթ էին խաղում. իսկ մի փոքրիկ սենեակում մօտ տասն հոգի բազմել էին փառաւորապէս ու իրանց համար հանդարտիկ զրոյցներ անում։ Դրանց մէջ կային երկու քահանայ, որոնք առհասարակ լուռ էին, բայց մէկ-մէկ էլ նկատողութիւններ էին անում։

—Ինչ էք առանձնացել այստեղ, ասացի ես, ինչու չէք մասնակցում զուարճութիւններին։

—Չէ, մենք նրանց կը խանգարենք, առարկեց մէկը։ Նրանք իրանց համար, մենք էլ մեզ համար։ Մենք էլ մեր ճաշակի համեմատ զուարճանում ենք։

Նստեցի և ես՝ փոքր ինչ մասնակցելու սրանց զուարճութեանը։

—

—Մեր խաղը ու զուարճութիւնը ահա ին-

digitised by A.R.A.R.@

չունի է, բացատրեց մէկը։ Մենք միմեանց հարցեր ենք տալիս։

—Հետաքրքրական է, նկատեցի ես։

—Դէհ, պարոններ, շարունակե՛նք, յայտնեցին մի քանիսը։

—Ինչո՞ւ, տէր հայր, սկսեց մէկը, իմ որդին ոչինչ չէ սովորում կրօնից և հայոց լեզուից. նա սովորում է գիմնազիայում և երկու տարի է, որ նոյն դասերի վրա է կանգնած։

—Անկարելի է, պատասխանեց քահանաներից մէկը, լաւ պարապել, որովհետև բոլոր աշակերտները միատեսակ պատրաստութիւն չունեն, մէկը շատ բան գիտէ, իսկ միւսը շատ քիչ։

—Ուրեմն ինչ էք ուզում անել, հարցրեց պարոնը. շատ գիտցողը այլ ևս առաջ չը պէտք է գնայ։

Քահանան սկսեց մանուածապատ բացատրութիւններ տալ, որոնցից ոչինչ չը հասկացանք։

—Այդ թողնենք, առաջ գնանք, միջամտեց մի ուրիշը, այժմ ես եմ հարց տալիս. ասացէք խնդրեմ՝ ինչո՞ւ հայոց ներկայացումները արտիստական ընկերութեան մէջ թանգ գնով են, իսկ մեր կլուբում շատ էժան։

—Որովհետև, պատասխանեց մի պարոն, կլուբ եկողները աւելի աղքատ մարդիկ են, քան արտիստական ընկերութիւն գնացողները։ Պէտք էր նրանց օգնել ու օգնում են։

—Հանաքը թողնե՛նք, նկատեց մի երկրորդ պարոն, բայց զարմանալի է, թէ ինչպէս լըցվում է կլուբի դահլիճը ներկայացման օրերը, իսկ արտիստական ընկերութեան թատրոնը սակաւ դէպքերումն է լիքը լինում։ Գոնէ այժմ

սուտ դուրս եկաւ այն առարկութիւնը, թէ հայերը թատրոն չեն սիրում. եթէ չեն սիրում, ինչու են վազում կլուբի ներկայացումներին։

Մի քանի մեկնութիւններ արվեցին այդ առիթով։

—Վճռեցէք իմ հարցը այժմ, բացագանչեց մէկը, ինչու Թիֆլիսի կօնսիստորիան մինչև այժմ ընթացք չէ տալիս նախկին երէցփոխ Ն. Աբրահամեանի հաշուետուութեան գործին։

Տիրեց լռութիւն։

--Չը գիտենք, մեզ յայտնի չէ, լսվեցին վերջապէս մի քանի ձայներ։

—Երևի կօնսիստորիան ժամանակ չունի, առարկեցին միւսները, զբաղված է աւելի լուրջ գործերով։

Հարց տուողը վրդովվեց։

—Եթէ զբաղված են լուրջ գործերով, վրա բերեց հարց տուողը, ապա ինչու մի ամբողջ ամիս ու կէս բան ու գործ են չինել քննելով մի չնչին գործ, թէ քահանաներից մէկը ինչ է ասել կօնսիստորիայի անդամներից մէկի մասին։ Ամբողջ ամիս ու կէս։

—Քահանան արդեօք գովել է, թէ պախարակել, հարցրի ես։

—Երևի թէ գովել է։

—Պէտք է կախել կամ սպանել, կամ աքսորել այդ քահանային։

—Եւ այդպէս էլ կանեն, կատակով նկատեց մէկը։

—Բայց միթէ չը գտնվեց մէկը, հարցրեց ծերունի մի պարոն, որ ասէր կօնսիստորիայի պատկառելի ծերակոյտի անդամներին, թէ վերջապէս պէտք է կարողանալ էական հարցերը զանազանել չնչին հարցերից և տարիներով

digitised by A.R.A.R.@

դիզված խնդիրները առաջ մղել․ Կալուածքների կառավարութեան հարցեր կան, կատարված քննութիւններ կան, որոնց վերաբերութեամբ պէտք է եռանդուն գործունէութիւն ցոյց տալ․ բազմաթիւ կարիքներ սպասում են իրանց լուծման, իսկ չաբաթներով ծամծմում են չնչին և ապարդիւն ընտրողական գործեր։ Միթէ մի ուժեղ հեղինակութիւն չը կայ, որ նրանց սաէ․ բաւական է, յարգելի հայրեր, իսկական գործով զբաղվեցէք։

—Այդ երկարացաւ, նկատեց մի խօսակից, առաջ գնանք, նոր հարցեր տանք։

—Այո, նոր հարցեր տանք։

—Ինչպէս անենք, հարցրեց մի պարոն, որ հայերը ընտելանան ընթերցանութեան։

—Շատ հեշտ է, պատասխանեց նրա հարևանը, իւրաքանչիւր գրքում կամ լրագրի համարում գովել ամեն մի հայի և զետեղել նրա լուսանկարը, եթէ կարելի է ուղարկել և նուէրներ։

Միւս հարց ու պատասխանների մասին մի ուրիշ անգամ։

Ես թողի հարց ու պատասխանները և վերադարձայ այն դահլիճը, ուր չարունակվում էին երգն ու պարը։

digitised by A.R.A.R.@

CXIX

(1 դեկտ. 1902 թ., «Մշակ» № 266)

Շարունակում եմ ծանօթացնել ընթերցողներիս այն հարց ու պատասխանների հետ, որոնց մասին յիշեցի իմ նախորդ «Մանրանկարում»։

—Արդեօք կարո՞ղ է փողը գնել ամէն բան, հարցրեց խօսակիցներից մէկը։

—Շատ ծամծմած ու հասարակ հարց է, ասացին շատերը։

—Այո, այդպէս է, ասաց հարց տուողը բայց պատասխանեցէք։

—Կարող է, պատասխանեց մի պարոն, որ երկար ժամանակ գրագրութեան պաշտօն էր վարել զանազան ատեաններում և յետոյ հարստացել էր Բագւում։

—Ոչ, չէ կարող, հակաճառեց մի ուրիշ պարոն, որ նոյնպէս կարողութեան տէր էր, բայց մեծ զրկանքներ կրած իր կեանքի մէջ։

Տեղի ունեցաւ փոքրիկ վիճաբանութիւն։

Փողին ամենակարող նշանակութիւն տուողները բերում էին մի շարք օրինակներ, որոնցով աշխատում էին ցոյց տալ, որ նրա առաջ արգելքներ չը կան։

—Երբ փողը կայ՝ ասում էին նրանք, դուք կարող էք և՛ ապարանքներ ունենալ և՛ պարտէզներ ծաղկեցնել և՝ գործարաններ բանալ և

digitised by A.R.A.R.@

նաւեր շրջեցնել ծովերում և՛ թատրօն պահել և՛ ճանապարհորդութիւններ անել և՛ թանգարաններ ունենալ և ամեն մի հաճոյք իրագործել։

—Ոչ, տարակուսում էին միւսները, փողը անզօր է շատ տեղերում։ Ես անզաւակ եմ—փողը ինձ զաւակներ չի տայ. ես հիւանդ եմ—փողը ինձ առողջութիւն չի տայ. ես անկիրթ եմ—փողը ինձ կրթութիւն չի տայ. ես կորցրել եմ իմ մտերիմներին—փողը ինձ չի վերադարձնի նրանց. ես կորցրել եմ իմ պատուաւոր անունը—փողը ինձ յետ չի տայ նրան։ Որքան կուզէք շարենք։ Եթէ ճիշդ է այն, ինչ գրում են Կրուպպի մասին, ապա ինչու նրա հարստութիւնը նրան չօգնեց, ինչու նա դիմեց ինքնասպանութեան։ Միթէ նա իր հարստութիւնով, իր փողով կարող էր արատը ջնջել ու սրբել։ Միթէ մեր Կովկասում քիչ կան հարուստներ, որոնց հետ լայեղ չէ նոյն իսկ բարևելը։

—Բայց որ բարևում են ու երկրպագում, նկատեց նախկին գրագիրը։

—Ոչ բոլորը, պատասխանեց մի երիտասարդ։ Փողի յանդգնութիւնը մեծ է և նրա յաւակնութիւնները սոսկալի են. բայց կան բաներ, որոնց նա չէ կարող ընկճել, կան բողոքի ձայներ, որոնց նա չէ կարող խլացնել, կան գաղափարական հոսանքներ, որոնց նա չէ կարող կանգնեցնել, կայ հասարակական խղճմտանք, որին նա չէ կարող շլացնել։

Ես բաց եմ թողնում մի քանի ակնարկներ անձնաւորութիւնների և ժամանակակից եղելութիւնների մասին։

—Այժմ նոր հարցեր տանք, առաջարկեց մէկը։

digitised by A.R.A.R.@

—Այո՛, այո՛, նոր հարցեր, համաձայնեցին միւսները։

—Չը գիտե՞ք արդեօք, թէ ինչո՞ւ են կազմում դեկադենտական երեւոյթ, հարցրեց մէկը։

—Բարեգործական նպատակով, պատասխանեց մի ուրիշը, փող ժողովելու՝ բարեգործական ընկերութեան համար։

—Այդ գիտեմ, յայտնեց առաջինը. բայց ինչո՞ւ դեկադենտական եւ ոչ ուրիշ տեսակի։

—Որովհետեւ, սկսեց մէկը եւ ոչինչ չը կարողացաւ ասել։

—Որովհետեւ... փորձեց խօսել մի ուրիշը եւ կանգ առաւ։

—Որովհետեւ... միջամտեց երրորդը եւ լռեց։

—Ի՞նչ էք երկար բարակ կմկմում ու ծըրգծգում, բացագանչեց չորրորդը. որովհետեւ դա էլ մօդա է, դա էլ նորութիւն է, դա էլ զագրանիցի խաղք է, դա էլ ժամանակի դրօշն է, դա էլ աչքի ու գրպանի միկրոբն է։

Խօսակիցներից մէկը բացատրեց, թէ ինչ տեսակ զգեստներ եւ զարդարանքներ են լինելու դեկադենտական պարահանդէսում։

—Տօ մէկ բան հարցնեմ, նկատեց մէկը. չը լինի՞ թէ դեկադենտական երեւոյթի մասին հարց տալով՝ ուզում էիր րեկլամ անել։

—Ոչ, ոչ, պատասխանեց հարցի հեղինակը։

Բոլորը ծիծաղեցին։

—Ի՞նչ կուսակցութիւններ կան մեր Թիֆլիսի նոր ընտրած դումայում, հարցրեց մէկը։

—Երեք կուսակցութիւն, պատասխանեց մի պարոն, որ ինքը ձայնաւոր էր ընտրված։ Մէկը՝ հին գվօրցօվեան կուսակցութիւնն է, միւսը երիտասարդ գվօրցօվեան կուսակցութիւնը եւ երրորդը օպպօզիցիա կոչված ընդդիմախօսների

digitised by A.R.A.R.@

կուսակցութիւնը, որ դեռ որոշ ծրագիր չունի։

—Երիտասարդ դվօրցօվեա՛ն—այդ չենք լսել։

—Կը լսէք և կը տեսնէք։

—Իսկ գործունեայ և լուրջ մարդիկ արդեօք շատ կան նորերի մէջ։

—Չեմ գիտի, ասաց ձայնաւորը Թիֆլիսի բարբառով. վուր գիտենամ էլ՝ չիմ ասի։ Իս գրբաց խօմ չիմ։ Գնա ու նրամէն իմացի։

—Թողէնք և այդ հարցը։

—Ճի՞շդ է, որ մեր նախկին առաջնորդը էլի պէտք է վերադառնայ Թիֆլիս, հարցրեց մէկը։

—Ասում ին, վուր նրա համա չալիշ ի՛ն գալի, ասաց ձայնաւորը. գանա ը՛նկելու բան է։ Ամա չիմ գիդի, թէ վուր յիդ վիգելը—թասիբի բան չէ՝ կուլի—ըլի։

—Ուրեմն այդ իմ հարցին ի՞նչ պատասխան էք տալիս։

Ոչ ոք չը պատասխանեց։

—

Միւս հարց ու պատասխանների մասին ես չեմ հաղորդի, որովհետև պատասխանները գաղտնիք են և նրանք կարող են միայն միմեանց ականջին ասվել մտերիմ շրջանում, այլ ոչ հրապարակում։

Յոյս ունեմ դուք չէք ստիպի, որ ես գաղտնիքներ յայտնեմ։

Եւ վերջապէս ես վճռել եմ նրանց մասին չը խօսել։

CXX

(8 դեկտ. 1902 թ., «Մշակ» № 271)

Մենք նստած էինք վառարանի շուրջը և խօսակցում էինք։

Տաք և հաւաք անկիւնը, վառվող փայտերի անհաւասար, բայց կենդանի լուսաւորութիւնը մեզ բևեռել էին մեր գահաւորակների և բազկաթոռների վրա ու տրամադրում էին զրոյցի։

Ընթացիկ լուրերից մենք անցանք մի առարկայի, որ մեզ սաստիկ զբաղեցրեց։ Դա մեր գործողների բռնած դիրքերի հարցն էր։

—

—Վստահելի և ուժեղ գործողների թիւը շատ քիչ է, ասաց Մետալեանը, ահա մեր ցաւը։

—Դուք գուցէ հերոսներ էք ուզում տեսնել, պատասխանեց Աչիկեանը, հերոսներ չը կան։

—Ոչ, ես հերոսական անձնաւորութիւններ չեմ որոնում, վրա բերեց Մետալեանը, այլ օրինաւոր մարդիկ։ Իսկ նայեցէք մեր շուրջը, մեր գործողների մեծամասնութիւնը կամ փրփուրն արարածներ են, որոնք ամեն մի հողմից երերվում են և ընկճվում, կամ անձնապաշտներ, որոնք յետ են քաշվում ասպարէզից, երբ որ նրանցից պահանջվում է որոշ զոհ և անձնուիրութիւն։

—Հէնց որ լինէր ձեր ուզածը, նկատեց Աչիկեանը, ուրեմն կունենայինք հերոսներ։

digitised by A.R.A.R.@

—Ոչ, ոչ, հակառակեց Մետալեանը, իմ պահանջածը հսկայական բան չէ, այլ աւելի չօշափելի, աւելի շուտ իրագործելի բան։ Ես խօսում եմ այն բանի մասին, որ գործը ներկայացուցիչ ունենայ, որ բողոքը իր համար արտայայտող գտնէ, որ մերկացումների համար չը դողացող բազուկներ առաջ անցնեն։

Մենք խօսեցինք մեր գործողների մասին, բերելով օրինակներ կեանքից։

—Իսկ ես օրինակներ կը բերեմ Պետրոսներին, յայտնեցի ես։

—Ո՞ր Պետրոսին, հարցրին խօսակիցներս։

—Պետրոսներին և ոչ թէ Պետրոսին, պատասխանեցի ես և պատմեցի։

Ձեզ էլ կը պատմեմ փոքր ինչ ուշ։

—

—Դժուար է բողոքողի և մերկացնողի դերը, բացագանչեց Թուփիկեանը, դժուար է և անյարմար։

—Այո դժուար է, բայց դա անհրաժեշտ դեր է, նկատեց Անելեանը։ Եթէ բողոքը, մերկացումը և քննութիւնը բացակայ լինեն, այն ժամանակ կը կազմվի մի յուսահատական դրութիւն կեանքի մէջ։

—Ի՞նչ էք ուզում դրանով ասել, վրդովված հարցրեց Անելեանը։

—Այն, պատասխանեց Թուփիկեանը, որ բողոքելու համար պէտք է լինել ա ն կ ա խ մի անձ, օրինակ, լինել ա պ ա հ ո վ վ ա ծ մի մարդ, որ կարող լինի իր բողոքի ծանրութիւնը իր վրա կրել և ուրիշներից չը վախավել։

—Այդ այդպէս է, վրա բերեց Անելեանը, բայց եկէք տեսէք, որ կեանքի մէջ, իրականութեան մէջ մենք հակառակն ենք նկատում։

digitised by A.R.A.R.@

—Ինչպե՞ս։

—Ապահովվածները, ունևորները, անկախ դիրք ունեցողները առհասարակ չեն բողոքում և չեն մերկացնում։ Եւ շատ անգամ նրանք ամենամեծ դատապարտողն են լինում ամեն մի բողոքի և ամեն մի մերկացման։

—Ինչո՞ւ. ինչո՞վ պէտք է բացատրել այդ երևոյթը, հարցրինք մենք։

—Գուցէ այն պատճառով, բացատրեց Անելեանը, որ ապահովված մարդը միայն իր հանգըստութեան, իր հոգեկան անդորրութեան, իր վայելքների մասին է հոգում և վրդովվում է ամեն մի բանից, որ կարող է նրա համար անախորժ ընդհարումներ առաջ բերել։ Այդ մէկ։ Մի ուրիշ պատճառ էլ կարող է այն լինել, որ ապահովված և վայելքների մէջ ընկղմված մարդը ամենևին չէ զգում չարիքների գոյութիւնը և անձնական դրդում չունի բողոքելու նրանց դէմ։

—Հաւանական բացատրութիւն է, նկատեցին մի քանիսը։

—Ճիշդ է՝ այն անձինք, շարունակեց Անելեանը, որոնք իրանց կաշուի վրա զգում են կեանքի զրկանքները, չարիքների ծանրութիւնը և սպանիչ հարուածները, նրանք իբրև կախում ունեցող անձինք համբերում են և տանում են շատ անախորժութիւններ, որպէս զի չընկնեն աւելի ևս վատ դրութեան մէջ, բայց վերջ ի վերջոյ նրանց միջից դուրս են գալիս համարձակ անձինք կամ յուսահատվածներ, որոնք առաջ են գալիս իբրև բողոքողներ, մերկացնողներ և քննադատողներ։

—Սակայն միթէ՞ երիտասարդութիւնը, միթէ՞ ինտելլիգենցիան չէ կոչված կեանքի բողոքի և

digitised by A.R.A.R.@

առաջադիմական ձգտումների ներկայացուցիչը լինելու, հարցրեց Մետալեանը։ Միթէ նա չէ երկրի աղը, միթէ նա չէ մտաւոր շարժման կենսական ոյժը, բեղմնաւորող տարրը։

—Էհ, էհ...

—

Այժմ անցնենք Պետրոսներին։

Լսեցէք։

Մի անգամ «Մշակի» խմբագրատուն մտնում է մեր բարեկամներից մէկը, որ հէնց էր եկել Բագուից։ Անուանենք նրան Պետրոս № 1։ Նա խօսում է Բագուի գործերի և երիտասարդների մասին սաստիկ զայրոյթով և վրդովմունքով։ Պատմում է քստմնելի դէպքեր, նկարագրում է զզուելի տեսարաններ և վերջացնում է իր խօսքը կշտամբանքով, թէ ինչու մենք չենք մերկացնում, չենք հարուածում նաւթային քաղաքի գործողներին։

Մենք թէև չափազանցութիւն չը համարեցինք Պետրոս № 1-ի պատմածները, որովհետև ուրիշ տեղեկութիւններ էլ շատ ունէինք, բայց և այնպէս զգուշութեան համար մեղմացրինք նրա ներկայացրած գծերը և... երևացին լրագրի մէջ նկատողութիւններ Բագուի գործողների մասին։

Անցաւ մի քանի ժամանակ. մեր ականջին լուր հասաւ, որ Բագուի մի երկու շրջանում վրդովվել են լրագրի մերկացումներից և որ մեր Պետրոս № 1-ը վստահութիւն և քաջութիւն չէ ունեցել իր ներքին համոզումը բարձրաձայն պաշտպանելու և նոյնպէս այն կարծիքն է յայտնել, որ չը պէտք է զետեղել վիրաւորական յօդուածներ Բագուի գործողների մասին։

Մի ուրիշ անգամ մեզ համակրող մի պարոն, Պետրոս № 2, կշտամբում է մեզ, թէ ինչու

մենք հովանաւորող դեր ենք ընդունել հայոց
Թարօնի վերաբերութեամբ, յայտնում է խըմ-
բագրատանը, որ նա ունի սաստիկ յարձակո-
ղական մի յօդուած ներկայացուցիչների մասին։
Մենք խնդրում ենք բերելու։ Յօդուածը չէ
գալիս։ Իսկ լրագրի մէջ զանազան դէպքերի
առիթներով գրվում են նկատողութիւններ ներ-
կայացուցիչների մասին։ Եւ երեւակայեցէք մեր
զարմանքը, երբ տեղեկանում ենք, թէ Պետ-
րոս № 2·ը մի շրջանում մօմի պէս հալվում-
մեղմանում է և այն կարծիքն է յայտնում, որ
չը պէտք էր այս նկատողութիւնները անել,
այլ միայն խրախուսել և քաջալերել։

Մի երրորդ պարոն, Պետրոս № 3, յայտնում
էր մեզ, որ նա համակրում է մեր առաջադէմ
մամուլի բռնած դիրքին ազգութիւնների համե-
րաշխութեան հարցի վերաբերութեամբ, մանա-
ւանդ այժմ, երբ կրքերը յուզված են ուժգին
կերպով, բայց մի ուրիշ տեղ յայտնել էր, որ
դա սխալ է լրագրի կողմից, դա թուլութեան,
ներողամտութեան նշան է, որ ներկայ դէպքե-
րում համերաշխութիւն քարոզելը ապտակ ըն-
դունելու համաձայնութիւն է։

Պետրոս № 4-ը մեր ձեռքը սեղմում էր լրա-
գրի մի քանի յօդուածների համար, որոնք
գրված էին մեր բուրժուաների դէմ, իսկ բուր-
ժուայի մի ընտանիքում նոր յօդուածների ա-
ռիթով ընդունել էր, որ սխալ է լրագրի կող-
մից յարձակվել բուրժուաների վրա, որովհետև
իբր թէ սրանք են մեր ազգի ոյժը։

Պետրոս № 5-ը մեզ դրդում էր, որ սաս-
տենք մեր հոգևոր հայրերին, մերկացնելով
նրանց արարքը և զանցառութիւնները, իսկ մի
ուրիշ տեղ նա յայտնել էր, թէ լաւ չէ լրագրի

digitised by A.R.A.R.@

բռնած գիրքը, թէ յարձակումներ անելը խելացի քաղաքականութիւն չէ։

Նոյն այդ եղանակով կարելի է շարել Պետրոսներ № 6, № 7, № 8, № 9, № 10 և բաղմաթիւ ուրիշների նկարագիրները։

Միթէ Պետրոսներ ասելով՝ մենք աչքի առաջ ունենք այն կեղծ, փարիսեցի, մշտապէս յարմարուող անձերին, որոնք ոչ մի համոզմունք և որոշ աշխարհայեացք չունեն իրերի և երևոյթների մասին և ամեն օր, ամեն ժամ փոխում են իրանց գիրքը։

Ոչ։ Ամենևին ոչ։ Կեղծաւորների և հողմաթևքների թիւը շատ մեծ է և ես նրանց մասին չեմ խօսում։

Ես աչքի առաջ ունեմ այն մարդկանց, որոնք որոշ համոզմունք ունեն, որոնք համակրում են լուսաւոր ձգտումներին, որոնք կը ցանկանային իրանց անունները տեսնել առաջադիմականների ցուցակում և իրանք իրանց անուանում են ազատամիտ, առաջադէմ կուլտուրական տարր, որոնք սակայն բաւականաչափ բարոյական ոյժ չունեն ամեն տեղ պաշտպանելու իրանց դաւանանքը և որոնք անվեհերութիւն ու համարձակութիւն չունեն սևին սև ասելու և սպիտակին սպիտակ։

Իսկ թէ ինչու ես անուանեցի նրանց Պետրոսներ, այդ դուք արդէն գուշակած կը լինէք։

Յիշեցէք առաջին ուրացող Պետրոսին։

Տասնինն դար սրանից առաջ, երբ Նազովրեցի Մեծ Ճշմարտախօսին տանում էին ստորկանական քննութեան, նրա աշակերտներից աւագագոյնը, Պետրոսը, սարսափեց հարց ու փորձից և երբ նրան հարցրին, թէ միթէ դու էլ Նազօվրեցու խմբից ես։

digitised by A.R.A.R.@

—Ոչ, պատասխանեց Պետրոսը։

Նա ուրացաւ Գաղափարների Ուսուցչին և երկրորդ անգամ և երրորդ անգամ։

Եւ միայն, երբ աքաղաղի ձայնը յիշեցրեց Մեծ Նահատակի նախազգուշացնող խօսքերը, թէ դու, Պետրոս, չես դիմանայ փորձութիւններին, ինձ կուրանաս երեք անգամ մինչև աքաղաղի կանչը—այն ժամանակ Նա զգաց ներքին խայթ և հասկացաւ, թէ որքան ծանր է այն բեռը, որ իր վրա էլ վերցրել Նրա Ուսուցիչը։

Եւ Պետրոսը սթափվեց։

Հայրենի երկրում բազմաթիւ են Պետրոսները։ Բազմաթիւ են և այն երդումները, որոնք դուրս եկել Նրանց բերաններից ոգևորութեան օրերում։

—

Ես կուզենայի բարձրանալ մի ամբիոնի վրա և այնտեղից աղաղակել՝

—Պետրոսներ, որոնք ցրված էք մեր երկրի զանազան անկիւններում, սթափվեցէք։ Աքաղաղը վաղուց աղմուկ է հանում։ Յիշեցէք, որ դուք երդվել էք հաւատարիմ մնալ հասարակական գաղափարներին։ Թող չը շլացնէ ձեզ հարստութիւնը, չը խլացնէ անձնական վայելքի հրաւէրը և չը կուրացնէ ձեզ խնամիական հաշիւը։ Պետրոս առաքեալը սթափվեց և դարձաւ մեծ քարոզիչ ու հրահանգիչ։ Սթափվեցէք և դուք։ Բաւական է, որքան դուք ձեզ ուրացաք։

Արդեօք կը լսեն։

digitised by A.R.A.R.@

CXXI

(15 դեկտ. 1902 թ., «Մշակ» № 277)

Ես ուզում էի իմ անցեալ «Մանրանկարը» շարունակել։

Բայց Պետրոսների տիպից կան և ուրիշ հետաքրքրական տիպեր, որոնք ցրված են մեր կեանքի ասպարէզներում։

—Հաշուի մէջ նրանք կան, ասում էր ինձ մի բարեկամ, բայց իսկապէս մեզ համար գոյութիւն չունեն։

Նա բերաւ մի ցուցակ, որի մէջ նշանակված էին գործող, ինտելիգէնտ համարվող անձանց մի խոշոր թիւ։

—Սկսենք ջնջել, ասաց նա. տեսնենք ինչ կը դուրս գայ։

Անտարբերներին, բուրժուացածներին, դաւաճաններին ջնջեցինք։ Շատ քիչ բան մնաց։

Վատ տրամադրութեան մէջ մենք բաժանվեցինք։

Ես վճռեցի շուտով չը վերադառնալ այդ առարկային։

Եւ այն, ինչ որ այսօր պէտք է պատմեմ՝ չը գիտեմ վերաբերում է այդ առարկային, թէ ոչ։

—

Երէկ ինձ մօտ եկաւ մի պարոն, որի հետ մենք յաճախ պատահել ենք զանազան հիմնարկութիւնների մէջ։

digitised by A.R.A.R.@

—Ես ձեզ մօտ մի օտարօտի գործով եմ եկել, ասաց նա։

—Ի՞նչ գործով, հետաքրքրվեցի ես։

—Այդ կասեմ շուտով, յայտնեց նա. բայց ասացէք խնդրեմ, արդեօք մեզ ոչ ոք չի խանգարի։

—Ոչ ոք, հանգստացրի ես։

Պարոնը նստեց դէմ ու դէմ, փոքր ինչ մտածութեան մէջ ընկաւ և խօսեց.

—Ես ձեզ մօտ եկել եմ ներողութիւն խնդրելու, սկսեց նա։

—Ի՞նչ, ներողութիւն, ինչ բանի համար, հարցրի ես։

—Ես ձեզ բամբասել եմ, բացատրեց նա։

—Ոչինչ չեմ լսել, ասացի ես։

—Գուցէ երբէք և չը լսէք. բայց բամբասել եմ, վրա բերեց նա։ Ես կարող եմ ձեզ պատմել, թէ ինչ եմ ասել, ինչպէս եմ բամբասել։

—Ի՞նչ կարիք կայ, յայտնեցի ես։

—Ես անհանգիստ էի այս օրերը, շարունակեց նա. ես մտածում էի, թէ ինչու ես ինձ թոյլ տուի զրպարտութիւններ անել։

—Ես չեմ ցանկանում, նկատեցի ես, իմանալ, թէ ինչ էք ասել և ում, բայց մի բան ինձ համար հետաքրքրական է, թէ ինչու էիք դուք բամբասում, ինչն էր ձեզ դրդում։

Պարոնը փոքր ինչ լռեց և յետոյ շարունակեց.

—Ես բարկացած էի մի քանի մարդկանց վրա, ասաց նա. խօսեցի նրանց մասին, բորբոքվեցի, զայրացայ և յետոյ այլ ևս ինքս ինձ զսպել չը կարողացայ. սկսեցի ուրիշներին էլ հայհոյել։ Եւ ահա այժմ եկել եմ իմ սածի համար ներողութիւն խնդրելու։

Ես հանգստացրի նրան։ Յայտնեցի, որ նրա

digitised by A.R.A.R.@

ներկայ խոստովանութիւնը քաւում է եղածը և որ այդ հարցը ինձ համար գոյութիւն չէ ունեցել։

—Այո, այո, շեշտեց նա. ես եմ հարցը դրել և դրել եմ, որպէս զի իմ բարոյական պարտքս կատարած լինեմ և ինձ հանգստացրած։

—Հանգստացէք ուրեմն, ասացի ես։

—Ես բոլորովին կը հանգստանամ, վրա բերեց նա, երբ բոլորին, ում հետ այն օրը խօսել եմ՝ կը տեսնեմ և կը յայտնեմ, որ ես գրգռված և բարկացած դրութեան մէջ եմ եղել և որ ես չեմ կարողացել բարկութիւնս զսպել և անաչառ լինել դէպի մարդիկ։

Պարոնը հանդարտվեց։ Նրա կնճիռները անցան։ Նա ամուր սեղմեց ձեռքս և հեռացաւ։

—

Պարոնը ինձանից հեռացաւ՝ թեթեւութիւն զգալով իր մէջ։

Բայց ես էլ էի զգում իմ մէջ մի թեթեւութիւն։ Կարծես մի մառախուղ ցրվում էր իմ առջեւ։

Ինչո՞ւ էր ինձ այդպէս թւում։

—Ո՜րքան թիւրիմացութիւններ կը վերանային և կը չքանային, մտածում էի ես, եթէ մարդիկ աւելի անկեղծ լինէին և ցանկանային թիւրիմացութիւնները ցրվել և էականը միայն աչքի առնել։

Ես մտաբերեցի շատ դէպքեր մեր ընկերական և հասարակական կեանքից, ուր թիւրիմացութիւնները մեծ դեր են կատարել և խանգարող են հանդիսացել շատ լաւ գործերում։

—Սակայն ինչո՞ւ մարդիկ պէտք է ստեղծեն աւելորդ թիւրիմացութիւններ, ասում էր կարծես մի ձայն. ինչո՞ւ մարդիկ իրանց կրքերը զսպել չը պէտք է կարողանան։

Դա մեր կեանքի ցաւագար կողմերից մէկն է։ Մարդիկ մեզանում սովոր են խաղալ պատուի

digitised by A.R.A.R.@

և անհատական արժանաւորութիւնների հետ։

Ես ճանաչում եմ մարդկանց, որոնք ատում են միմեանց, կարծես առանց պատճառի, և չոգոքորթում են միմեանց՝ նոյնպէս առանց պատճառի։ Ատողը յանկարծ դառնում է սիրող, և սիրողը յանկարծ փոխվում է ատողի։

—Չէ, հաշիւ ու հէսաբ կայ էդ բանի մէջը, ասում էր մէկ քաղքցի. դուն խաբար չիս։

—Ես կարծում եմ, յայտնեցի ես, որ մեզանում սովոր չեն յարգելու ամեն մարդու մէջ նախ և առաջ նրա քաղաքացիական արժանաւորութիւնները և իրաւունքները։

—Հէնց վուր մարթն ընկաւ ու մեռաւ՝ բացատրում էր քաղքցին, էն վուխտը մէ քիչ սկսում ին դրուստը խօսիլ ու օղորմի կանչիլ։

—Այո, դագաղի առաջ, ասացի ես, մարդիկ աւելի անաչառ են դառնում. բայց դա շատ ծանր մխիթարութիւն է մեզ՝ ապրողներիս համար։

—Ի՞նչ ասել գուզէ, վրա բերեց քաղքցին։

—

Անկասկած, անաչառութեան ոգին կամացկամաց զարգանում է կեանքի մէջ։

Հրապարակական քննադատութիւնը, գրականութիւնը, գաղափարների տարածվելը նըպաստում են այդ հանգամանքին։

Հանդէս են գալիս հասարակական դաւանանքներ և սրբութիւններ. աւելանում են օրէցօր պաշտելի անուններ. առաջ են մղվում գաղափարական շարժումների ծրագիրներ, որոնց առաջ ընկճվում են կրքերը և լռում է նենգութիւնը։

Բայց ժամանակ է հարկաւոր։

digitised by A.R.A.R.@

CXXII

(22 դեկտ. 1902 թ., «Մշակ» № 283)

Ցիշողութիւններ, ոգևորող յիշողութիւններ։

Գրիգոր Արծրունու մասին յիշողութիւնները վերակենդանացնում են մեր առաջ գաղափարի մարդուն, որը մեր մէջ ապրեց, մեր մէջ գործեց, որը զգաց իր վրա խաւար և սև օրերի հալածանքները՝ բայց մի և նոյն ժամանակ տեսաւ և լուսաւոր գաղափարների յաղթանակի արշալոյսը։

Նրա լուսաւոր գործունէութեան առաջ, որ այժմ պատմութեան նիւթ է դարձել, դադարում է չար զրպարտութիւնը և անհետանում է սուր բամբասանքը։

Այժմ յարգանք դէպի անձնուէր գործողը, այժմ երախտագիտական զգացմունք դէպի անխոնջ և հասարակական մշակը։

Դուք ճանաչում էք հրապարակախօսին, բարկութեամբ և արդար ցասումներով լի մարտընչողին, սկզբունքների պատգամախօսին և հասարակական չարիքների մերկացնողին։

Այդ Արծրունու դէմքը լուրջ է, մտախոհ, խորաթափանց, գուցէ և բարկացկոտ։

Բայց ահա մի ուրիշ դէմք՝ Նա ժպտուն է,

բաց և մեղմ, համեմված բաց ծիծաղով կամ թեթև հեգնութեամբ։

Դա էլ նոյն Գրիգոր Արծրունու դէմքն է. բայց այն Արծրունու, որ հասարակութեանը յայտնի էր «Ա ս ի ա ց ի» անունով։

—

«Ասիացին» նոյն գործն էր կատարում իր ֆելիետոններով, ինչ որ Գրիգոր Արծրունին իր առաջնորդողներով և ուրիշ յօդուածներով։

Ձևը ուրիշ էր, բայց էութիւնը նոյնը։

Ասիացին դիտում էր կեանքը և նրա մէջ գործողներին, նկատում էր այդ կեանքի և գործողների կենցաղավարական բնորոշ գծերը, նրանց գործունէութեան առանձնայատկութիւնները, լուսաւոր երևոյթները, անհեթեթութիւնները, անցքերի զուգադիպութիւնները և թիւրիմացութիւնների անվերջ կուտակումները։

Դիտելով և նկատելով այդ բոլորը՝ նա տալիս էր մի շարք ֆելիետոններ, որոնց մէջ թեթև պատմուածքի ձևի տակ, ծիծաղի, կատակի, սրախօսութեան և զուարճախօսութեան կոհակների մէջ նա ներկայացնում էր մեր կեանքը և գործողներին։ Ֆելիետոնները ագահութեամբ կարդացվում էին, տպաւորութիւն էին գործում և լրացնում էին այն, ինչ որ թերի էր մնացել միւս յօդուածներում։

—

Ասիացու ծիծաղը և սրախօսութիւնը աննըպատակ մի ծիծաղ և սրախօսութիւն չէին։ Դա ծաղր չէր ծաղրի համար, միայն ընթերցողներ գրաւելու համար, միայն ծափահարութիւններ որսալու համար։

digitised by A.R.A.R.@

Դա նոյն լուրջ մարդու և հասարակական գործողի մտքերի գործնական արտայայտութեան մի նոր ճիւղաւորութիւնն էր։

Այսօր, երբ մենք կանգնած ենք Գրիգոր Արծրունու մահվան տասնամեակի առաջ և յիշում ենք նրա բեղմնաւոր գործունէութիւնը իր բոլոր առանձնայատկութիւններով, թող և ներկայ «Մանրանկարը» նուիրված լինի Ասիացու յիշատակին։

---

digitised by A.R.A.R.@

CXXIII

(29 դեկտ. 1902 թ., «Մշակ» № 289)

—Զուարճացի՛ր։

Այդ են աղաղակում տօնական ձայները։ Այդ են ասում փողոցները, որոնք լցված են խուռն ամբոխով, այդ են թելադրում թատրոնները, պարահանդէսները, մագազինները, բազմաթիւ յայտարարութիւնները։

Տօնական աղմուկի մէջ խլանում են ուրիշ ձայներ, որոնք դուրս են գալիս զրկվածների և տկարների բնակարաններից, որոնք յիշեցնում են ոչ զուարճատեղեր գնալու, այլ ուրիշ բաների մասին։

Թոյլ ձայներ են այդ վերջին ձայները, կարելի է նրանց վրա և ուշք չը դարձնել։

—Ես չեմ խղճահարվում այդ ձայներից, ասում էր անցեալ օր դիմակահանդէսում մի պարոն։ Ես զուարճանում եմ, բայց դրանով ես ոչ թէ չեմ մոռանում խեղճերին, այլ ուղիղ նրանց օգնում եմ։

—Ինչպէս, հարցրի ես։

—Դուք մոռացել էք, վրա բերեց նա, որ այս դիմակահանդէսը բարեգործական նպատակ ունի։

—Ճիշդ է։

—Ես յաճախում եմ, շարունակեց պարոնը, այն բոլոր երեկոյթները, որոնք տրվում են բարեգործական նպատակով։ Այդպիսով ես

digitised by A.R.A.R.@

միացնում եմ իմ զուարճութիւնը բարեգործութեան հետ։

Մի դիմակ մօտեցաւ և յափշտակեց պարոնին, որ չտապեց հետևել նրան, հաւատացած լինելով, որ նա զբաղված է զուարճութիւնը բարեգործութեան հետ միացնելով։

Ինձ հետ միասին կանգնած մի ուրիշ պարոն, որ լսում էր մեր խօսակցութիւնը, ժպտաց։

—Մի՞թէ գոհ չես, ասաց նա, որ գոնէ այս ձևով կարելի է դառնում հասարակութիւնից մի քանի կոպէկներ կորզել և բարեգործական նպատակներ առաջ տանել։

Ես դիտաւորութիւն չունէի վիճելու, ես վըճռել էի միայն դիտող լինելու։

Դիմակներ գալիս գնում էին, կատակախօսում և անհետանում։

—

Այս ձմեռվայ սկզբից մեզ հետաքրքրել էին մի նոր երեկոյթի յայտարարութիւններով։

Պէտք է դեկտեմբերի 28-ին լինի «դ ե կ ա դ ե ն տ ա կ ա ն պ ա ր ա հ ա ն դ է ս»։

Երէկ նա տեղի ունեցաւ։

Շատերը պատրաստվում էին այդ պարահանդէսի համար։ Տիկինները և օրիորդները կարել էին տալիս զանազան տարազի զգեստներ, որոնցով պէտք է փայլէին պարահանդէսի օրը։ Խնջոյքներում, հիւրասենեակներում, մազազիններում խօսում էին պարահանդէսի մասին։

Անցեալ օրը, երբ երեկոյեան անցնում էի Գօլօվինսկի պրօսպէկտով, յանկարծ իմ աչքին ընկաւ մի լուսեղէն յայտարարութիւն։ Դա Թիֆլիսի ժողովարանի մուտքի մօտն էր։ Գոյնզգոյն լուսաւորութեամբ յայտարարված էր՝ դեկադենտական պարահանդէսը։

digitised by A.R.A.R.@

Գնացի և ես։

Հաւաքուել էր մեծ բազմութիւն։ Զարդեր, ծաղիկներ, ժապաւէններ պսպղում էին։ Կային աչքի ընկնող զգեստներ, ընտրոչ սանրուածքներ. չարաճճի հայեացքներ։

Բայց շատերը սպասում էին մի ինչ որ չը-նաշխարհիկ բանի։

—Սպասենք, տեսնենք, լսվում էր զանազան անկիւններում։

Իմ ուշադրութիւնը գրաւեց մի կաքայաւոր, հաստլիկ քաղքցի, որ մի գլուխ այս ու այն կողմն էր գնում։ Աչքերը լայն բաց արած՝ նա նայում էր իր շուրջը և կարծես մի բան էր որո-նում։ Ի՛սկ ժամանակ-ժամանակ նա ձեռքերը թափ էր տալիս և զարմացական շարժումներ անում։

Ինչպէս եղաւ մենք նայեցինք միմեանց երե-սին։ Նա օգտվեց դէպքից և խօսեց։

—Արա, թէ Աստուծ կու սիրես, պարուն, ասաց նա, մէ ինձ հասկացրու, թէ ուր են նը րանք, չին երևում։

—Ո՞վ չէ երևում, հարցրի ես։

—Վա՛, օվ պիտի ըլի, վրա բերեց նա, սրանց դեկադէնտներն էլի։ Էս կուռն իմ մտիկ տալի, էն կուռն իմ աչք գցում ու էդ օխնածներին չիմ տեսնում։ Ասին, թէ դեկադէնտնիր պիտի ըլին, ամա վունց օր վարավուրդ իմ անում, վունչինչ չը կայ։ Մէ դուն ասա, իբ պիտի գան դրանց դեկադենտնիրը։

Ես հազիւ կարողացայ ծիծաղս պահել։ Քաղ-քցու դէմքը շատ լուրջ էր և մի տեսակ մտախոհ։

—Ի՞նչ էք հասկանում դեկադենտներ ասելով, հետաքրքրվեցի ես։

—Իս ինչ գիդիմ, վրդովված ասաց նա, իրանք էն գրի, իրանք էն աֆիշումը գցի, իրանք էն

digitised by A.R.A.R.@

դիփումանց ղուղը տարի, թէ դեկադէնտնիր պիտի ըլլին։ Ո՞վ էր նրանցը խնդրում։ Ամա վունցօր տէ՞նում իմ՝ լաւ լաղաթին խաբիլ ին։ Էս անցկացած տարին գրիլ էին, վուր պիտի ստուդենտի բալ ըլլի. գնացի ու դրուստ վուր ստուդէնտնիր տէհայ բալումը։ Ամա հիմի ինչ վուր դէկադէնտ ին մօդօնի ու միզ բալ ին կանչի։ Լաւ, մինք էլ էկիլ ինք. Արա քու դեկադէնտնիրը ո՞ւր ին։

Քաղքցու խօսքերից ես վերջապէս հասկացայ, որ նա չէ հասկացել դեկադենտ բառի նշանակութիւնը։ Նա կարծել էր, թէ դրանք մի որոշ պարապմունքի կամ արհեստի տէր անձնաւորութիւններ են։

Ես աշխատեցի պարզել նրա համար մի քանի խօսքով բանի էութիւնը։

—Աղբաթը խէր, յայտնեց նա գլուխը թափ տալով, էտէնց էլ պիտի գրիլ էին, թէ չէ ափիշ ին գցի թէ ամեն մարթ պիտի դեկադէնտի գալուստիկ կապէ, ան չէ շորաֆ պիտի տայ։ Էհ, իս խօմ մասխարայ չէի, վուր ուրիշ օլքցու գալուստիկ կապիմ։ Ամա, ասի, գնամ ու մէ թամաշա անիմ։

—Հիմի, ինչպէ՞ս էք հաւանում, հարցրի ես։

—Ի՞նչ ասիմ, ժպտաց նա, աշխարհքը օյինբազութին է էլի ու օյինբազութին էլ կու մնայ։ Չէ, իս լաւ կօնիմ գնամ մէ իրիգնահաց ուտիմ։ Էդ ուփրօ ղայիմ կուլի ու իժում էլի գուքամ թամաշի։

Քաղքցին ուղղվեց դէպի սեղանատուն։

—

Երեք դեկադենտական օրիորդներ ինձ շրջապատեցին և ինձ գերի վերցրին։

Դա երկար պատմութիւն է. Թէ ժամանակ ունենամ, կը պատմեմ։

digitised by A.R.A.R.@

CXXIV

(1 յունվ· 1903 *թ.*, «*Մշակ*» № 1)

Երէկ երեկոյեան ես հրաւիրված էի «Մշակի» խմբագրատուն ներկայ լինելու տօնածառի նուէրների բաժանելուն։

Տօնածառը հարուստ չէր արտաքին արդուզարդով և պսպղուն պարագաներով, բայց նա ճոխ ու հարուստ էր ամէն տեսակ նուէրներով։

—Պէտք է նուէրներ ուղարկել զանազան անձերին և հիմնարկութիւններին, ասում էին խմբագրատանը։

—Ուղարկենք, ուղարկենք, համաձայնում էին միւսները· բայց ում ինչ ուղարկենք—ահա դըժուար հարցը։

Տօնածառի ճիւղերից կախված բազմաթիւ նուէրները սպասում էին իրանց հիւրընկալներին։

—Թող մեզնից մէկը հանէ այն տոմսակները, որոնց վրա նշանակված են մարդկանց և հիմնարկութիւնների անունները, իսկ միւսը քաղէ ծառից նուէրները։

Ես յանձն առայ արձանագրել և ցուցակ կազմել, որպէս զի նա մնայ նուէր ստացողների համար դարէդար և անթառամ մի յիշատակ։ Ինչպէս կարելի է մեզանում մի քայլ անել և չը մտածել անմահանալու կամ անմահացնելու մասին։

digitised by A.R.A.R.@

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան՝ հազար դեկադենտական վզնոցների մի կապոց։

Էժանագին գրադարանին՝ հին ու նոր անդամների վրա մնացած ապառիկների մի ցուցակ։

Թիֆլիսի Նոր առաջնորդին՝ հին առաջնորդի պատկերը։

Թիֆլիսի կօնսիստորիայի նախագահին՝ Միլտօնի «Դրախտ կորուսեալ» գիրքը նորագոյն առաջաբանով։

Մակեդօնացիներին՝ եւրօպական խաղաղութեան մասին մի դիւժին գիրք։

Թիւրքահայերին՝ նոյնը։

Կանանց՝ պօրտմօնէ անթիւ բաժանմունքներով։

Բագուարնակներին՝ իրանց հայրերի տըրեխները և մահակները։

Նկարիչներին՝ բանկային չեկեր նրանց պատկերների համար։

Սազերին՝ ազգային դրօշակներ բոլոր երկիրներից։

Գիւղացիներին՝ Փարաւօնի եօթ վտիտ կովի պատկերները։

Կրիտիկոսներին՝ խոշորացոյցներ ազգային պարծանքները նկարագրելու համար։

Ռեպօրտէօրներին՝ բազեր զանազան մեծութեան և գոյնի։

Գողերին և աւազակներին—զինաթափութեան օրէնքի յօդուածը։

digitised by A.R.A.R.@

Օրխորդներին — պօստ-կարտեր պլոմում դնելու համար։

Արամազդին — մի ժապաւէն, որի վրա գըրված է հետեւյալը՝ «քիչ էլ էս կուռը մոտիկ տու է»։

Ծառաներին — ուղիղ հաշիւներ գրելու ձեռնարկներ։

Պարսկահայերին — կնքված կտակների մի մեծ կապոց։

Թիֆլիսի ձայնաւորներին — օդապարիկներ միմեանց ճառերը օդում որսալու համար։

Ցելիետօնիստներին — ասեղների մի արկղիկ։

Օտարաքաղաքացի Թիֆլիսցիներին — զօղինաղի պօստային ծրարներ Թիֆլիսից։

Ծնողներին — բինօկլներ իրանց զաւակներին տեսնելու համար։

Նշանվողներին — ոսկեայ շղթաներ։

Ամուսիններին — երկաթեայ շղթաներ։

Թուղթ խաղացողներին — ժամացոյցներ՝ նստած ժամերը հաշւելու համար։

Տէրտէրներին — շաքարի գլուխներ։

Կեղծողներին — կնիքներ զանազան տեսակի։

Վարձկաններին — Թմբուկ, զուռնա և չուխ։

Փարիսեցիներին — Հայելիներ խոշորացնող և փոքրացնող։

Շողոքորթներին — խունկ՝ ծխելու համար և ջերմաչափ՝ յարմար դիրք բռնելու համար։

digitised by A.R.A.R.@

Հարուստներին — լապտերներ չքաւորներին տեսնելու համար։

Մանուկներին — հրեշտակիկների պատկերներ։

Ծոյլերին — վկայականներ նրանց աշխատասիրութեան մասին։

Գրականագէտներին — ապառիկների ցուցակներ։

Յանկարծ ներս մտաւ ծառան և ասաց, որ ժամանակն անցնում է և անկարելի է սպասել։ Ես տուի գրածս և ինքս վերցրի մի ուրիշ թուղթ այնտեղ չարունակելու համար նուէրների արձանագրութիւնը։

Միայն մի բան կարողացայ աւելացնել՝

Ընթերցողներին — Շնորհաւորական բաց նամակներ։

digitised by A.R.A.R.@

CXXV

(5 յունվ. 1903 թ., «Մշակ» № 2)

Բռնած փոքրիկի ձեռքից՝ ես մտայ դահլիճը, ուր մանկական տօնածառ էր սարքված։

Վիթխարի տօնածառը իր անհամար ճիւղերով, իր անթիւ ճրագներով, իր պսպղուն զարդերով, իր կախ ընկած ամեն տեսակ նուէրներով ու սրտուղելիքներով դիւթել էր մանուկներին։

Ուրախ քրքիջը, որ տիրում էր մանուկների մէջ, հիացման բացականչութիւնները, որ լըսվում էին ամեն մի վայրկեան, փայլուն աչքերը, որոնք ցոլում էին իբրև աստղիկներ՝ անմիջապէս գրաւեցին ինձ և ես համակվեցի նոյն զուարթութեամբ, որի մէջ գտնվում էր ամբողջ դահլիճը։

—Պար բռնենք, առաջարկեցին այս ու այն կողմից։

Եւ պար բռնեցին։

Մէկը սկսեց խմբական երգ։ Հարիւրաւոր ձայներ միացան առաջինին։ Դահլիճը թնդաց։

Երգը, ճլվլոցը, մանկական զանգուրների ալեծածան շրջապտոյտները յափշտակեցին իմ ուշքը։

—

Ես մտածմունքի մէջ ընկայ։

Եւ յիշեցի մի պատկեր, մի սրտազրաւ պատկեր, որ երբէք ես չեմ մոռանայ։

digitised by A.R.A.R.@

Ամառվայ մի ճանապարհորդութեան ժամանակ ես իջայ մի գիւղում: Շոք օր էր: Գիւղացիները դրսումն էին, իրանց հանդերում:

Ես յայտնեցի իմ գալու պատճառը: Մի տըղայի ուղարկեցին տանուտէրի ետևից:

—Հանգստացիր, խնդրեց տան պառաւը:

Ես նստեցի և թեք ընկայ բարձի վրա:

Չորս կողմը լռութիւն էր: Լսվում էին միայն երբեմնապէս հաւերի քչքչոցը և հեռու կցկտուր ձայներ:

Լռութիւն:

Ես սպասում էի: Ոչ ոք չէր երևում:

Յանկարծ աչքիս ընկաւ մի փոքրիկ մանկական դէմք, որ նայում էր ինձ տան սիւների ետևից:

Ահա իմ առաջ մի փոքրիկ աղջիկ, չորս-հինգ տարեկան, հրաշալի ճոխ գանգուրներով: Նա նայում էր գաղտագողի՝ դէմքը դուրս պատկերացնում և դարձեալ թագցնում:

Հրաշալի պատկեր:

Ես չը գիտէի ինչպէս մանուկին դուրս կանչել: Յիշեցի, որ իմ պայուսակում կան պաքսիմատներ և անուշեղէն:

—Աղջիկ, դիմեցի նրան, տուր այն կապոցը:

Նա մի վայրկեան կանգ առաւ, յետոյ վերցրեց պայուսակս և տուեց ինձ:

Ես հանեցի պաքսիմատները ու անուշեղէնը և տուի նրան:

Նա չը գիտէր՝ վերցնել թէ չը վերցնել:

—Վերցրո՛ւ, ասացի ես կտրական ոճով, քոնն է:

Նա վերցրեց:

—Ի՞նչ է քո անունը. հետաքրքրվեցի ես:

—Շողիկ, պատասխանեց նա կամացուկ:

digitised by A.R.A.R.@

Շողիկը գնաց և սիւնի ետևում սկսեց ճաշակել իր ստացած նուէրները։

Դարձեալ լռութիւն։ Դարձեալ ոչ ոք։

—Շողիկ, դիմեցի փոքրիկին, եկ այստեղ, տես, ինչ պէտք է քեզ ցոյց տամ։

Ես բաց արի իմ մօտ եղած գրքի գոյնզգոյն պատկերները։

Շողիկը մօտեցաւ երկչոտ կերպով։

—Նստիր։

Նստեց և սկսեց նայել պատկերներին։

Ես սկսեցի դիտել մանուկի երեսը։ Անմեղութեան և անչափ քնքշութեան հետ միասին երեխայի դէմքի վրա երևում էին տխրութեան գծեր, մտախոհութեան հետքեր։ Աչքերը մի հազուագիւտ գրաւչութիւն և խորութիւն ունէին իրանց մէջ. գանգուրները շրջապատել էին դէմքը հրաշալի խոպոպիկներով։

Մանուկը նայեց պատկերներին և յետոյ կամաց-կամաց ննջեց. գլուխը վայր դրեց գորգի վրա և քնեց։

Ես նայում էի անմեղ գառնուկին և հիանում։

Ցանկարծ նա արթնացաւ, նայեց իր շուրջը, նայեց ինձ և կարծելով, թէ ես քնած եմ, մօտեցաւ ինձ, շրթունքները կպցրեց իմ ձեռքին, կարօտով համբուրեց և փախաւ ինձանից։ Ես տեսայ, որ նա սրբում է իր արտասունքները։

Շողիկը փախաւ։

Շուտով եկաւ պառաւը և յայտնեց, որ տանուտէրը գալիս է։

Ես հարցրի պառաւից Շողիկի մասին։

—Իմ թոռն է, ասաց նա, որբ է մնացել, հարսս, նրա մայրը, մեռաւ, իսկ հայրը գնացել է պանդխտութեան։

digitised by A.R.A.R.@

Ես լաւ հասկացայ, որ մանուկը կարօտ է զգում զգուանքի։

—Լաւ երեխայ է, նկատեցի ես, երևի ծնողներին կարօտում է։

—Արա չի կարօտի, մրմնջաց պառաւը. երբ որ տեսնում է, թէ ինչպէս ուրիշ ծնողներ գգվում են իրանց երեխաներին, խեղճը իրան շատ թուացնում է։ Որքան էլ նրան սիրենք ծնողի տեղը չի տայ։

Եկաւ տանուտէրը և փոխվեց մեր խօսակցութիւնը։

Շողիկին տեսայ մի անգամ էլ գնալու րոպէին։

—

Որբ Շողիկի պատկերը յիշեցի ես այն րոպէին, երբ ճոխ և շքեղ տօնածառը մանուկների անհուն ոգևորութեան հետ ինձ հմայել էր։

—Ո՞ւր է Շողիկը այժմ, ունի՞ արդեօք նա էլ ուրախութիւն. արդեօք վերադարձաւ նրա հայրը պանդխտութիւնից և սփոփեց իր սիրունիկի մատաղ սիրտը։

Ինձ թւում էր, թէ տօնածառի շուրջը թռչկոտում է նոյն Շողիկը։

Ես նրան որոնեցի, բայց չը գտայ։

digitised by A.R.A.R.@

CXXVI

(12 յունվ. 1903 թ., «Մշակ» № 6)

Ես մի ապառիկ ունեմ տալու։

Ես գերի էի ընկել երեք դեկադենտական օրիորդների մօտ և պէտք է պատմէի, թէ ինչ խօսակցութիւններ ունեցայ նրանց հետ։

Օրիորդները ինձ առաջնորդեցին դէպի դահլիճները, ցոյց տուին աչքի ընկնող կանացի զգեստները և բնորոշ նկատողութիւններ արին տղամարդկանց մասին։ Չը մոռացան տանելու ինձ դէպի օրիորդների մի շրջան, որտեղ ինձանից տուգանքներ պահանջեցին մի կտոր անուշեղէնի և մի բաժակ ջրի համար։

—Դեկադենտութիւնը մեր ներկայ կեանքի նշանաբանն է, ասաց օրիորդներից մէկը։

—Այո, այո, բացականչեցին միւսները։

—Ինչո՞ւ, ինչո՞ւ էք այդպէս կարծում, վրդովվեցի ես։

—Նայեցէք ձեր շուրջը, ասաց առաջին օրիորդը, և դուք կը համոզվէք, որ այդպէս է կեանքի մէջ։

Ես ուզեցի հակաճառել, բայց օրիորդները ինձ ընդհատեցին։

—Հետևեցէք մեզ, ասացին նրանք։

Մենք գնացինք։

—

Ես անուանում էի օրիորդներին իրանց իս-

կական անուններով. բայց նրանք խնդրեցին կանչել նրանց դեկադենտական ծաղկանուններով։

—Ինձ կանչեցէք Հարփենիկ, ասաց նրանցից մէկը.

—Ինձ Տարփենիկ, վրա բերեց երկրորդը.

—Իսկ ինձ Գուփենիկ, եզրափակեց երրորդը։

—Օրիորդներ Հարփենիկ, Տարփենիկ և Գրուփենիկ, ասացի ես, այժմ ձեր տրամադրութեան տակ եմ։ Ի՞նչ էք ասելու, ասացէք։

—

—Նայեցէք այստեղ, սկսեց օրիորդ Հարփենիկը, տեսնո՞ւմ էք թէ ինչ գեղեցիկ հագնված այս տիկինը։

—Այո, ճիշդ որ, շատ շքեղ և գեղեցիկ է հագնված, համաձայնեցի ես։

Մեր դիմաց նստած էր մի սիրունադէմ տիկին՝ նուրբ կերպասներով պճնված, խորհրդաւոր ժապաւէններով և ծոպերով։ Սանրուածքը բնորոշ էր և մազերի մէջ փայլում էին վարսակալներ։

—Ահա այս տիկինը աշխատեց և աջողեցրեց իր որդուն ուրիշի հաշւով ուսում տալու, բացատրեց Հարփենիկը։ Որդու համար փող չունի, իսկ պճնվելու համար գտնում է։ Դեկադենտութիւն չէ՞ արդեօք։

—Իրաւունք ունէք, մրմնջացի ես։

—Նայեցէք այս կողմ, խօսեց Տարփենիկը, տեսնում էք այս երկուսին, որոնք նստած են այն անկիւնում։

Ես նայեցի ցոյց տուած ուղղութեամբ և տեսայ մի ծերունի մարդու մի դեռահաս օրիորդի հետ։

digitised by A.R.A.R.@

—Ովքե՞ր են դրանք, հարցրեց Տարփենիկը, ի՞նչ էք կարծում։

—Ես չեմ ճանաչում, ասացի ես, կարծում եմ, որ դա երևի պապն է, իսկ դա թոռը։

—Սխալվում էք, բացականչեց Տարփենիկը, դրանք ամուսիններ են. այդ պարոնը նորերս պսակվեց այդ մատաղահաս աղջկայ հետ։

—Ի՞նչ էք ասում, զարմացայ ես, անկարելի է։

—Իրականութիւն է և դաժան իրականութիւն, վրա բերեց Տարփենիկը։ Այժմ հարցնում եմ ձեզ՝ դեկադենտութիւն չէ՞ դա արդեօք։

—Իրաւունք ունէք, համաձայնեցի ես։

Տիրեց մի փոքր լռութիւն։ Գուփենիկը դիմեց ինձ և իմ ուշադրութիւնը հրաւիրեց մի խորոտ պարոնի վրա, որ ներկայացնում էր հարաւի բնորոշ մի տիպ՝ սև մազերով, խիտ մօրուքով, կրակոտ հայեացքով։

—Ինչպէ՞ս էք հաւանում պարոնին, հարցրեց Գուփենիկը։

—Տպաւորիչ դէմք ունի, նկատեցի ես։

—Նայեցէք նրա դեկադենտական դոյնզգոյն վզնոցին, առաջարկեց Գուփենիկը։

Նայեցի։

Վզնոցը կրում էր իր վրա մի գեղեցիկ քո-րոց։ Պարոնը նայում էր յաղթական հայեացքով։

—Ո՞վ է այդ պարոնը, հարցրի ես։

Գուփենիկը ուղիղ չը պատասխանեց իմ հարցին։

—Այդ պարոնը նորերս մի հազուագիւտ մարմարիօն ծախեց և լաւ գին վերցրեց։

—Մարմարիօն, բացականչեցի ես. միթէ՞ դա մարմարիօն վաճառելով է զբաղված։

—Ոչ, բացատրեց Գուփենիկը, այդ մարմա-

digitised by A.R.A.R.@

րիոնը միակն էր, որ նա ունէր։ Այդ մարմարիոնը նրա հօր գերեզմանի վրա էր դրված։

—Ի՞նչ էք ասում, վրդովված խօսեցի ես, միթէ նա ծախեց իր հօր գերեզմանաքարը։

—Այո, ժպտաց Գոփեննիկը, շատ լաւ գին տուին և նա էլ ծախեց։

—Այդ անկարելի է, բացականչեցի ես։

—Ես էլ չեմ հաւատում, վրա բերեց Գոփեննիկը, բայց ասում են։

—Ոչ, ոչ, անկարելի է. կրկնեցի ես զայրացած։

—

—Նայեցէք այս կողմ, խօսեց Հարփենիկը, տեսնում էք այս ժպտուն բժշկին։

—Այո, ի՞նչ կայ։

—Սա միշտ քարոզում է, յայտնեց Հարփենիկը, որ ամենալաւ բժիշկը—առողջարար օդն է, սննդարար կերակուրը և կանոնաւոր շարժումը, իսկ ինքը մի գլուխ իր հիւանդներին պառկեցնում է անկողնում և կերակրում դեղորայքով։

Միւս օրիորդները միմեանց նայեցին և քըմծիծաղ տուին։

—Այս բանում, ասացին նրանք, դուք շատ էլ մի հաւատաք օրիորդ Հարփենիկին, նա բարկացած է բժշկի վրա, այդ պատճառով բամբասում է։

—Ամենևին ոչ, բորբոքվեց Հարփենիկը, եթէ ուղիղն ասենք, դուք նրան պաշտպանում էք, որովհետև նրա վրա յոյս ունէք։

Օրիորդները փոքր ինչ վիճեցին և մերկացումներ արին։ Ես աւելորդ եմ համարում այդ միջադէպն առաջ բերել։

Այդ ժամանակ մօտեցաւ մեզ մի երիտա-

digitised by A.R.A.R.@

սարդ, որ առաջարկեց օրիորդ Տարփենիկին պարել իր հետ։

—Ներեցէք, չեմ կարող, յայտնեց Տարփենիկը։

Երիտասարդը փոքր ինչ կանգ առաւ, նայեց պարողներին և յետոյ դիմեց մեզ.

—Ցաւում եմ, որ ուսանող չեմ, բացականչեց նա։

—Ինչո՞ւ, հարցրինք մենք, դուք այժմ էլ կարող էք ձեր ներկայ գործերը այնպէս կարգադրել, որ մի երկու տարի հնարաւորութիւն ունենաք լսելու գիտութիւններ։

—Ի՞նչ, լսել գիտութիւններ, իմ ինչին է հարկաւոր այդ, վրա բերեց նա։

—Ապա ինչո՞ւ էիք ուզում ուսանող լինել, հետաքրքրվեց օրիորդ Տարփենիկը։

—Պարելու համար, բացատրեց երիտասարդը, որպէս զի օրիորդները ինձ չը մերժեն և ինձ հետ պարեն։ Տեսէք, պարողների մեծ մասը ուսանողներ են։

Տարփենիկը կարմրեց և դառնալով երիտասարդին սաստեց մատով։

—Ներում եմ ձեզ, ասաց նա, ձեր այդ սրախօսութիւնը տեղի ունի դեկադենտական պարահանդէսում, ուստի ներելի է։

—Դուք ինձ վիրաւորել էք ուզում, հարցրեց երիտասարդը։

—Ձեր պարտքն եմ ձեզ վճարում։

Երիտասարդը հեռացաւ և շուտով օրիորդներից մէկի հետ սկսեց պարել։

—Նայեցէք այստեղ, դիմեց ինձ Գափենիկը։ Տեսնում էք այս Մեծ-Պասին։

Նա մատնացոյց եղաւ մի պարոնի վրա, որ մի կողմից գաւառական աստիճանաւորի, իսկ միւս կողմից հոգևորականի տպաւորութիւն էր գործում։

—Ո՞վ է դա, հարցրի ես։

—Դա մի պարոն է, որ լաւ պատրաստում է տիրացուներին տէրտէր դառնալու։

—Մի՞թէ։

—Այո, նկատեց Գուփեննիկը, դրա պատրաստածը անկարելի է, որ տէրտէր չը դառնայ։ Պահանջված ցենզը դրա շնորհիւ հրաշքներ է կատարում։

—Եւ արդեօք որքա՞ն ժամանակում է պատրաստում, հետաքրքրվեցի ես։

—Կարող է մի քանի ժամում, բացատրեց օրիորդ Գուփեննիկը։ Դա գրաւոր ապացոյցներ է ներկայացնում իր աշակերտների գիտութեան մասին, թղթերով, վկայագրերով... ծրարների մէջ դրած։

Այդ ժամանակ մօտեցաւ մեզ մի պարոն, որ գնել էր դեկադենտական մի վզնոց և չը գիտէր թէ ինչ անել նրան։

—Ինչո՞ւ չէք կապում վզնոցը, հարցրեց չարաճճի հայեացքով օրիորդ Տարփեննիկը։

—Իմ սարֆ պան չի, ախպեր, ասաց նա կարմրելով։

Նրանից փչեց քեալլափաչի հոտ։

Մենք նրան հանգիստ թողինք։

Մեր մօտով անցաւ մի կին իր աղջկայ հետ։ Մայրը խօսում էր գռեհիկ հայերէն, աղջիկը ֆրանսերէն։

—Ամբողջ ժամանակը, բացատրեց Հարփեննիկը, դրանք միմեանց տանջում են։ Մայրը չէ հասկանում աղջկայ ասածը, իսկ աղջիկը ձեռք չէ վերցնում իր ֆրանսերէնից։

Օրիորդ Տարփեննիկը հրաւիրեց մեր ուշադրութիւնը մի խումբ երիտասարդների վրա, որոնք շրջապատել էին մի շքեղ օրիորդի և սիրալիր խօ-

digitised by A.R.A.R.@

սում էին, երկրպագութիւններ նրան անելով։

—Այդ օրիորդը, բացատրեց Տարփենիկը, խելօք աղջիկ է և լաւ գնահատում է իր շրջապատողներին։ Նա հարուստ է և լաւ գիտէ, որ այդ ամբողջ խումբը միայն նրա հարստութեամբ է հետաքրքրված և ուրիշ ոչնչով։ Եւ տեսէք․ ինչպէս դիւական ժպիտով նա խաղում է նրանց հետ։ Ոչ ոքի դրանցից նա չէ սիրում և չի սիրի։

—

—Օրիորդները ինձ պատմեցին հետաքրքրական բաներ Սօլօլակի և եկւոր բնակիչների մասին․ բայց ես չեմ կարող մի առ մի բոլորը առաջ բերել։

—Շունը տիրոջ չէ ճանաչում, ասաց օրիորդ Տարփենիկը։

—Ոչ ոք ոչ մի սրբութիւն չունի, բացականչեց օրիորդ Հարփենիկը։

—Ամեն բան առ ու ծախսի վրա է դրված, չեչաեց Գափենիկը։

Գրան-բօնը խանգարեց մեր խօսակցութիւնը։

—

—Միթէ ճիշդ չէինք ասում, թէ դեկադենտութիւնը ժամանակի նշանաբան է, բացականչեցին օրիորդները։

—Ես դարձեալ համաձայն չեմ, պատասխանեցի նրանց։ Ձեր ասածների, պատմածների և ցոյց տուածների մէջ շատ կան տխուր երևոյթներ․ բայց այս մարդկանցից դուրս էլ կեանք կայ…

Խօսակցութիւնը վերջացաւ։

Ես որոնեցի քաղքցուն, որ հարցնեմ թէ գըտաւ արդեօք վերջապէս նա դեկադենտներին թէ ոչ։ Բայց նա արդէն գնացել էր։

Ես խօմ տեսայ։

digitised by A.R.A.R.@

CXXVII

(19 յունվ. 1903 թ., «Մշակ» № 12)

Երբ ես պատրաստվում էի պարահանդէսի դահլիճից դուրս գալու, իմ ձեռքը բռնեց Կոթելեանը։

—Մէկ բան պէտք է հարցնեմ ձեզնից, ասաց նա։

—Չը լինի՞ արդեօք դարձեալ ձեր Գօրու մասին է, ժպտացի ես։

—Այո, մեր Գօրու մասին, վրա բերեց նա։ Արդեօք ձեզ լուր չէ՞ հասել նոր ձևի թղթախաղի մասին։

—Չէ, ոչինչ չեմ լսել, պատասխանեցի ես։ Ի՞նչ նոր ձևի մասին է ձեր խօսքը։

—Նորերս Գօրիում խաղում են եղել մի ընտանիքում «բ ա ն կ»։ Այդ խաղին մասնակցում է և մեր Գօրու քահանաներից մէկը, որի անունը չեմ ուզում յայտնել։

—Ինչո՞ւ, հարցրի ես, մի՞թէ թուղթ խաղացող քահանաներ քիչ կան։

—Ոչ, խօսքս կտրեց Կօթելեանը. թուղթ խաղացող քահանաներ շատ կան. բայց ներկայ դէպքում ուրիշ հանգամանք կայ։ Լսեցէք։ Քահանան տանում է տալիս իր մօտ եղած բոլոր փողը, բայց ցանկանում է խաղը շարունակել։

Իսկ խաղացողները չեն համաձայնում ապառիկ խաղալ։ Ի՞նչ անէ քահանան։

—Ի՜նչ մեծ ցաւ է և վիշտ, բացագանչեցի ես։

—Եւ ահա մեր քահանան, շարունակեց Կոթելեանը, վճռում է պատժել խաղակիցներին մի անօրինակ համարձակ քայլով և նրանց աչքը հանել։

—Հետաքրքրական է։

—Քահանան հանում է վզից քահանայական լանջխաչը և հինգ ռուբլիով վրան դնելով խաղակիցներից մէկի մօտ՝ շարունակում է թղթախաղը։

—Ի՞նչ էք ասում, բացագանչեցի ես. դա անկարելի է։

—Ինձ պատմեցին իբրև ստոյգ եղելութիւն, հաստատեց Կոթելեանը։

—Անկարելի է, պնդեցի ես. անհաւատալի է։ Դա չար լեզուների խօսք է։

—Ես լսածս եմ ձեզ պատմում, նկատեց Կոթելեանը։

Անկասկած, դա հնարովի մի լուր է, որ ապարէզ է գցվել՝ քահանային անուանարկելու նպատակով։

Երանի թէ այդպէս լինէր։

—

Կոթելեանը պատմեց մի քանի դէպքեր Թիֆլիսի օրվայ կեանքից, որոնք թէև բնորոշ էին, բայց չափազանց մասնաւոր բնաւորութիւն էին կրում։

Յետոյ նա պատմեց մի փարթամ հագնված ու իրան արիստոկրատ համարողի արկածները, որոնց մէջ նա հանդէս է գալիս՝ իբրև կոպիտ մի ասիացի։

—Առհասարակ շատացել են, եզրափակեց նա,

digitised by A.R.A.R.@

դիմակաւորված, ներկ քսած ծպտեալ մարդկանց թիւը։ Բաւական է, որ փոքր ինչ քերէք կեղևը, իսկոյն անճոռնի միջուկը երևան կը գայ։

Կոթելեանը առաջ բերեց տասն-տասներկու օրինակ զանազան դասակարգերի շրջաններից։

—Այո, նկատեցի ես. կեղծը տիրել է ամեն տեղ և շատ թիւրիմացութիւններ է առաջ բերում։

Խօսակցութիւնը սկսեց ստանալ չափազանց խրատական և բարոյախօսական ձև։

—Ես ձեզ մի հին դէպք պատմեմ, ասաց Կոթելեանը և դրանով թէ մի զուարճութիւն պատճառած կը լինեմ և թէ մեր բերած օրինակների համար մի լուսաբանութիւն տուած։

—Ո՞րտեղի կեանքից։

—Թիֆլիսի կեանքից։ Աբա լսեցէք։ Օրթաճալի այգետէրերից մէկը մի դեղնագոյն էշ է ունենում, որի վրա կանաչի ու միրգ բարձած՝ նա ամեն օր ուղարկում է եղել իր այգու բերքը խանութպանին։ Մի օր էշը այգուց դուրս է պրծնում ու փողոցն ընկնում։ Կինտոների մի խումբ, տեսնելով դեղնագոյն էշին, մտածում են մի խաղ խաղալ։ Մօտակայ խանութից վակս են գնում, էշին ներկում սև գոյնով ու նրա մէջքին էլ թափում փոքր ինչ գարման ու հող։ Այգետէրը որոնում է իր էշին, բայց չէ գտնում։ Նա հարցնում է կինտոներից։ Սրանք ասում են, որ չեն տեսել. բայց կը ծախեն իրանց էշը էժան գնով։ Ի՞նչ անէ այգետէրը։ Միրգ ու կանաչի տանելու ժամանակն է։ Այգետէրը վճռում է գնել էշը և երեք րուբլիով ձեռք է բերում։ Կինտոները, վերցնելով փողը, նստում են այգու դիմաց գտնվող մի խանութի առաջ ու սկսում են քէֆ անել։ Այգե-

digitised by A.R.A.R.@

տէրը հրամայում է ծառային մաքրել էշը հող ու դարմանից և ուղարկել խանութ։ Ծառան իջեցնում է էշը Կուրի ջրի մէջ և սկսում լուանալ։ Եւ ինչ է տեսնում—Լուացած էշը էլի առաջվայ իրանց գեղնագոյն էշն է։ Այգետէրը տեսնում է, որ նրա գլխին խաղ են խաղացել։ Իսկ կինտօները հեռուից մի գլուխ նրա կենացն են խմում ու կանչում՝ միասին քէֆ անելու։ Այգետէրը մօտենում է, վերցնում բաժակը ու դիմելով կինտօներին ասում. «ախպրտիք, գանա իրիք մանէթ փուղ պիտի տայի, վուր նուր մէկանից իմացիլ էի, թէ վակսը չի կանա փուխի իմ էշին. ամա էլի էժան պրծայ»։ Կինտօներն էլ նրան պատասխանում են. «ի հարկէ էժան պրծար, ուրիշները էդ բանի համա հազար թումաննիր ին խարջում, մաչ»։

Կոթելեանը մի երկու մեկնութիւններ էլ տուեց։ Եւ յայտնեց, որ երբեմն ամբողջ համայնքներ են նոյն սխալն անում։ Բայց այդ մեկնութիւնները աւելի շատախօսութեան արդիւնք էին։ Ուստի ես նրանց առաջ չեմ բերել։ Մեկնութիւններ ամեն մարդ կարող է տասնեակներով մտաբերել։

digitised by A.R.A.R.@

CXXVIII

(26 յունվ. 1903 թ., «Մշակ» № 18)

Մի քանի օր սրանից առաջ ես ստացայ մի հրաւիրատոմս իմ ծանօթից։ Հրաւիրատոմսի մէջ ասված էր հետեւեալը.

Յարգելի պարոն.

Այսօր երեկոյեան ինձ մօտ պէտք է տեղի ունենայ մի ժողով, որտեղ կը քննվեն մի քանի կարեւոր կենսական խնդիրներ։ Զեկուցանողներից մէկը կը լինեմ ես։ Իմ զեկուցման մէջ ես պաշտպանում եմ այն միտքը, որ ցերեկով լոյս է, իսկ գիշերով խաւար։ Ապացոյցներ ունեմ։ Յոյս ունեմ, որ դուք էլ ձեր կողմից ինձ կաջակցէք իմ միտքը հաստատելու։ Միւս զեկուցումներն էլ հիմնովին մշակված են»։

Սարինեան

Երեկոն ազատ էր։ Կարող էի գնալ։

Բայց գնա՞լ արդեօք, թէ ոչ, ահա այն հարցը, որ չէի վճռել։

Արդեօք արժէր գնալ։

—«Ցերեկով լոյս է, իսկ գիշերով խաւար», կրկնեցի հրաւիրատոմսի խօսքերը։

Միթէ արժէ դրա համար զեկուցում կարդալ։ Եւ դեռ իմ աջակցութիւնն էլ են խնդրում։

digitised by A.R.A.R.@

Սակայն իմ հետաքրքրութիւնը շարժված էր։ Ես վճռեցի գնալ։

—

Նիստը թէև մասնաւոր էր, բայց կիսահրապարակական բնաւորութիւն էր կրում։ Այդտեղ կային մարդիկ, որոնք որոշ դիրք ունեն հասարակութեան մէջ և յաճախում են երբեմնապէս մեր ընկերութիւնների նիստերը։

Ժողովված էին մինչև քսան հոգի։ Իմ ժամանելուց յետոյ շուտով սկսվեց զեկուցումների ընթերցումը։

Սարինեանը առաջին զեկուցանողն էր։ Նա մի համառօտ ներածութիւն արաւ և ապա դիմեց էական մասին։ Նա առաջ բերեց բազմաթիւ վկայութիւններ և զանազան կարծիքներ։

Եւ կարող էք արդեօք երևակայել. Նրա ապացոյցները շատ թոյլ դուրս եկան և վիճելի։

Երեք պարոն խօսեցին նրա դէմ և նեղ տեղը գցեցին նրան։

—Բու թռչունը կամ բայղուշը, խօսեց հակաճառողներից մէկը, գիշերն աւելի լաւ է տեսնում, քան ցերեկը։

—Զղջիկը կամ գիշերամուկը, աւելացրեց միւս հակաճառողը, նոյնպէս գիշերը աւելի լաւ է տեսնում։

—Կատուն, վրա բերեց երրորդը, գիշերը շատ լաւ է տեսնում և կարօտ չէ ցերեկվայ լոյսին։ Խլուրդը ամենեւին լոյսի կարօտութիւն չէ զգում։ Հողի տակ, ջրի տակ գտնվող շատ էակներ լոյսի պահանջ չունեն և չեն ցանկանում...

—Ներողութիւն, պարոններ, միջամտեց Սարինեանը, ձեր ասածները յամենայն դէպս ա-

digitised by A.R.A.R.@

մենեւին չեն հերքում իմ հիմնական միտքը, թէ ցերեկով լոյս է, իսկ գիշերով խաւար…

—Գուցէ, վրա բերեց հակաճառողներից առաջինը, գուցէ այդպէս է, բայց ինչ էք դուք ուզում դրանով ասել։ Նոյն իսկ մենք՝ մարդիկս՝ այժմ աւելի գիշերով ենք ապրում, քան ցերեկով։ Մեր թատրոնները, մեր ակումբները, մեր տպարանները, մեր ճեմելիքները իրանց կեանքը առաջ են տանում գիշերները։

Սարինեանը բորբոքվեց և սկսեց զանազան բացատրութիւններ տալ։ Նրան օգնեցին և ուրիշները։

Սակայն ընդհանուր տպաւորութիւնը աննըպաստ դուրս եկաւ։ Թէև բոլորը համաձայն էին զեկուցման հիմնական մտքի հետ, թէև նոյն իսկ հակառակորդները ասում էին, որ նրանք էլ համարում են, որ ցերեկով լոյս է, իսկ գիշերով խաւար, բայց և այնպէս կարծես թէ Սարինեանը վատ բան էր արել, որ վերցրել էր իր վրա այդ մտքի պաշտպանութիւնը։

—

Երկրորդ զեկուցումը աւելի և պարզամիտ մի բան էր, բայց նոյնպէս հանդիպեց խիստ յարձակումների։ Զեկուցանողը՝ Կողպէքեան՝ ապացուցանում էր իր զեկուցման մէջ, որ ամեն մարդ իրաւունք ունի ուտել և խմել։

Կողպէքեանը բացատրում էր, որ եթէ գտնվի մի այնպիսի մարդ, որ չուտէ և չը խմէ, նա անպատճառ կը մեռնի, բայց հակառակորդները պահանջեցին, որ նա դրական ապացոյցներ բերէ։

—Միթէ ուտող և խմողը չէ մեռնում, հարցրեց հակաճառողներից մէկը։

—Միթէ շատ ուտող մարդիկ միշտ լաւ են

digitised by A.R.A.R.@

ապրում, առարկեց միւս հակառակորդը։ Միթէ մեզ յայտնի չեն մի շարք դէպքեր, որ մէկը ուտում է շատ և մնում է լղար, իսկ միւսը թէև քիչ է ուտում, սակաւապէտ է, բայց առողջ է և ամրակազմ։

—Միթէ ուսումնական փիլիսոփայ մարդիկ, աւելացրեց երրորդը, որոնց խելքի վրա մենք հիմնում ենք, աւելի լաւ են ուտում քիւրդից ու լեզգուց. միթէ այդ խելօք գօգրաները շատ անգամ լղար մարդիկ չեն լինում։

Կողպէքեանը բողոքեց այդ բոլոր ասածների դէմ և ապացուցեց, որ նրա հիմնական միտքը ոչ միայն ուղիղ է, այլ և նա պէտք է մի տեսակ սկզբունք համարվի հասարակական-տնտեսական հարցեր քննելու և վճռելու ժամանակ։

—Ամեն մարդ իրաւունք ունի ուտել և խմել, չեշտեց նա, դա նշանակում է, թէ ամեն մարդու համար պէտք է ապահովված լինի ուտել—խմելու որոշ աստիճանը. դա նշանակում է, որ հասարակութիւնը չէ կարող հանդիստ և անտարբեր մնալ, քանի որ դեռ կան անհատներ և նոյն իսկ ամբողջ խմբեր, որոնց ուտել-խմելու հիմնական կարիքը անբաւարար վիճակի մէջ է գտնվում։

Կողպէքեանին օգնեցին և միւսները։ Հակառակորդները նորից կատաղեցին և այնպիսի բղաւոց գցեցին, որ թէև ապացուցվեց Կողպէքեանի հիմնական մտքի ճշմարտութիւնը, բայց զեկուցման պաշտպանութիւնը կարծես թունաւորվեց և մի ինչ որ ստուերի տակ գցվեց։

—

Երրորդ զեկուցումը առիթ եղաւ աւելի ևս մեծ վիճաբանութեան։

Ըստ երևոյթին հարցը ամենապարզ և միա-

digitised by A.R.A.R.@

միտ հարցերից էր, բայց նա առիթ դարձաւ մի շարք թիւրիմացութիւնների և տաք խօսակցութիւնների։

Զեկուցանողը՝ Կարոտեան՝ խօսում էր մայրենի լեզուի նշանակութեան մասին։ Նա ապացուցանում էր, որ մանուկը իր մայրենի լեզուով աւելի հեշտ կը հասկանայ ամեն բան և աւելի հեշտ կերպով կը սովորէ ուրիշ լեզուներ, քան եթէ նրան համր դարձնեն և ստիպեն, որ նա նորից իրան երեխայ երևակայէ և նորից սկսէ սովորել ամեն բան։

—Դուք սխալվում էք, յայտնեց առաջին հակառակորդը, այդ ձևը, որ դուք համր էք անուանում, այժմ սրբագործված է Ամերիկայում և Եւրոպայում, նա կոչվում է նոյնպէս բնական մեթօդ։

—Այդ մեթօդը, միջամտեց միւսը, բարերար հետևանքներ է տուել։ Նրա հնարողն է Բերլից, որի ձեռնարկները համարվում են ամենալաւերը։

—Քանի որ այդ մեթօդը կայ,—խօսեց երրորդը,—այլ ևս ինչ խօսակցութիւններ կարող են լինել մայրենի լեզուի օժանդակութեան մասին։

Կարոտեանը հերքեց հակաճառողների ասածները, ապացուցեց, որ համր կամ բնական կոչված մեթօդը կարող է օգտաւէտ լինել, եթէ նա չը մերժէ և չը բացասէ մայրենի լեզուի նշանակութիւնը, այլ նրա հետ միանայ, կցորդվի և բերև մի գործնական եղանակ, գործադրվի կեանքի մէջ։

—Ինչու չօգտվենք երեխայի արդէն ունեցած գիտութիւնից, ինչու այն, ինչ որ կարելի է մի խօսքով հասկացնել, ձգձգենք ժամերով և

digitised by A.R.A.R.@

օրերով և չարչարենք երեխային։ Տարրական դպրոցում երեխան առանց այն շատ դժուարութիւններ պէտք է յաղթահարէ, ինչո՞ւ նրան չարչարենք և տանջենք, մանաւանդ որ կրթութիւնը չարունակվում է շատ կարճ միջոց։

Խօսեցին, վիճեցին, միմեանց հերքեցին։ Ճիշդ է, ընդհանուր եզրակացութիւնն այն էր, որ Կարօտեանի հիմնական միտքը շատ պարզ է և զուտ ճշմարտութիւն է։ Այդ բանը չէին հերքում նոյն իսկ հակաճառողները։

Բայց զեկուցման պաշտպանութիւնը թողեց ծանր տպաւորութիւն։ Կարծես նա չը պէտք է պաշտպանվէր և եթէ պաշտպանվեց՝ դա մի ընդհանուր ուրախութեան առիթ չը պէտք է լինէր։

Ինչո՞ւ։ Ոչ ոք չուզեց այդ հարցը պարզել։

—

Այդ օրվայ զեկուցումներից յետոյ քիչ մնաց, որ սկսէի ամեն բանի վրա կասկածով նայել, իմ տեսածներին և լսածներին չը հաւատալ... Գուցէ տեսածս չեմ տեսել, լսածս չեմ լսել։

Բայց կարողացայ ինձ պահել։

Այն, ինչ որ այնքան պարզ էր, որ նոյն իսկ ապացոյցի կարօտ չէր, առաջ էր բերում ջերմ հակաճառութիւն և դիմադրութիւն։

Այդպէս են աշխարհի բաները։

digitised by A.R.A.R.@

CXXIX

(2 փետրվ. 1903 թ., «Մշակ» № 24)

Մի օրիորդ վշտացել է ինձնից։

Վշտացել է այն պատճառով, որ ես նրան անտես եմ արել։

Ահա ինչ է գրում ինձ նա իր նամակում, որ ես ստացայ քաղաքային պօստով.

Յարգելի պարոն.

Ես Ձեզանից վշտացել եմ։ Թէ ինչու՝ դուք կիմանաք այս նամակից.

Ես Ձեզ հետ պատահեցի երեք պարահանդէսում և Ձեր առանձին հետաքրքրութեան առարկաներից մէկը եղայ։ Այդ ես ասում եմ համարձակօրէն։

Առաջին պարահանդէսում, որ կազմակերպել էր Հայուհեաց ընկերութիւնը, ես ներկայացայ իբրև լուրջ, դաստիարակված տան օրիորդ, գեղեցիկ և չքեղ հագուստով. Երկրորդ պարահանդէսում, որ դեկադենտական անունն էր կրում, ես չարաճճի էի և սիմվոլիք։ Այդտեղ ես հագնված էի աններելի կերպով խայտաբղէտ։ Իմ զգեստի մէջ ես միացրել էի աշխարհի բոլոր մասերը՝ Եւրօպան Ջինաստանի և Եապօնիայի հետ, Ամերիկան Հնդկաստանի և Աֆրիկայի հետ և ամենից շատ ժլատ էի միայն Կովկասի վերաբերութեամբ։ Երրորդ պարահանդէսում, որ ուսա-

digitised by A.R.A.R.@

նողների օգտին էր, ես հագնվել էի հասարակ և անպաճոյճ՝ ուսանողուհու նման, բայց խուսափել էի համարձակ շարժումներ, փիլիսոփայական նայուածք և պեսսիմիստական ժպիտներ։

Դուք ինձ հետ ամեն տեղ երկար ու բարակ խօսեցիք։ Դուք գտաք իմ զգեստները բնորոշ և օրիգինալ։ Դուք յայտարարեցիք իմ զուարճախօսութիւնը և սրախօսութիւնները շատ շնորհալի։ Եւ սակայն դուք իմ մասին ոչ մի տող չը գրեցիք, ոչ մի ակնարկ չարեցիք։ Մինչդեռ ուրիշների մասին դուք այնքան պերճախօս եղաք։

Օրիորդ Մ.

Նամակը ինձ զարմացրեց։ Ես չէի կարծում, թէ մի այդպիսի առարկայի մասին նամակ կը ստանամ։

Նամակ զգեստների մասին։

Վայր գցեցի նամակը և զբաղվեցի ուրիշ գործերով։

Սակայն մի քանի ժամանակից յետոյ նորից յիշեցի նամակը։

Յիշեցի և օրիորդին։ Նա պատկերացաւ իմ առաջ այնպէս, ինչպէս ես նրան տեսել էի պարահանդէսներում։ Ես սկսեցի մտաբերել նրա խօսքերը։

—Ես ապրում եմ այս երեւոյթներով, ասաց նա ուսանողական պարահանդէսում։

—Ինչպէ՞ս թէ ապրում էք, հարցրի ես։

—Իմ կեանքը անցնում է դատարկ ու անբովանդակ, բացատրեց նա, բայց որ ամենից սարսափելին է, տաղտկալի և միօրինակ։ Ես ինձ մոռանում եմ այսպիսի երեւոյթներում և երբ պատրաստվում եմ այդպիսի երեւոյթների

digitised by A.R.A.R.@

համար, մոռանում եմ իմ ձանձրալի կեանքը, որովհետև զբաղվում եմ զգեստներ կարել տալով, որոնց վերաբերութեամբ մշակել եմ շատ նուրբ ճաշակ։

—Ինչո՞ւ չէք զբաղվում մի որ և է գործով, հետաքրքրվեցի ես։

Պարերը թոյլ չը տուին, որ մենք շարունակենք մեր խօսակցութիւնը։

Երբ միւս անգամ պատահեցինք դահլիճում, նա ինձ կանգնեցրեց։

—Սպասեցէք մի րօպէ, ասաց նա, դուք ինձ առաջարկում էք զբաղմունք։ Իսկ ես որոնում եմ զուարճութիւն։ Ես ուզում եմ ինձ մոռանալ և հարբած դրութեան մէջ զգալ։ Ես յետոյ գուցէ կը սիրեմ աշխատանքը, բայց այժմ իմ հոգին ուրիշ բան է որոնում։ Ես ուզում եմ փայլել և հրճվել, հիացնել և հիանալ, շլացնել և շլանալ։

—Մինչև Երբ, ժպտացի ես։

—Ես ինչ գիտեմ, բարկացած ասաց նա։ Այդ հարցերը աւելորդ են։ Ես ապրում եմ և չեմ ուզում մեռնել։ Ինչո՞վ եմ ես պակաս ուրիշներից։

—Իրաւունք ունէք։

—Հաւանում է՞ք դուք իմ զգեստները և իմ ճաշակը։

—Այո։

—Ահա այդ այոներն են իմ այժմեան մխիթարութիւնը, բացականչեց նա։

—Բայց...

—Գիտեմ, կտրեց խօսքս օրիորդը, դուք կասէք թէ ուրիշ բաներով պէտք է պարծենալ. գուցէ այդպէս է. սակայն ես մեղաւոր չեմ, որ այդպէս չեմ։

Ո՞վ է մեղաւոր։

Այդ հարցը վճռելու ժամանակ չունեմ։ Թող ուրիշները իրանք քննեն և լուծեն։

digitised by A.R.A.R.@

CXXX

(9 փետրվ. 1903 թ. «Մշակ» № 30)

Երէկ երեկոյեան ես հիւր էի մի տան մէջ, ուր բարեկենդանի առիթով երեկոյթ էր սարքուած։

Հիւրերի մի մասը զբաղուած էր թղթախաղով, միւսը ժամանակ էր անցկացնում զանազան տեսակ զուարճութիւններով։

Կային երգողներ, պարողներ, աշխոյժ խաղերի տեղեակ անձեր։ ժամանակը անցնում էր ուրախ։

Մի քանի զուարճութիւններ անելուց յետոյ՝ մէկը առաջարկեց պատգամախօս կամ «օրակուլ» խաղալ։

—Լաւ կը լինի, համաձայնեցին միւսները։

—Խաղանք, խաղանք, հաստատեցին մնացածները։

Մէկը պէտք է «պատգամախօսի» պաշտօն կատարէր, իսկ մնացածներս մօտենայինք նրան և պատգամներ կամ գուշակութիւններ լսէինք։

Ոչ ոք չէր ուզում պատգամախօսի դեր վերցնել իր վրայ։

—Շատերը նեղանում են, երբ նրանց համար լաւ գուշակութիւն չէք անում, առարկեց մէկը։

—Ես սիրում եմ աւելի բացասական բաներ ասել, քան շողոքորթութիւններ շռայլել, նկա-

digitised by A.R.A.R.@

տեց երկրորդը, ուստի շատերը կարող են վիրաւորվել։

Միւսներն էլ հրաժարվում էին՝ ուրիշ առարկութիւններ առաջ բերելով։

Վերջապէս համաձայնեց պատգամախօս լինել Սալեմեանը։

—Ես ինքս ոչինչ չեմ հնարի ինձնից, յայտնեց նա, այլ կտորներ կը բերեմ զանազան ոտանաւորներից։ Դրանով ես ինձ ազատած կը լինեմ պատասխանատուութիւնից։

—Թող այդպէս լինի, բացականչեցին միւսները։

—Եւ, ի հարկէ, աւելացրեց Սալեմեանը, ոչ ոք չը պէտք է նեղանայ, եթէ ոտանաւորները դուր չը գան սրան կամ նրան։

—Ի հարկէ, ի հարկէ։

Պատգամախօսը նստեց սենեակի մէջտեղում դրած մի աթոռի վրա։ Տանտիկինը գցեց նրա գլխին մի հաստ շալ, որպէս զի պատգամախօսը ոչ ոքի չը տեսնէ։

Նախ մօտեցաւ պատգամախօսին մի հասակաւոր ամուրի տղամարդ ու մատը դրեց նրա գլխին։

—Հետաքրքրական է, թէ ինչ պէտք է ասէ այս ծերացած ջահէլին, բացականչեցին երիտասարդները։

Պատգամախօսը հազաց։

—Սրան ես կասեմ, սկսեց պատգամախօսը։

Տարի մը ալ անցաւ
Գնաց սահեցաւ։

—Վատ չէ, վատ չէ, հրճվեցին բոլորը։

Մօտեցան պատգամախօսին երեք երիտասարդներ, որոնցից երկուսը նորերս ձայնա-

digitised by A.R.A.R.@

ւոր էին ընտրվել, իսկ երրորդը հին ձայնաւոր էր։ Նրանք երեք կողմից դրին իրանց մատները պատգամախօսի գլխին։

—Ձեզ կասեմ հետևեալը, արտասանեց պատգամախօսը.

Դուք մէջէն, ես քովէն
Անցնինք դիմաց, փոխենք տեղ,
Նոյն ձեւով տեղերնիս
Դառնանք միատեղ։
Ալեծածան մէկ մ'առաջ,
Մէկ մ'ալ ետև քայլ փոխենք,
Ապա տանք աջ ի յաջ
Կլոր մը ճեմենք։

—Սա կադրիլ է, ճչաց մի օրիորդ, սա մեզ պէտք էր տալ։

—Չէ, այդ շատ սազում է ձայնաւորներին, բացականչեց մի կալուածատէր։

Մի մանաւոր փ ա ս տ ա բ ա ն մօտեցաւ։ Պատգամախօսը ասաց նրան՝

Տեղը եկաւ հայ է նա,
Տեղը եկաւ այլազգի.
Իրօք ոչ այդ և ոչ այն է,
Այլ ծնունդ մի նոր ազգի։

—Շատ նամաղուլ ես անում, ասաց փաստաբանը ու հեռացաւ։

Մօտեցաւ մի տիկին, նախկին գեղեցկուհի։ Պատգամախօսը ասաց՝

Կար ժամանակ, որ ես էլ
Շքեղազարդ հարսի պէս՝
Հազար ու բիւր պճրանքով
Փախչում էի ափերէս։

Տիկինը գոհ մնաց և ժպտաց.

—Բայց գիտէք, շշնջաց իմ ականջին հարե-

digitised by A.R.A.R.@

ւանս, տիկինը այժմ էլ կարծում է, թէ դեռ նա չէ կորցրել իր հրապոյրները։

Մօտեցաւ մի ուսանող։

Պատգամախօսը ասաց՝

Հայրս անդադար ինձ գրում է
«Որդի ջան շուտ աւարտէ,
Ժամանակդ արագ անցնում է,
Տես գրերդ լաւ սերտէ»։
Իսկ նրա պարոն որդին
Կոնծում է կրամբամբուլին։

Ուսանողը կարմրեց։ Միւսները ծիծաղեցին։

Մօտեցաւ մի ուրիշ ուսանող, որ ցանկանում էր իր բաղդը փորձել։

Պատգամախօսը այս անգամ դրատեց բա՛նը.

Այսուհետև Սէր դէպի գիտութիւն,
Այսուհետև Կամք և Աշխատութիւն,
Հանդիսացէք Լոյս և Ճշմարտութիւն,
Յաղթիր, խորտակիր Բանականութիւն
Մոլար կարծիքներ, որդիք խաւարի։

Մօտեցաւ տան երեխաների դաստիարակչուհին։

Պատգամախօսը՝

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,
Ախորժ ընտանի իմ հոգու համար,
Առաջին դու խօսք ականջիս հասած
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած։

—Ի՞նչ սաղեց, բացականչեցին երիտասարդները։

Տանտիկինը շփոթվեց։ Դաստիարակչուհին հեռացաւ։

Հիւրերի մէջ կար և մի վարդապետ, որ մինչև այդ ժամանակ գտնվում էր կից սենեակում և զբաղված էր խօսակցութեամբ երկու պարոնների հետ։ Նա հետաքրքրվեց պատգամա-

digitised by A.R.A.R.@

խօսի ոտանաւորներով և ցանկացաւ իր բաղդն էլ փորձել։

Պատգամախօսը երբէք չէր սպասում այդպիսի հիւրի կամ գուցէ նրա արհեստը նրան դաւաճանել էր։ Նա ասաց՝

Վկայ է աստղը կէս գիշերային,
Վկայ են ելքն ու մուտքն արևին,
Որ ոչ մի իշխան Պարսից աշխարհին
Չէ տուել համբոյր այդպէս աչերի։

Վարդապետը կարմրեց. Նա փոշմանեց իր մանակցութեան համար։ Երիտասարդների չըրթունքին խաղաց չարաճճի ժպիտ։ Դահլիճը լցվեց քըքիջով։

Հիւրերի մէջ եղած մի դերասան մօտեցաւ պատգամախօսին և ստացաւ հետևեալ նուէրը.

Անցեալ գիշերն երազում
Դովլաթ բաժանողը մենակ
Շտապով ինձ մօտ էր վազում՝
Ձեռին բռնած փողի տոպրակ.

—Երազում, դա էլ մեծ մխիթարութիւն է, ասաց դերասանը և յետ գնաց։

Մի թիւրքահայ ցանկացաւ իր բաղդը փորձել։ Պատգամախօսը աւետեց՝

Թէ քաջ պատերազմես՝
Կը տան մեծ պարգև,
Թէ ոտքդ կորցնես՝
Կասեն «մնաք բարև»։

Հիւրերի մէջ եղած մի վրացի ցանկացաւ իմանալ, թէ ինչ ունի նրա համար պատգամախօսը և ստացաւ հետևեալը՝

Տուր ինձ քո ձեռքդ, եղբայր ենք մենք,
Որ մըրկաւ էինք զատուած.
Բաղդին ամեն ոխ չարանենք
Ի մի համբոյր ցրուին ի բաց։

digitised by A.R.A.R.@

Պատգամախօսին մօտեցաւ մի պարոն, որ ստացել էր հօրից մեծ ժառանգութիւն և որի մեծ մասը արդէն կերել—պրծել էր։ Այժմ սկսել է խելօքանալ։ Նա սպասում էր, որ նրան աւետեն, թէ նա նորից պէտք է ստանայ մի նոր ժառանգութիւն։ Պատգամախօսը ասաց՝

Շատ ժամանակ դեռ չէ անցել,
Երբ նա փառքով ու պատւով
Ման էր գալիս փողոցներում
Իր սեփական կառքերով։

Պարոնը ծիծաղեց։

—Իմ կառքը դեռ չէ ծախվել, բացականչեց նա։

—Բայց շուտով կը ծախվի, փսփսացին հարևանները։

—

Օրիորդները և տիկինները առհասարակ չէին վստահանում դիմել պատգամախօսին։ Նրանք երկիւղ էին կրում, որ ստանան անախորժ գուշակութիւններ կամ ցանկութիւններ։

—Պարոն պատգամախօս, ասաց երիտասարդներից մէկը, կարելի՞ է արդեօք ոչ ներկաների մասին պատգամներ հարցնել։

—Կարելի է, պատասխանեց նա, բայց դուք պէտք է թղթի վրա գրէք, թէ ում համար էք պատգամ հարցնում և ես այն ժամանակ կը պատասխանեմ։

Երիտասարդը գրեց թղթի վրա «որբերին». պատգամախօսը ասաց.

Մօրս համբոյրը ես զգացի,
Բայց ափսոս որ երազ էր։

Երիտասարդը մօտեցրեց մի ուրիշ թուղթ, որի վրա նշանակված էր «մակեդոնացիներ»։ Պատգամախօսը ոգևորվեց՝

digitised by A.R.A.R.@

Սրտում վրէժ, կարիճի պէս
Դիմում են վրանը ոսոխի.
Որպէս տան մէջ, նոյնպէս կռւում
Կանգնած են հեզ և հպարտ.
Գնդակներին կուրծք են ուղղում։

Երիտասարդը նկարեց մշեցու պատկեր և գրեց պատգամախօսի գլխին։ Պատգամախօսը ասաց.

Արդեօք գալու է մի օր ժամանակ.

Երիտասարդը գրեց թղթի վրա «դիպլոմատիային»։ Պատգամախօսը արտասանեց.

Ցորէս էկաւ մէկ մէկ ուտի
Աղուէսն էկաւ լանճիկ լանճիկ
Ոտեր ունէր կարճիկ կարճիկ
Սիրտը ուզեց հաւի քարճիկ։

Երիտասարդը գրեց թղթի վրա «Բեռլինի դաշնագիրը ստորագրողներին» բառերը։ Պատգամախօսը ցնցվեց.

Ինձ ասացէք, ով ձեզանից,
Որի մէջ մարդու սիրտ կայ,
Զը խեղդվելով արտասուքից
Կարող է մնալ անզգայ
Տեսանելով այս ողբալի
Սրածութեան աւերած։

«Նահապետական կառավարիչներին»։

Էժան տեսայ, էնդուր առայ կաղ էծը,
Ծուլծուլ էլաւ, տուեց մաղալլաղ էծը,
Մօլլի նման լաւ էր ասում հաղ՝ էծը
Շատ էր քէֆով, խմել էր արաղ էծը։

«Պատմագիրներին»

Հին հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պտրում եմ.

«Բողոքաւորներին և խնդրատուներին»։

Թէ վուր ձեռիդ քիսա բռնած

digitised by A.R.A.R.@

Պարոնին փուղ բերիլ ես,
Փառք ու պատուով ներս մտնում իս,
Գլխի վրա տեղ ունիս.

«Ազգատեացներին՛»
Հագիւ թէ ծովի ափին էր հասած
Իր սիրուն քրոջ գլորեց նա ցած։

«Մշակ» լրագրին՝
Խիզախ անմիտ պատանի,
Ինչո՞ւ նիրհս դարեոր
Վրդովում ես, նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր։

—

Պատգամախօսը յոգնեց չալի տակ երկար մնալուց և ոտանաւորներ յիշելուց։

Մենք փոխեցինք խաղը, չնորհակալութիւն յայտնեցինք Սալեմեանին և դիմեցինք ուրիշ զուարճութեան, այն է «կարծիքներ» կոչված խաղին։ Մեզնից մէկը հեռանում էր սենեակից և նրա մասին մնացածները յայտնում էին կարծիքներ։

Այդ խաղի մասին ես ոչինչ չեմ յայտնի։ Կարծիքները նոյն անձի մասին այնքան հակասական էին, որքան մեր լրագիրների րեցենզենտների կարծիքները մի և նոյն ներկայացման, երգիչների և դերասանների մասին։

CXXXI

(16 փետրվ. 1903 թ., «Մշակ» № 34)

—Դահլիճ չը գտանք, ասաց ինձ երէկ դերասաններից մէկը, դահլիճ, որտեղ մենք այս շաբաթ տայինք մի քանի հայերէն ներկայացումներ։

—Ինչո՞ւ նախօրօք չէիք հոգացել այդ մասին, հարցրի ես։

—Անկարելի էր, յայտնեց նա, թատրօն վերցնել ցանկացողները յանկարծ շատացան և մենք մնացինք դուրս։ Իսկ աջողութիւն կունենայինք։ Եթէ այս բարեկենդանի վերջին շաբաթվայ ամեն օրն էլ ներկայացումներ տայինք, միշտ թատրօնը լիքը կը լինէր հանդիսականներով։

Արդարև հայոց վերջին չորս ներկայացումները այնքան բազմամարդ էին, որ ցանկացողների մի մասը չը կարողացաւ տոմսակ ճարել։

—Ցաւալի է, յայտնեց նա, որ չը կարողացանք բաւարարութիւն տալ հասարակութեան պահանջին, բայց ուրախալի է, որ այդ պահանջը գոյութիւն ունի և օրէցօր մեծանում է։

—

—Իսկ առհասարակ որքա՞ն վնաս ունեցաւ հայոց թատրօնը այս տարի, հետաքրքրվեցի ես։

—Մօտ 3500 րուբլի, գուցէ փոքր ինչ աւելի, պատասխանեց նա։ Եթէ թատրօնի վարձը

այնքան մեծ չը լինէր, որքան տրվում էր, մենք անկասկած վնաս չէինք անի ամենևին։

—Մի՞թէ։

—Այո։ Դատեցէք ինքներդ։ Արտիստական ընկերութիւնը տուել էր իր թատրոնը Կրասովին 225 ռուբլիով օրը, իսկ Կրասօվը իր կողմից տալիս էր մեզ նոյնը հարիւր ռուբլի աւելի թանգ։ Ձմեռվայ ընթացքում մենք տուինք երեսուն երեք ներկայացում։ Ուրեմն բոլոր ներկայացումների համար մենք տուինք թատրոնին աւելորդ 3300 ռուբլի, որ մերձաւորապէս մեր ամբողջ վնասի գումարն է կազմում։

—Ճիշդ է։

—Ուրեմն, շարունակեց դերասանը, եթէ մենք կարողանանք առանց միջնորդների գործ կատարել և ապահովենք թատրոնական դահլիճը մեզ վրա էժան գնով, այն ժամանակ զգալի կերպով նուազեցրած կը լինենք մեր գալիք վնասների քանակը։

Անկասկած, դա մեծ տնտեսութիւն է, սակայն պէտք է ժամանակ չը կորցնել և նախօրօք պայմանաւորվել դահլիճի վերաբերութեամբ։

—

Ինձ շատ հետաքրքրում է ապագայ հայոց ներկայացումների ռեպերտուարը՝ պիեսների ցուցակը։

—Դա, յայտնեցի ես, շատ կարևոր և էական մի հարց է, որի աջող լուծումից է կախված ապագայ ներկայացումների աջողութիւնը։

Դերասանը չը կարողացաւ որոշ կերպով յայտնել, թէ ինչ միջոցներ են ձեռք առնված՝ ռեպերտուարը հարստացնելու նպատակով։

—Դուք պէտք է կարողանաք, շարունակեցի ես, հասարակութեան մէջ հետաքրքրութիւն

digitised by A.R.A.R.@

պահպանել դէպի թատրօնը։ Ինչով սակայն պէտք է պահպանէք։ Դուք չէք կարող մեզ տալ նոր դերասանական խմբեր։ Դուք չէք կարող մեզ հետաքրքրել գաստրօլներով, որովհետև մեր դերասանական ոյժերը շատ սակաւաթիւ են, յայտնի են բոլորին և լաւագոյնները արդէն մեզ մօտ են։ Դրամատիկական ներկայացումները օպերաներ չեն, որ գրաւեն իրանց եղանակներով և դիմանան շատ կրկնութիւններին։ Ուրեմն մնում է թարմացնել ռեպերտուարը և հետաքրքրել հանդիսականներին նորանոր պիեսներով։ Անկասկած դա աշխատանք կը պահանջէ, դա ծախքեր կը պահանջէ։ Բայց պէտք է չը խնայել այդ բանի համար ոչ աշխատանք, ոչ ծախքեր։

—

Հայերէն ներկայացումները իրանց կարգին։ Բայց Թիֆլիսը այս տարի առհասարակ շատ աղքատ էր դրամատիկական ներկայացումներով։

Իսկ վերջին երկու շաբաթվայ ընթացքում այստեղ տիրում էր մի ինչ որ թատրօնական տենդ։

Հիւր էր եկել դերասանուհի Կօմիսսար-ժեվսկայեա, որի մասին առաջուց տարածվել էին շատ նպաստաւոր լուրեր։

Ես կը խօսեմ յետոյ այդ դերասանուհու մասին։

Թատրօնները մեծ մասամբ լիքն էին լինում։

Հասարակ ժողովրդի և աշխատող դասակարգի համար տրվում էին ներկայացումներ Հաւլաբարի նորաբաց թատրօնում, Աւչալեան ժողովրդական թատրօնում և երկաթուղիական արհեստանոցների բեմի վրա։ Կրասօվը շարունակում էր ռուսաց ներկայացումները, վրացի-

digitised by A.R.A.R.@

ները չաբաթը երկու անգամ գրաւում էին վրացիներին դէպի իրանց ներկայացումները՝ Թիֆլիսի ժողովարանում, Վէտցելի թատրօնում կազմվում էին սիրողների ներկայացումներ։

Ժողովրդական թատրօնի գաղափարը սկսում է կամաց-կամաց զարգացում ստանալ Թիֆլիսում և գրաւել ինտելիգէնտ դասակարգի առանձին ուշադրութիւնը։

Դա շատ ուրախալի է։

Եւ անկասկած նա կը ստանայ հաստատ կազմակերպութիւն, եթէ... եթէ գործողների մէջ եռանդը չը պակասէ։

—

Դերասանուհի Կօմիսարժեվսկայեան մի օտարոտի բաղդի հանդիպեց Թիֆլիսում։

Նրա տուած ներկայացումները լիքն են լինում հանդիսականներով, բայց թատրօնում տիրում է մի ինչ որ սառնութիւն և զսպված դրութիւն։

Ծափահարութիւններ կամ չը կան, կամ շատ քիչ են լինում։

Խօսում են նրա խաղի մասին, քննադատում են ամեն մի մանրամասնութիւն վիճում են դերի լաւ և վատ ըմբռնման մասին, բայց չեն ոգևորվում, չեն գժվում և չեն համակվում բուռն զգացմունքներով։

Նրա խաղի մասին կարծիքները մեծ մասամբ անվճռական են։

Անկասկած, նա տաղանդաւոր դերասանուհի է, այդ զգում են հանդիսականները, բայց չեն կարողանում որոշել նրա տաղանդի աստիճանը և որակութիւնը։

Զուդերմանի «Թիթեռների կռիւ» պիեսի մէջ

digitised by A.R.A.R.@

Կոմիսարժևվսկայեան խաղում էր Ռօզիի դերը եւ վատ չէր խաղում։

Բայց առաջնակարգ անուանել այդ խաղը ոչ ոք չէր վստահանում։

Ինչո՞ւ։

Որովհետև մի քանի չարաճ սրանից առաջ Թիֆլիսի հասարակութիւնը նոյն դերում տեսել էր դերասանուհի Գօնդատտիին, որը ստեղծել էր Ռօզիից մի հրաշալի, գրաւիչ և սիրելի տիպ՝ լի կենսունակութեամբ և մանկական թարմութեամբ։

Ցայտնի «Դարբնապետ» պիեսի մէջ Կոմիսարժեվսկայեա դուրս եկաւ Կլարայի դերում և տեղ-տեղ տպաւորութիւն գործեց, բայց ընդհանրապէս ոչ։

Թիֆլիսի հասարակութիւնը տեսել է Կլարայի դերի մէջ այնպիսի փայլուն կատարողի, ինչպէս է Պասխալօվա, որը անցեալ տարի տուեց մի քանի ներկայացումներ Թիֆլիսում և պատկերացրեց Կլարային բնորոշ հարազատութեամբ։ Մեր հայ բեմի դերասանուհի Սիրանոյշը կատարում է Կլարայի դերը, անկասկած, աւելի աջող։

Կոմիսարժեվսկայեան ներկայացրեց Կլարային ոչ իբրև հպարտ, ազնուատոհմ մի օրիորդի, այլ մի հասարակ վիրաւորված աղջկայ, որի մէջ խօսում է վրիժառութեան զգացմունքը։

Նոյնը պէտք է ասել Մագդայի մասին Զուդերմանի «Ծննդավայր» պիեսի մէջ։

Պօտապենկօի «Դիւթական Աչխարհ» պիեսի մէջ Կոմիսարժեվսկայեա հանդէս եկաւ Նատալիայի դերում։

Նա ուժեղ և անմոռանալի տպաւորութիւն թողեց երրորդ գործողութեան վերջում։ Այդ-

digitised by A.R.A.R.@

տեղ նա արտայայտեց տարերային բուռն զգացմունքներ։

Սակայն տիպի ընդհանուր ըմբռնողութիւնը չը գոհացրեց հանդիսականներին. Դերասանուհու ներկայացրած Նատալիան աւելի կոպիտ, աւելի անկիրթ, աւելի հասարակ աղջիկ էր, քան այն, ինչ որ աչքի առաջ է ունեցել հեղինակը։ Պաշխալօվայի ներկայացրած Նատալիան իր ամբողջութեամբ աւելի հարազատ է, աւելի բնական և գրաւիչ։

Չը նայելով այս բոլորին՝ Կօմիսարժեվսկայեան, անկասկած, տաղանդաւոր դերասանուհի է և Ռուսաստանի դրամատիկական աչքի ընկնող ույժերից մէկը։

Նա ունի որոշ դերեր, որոնց մէջ նա արդարև առաջնակարգ կատարող է, աչքի ընկնող դերասանական ույժ։

Վերցրէք օրինակ Օստրօվսկու «Дикарка» պիեսը, որտեղ նա կատարում էր Վարեայի դերը։ Այդտեղ Կօմիսարժեվսկայեան ցոյց տուեց այնպիսի մի խոշոր տաղանդ, ներկայացրած տիպի մի այնպիսի հաղուագիւտ ըմբռնողութիւն, որ շատ քիչերին է աջողվում։

Կօմիսարժեվսկայեան ուժեղ էր և Զամբերի «Յաւիտենական սէր» պիեսի մէջ Կլարա Շպօրի դերում, «Արտուտիկ» պիեսի մէջ, Օստրօվսկու «Безприданница» պիեսում, նոյնպէս Սուվօրինի «Вопросъ» պիեսի մէջ Վարեայի դերում։

Ուրեմն։

Ուրեմն որոշ դերերում։

—

Համեմատութիւնը հեշտացնում է բնորոշելը։ Ես կը համեմատեմ երեք դերասանուհու.

digitised by A.R.A.R.@

Այդ համեմատութեամբ ես չեմ ուզում խօսել նրանց տաղանդի աստիճանի, խորութեան, ոյժի և մեծութեան մասին։ Ոչ։ Ես միայն մըտադիր եմ որոշել տաղանդի որակութիւնը, նրա արտայայտութեան բնաւորութիւնը։

Այդ երեք դերասանուհիներն են՝ Կօմիսարժեվսկայեա, Պասխալօվա և Սիրանոյշ.

Նրանք մեզ ծանօթ են. նրանց էլ համեմատութեան կառնենք։

Կօմիսարժեվսկայեան ուժեղ է այնտեղ, որտեղ պէտք է յայտնել բողոք, հիասթափութիւն, հեգնութիւն և ծաղր, որտեղ պէտք է կծու խօսքերով ոչնչացնել դիմացինին, որտեղ կին մարդը ներկայանում է սնված ընտանիքից դուրս, իբրև գնչուի զարմ, իբրև բնութեան զաւակ, իբրև տղամարդ՝ չենթարկվող մեղկ քնքշութիւններին։

Պասխալօվան ուժեղ է այնտեղ, ուր պէտք է բանալ հոգու անվերջ ուրախ և տխուր զեղմունքներ, չարժել սրտի ամեն մի լարը, արտայայտել տանջված սրտի խորին կսկիծ, յուսահատական ճիչ արձակել, մեռնել, նորից որոնել, նորից կեանք ստեղծել և նորից ապրել։

Սիրանոյշը ուժեղ է կլասիքական և ռոմանտիկ դերերում, այնտեղ ուր բնաւորութիւնը, քնքշութիւնը, իդէալականութիւնը և ոգևորութիւնը պահանջում են առաքինութեան և պարտականութեան արտայայտութիւններ։

Կօմիսարժեվսկայեան գործ չունի սալօնում, նրան հարկաւոր է ուսանողական շրջան և վաճառանոցի ժխոր։ Նա բողոքող կին է։ Պասխալօվան ընտանի է և սալօնում և գիւղական տնակում. նա սիրող կին է։ Սիրանոյշը խորթ չէ սալօնին, բայց նա հակված է դէպի ընտա-

digitised by A.R.A.R.@

նիք, դէպի քրոջ և մօր զգացմունքները. Նա գթառատ մայր է, անձնուէր կին է, նա դիւցազնական հերոսուհի է։

Կոմիսարժևսկայեան ցոյց է տալիս վիրաւորված և թունաւորված սէր, լի վրէժով և բողոքով, Պասխալօվան՝ տանջված սէր և փաղաքշանքի մշտական կարօտ, Սիրանոյշը՝ քնքոյշ, հալող-մաշող սէր։

Կոմիսարժևսկայեան նուաճում է ամեն մի բառ, իբրև մի բերդ և հաշիւ է տալիս ամեն մի բառի համար. Նա կարդում է և խօսում է որոշակի։ Պասխալօվան խօսում է համեմատ իր տրամադրութեան արտայայտիչ և գեղեցիկ կերպով, բայց հակված է դէպի վշտալի ձայնը և նւում է. Սիրանոյշը միացնում է բառերը, անուշացնում է նրանց և կարծես երգում է իր նախադասութիւնները։

Կոմիսարժևսկայեան հանդէս է բերում մարդկային տանջանքները բողոքի համար։ Պասխալօվան կեանք է խնդրում և տանջանքի մէջ էլ որոնում է կեանքը իր բնորոշ գծերով։ Սիրանոյշը ընդունում է տանջանքը իբրև բաժին և բաղդի վիճակ։

Ես բաւական եմ համարում այս համեմատութիւնը։

Պարզ է, որ մեզ մօտ եկած հիւրը ունի իր ամպլուան, ունի իր բնորոշ դերերը, որոնց մէջ նա ուժեղ է և աչքի ընկնող դերասանուհի։

---

digitised by A.R.A.R.@

CXXXII

(23 փետրվ. 1903 թ., «Մշակ» № 40)

Խումբ-խումբ բաժանված խօսակցում էինք։ Աննկատելի անցնում էին րոպէները։ Կատակը և լուրջ զրոյցը՝ խառնված միասին՝ աշխոյժ էին տալիս երեկոյթին։

Դա ընտանեկան երեկոյթ էր։ Ժողովվել էին օրիորդներ, տիկիններ, երիտասարդներ, ծնողներ, ազգականներ միասին ժամանակ անցկացնելու, միասին զուարճանալու։

—Կարծես դրանք մեղաւորներ լինեն, շշնջաց իմ ականջին Սալեմեանը։

Նա գլխի շարժումով ակնարկ արաւ մի խմբի վրայ։

—Ո՞ւմ մասին էք խօսում, հարցրի ես։

—Օրիորդների և երիտասարդների, ժպտալով պատասխանեց նա։

—Չեմ հասկանում։

—Ի՞նչ չը հասկանալու բան կայ, վրայ բերեց Սալեմեանը, մօտենանք օրիորդներին, ես պէտք է մի բան ասեմ նրանց։

Մենք մօտեցանք։

—

– Ներեցէք, օրիորդներ և պարոններ, սկսեց Սալեմեանը, ես մի կատակ պէտք է անեմ։

—Համեցէք, համեցէք։

digitised by A.R.A.R.@

—Ցոյս ունեմ չէք նեղանայ, յայտնեց Սալեմեանը։

—Ինչո՞ւ պէտք է նեղանանք, պատասխանեցին օրիորդները, մենք ուզում ենք զուարճանալ, կատակներ լսել, ասել, խօսել, ծիծաղել։

—Ուրեմն լսեցէք։ Դուք այժմ ինձ վրա այնպիսի մի տպաւորութիւն էք թողնում, որ կարծես մեղաւորներ լինէք, սակայն մեղաւորներ մի այնպիսի յանցանքի համար, որ, ի հարկէ, յանցանք չէ։

—Ի՞նչ էք ուզում ասել, լսւեցին հարցական ձայներ։

—Այսօր, շարունակեց Սալեմեանը, բարեկենդանի շաբաթ երեկոն է։ Պասն կատարել այլ ևս անկարելի է։ Եւ ոչ ոք ձեզնից այլ ևս չէ կարող ամուսնութեան վրա յոյս ունենալ երկար ամիսներ։

—Տօ, ինչեր ես դուրս տալիս, միջամտեց երիտասարդներից մէկը։

—Ես սկզբից ասացի, որ կատակ եմ անում, յայտնեց Սալեմեանը։

—Խօսեցէք, խօսեցէք, պահանջեցին երկու օրիորդներ, հետաքրքրական է։

—Մի ամիս սրանից առաջ, շարունակեց Սալեմեանը, մենք ձեզ հետ պատահեցինք դարձեալ մի այսպիսի երեկոյթում։ Այն ժամանակ դուք բոլորդ յոյսեր ունէիք։ Ձեր դէմքերի վրա դրոշմված էին առանձին մի փայլ, ուրախ տրամադրութիւն և ժպիտ։ Իսկ այժմ։

—Այժմ էլ նոյնն ենք, լսւեցին բացականչութիւններ։

—Ոչ, ոչ, բացասեց Սալեմեանը։ Այժմ այն չէ։ Դուք, ճիշդ է, տխուր չէք, զուարճանում էք, ցանկանում էք ձեզ ուրախ պահել, բայց

digitised by A.R.A.R.@

դա այն չէ, ինչ որ կար մի ամիս առաջ։ Չը կայ այն փայլը և լուսաճաճանչ հայեացքը։ Դուք կարծես մեղադրական նստարանի վրա նստած արդարներ էք։ Ինչու, պարոններ, դուք չը պսակվեցիք, ինչու օրիորդներ, դուք մարդու չը գնացիք։ Արդեօք դուք արհամարհեցիք միմեանց, չը հաւանեցիք միմեանց, արդեօք դուք արժանի չէիք միմեանց։

Օրիորդները և երիտասարդները, լսելով Սալեմեանի խօսքերը, ծիծաղում էին, հերքում, երբեմն կարմրում։

—Իմ կատակը վերջացաւ, եզրափակեց Սալեմեանը։ Այժմ ինչ կասէք դուք մեղաւորներդ, կամ ինչպէս ասացի մեղադրական նստարանի վրա նստած արդարներդ։

—

—Ոչ ոք չէր ուզում խօսել։ Սալեմեանը հարցական հայեացք չինեց և պինդ ծիծաղեց։

—Դուք չափազանցրիք ձեր կատակը, յայտնեց օրիորդներից մէկը, դուք լաւ չէք ըմբռնել մեր տրամադրութիւնը։

—Գուցէ, վրա բերեց Սալեմեանը։ Ես էլ ձեզնից մէկն եմ, երիտասարդ, ամուրի, մտածել եմ և մտածում եմ շուտով ամուսնանալու։ Ես ինձ մեղաւոր եմ զգում օրիորդների առաջ, որ մինչև այժմ նրանցից մէկին ես կեանքի ընկեր չեմ ընտրել ինձ համար։ Գուցէ ուրիշները ինձ նման չեն զգում։ Ես պարզախօս եմ։ Դա իմ իրաւունքն է։ Իսկ ձեզնից չեմ կարող պահանջել, որ դուք էլ պարզախօս լինէք, մանաւանդ, օրիորդներ, ձեզնից։

—Այդ թողնենք, առաջարկեց երիտասարդներից մէկը, Փեթակեանը, թողնենք այդ անձնական տրամադրութիւնների փափուկ խնդիրը։

digitised by A.R.A.R.@

Դա իսկապէս միայն կատակի նիւթ կարող է լինել։ Սալեմեանը կատակ արաւ և մենք նրա ասածը իբրև կատակ էլ ընդունեցինք։ Բայց ինձ հետաքրքրում է մի ուրիշ հարց, որի մասին արժէ խօսել։

—Արդեօք շատ լուրջ չէ լինելու, բողոքեց մի օրիորդ, արդեօք աւելի լաւ չի լինի, եթէ լուրջ հարցը գցենք Մեծ-Պասի շլինքին և այն ժամանակ նրա մասին խօսենք։

—Ոչ, ոչ, հակառակեցին միւսները, ուզում ենք լսել հէնց այժմ։

Մեր զրոյց և վիճաբանութիւնը գրաւեցին և միւս խմբերի ուշադրութիւնը։ Կազմվեց մի մեծ շրջան։

—Ինձ հետաքրքրող հարցը հետևեալն է, յայտնեց Փեթակեանը։ Դուք, երիտասարդներ, ցանկանում էք պսակվել, ընտանիք կազմել, զաւակներ ունենալ։ Ձեր մէջ շատ քչերը կան, որոնք վճռած լինեն չը պսակվել։ Ես չեմ հաւատում, թէ ձեր մէջ այդպիսին նոյն իսկ գոյութիւն ունենայ։ Ամուրիները հազուագիւտ են մեր մէջ։ Նոյնը վերաբերում է ձեզ, օրիորդներիդ։ Դուք բոլորդ էլ երազում էք ամուսնական և ընտանեկան կեանքի մասին։

—Ճիշդ է, նկատեց մի հասակաւոր պարոն։

--Այժմ հարց եմ տալիս, շարունակեց Փեթակեանը, ինչո՞ւ, ուրեմն, պսակները մեզանում դժուարութեամբ են կատարվում, ինչո՞ւ երիտասարդները տարէցտարի յետաձգում են իրանց ամուսնութիւնները մինչև որ պառաւում են և այնպիսի հասակ ստանում, որ պէտք է կամ իսկոյն ինչպէս և լինի պսակվել, կամ բոլորովին հրաժարվել ընտանիք կազմելու դիտաւորութիւնից։

Սկսվեց վիճաբանութիւն. Փեթակեանի հարցը բոլորի սրտին էլ մօտ էր:

Ընդհանուր խօսակցութիւնը խանգարվեց. վիճաբանողներին դժուար էր հասկանալ: Նրանք միմեանց խանգարում էին իրանց աղմուկով:

—

—Օժիտն է ամեն բանի մեղաւոր պատճառը, պնդում էին մի քանիսը:

—Պատճառը՝ բարոյականութեան թուլանալն է մեր երիտասարդների մէջ, համոզում էր մի գաւառացի:

—Մեր կրթված օրիորդների չափազանց փափկասուն լինելն է պատճառը, առարկում էին ուրիշները:

—Ընտանեկան հանգամանքները, ասում էին միւսները, փեսացուի ծնողների և ազգականների պահանջները—ահա ինչն է խանգարում վաղ ամուսնութիւնը:

Իւրաքանչիւր մարդ փաստեր էր բերում և աշխատում էր ապացուցանել իր հայեացքի ճշմարտութիւնը:

—Դուք ինքներդ ինչ կարծիքի էք, դիմեցինք մենք Փեթակեանին:

—Ես չը գիտեմ, ասաց նա, բայց ենթադրութիւն կարող եմ անել:

—Արէք:

—Պատճառները, անկասկած, շատ են, յայտնեց նա. կան փեսացուներ, որոնք օժիտ են որոնում, կան այնպիսիները, որոնք ընտանեկան ցաւեր ու հոգսեր ունեն և անկարող են վաղ ամուսնանալ, կան և այնպիսիները, որոնք անբարոյական կեանք են վարում և փախչում

digitised by A.R.A.R.@

են ամուսնական լուծից. կան և ուրիշ շարժառիթներ ունեցող անձինք. բայց, իմ կարծիքով, այստեղ հիմնական և էական դեր են կատարում մեր բարքերը և հասարակական կարծիքը։

Փեթակեանը լռեց։

—Ի՞նչ էք ուզում ասել, հետաքրքրվեցինք մենք, ձեր ասածը բացատրեցէք։

—Շատերից մէկը ես, շարունակեց Փեթակեանը, ինչպէս ես պսակվեմ, երբ անկարող եմ իմ կեանքը կազմակերպել այնպէս, ինչպէս ես կը ցանկանայի։

—Ո՞վ է խանգարում։

—Կարծես թէ ոչ ոք. իրապէս ամենքը, բացատրեց Փեթակեանը։ Ես չեմ կարող իմ ապագայ կնոջը տալ ճոխ կեանք, փառաւոր բնակարան, շքեղ հագուստներ։ Ես կարող եմ ապրել միջակ կերպով։ Իսկ հասարակական կարծիքը ինձնից մի ուրիշ բան է պահանջում։ Եւ այդ հասարակական կարծիքի ճնշման տակ իմ ապագայ կինը ինձնից պէտք է պահանջէ այնպիսի ծախսեր, որ ես անկարող եմ կատարել։

—Ուրեմն դուք արդարացնում էք օժիտ պահանջելը, հարցրեց օրիորդներից մէկը։

—Ոչ, չեմ արդարացնում, պատասխանեց Փեթակեանը, այլ բացատրում եմ, թէ ինչու յաճախ մենք մնում ենք անպսակ։ Ես, օրինակ, աչք չունեմ օժիտի վրա, բայց չեմ հաւատում, որ իմ ապագայ ամուսինը ինձանից անտեղի պահանջներ չանէ և իմ ոյժից աւել ծախսեր չը բարձէ ինձ վրա։

—Ինչո՞ւ էք կարծում, հարցրեց մի օրիորդ, որ մեր օրիորդների մէջ քիչ կան այնպիսի-

digitised by A.R.A.R.@

ները, որոնք ամենևին չեն ընկնի չքեղութեան, ճոխութեան ետևից և որո՛նք ուզում են միայն լաւ մարդու հանդիպել և նրա հետ միասին խելացի ընտանիք կազմել։

—Ես ինչ գիտեմ, մրմնջաց Փեթակեանը, ամեն օր բամբասանքներ եմ լսում այս ու այն ընտանիքի մասին, որ իրանց ուժից վեր ծախքեր են անում, որ պարտքերի մէջ խրվել են, որ հագուստների և խնջոյքների ծանրութիւնից աչք չեն բաց անում։ Ո՞ւր է մեր խելացի, հասարակ ընտանիքը։ Ո՞ւր է այն շրջանը, որտեղ մենք կարողանայինք համեստ կենցաղավարութեամբ, համեստ ծախքերով, բայց խելացի կերպով կազմակերպել մեր նիստ ու կացը, յարաբերութիւնները։ Ստեղծեցէք համեստ, խելացի կենցաղավարութիւն և ես ձեզ խօսք եմ տալիս, որ մեր երիտասարդների եթէ ոչ ամբողջութիւնը, գոնէ մեծագոյն մասը ես մի տարվայ մէջ կամուսնացնեմ։ Մենք վախենում ենք ամուսնութիւնից, մինչդեռ նրա մէջ պէտք է գտնէինք ոյժ, նեցուկ և քաջալերութիւն։

Փեթակեանի կարծիքի հետ շատերը համաձայնեցին, բայց մի քանիսը պնդում էին, որ նա միայն բացատրում է երևոյթը և ելք չէ ցոյց տալիս։

—Խելացի կենցաղավարութիւն, կրկնեց Փեթակեանը, հիմնված հալալ աշխատանքի և ինտելիգէնտ պահանջների վրա, ահա ինչը մեզ կը բարեփոխէ։ Երբ մենք կը սովորենք յարգել մարդկանց և ոչ նրանց փողը ու ճոխ կեանքը, այն ժամանակ և չեն լինի ոչ օժիտի մասին սակարկութիւններ, ոչ ընտանեկան երկպառակութիւններ ծախքերի վերաբերութեամբ, այն

ժամանակ հեշտությամբ կը կազմվեն ամուսնական զույգեր։

Տանտիկինը հրավիրեց մեզ ընթրիքի։ Մենք վերջ տուինք մեր վիճաբանության։

—Այժմ ինչպէս էք զգում ձեզ, հարցրեց Սալեմեանը։ Արդեօք դուք, օրիորդներ և պարոններ, մեղաւորների նստարանի վրա բազմած արդարների դերում չէիք։

—Գուցէ։

Շուտով կենացները մոռացնել տուին մեր վէճը։

---

digitised by A.R.A.R.@

CXXXIII

(2 մարտի 1903 թ., «Մշակ» № 46)

Գիտնական ընկերութեան նիստից յետոյ՝ ընկերներս առաջարկեցին միասին ընթրել և օրվայ չարիքների մասին խօսակցել։

Վերցրինք հիւրանոցի սենեակներից մէկը, պատուիրեցինք ընթրիք և սկսեցինք մեր զրոյցը։

Խօսեցինք մեր ընթացիկ հարցերի մասին, վիճեցինք Մակեդոնիայի ռէֆորմների մասին, հետաքրքրվեցինք Թիւրքիայի հայկական նահանգների դրութեան խնդրով, յայտնեցինք մի շարք խորհրդածութիւններ նահանգական կոմիտէտների գործունէութեան մասին և կանգ առինք այն վիճաբանութեան վրա, որ սկսված է «Մշակ» և «Бакинск. Извѣстія» լրագիրների մէջ։

—Բագուի լրագրի մէջ տպված յօդուածը մի աններելի թիւրիմացութիւն է, ասաց մեր խօսակիցներից մէկը. դա այն սխալներից մէկն է, որ ճակատագրական կերպով սպրդում են փորձաքար դառնալու նրանց թոյլ տուող լրագիրների համար։

—Ինչո՞ւ ես այդպէս կարծում, հարցրեց միւս խօսակիցը։

—Ահա ինչու, բացատրեց առաջինը։ Դուք գիտէք այն ժողովրդական առածը, որ ասում

digitised by A.R.A.R.@

է թէ՝ «դու ցոյց տուր ինձ քո ընկերին և թըշնամուն և ես քեզ կասեմ, թէ դու ինչ մարդ ես»: «Бакинск. Извѣстія»-ն մի նոր լրագիր է: Մենք նրան դեռ չենք ճանաչում. մենք նրան դեռ չենք փորձել կեանքի պայքարում: Ո՞վ է նրա ընկերը և ով թշնամին: Սպասում էինք տեսնելու: Եւ ահա ինչ ենք տեսնում: Այդ լրագիրը, որ իրան զգոյշ էր պահում և չէր վստահանում իր ընկերին և թշնամուն անուանել պարզ կերպով, յանկարծ համարձակութիւն է ստանում խօսելու և խօսում է «Մշակի» դէմ: Այդքան երկար սպասելուց յետոյ՝—ահա ինչով լուծվեց Զաքարիայի պապանձումը: Թիւրիմացութիւն է դա, թէ սխալ՝ յամենայն դէպս բնորոշ է:

—Սակայն նա գովել է Արծրունուն, նկատեց երկրորդ խօսակիցը:

—Այո, գովել է, բայց դա ուսանելի չէ: Նա գովում է մի անձնաւորութիւն, որ այս րոպէիս չէ կարող խօսել: Նոյն իսկ Արծրունու ուխտեալ հակառակորդները այժմ նրա ստուերին են դիմում և նրա անունով աշխատում են վայր գցել այն մարդկանց, որոնք շարունակում են Արծրունու գործը: Այժմ մեր խաւարամիտների օրգանները մի գլուխ գովում են Նազարեանցին, Նալբանդեանցին և նրանց ժամանակակիցներին: Նախկին գործողների անունները հարկաւոր են ժողովրդականութեան համար և մի և նոյն ժամանակ նրանք կենդանի չեն, որ խաւարամիտների գործունէութեան ոգու դէմ որ և է բողոք յայտնէին...

—

Մեր խօսակիցներից մէկը ուշք դարձրեց Բագուի լրագրի յօդուածի մի կէտի վրա, այն

digitised by A.R.A.R.@

է, թէ մի ժամանակ «Մշակը» հետաքրքրու-
թիւն էր շարժել գաւառական քաղաքներից
մէկում թեմական դպրոցի շուրջը կատարվող
գործերի առիթով։

—Այդ քաղաքը Շուշին է, բացատրեց Նա՛
Բայց միթէ այնուհետև տեղի չունեցան· բազ-
մաթիւ դէպքեր, որտեղ կրկնվեց մեծ ու փոքր
չափով նոյնը, ինչ որ մի ժամանակ տեղի էր
ունեցել Շուշիում։

—Այո, միջամտեցի ես, միայն գործին ան-
տեղեակ լինելը կարող էր ծնել այդպիսի ան-
հեթեթ խօսքեր։ Յիշեցէք Երևանի թեմական
դպրոցի շուրջը կատարված անցեալ տարվայ
դէպքերը, որոնք մոռացնել տուին Շուշու դիւ-
ցազներգութիւնները, որտեղ անամօթութիւնը
այնտեղ հասաւ, որ «Մշակի» հակառակորդները
բիւրեղացրին իրանց ուղեղը մի խայտառակ
պատկերի մէջ, որով նրանք առ միշտ իրանց
ջնջեցին կարգին մարդկանց շրջանից։

—Ճիշդ է։

—Իսկ Կաղզուանի տաճարի շինութեան վե-
րաբերութեամբ ծագած այն խճճված գործը,
որի պատճառով այնտեղ ուղարկվեցին քննիչ-
ներ, Սուքիաս արքեպիսկոպը, յետոյ հարկ հա-
մարեց այնտեղ գնալ ինքը Վեհափառ Կաթո-
ղիկոսը և ծագեց դատաստանական գործ «Մշակ»
լրագրում տպված յօդուածների առիթով։

—Այո, Կաղզուանի խլրտումը Շուշուց պա-
կաս չէր։

—Իսկ Ախալցխայում ծագած անվերջ յուզ-
մունքները իրանց եկեղեցական եկամուտների
և երէցփոխի վերաբերութեամբ, որոնք միայն
սրանից մի քանի ամիս առաջ փոքր ինչ հան-
դարտվեցին։ Իսկ Նախիջևանի գաւառի անցեալ

digitised by A.R.A.R.@

տարվայ գործերը։ Իսկ Ախալքալաքի գաւառում ծագած թիւրիմացութիւնները։ Իսկ Գօրիում տեղի ունեցած այն պանամաները, որոնք ամիսներ և տարիներ շարունակվելով չեն վերջացել նոյն իսկ այժմ և որտեղ «Մշակ» լրագիրը այնքան նպաստել է արդարութեան պաշտպանութեան։ Իսկ Ղևոնդ Ալիշանի համար հոգեհանգիստներ կատարելու խնդիրը, որ նորից արթնացրեց միջնադարեան անհամբերող ոգու կուսակիցներին։

—Դա բնորոշ մի պայքար էր, նկատեց Հարեանս, որ կը մնայ իբրև արատ մեր այժմեան գործողների մի ստուար մասի վրա և իբրև մի նոր յաղթանակ «Մշակի» գաղափարների համար։

—Կարելի է դեռ երկար շարունակել, նկատեցի ես, բայց այստեղ կարևոր է ոչ համագումարը, այլ նրա ընդհանուր բնաւորութիւնը։ Այսօր Շուշիում, իսկ վաղը Կաղզուանում, Ախալցխայում, Գօրիում և ուրիշ տեղերում, ուր կեանքը երևան է հանել չարիքներ, որոնց դէմ պէտք է կռուել։ Իսկ ինչ կասէք այն հանգամանքին, որ իրանց յօդուածների պատճառով հալածվեցին մեր թղթակիցները և ստիպված եղան հեռանալ իրանց բնակութեան տեղերից։ Հեռացան Սղնախի, Աշտարակի մեր թղթակիցները, սպառնալիքների ենթարկվեցին Ախալքալաքի, Իգդիրի, Էջմիածնի և շատ ուրիշ տեղերի մեր թղթակիցները։

—

—Ես հասկանում եմ մասամբ բագուեցի պարոններին, միջամտեց մեր խօսակիցներից մէկը, որ սիրում է գաւառական կեանքով զբաղվել։

—Ի՞նչ էք ուզում ասել, հարցրինք մենք։

—Ահա ինչ, յայտնեց նա։ Բագուեցի երիտա-

digitised by A.R.A.R.@

սարդին մինթէ կարող է հետաքրքրել այն, որ Աբարանում, կամ Շիրակում կամ Ջաւախքում անբերրիութիւն է, որ գիւղացին, ապրելով իր գետնափոր խրճիթներում, զուրկ է լոյսից, մաքուր օդից և գտնվում է մշտական սպառնալիքի մէջ մի օր թաղվելու իր տան փլատակների տակ, ինչպէս այդ տեղի ունեցաւ Ախալքալաքի երկրաշարժի ժամանակ։ Ի հարկէ տըխուր, ձանձրալի և տաղտկալի է նրա համար կարդալ այդ բոլորը։

—Այդ ճիշդ է, բացատրեցի ես, մենք շատ դիւրազգաց ենք դէպի մեր գաւառական կեանքը և գիւղացին. բայց դա արժանաւորութիւն է և «Մշակ» լրագրի ամենակարեւոր յատկանիշներից մէկը։ Ամեն անգամ, երբ անհրաժեշտութիւն է զգացվել տեղեկութիւններ ժողովելու երկրի բերքի մասին, ամենաառատ նիւթը վերցվել է մեր լրագրից, որովհետև մեր կապը գաւառի հետ մեծ է և մենք տեղեկութիւններ ունենք այնպիսի անկիւններից, որոնք անմատչելի են միւս լրագիրների համար։

—Կարծեմ, հարցրեց հարևանս, «Մշակը» ամենից վաղ խօսեց մեր երկրի գիւղատնտեսական կարիքների մասին, երբ յարուցվեց տեղական կոմիտէտ կազմելու հարցը։

—Այո, այդպէս է, «Մշակը» տպագրեց պարապմունքների ծրագիրը յուլիսի 19-ին, և հրաւիրեց իր թղթակիցներին նպաստելու այդ ծրագրի հարցերի մշակութեան։ Նոյն իսկ երևացին թղթակիցների կողմից արձագանքներ։ Իսկ միւս լրագիրները նոյն գործով զբաղվեցին աւելի ուշ։

Այնուհետև մենք խօսեցինք գաղթականների վերաբերութեամբ կատարած գործերի մասին,

digitised by A.R.A.R.@

որոնք մեծ հետաքրքրութիւն շարժեցին մեր
հասարակութեան բոլոր խաւերում։

—Դա այն գործերից մէկն էր, որ յիշեցնում
էր «Մշակի» գործունէութեան փայլուն էջերից
մէկը, ասաց հարեւանս։ Եւ կարելի էր շատ բան
ասել, եթէ հանգամանքները շուտով չը հանէին
այդ հարցը ասպարէզից։

—Օգնութեան գործը միշտ զբաղեցրել է մեզ,
նկատեցի ես, և մենք մշտապէս մի որ և է նը-
պաստի գործով ենք զբաղված։ Յիշեմ այս վեր-
ջին տարիների ժողովարարութիւնները. Ախալ-
քալաքի և Շամախու երկրաշարժներից վնաս-
վածներին օգնելու, Կարա-Մուրզայի աշխատու-
թիւնները հրատարակելու և նրա որբերին
ապահովելու, թիւրքահայ որբերի, չքաւորնե-
րի, մահարձաններ դնելու (Արծրունու, Պատ-
կանեանին, Նալբանդեանին), հանրամատչելի
գրքեր հրատարակելու, Րաֆֆիի մօր, ուսուցիչ
Տէր-Դաւթեանի որբերի, Շահլամեանի և ուրիշ-
ների համար ժողովել ենք և ժողովում ենք
գումարներ, որոնք էական դեր են կատարել և
պէտք է կատարեն։

Բաւական երկար խօսեցինք թատրօնական
գործի մասին, որ ներկայումս առանձին հե-
տաքրքրութիւն ունի մեր հասարակութեան շըր-
ջաններում և որին «Մշակը» նուիրեց վերջին
տարիներում մի շարք յօդուածներ։

—Մենք աշխատում ենք, ասացի ես, կեանքի
լաւագոյն հոսանքների և լուսաւոր շահերի ար-
տայայտողը լինել և առաջ եկող պահանջներին
բաւարարութիւն տալ։ Օրինակ, այս վերջին ա-
միսներում մեր գաւառի մի քանի կէտերում
սկսում են երևալ ընկերակցութիւններ, օրինակ
Աշտարակում, Վաղարշապատում, Իգդիրում,

digitised by A.R.A.R.@

մենք խոկոյն աչալուրջ կերպով նրանց հետեւում ենք, քաջալերում ենք և աշխատում ենք մեր խորհուրդներով օգտաւէտ լինել նրանց, ինչով կարող ենք։ Մի ուրիշ անգամ նուիրում ենք մի շարք յօդուածներ այնպիսի հարցերի, ինչպէս է անասուններին ժանտախտ պատուաստելը, որ գիւղական մեծամասնութեան համար մեծ նշանակութիւն ունի։ Իսկ բագուեցի պարոնները ասում են՝ այդ ձեր ընկերակցութիւններից, ժանտախտներից, գաղթականներից, գիւղական կարիքներից ձանձրացանք. «СКУЧНО»։ Բնական է։

Խօսակիցներս մտաբերեցին Պարսկաստանի կրթութեան և ուրիշ գործերի վերաբերեալ յօդուածները, հայոց գրերի գիւտի 1500-ամեակի առիթով բացված վէճը, մեր գործարանական կեանքին վերաբերեալ թղթակցութիւնները ու խորհրդածութիւնները...

—Այդ ամենը մի բան է ցոյց տալիս, ասաց առաջին խօսակիցը, որ Բագուի պարոնները կորցրել են հետաքրքրութիւն դէպի այն ամենը, ինչ որ թանգ և հետաքրքրական է հայ ժողովրդի համար։ Կապը խզվել է։ Ժողովրդի հարցերը և խնդիրները ձանձրալի են նաւթային աշխարհի մոլորեալների համար։

—Մեր գաւառից մենք ոգևորութիւն ենք ստանում, աւելացրի ես, իսկ «մեր ընտրեալներից» միայն սառնութիւն և հարցական նշաններ։ Ի՞նչ կարող ենք անել մեր ձանձրացած, տխրող, ամեն մի կենսական հետաքրքրութիւն կորցրած ընտրեալների հետ։

—Ցաւալի է։

—Իսկ մենք կը շարունակենք մերը։

digitised by A.R.A.R.@

CXXXIV

(9 մայիսի 1903 թ., «Մշակ» № 52)

Կիպլիանիի ճառից վերցնում եմ հետևեալ կտորը։

«Երբ ես ուսանող էի Պետերբուրգում, մի անգամ ինձ դիմեց երրորդ կուրսի մի ռուս ուսանող օտարոտի մի հարցով՝

—Կիպլիանի, հարցրեց նա, քանի մարդ էք դուք սպանել ձեր կեանքում։

Ես զարմանք յայտնեցի։

—Ինչո՞ւ էք զարմանում, նկատեց ուսանողը, ձեր Կովկասում սպանութիւնը սովորական բան է, դուք էլ անկասկած մի քանիսին այն աշխարհն ուղարկած կը լինէք։

—Ես ոչ ոքի չեմ սպանել, ասացի նրան։

—Անհաւատալի է, վրա բերեց ուսանողը։

—Ձեզ խօսք եմ ասում։

—Իսկ ձեր հայրը, անկասկած, շատերին է մորթել, բացականչեց ուսանողը։

—Նա էլ ոչ ոքի չէ սպանել, պատասխանեցի ես։

Ուսանողը չը հաւատաց։ Նա այնքան շատ բաներ էր լսել Կովկասի սպանութիւնների և վայրենութիւնների մասին, որ չէր հաւատում, թէ մեր Կովկասում կան մարդիկ, որոնք չեն սպանում, չեն մորթում, չեն կողոպտում, չեն ասպատակում։ Եւ ոչ միայն այդ ուսանողը,

digitised by A.R.A.R.@

այլ և շատ ուրիշները չը գիտեն և չեն ուզում գիտենալ, որ Կովկասում կան միլիօնատէր ժողովուրդներ, որոնք խաղաղ աշխատանքով են զբաղված և իրանց արդար քրտինքով են վաստակում օրեկան ապրուստը։

—

Կիպիանին իր այդ պատմութիւնը արաւ անցեալ օր, կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան նիստում։

Քննվում էր զեմստվօ մտցնելու հարցը Կովկասում։

Զեկուցանող Սահակեան ապացուցանում էր, որ մեր երկրի գիւղատնտեսական կարիքների համար ամենամեծ բուժարար և օժանդակիչ մարմինը զեմստվօն կը լինի, ուրիշ խօսքով, տեղական ինքնավարութիւնը։

Բոլորը համաձայն էին, որ զեմստվօն մեծ օգնութիւն կարող է հասցնել մեր երկրին։

—Սակայն, առարկեց ընկերութեան անդամներից մէկը, Փիրալեանը, մեր Կովկասի ազգաբնակութեան մասին վատ գաղափար ունեն մայրաքաղաքում ռուս ինտելիգէնտ մարդկանցից շատերը։ Նրանք համարում են մեզ անպատրաստ զէմստվօի համար։

Ահա այդտեղ Կիպիանին առաջ բերեց իր պատմութիւնը, որ ծիծաղեցրեց հանդիսականներին։

—Այո, աւելացրեց Կիպիանի, ով չէ ուզում մեզ ճանաչել և բաւականանում է լսած հէքիաթները կրկնելով, նա երբէք էլ մեզ չի ճանաչի, բայց պետական մարդիկ պէտք է մեզ ճանաչեն։

Խօսեցին և մի քանի ուրիշ ճառախօսներ։

—Պատրաստ չեն կովկասեցիները—դա ա-

digitised by A.R.A.R.@

ռաձգական հարց է, նկատեց ընկերութեան անդամ Սոկոլովը։ Դա անբովանդակ մի խօսք է։ Մի՞թէ մեր ռուս մուժիկները, որոնք դարեր շարունակ ճորտութեան կապանքների մէջ էին և միայն 1861 թւին ստացան ազատութիւն, կարող էին երեք տարուց յետոյ, այն է 1864 թւին, արդէն պատրաստ համարվել զէմստվօի համար, իսկ կովկասցիները մինչև այժմ դեռ պատրաստ չեն։

—Ճիշդ է, լսվեց զանազան կողմերից։

—Մի՞թէ, շարունակեց Սոկոլովը, Կրիմի, Կազանի, Բեսարաբիայի նահանգները, ուր կան զանազան ազգութիւններ, նման կովկասեան ազգերին, պակաս աջողութիւն ունեցան զէմստվօի գործունէութեան մէջ և ստոր են միւս նահանգներից։ Ոչ։ Նրանք պատւով պահում են զէմստվօի դրօշակը։ Իսկ Կրիմը դեռ չէր տօնել իր նուաճման հարիւրամեակը, երբ նա ստացաւ զէմստվօ։

—Հետաքրքրական է, լսվեց մի քանի տեղից։

—Մի՞թէ, առաջ գնաց Սոկոլովը, եապօնական ժողովրդի մասսան բարձր է կովկասեան ազգաբնակութիւնից, որ նա կարող եղաւ ընտելանալ կուլտուրական բարձր կարգերի, իսկ կովկասցին ոչ։ Եւ վերջապէս, եթէ Կովկասը մինչև անցեալ դարի սկիզբը մահմէդական լծի տակ էր տառապում, մի՞թէ կովկասցիների նըման մի ուրիշ ժողովուրդ, բօլգարները, որոնք նոյն վիճակումն էին գտնվում, չապացուցեցին մեզ, որ կարող են ընդունել եւրօպական կեանքի կարգերը։

Սոկոլովի առարկութիւնները հաճելի տպաւորութիւն գործեցին ժողովականների վրա։

—

digitised by A.R.A.R.@

Իմ նկարագրածը իրողութիւն է։

Իբրև ժամանակի արտայայտութիւն, իբրև կեանքի երևոյթ նա բնորոշ է։

Տեղական ոյժերի անհրաժեշտութիւնը երկրի տնտեսական և վարչական գործառնութիւնների մէջ դառնում է ընդհանուր համոզմունք։

Առանց տեղական ազգաբնակութեան և նրա լաւագոյն ոյժերի գործակցութեան անկարելի է առաջ գնալ և երկրի բարգաւաճումը ապահովել։

Միթէ մեր քաղաքներին տուած ինքնավարութիւնը վնասեց մի որ և է բանի։ Մի՞թէ Թիֆլիսը, Բագուն, Բաթումը և մեր միւս քաղաքները կարող կը լինէին այդքան առաջ գնալ, եթէ չունենային ինքնավարութիւն։

Ոչ մի վնաս։ Իսկ օգուտը չօշափելի։

Իսկ մեր գաւառական կեանքը այնքան բարդ է, մեր երկրի տնտեսութիւնը այնքան բազմակողմանի է, որ միայն տեղական ոյժերի գործակցութեամբ կարելի է գլուխ հանել կեանքի ամեն տեսակ հարցերից և կնճիռներից։

Եւ կեանքի փաստերը ցոյց են տալիս, որ այդ գործակցութիւնը կարևոր է համարվել ամեն տեղ, երբ լուրջ գործ է ծագել։

Դուք ինքներդ գիտէք օրինակներ։

Ես կը յիշեցնեմ։

—

Դուք գիտէք, թէ ինչ մեծ և էական օգնութիւն ստացաւ Ախալքալաքի գաւառի ժողովուրդը, երբ վնասվեց երկրաշարժից և անբերրիութիւնից։

Այդ օգնութիւնը տրվեց վարչական մարմինների և ժողովրդի ներկայացուցիչների գործակցութեամբ։

digitised by A.R.A.R.@

Նոյնը Շամախու գաւառում։

Դուք գիտէք, որ երբ կառավարութիւնը ցանկացաւ կանօնաւորել Կովկասի ջրաբաշխութեան գործը, նա հրատարակեց օրէնք, որի մէջ կարեւոր տեղ է տրված տեղական երկրագործի ներկայացուցչութեան։

Իսկ ֆիլօկսերայի և ուրիշ հիւանդութիւնների դէմ մաքառելու համար միթէ հարկաւոր չեղաւ դիմել տեղական մարդկանց գործակցութեան։

Եւ բոլոր այն նոր ծրագիրները, որոնք մշակվում են նահանգական կօմիտէտներում և զանազան ընկերութիւնների մէջ, իրանց յոյսը դրել են տեղական գործողների վրա։

Զեմստվօն տեղական ինքնագործութեան ամենամեծ կազմակերպութիւններից մէկն է, որին վիճակված է փրկարար չունչ մտցնել երկրի վարչական և տնտեսական կեանքի մէջ։

Մեր երկրում սպանութիւնները և աւազակութիւնները դեռ չեն վերջացել. բայց նրանք լինելով ինքն ըստ ինքեան պատուհասներ իրանց էութեամբ, չը պէտք է դառնան կրկնակի պատուհաս, որ մեր երկրի խաղաղ ժողովուրդը նրանց պատճառով զրկվի և այն բարեմասնութիւններից, որոնց նա արժանի է իր արդար աշխատանքի համար։

---

digitised by A.R.A.R.@

CXXXV

(16 *մարտի* 1903 *թ.*, *«Մշակ»* № 58)

Ես այս տարի չը նկարագրեցի այն ուսանողական երեկոյթը, որ տեղի ունեցաւ Թիֆլիսում։

Բայց մի դէպք, որին ես ականատես էի այդ երեկոյթին, յաճախ իմ միտքն է գալիս և ես այսօր մտադիր եմ հաղորդել ձեզ Նրա մասին։

Երեկոյթը բազմամարդ էր և աշխոյժ։ Ուսանողական համազգեստը փայլում էր դահլիճների այս և այն անկիւնում և հանդիսականների ուշադրութիւնը գրաւում։

Ուսանողը այդ երեկոյի սիրելին էր, զուարճութեան աղը, օրվայ հերոսը։ Նրան որոնում էին, Նրանով հրճվում, Նրան ողջունում, Նրա հետ պարում, Նրա հետ հաճոյախօսութիւններ անում։

Նայեցի հանդիսականների ժպտուն երեսներին, զուարճախօսեցի պատահած ծանօթներիս հետ, լսեցի չարաճճի մի օրիորդի սրախօսութիւնները և անցայ դէպի սեղանատուն։

Հեռու անկիւններից մէկում տեսայ յանկարծ իմ վաղեմի ծանօթ Արտուրեանին և ուղղեցի իմ քայլերը դէպի նա։ Ես կամենում էի Նրա հետ խօսակցել և իմ տպաւորութիւնները Նրան հաղորդել։

Բայց Նրա տեսքը ինձ զարմացրեց և սար-

digitised by A.R.A.R.@

սափեցրեց։ Նա նստած էր մի սեղանի մօտ չափազանց մռայլ և տխուր դէմքով, աչքերը սեւեռած սեղանի ծածկոցի վրա և անդադար չփում էր իր ճակատը։

—Արտուրեան, բարև, ասացի ես, ինչ էք այստեղ նստել։

Նա գլուխը բարձրացրեց և ես նրա աչքերի մէջ տեսայ խոշոր կաթիլ։

—Բարև, բարև, սթափվելով վրա բերեց նա, նստեցէք, դուք էլ այստեղ էք... դահլիճում ես ձեզ չը տեսայ... ինչպէս էք։

Այս հարցերը կցկտուր չարեց նա իմ առաջ և աշխատեց ժպտալ։

—Դուք տխուր էք, նկատեցի ես, ինչ է պատահել։

—Ոչինչ։

—Դուք մտատանջ էք, շարունակեցի ես, մի մի ցաւ, մի հոգս ունէք։ Այստեղ, այս ուրախ և ծիծաղկոտ հասարակութեան մէջ ձեզ տեսնել այդպիսի վշտալից դէմքով—ինձ համար անհասկանալի է։

Արտուրեանը բացատրեց, որ ոչ մի անախորժութիւն տեղի չէ ունեցել նրա կեանքում և որ նա եկել է երեկոյթին միայն զուարճանալու։

—Ուրեմն, կատակով նկատեցի ես, դուք տխրել էք այս չափազանց ուրախ քրքիջից և դարնանային թարմ տրամադրութիւնից։

—Ոչ, ոչ և ոչ, խօսքս կտրեց Արտուրեանը։ Ես ողբում էի իմ մահը։ Ես տեսնում էի իմ թաղումը։

Արտուրեանը յուզված յետ ընկաւ աթոռի վրա, փոքր ինչ նայեց ինձ վրա և յետոյ սկսեց սիրտը բաց անել։

digitised by A.R.A.R.@

—Խնդրում եմ, բարեկամ, ասաց նա, մի խայթոցից, որ այս երեկոյ այստեղ ինձ յաղթահարել է։ Տասն ութ տարի առաջ ես ուսանող էի։ Տասն ութ տարի։ Այն ժամանակ առոյգ, թարմ, վստահ՝ ես նայում էի ապագայի վրա լի հաւատով և ուխտել էի գործել այն անձնուիրութեամբ, որին ընդունակ է մատաղ, երիտասարդական հոգին։ Անցան տասն ութ տարիներ։ Եւ այժմ նկատում եմ, որ ես դաւաճանեցի իմ երդումներին, ոչինչ չիրագործեցի այն ծրագիրներից, որ մշակել էի։ Ինչպէս անցան այդ տասն ութ տարիները, ինչու նրանք այդպէս ապարդիւն անցան, ինչու ես ընդհանուր հոսանքի մէջ մոռացայ իմ գաղափարական տենչանքները... Ծանր է զգալ, որ ես իբրև գաղափարի մարդ մեռել եմ և դարձել անպէտք՝ կեանքի համար։

Ես չը փորձեցի արդարացնել Արտուրեանին և մեղմացնել նրա խղճի խայթոցը։

—Գոնէ այժմ, ասացի նրան, եկ աշխատենք այն, ինչ որ դեռ կարելի է փրկել։

Եւ խօսեցինք այն բանի մասին, թէ ինչ կարելի է դեռ անել։

—Արդեօք ուշ չէ՞, հարցրեց Արտուրեանը։

—Երբէք ուշ չէ, ասացի ես, ուշը չը գործողի համար է, իսկ գործողի համար հասակ չը կայ։ Եթէ լինէինք վաթսուն տարեկան անձինք՝ դարձեալ ուշ չէ։

—

Ես յիշեցի մի ուրիշ դէպք։

Անդրկովկասում կար մի գործող, այժմ հանգուցեալ, Կուչաեվ ազգանունով։ Նա ազդեցիկ դեր է կատարել և ունի թողած աշխատութիւններ։

Երբ նա հեռանում էր մեր երկրից, նրան տուին մի հանդիսաւոր ճաշ։ Կուչաեվի հին բարեկամներից մէկը, Մօրօզ, նոյնպէս հանդուցեալ, մի ճառ ասաց, որի մէջ նկարագրեց Կուչաեվի առաջին քայլերը, նրա իդէալական մաքուր ձգտումները, նրա լուսաւոր սկզբնական գործունէութիւնը։

Ցանկարծ ճառը ընդհատուեց Կուչաեվի ջղային լացից և հեկեկանքից։ Նա չէր կարողանում իրան զսպել։

—Ես մաքուր էի և ուզում էի մաքուր մընալ, մրմնջում էր նա, ես ցաւում եմ, որ այնքան և այնպէս չը գործեցի, ինչպէս կը ցանկանայի։ Հաւատացէք պարոններ, որ ես չէի մեղաւոր, իմ ներքինը միշտ բողոքում էր։

Նա չը կարողացաւ շարունակել։ Նրան հանգստացրին և սիրտը փաղաքշեցին, յայտնելով, որ գնահատում են և այն, ինչ որ նա արել է։

—

Որ նախկին ուսանողները կեանքի մէջ շատ անգամ բոլորովին չեն իրականացնում ոչ մի իդէալ, կամ գործում են շատ քիչ, դա չափազանց լաւ յայտնի է։ Բայց ցաւալի է, երբ մարդ նոյն իսկ ուսանող եղած ժամանակ չէ կարողացել իդէալական լինել կամ համակուել է մարդատեացական և խաւարամիտ տրամադրութիւններով։

Ոչ մի բան այնքան ծանր չէ ազդել և չէ ազդում ինձ վրա, որքան ուսանողների բարոյական սխալները։

Յիշում էք, որ երկու տարի առաջ Գերմանիայի ուսանողները մի կատաղի հալածանք էին սկսել օտար ուսանողների դէմ։

digitised by A.R.A.R.@

Չէք մոռացել, որ այս ձմեռվայ սկզբին նոյն իսկ Շվէյցարիայի նման մի ազատ երկրի ուսանողները ժընեվում հալածանք էին հրատարակել Ռուսաստանից եկածների դէմ։

Ուսանողներ և հալածանք օտարների դէմ։

Սարսափելի է։

Ուսանողութիւնը, որ հասարակութեան ամենազգայուն և իդէալին ձգտող դասակարգն է, որ մաքուր զգացմունքներով ոգևորվող տարրն է, նա գլուխ է կանգնում ազգատեացութեան և ստոր հալածանքների։

Միթէ դա սարսափելի չէ։

Յիշում եմ, որ Պետրոսեան ճեմարանում մի հրէայ ուսանող, տեսնելով հրէաների դէմ ատելութիւն նոյն իսկ ուսանողների մի շրջանում բոլորովին շշմեց, շուարեց, մտածմունքների և մելամաղձութեան մէջ ընկաւ։

—Ինչպէս, զանգատվում էր մէկ օր նա մեզ, եթէ ուսանողների մէջ անգամ կան մեզ ատողներ և հալածողներ, էլ ում վրա յոյս ունենանք։

Մելամաղձութիւնը հասցրեց խեղճին խելագարութեան։ Նա չափազանց յուսախաբվել էր իր լաւագոյն յոյսերի մէջ։

Ես գիտեմ և գնահատում եմ պատանեկական ոգևորութիւնը և չափազանցութիւնը։

Բայց երբէք չէի ցանկանալ տեսնել ուսանողին վատ դերի մէջ, թոյլ՝ գաղափարական ըմբռնողութեան մէջ, կորցրած՝ հոտառութիւնը դէպի լուսաւորը և ազնիւը, անձնատուր եղած՝ թիւրիմացութեան և բանսարկու ոգիների թելադրութեան։

digitised by A.R.A.R.@

Որքան նոյնպէս ցաւալի է, երբ աննկատելի կերպով մարդիկ վատ դեր են կատարում հասարակական հոսանքների ընդհարման մէջ։

Այդ կողմից կարելի է ցաւել Պետերբուրգի այն մի խումբ ուսանողների վրա, որոնք հանդէս եկան նորերս իրանց ծիծաղաշարժ բողոքով այնտեղ, ուր պահանջվում է նրանցից միայն համակրութիւն, գործակցութիւն, զինակցութիւն և անձնուէր աշխատանք։

Չէ, լուսեղէն հրեշտակը, որ սաւառնում է ուսանողութեան վրա, այդ ժամանակ հեռացել էր այդ խմբից։

Պէտք էր զգուշանալ սխալ դիրք բռնելուց։

Յամենայն դէպս շատ ծանր է, երբ դա կատարվում է ուսանողական նստարանի վրա։

---

digitised by A.R.A.R.@

CXXXVI

(30 *մարտի* 1903 *թ.*, *«Մշակ»* № 69)

Կանգնած կլուբի մի անկիւնում՝ մենք խօսում էինք և այս անգամ շատ հեռուներն էինք գնացել՝ Եմէն, Վենեցուէլա, Լիսաբոն, Միջագէտք, Կուէյտ և այլն։

Գուցէ մի ուրիշ օր պատմեմ ձեզ մեր խօսակցութեան մասին, որից երևաց, որ մեր խօսակիցների մէջ թագնված են նշանաւոր և նոյն իսկ արտակարգ քաղաքագիտական տաղանդներ։

Եւ որքան որոշ ու պարզ կերպով նրանք ըմբռնում էին իրերի դրութիւնը և նոյն իսկ գուշակութիւններ էին անում գալիք դէպքերի մասին։

—Ես պատրաստ եմ գռազ գալու, ասում էր փորձված քաղաքագէտներից մէկը, կը տեսնէք, որ իմ գուշակութիւնները կը կատարվեն ամենաճիշդ կերպով։

Իւրաքանչիւրը իր գուշակութիւններն էր անում։

Կարելի էր զարմանալ, թէ ինչպէս նրանք խոր ուսումնասիրել են հեռու երկիրների, հեռու մարդկանց հեռու գործերի հանգամանքները։

Թագնված և չը գնահատված տաղանդներ։

digitised by A.R.A.R.@

Չէ, մի օր ես կը զբաղվեմ նրանցով։

Գեղեցիկ խոսակցությունը սակայն խանգարվեց, երբ մեր խմբին մոտեցավ Օրիկեանը։

—

—Այդ ինչ հեռուներն էք գնացել, բացականչեց Օրիկեանը։

Ոչ ոք ուշադրություն չը դարձրեց այդ խոսքերի վրա, որովհետև այդ ժամանակ պարզվում էր եւրոպական քաղաքական կնճռոտ մեքենայալարություններից մէկը։

—Գոնէ առածը արդարանար, միջամտեց Օրիկեանը։

—Ի՞նչ առած, հարցրին միւսները։

—Ցայտնի առածը «պղտոր ջրում ձուկ որսալու» մասին, պատասխանեց Օրիկեանը։

—Դա բոլորովին արդարանում է, նկատեց քաղաքագէտը։

—Ամենևին չէ արդարանում, հակաճառեց Օրիկեանը։ Եթէ արդարանար, այն ժամանակ ձուկը առատ կը լինէր, գոնէ նա էժան կը լինէր, իսկ մենք այդ էլ չենք տեսնում։

Խոսողները միմեանց երեսին նայեցին չուարած։

—Դուք ինչ բանի մասին էք խոսում, պարոն Օրիկեան, հարցրին քաղաքագէտները։

—Ի՞նչ բանի մասին, պղտոր ջրի մասին, վրա բերեց Օրիկեանը։ Ահա երկու շաբաթ է, որ ամեն օր ամենքը խոսում են պղտոր ջրի մասին և դուք դեռ հարցնում էք։

—Ուրեմն, դուք Թիֆլիսի մասին էք խոսում, ծիծաղեցին միւսները։

—Աբա ինչ բանի մասին պիտի խօսէի, խօսքը կտրեց Օրիկեանը։ Երկու շաբաթ է քաղա-

digitised by A.R.A.R.@

քի բնակիչները ջուր չունեն խմելու և ջրի փոխարէն ստանում են ինչ որ կեղտոտ մի հեղուկ. իսկ մեր քաղաքային վարչութիւնը, մեր ձայնաւորները մի գլուխ ծրագրում են, ծրագրում, անվերջ հարցապնդումներ են անում և միմեանց զարմացնում իրանց ճարտասանական գոհարներով և դիւանավարական արուեստով:

Խօսակիցների կէսը ձայնաւորներ էին. Նրանցից մէկը ուզեց բացատրութիւններ տալ, բայց բանից դուրս եկաւ, որ նա ոչ մի գաղափար չունի Թիֆլիսի ջրանցքի մասին և ինքն էլ չը գիտէ, թէ ինչու է ջուրը պղտոր և կամ երբ պէտք է նա մաքրվի.

—Իսկ ես գիտեմ, մէջ ամտեց Օրիկեանը, այն, ինչ որ մենք այսօր տեսնում ենք, նա անսպասելի մի բան չէր. քաղաքը ոչ մի միջոց էլ գործ չէ դրել, որ ջուրը մաքրվի, թէև ահա երկու տարի է, որ այդ բանի մասին խօսվում է.

Օրիկեանը բացատրեց, որ քաղաքի ստացած ջրի մեծ մասը վերցվում է Կուր գետից և որ այդ ջուրը մաքրելու համար մեքենաները փչացել են և չեն նորոգվում.

—Քաղաքային ձայնաւորի համար Պարսից ծոցի խնդիրը աւելի հետաքրքրական է, քան իրան յանձնված քաղաքային գործերը:

—Դա վիրաւորական է, նկատեց ձայնաւորը.

—Միթէ, չարունակեց Օրիկեանը, ասացէք խնդրեմ, եթէ քաղաքային վարչութիւնը և ձայնաւորները նայէին քաղաքի գործերի վրա իբրև իրանց սեփական գործերի վրա, վաղուց ձեռք չէին առած լինի միջոցներ առաջն առնելու այն բանի, ինչ որ այժմ, յանկարծ, մի երկու

digitised by A.R.A.R.@

օրում ուղղել անկարելի է։ Չէ, սրտացաւ, հոգատար մարդիկ չը կան քաղաքի համար։

—

Օրիկեանը խօսեց քաղաքի և ուրիշ կարիքների մասին. բայց նա նկատեց, որ առաջվայ աշխոյժ զրոյցը խանգարվեց և խօսակիցները լռեցին։

Նա այնուհետև խօսք յարուցեց Բարեգործական ընկերութեան մասին և յայտնեց իր կարծիքը, թէ նա ինչու է անգործ։

Լռութիւն։

Նա պատմեց Թիֆլիսի եկեղեցիներում խօսված քարոզների, Էջմիածնի մի քանի գործերի, Թիֆլիսի հայոց թատրոնական կոմիտէտի դէֆիցիտի և ուրիշ հարցերի մասին։ Բայց խօսակիցների տրամադրութիւնը չը բացվեց, մինչև որ մենք չը նստեցինք ընթրիքի սեղանի։

Քաղաքագիտական զրոյցից յետոյ միայն սեղանը մեզ կարողացաւ միացնել։

Սեղանակիցներից մէկը պատմեց ծիծաղաշարժ անեկդոտներ։

digitised by A.R.A.R.@

CXXXVII

(6 ապրիլ 1903 թ., «Մշակ» № 74)

Ես մտադիր էի Զատկի առիթով ուղարկել պօստ-կարտեր՝ գեղեցիկ նկարներով, խորհրդաւոր գծագրութիւններով և իմ բարեմաղթութիւններով ու շնորհաւորութիւններով։

Բայց…

Բայց պօստ-կարտեր վաճառող Պետլիարօվը Թիֆլիսից գնացել է, Մեսխիեվի մօտ եղած նմուշները շատ քիչ են, Սողոմոնեանցը նոր է բացել իր վիմագրատունը, Գնունին փորձեր է անում…

Նուէրներ ուղարկելը անյարմար է։ Պօստում շատ դժուար է հերթի սպասել, մինչև որ ընդունեն իմ ծրարները, իսկ դիմել Նադեժդա և ուրիշ փոխադրող ընկերութիւններին փոքրիկ նուէրների համար՝ անկարելի է, մանաւանդ որ նրանք չեն վերցնում յանձնարարութիւններ ամեն տեղերի համար։

Ի՞նչ անել։

Վճռեցի կրճատել իմ նուէրները, դէն գցել այնպիսիները, որոնց մասին անյարմար է հրապարակով խօսելը և բաւականանալ բարեմաղթութիւններով կամ ցանկութիւններով, վերջապէս կօմպլիմենտներով։

Ես կը սկսեմ «Ուսանողներին օգնող ընկերութիւնից»։ Ես կը ցանկանայի, որ

այդ ընկերութիւնից հնչէր ազգերի միութեան, համերաշխութեան, փոխադարձ օգնութեան հրաւէրը։ Ուստի ամէն մի հանգամանք, որ կարող է թիւրիմացութիւն, ազգային վիրաւորանք և խռովութիւն առաջ բերել, պէտք է հեռացվի, որպէս զի ընկերութեան մէջ բիւրեղանման մաքուր մնայ փոխադարձ սէրի և յարգանքի գաղափարը։

Ինչպէս տեսնում էք, այս իմ բարեմաղթութիւնը երկար դուրս եկաւ։ Պատճառն այն է, որ ես նրան պատրաստել էի պօստ կարտի համար։

Պէտք է կարճ կտրել։

Որովհետև խօսեցի ուսանողներին օգնող ընկերութեան մասին, մի բարեմաղթութիւն էլ անեմ այն պարոնին, որ յատկացրել էր ընկերութեան օգտին յայտնի բրօշիւրից ստացած օգուտը։

Ալէքսէեվ-Մեսխիէվին—այնպէս քայլ չանել, որպէս զի յետոյ ստիպված լինէք ոսկեզօծելու։ Դա զատական ձու չէ, որ ներկէք։

Հեռագրական գործակալութեան—այնպիսի հեռագրներ, որ մարդ գոնէ համբերութիւն ունենայ կարդալու։

Պետերբուրգի ուսանողների մի խըմբին—գիտնական բացատրութիւն այն բանի, թէ ինչու «Бакинскія Извѣстія»-ն անաջողութեան հանդիպեց։

Բժիշկներին—երախտագիտական ուղերձ միկրօբներին։

Բանաստեղծներին—չափեր և յանգեր,

digitised by A.R.A.R.@

յետոյ ստորագրութիւն խոշոր տառերով։

Ալէքսանդր Մակեդօնացու ուրուականին՝—եթէ դու յարութիւն առնէիր և տեսնէիր, թէ ինչ է կատարվում քո Մակեդօնիայում։

Համիդիական քիւրդերին՝—որքան առատ հունձ Ալբանիայում և Մակեդօնիայում։ Եթէ ձեզ այնտեղ ուղարկէին։

Գիւղացիներին՝—ձեր տուած խնդիրների գոնէ մի մասի կատարումն։

Ամուրիներին՝—կորցրած հարսնացուների ցուցակը։

Օրիորդներին՝—ընդունակութիւն թելադրելու հաւանած երիտասարդին, որ նա առաջարկութիւն անէ։

Թուղթ խաղացողներին՝ — դժբաղդ ընկերներ։

Առաջնորդին՝—առաջնորդելու և առաջնորդվելու համար առաջնորդող։

Տէրտէրներին՝—թողութիւն իրանց կամաւոր մեղքերի համար։

Տիրացուներին՝—թարմ ախորժակ, տէրտէրի քսակ։

Աւազակներին՝ — մուրհակներ իրանց վերցրածները վերադարձնելու համար։

Կտակ անողներին՝—մի մարգարէ, որ կարողանար ասել, թէ ինչ վիճակի մէջ պէտք է լինեն նրանց գումարները մի քսան, երեսուն և յիսուն տարուց յետոյ։

Կրիտիկոսներին՝—գերբնական ընդու-

digitised by A.R.A.R.@

նակութիւն համոզելու անտաղանդին, որ նա զուրկ է տաղանդից։

Վաճառականներին՝ — խիստ հրաման արգելելու սպառող, փոխատու և ուրիշ այդ տեսակ ընկերակցութիւնները։

Րեպօրտէօրներին՝ — ընդունակութիւն ոչնչից ինչ ստեղծելու, ապագայ լուրերը նախատեսնելու։

Նկարիչներին՝ — մեծ մեծ պահեստներ չը ծախւած պատկերները տեղաւորելու համար։

Ծոյլերին՝ — բեղմնաւոր ծուլութեան տասնամեակի, քսանամեակի, քսանհինգամեակի, քառասնամեակի, յիսնամեակի փառաւոր յօբելեանական հանդիսակատարութիւններ։

Հայ հեղինակներին՝ — հասնել իրանց տենչանքին, այն է տեսնել երկրորդ հրատարակութիւն։

Գիւղատնտեսական ընկերութեան՝ — վճռել այն հարցը, թէ ո՛վ պէտք է տայ կովկասեան ցուցահանդէսի պարտքերը։

Մինօգականներին՝ — նշանակած և կատարւած քննութիւնների մասին որոշում և վճիռ։

Երկաթուղուն՝ — երկաթեայ, պղնձեայ և մետալեայ մարդիկ, որոնք չը ջարդւէին խորտակումներից։

Ձայնաւորներին՝ — միայն ձայնձունով չը լինել ձայնաւոր, այլ ժողովրդի գանգատի ձայնի համաձայն գործելով։

digitised by A.R.A.R.@

Մեր դերասաններին՝—մի հարց. արդեօք ընդունում էք դուք ամպլուա կոչված բանը։ (Պատասխանը յայտնեցէք ձեր ընկերներին)։

Մեր դրամատուրգներին՝—բարեհաճեցէք իրաւունք տալ հասարակութեանը և կրիտիկային սեփական կարծիք ունենալու։

Գրաշարներին՝—համբերութիւն շարելու և այն, ինչ սրտին մօտ է, և այն, ինչ որ ծանր վիշտ է։ Եթէ աչքը վնասվում է, գոնէ լաւ գրուածք շարելու վրա վնասվէր։

Բօլգարներին, սերբերին, յոյներին և ռումիններին՝—հէր օրհնածներ, դուք էլ միմեանց միս ուտելու ու միմեանց թշնամութիւն անելու ուրիշ ժամանակ չը գտաք։

Պարսկահայերին՝—ազատութիւն և իրաւունք կաշկանդված ձեռքերում։

Աշուղներին՝—փառաբանել ազգի իշխաններին, որոնք յիշում են այսօր իրանց աղքատներին։

Աղքատներին՝—ձեռք վերցնել որկրամոլութիւնից և շռայլութիւններից։

Տէրերին՝—Մի քանի օր դառնալ ծառաներ նրանց վիճակը հասկանալու համար։

Մակեդօնացիներին՝—գոնէ յետագայ Զատկին։

Թիւրքիային՝—ոչ մի ստիպմունք, միայն իր տուած խոստումների կատարում։

Պանդուխտին՝—յիշել երգի այն կտորը «Անդ հեռու ալեոր, հայր ունիմ սգաւոր»։

Բանտում նստածներին՝ — ապրիլ մէկ։

«Русское Собраніе»-ին, Սիգմային, Վէլիչկօին՝ — բաբելօնեան խառնակութիւնից յետոյ յիշել Եհովային։

Հայ ինտելիգենցիային՝ — վճռել այն հարցը, թէ ինչ է ինտելիգենցիան, ինչ գործ ունի նա կատարելու։

«Շէարքի-Ռուս» թուրքերէն լրագրին՝ — վերցրէք անունը Եւրոպայից, իսկ լեզուն ժողովրդից։

«Каспій» լրագրին՝ — աւաղ փառացս անցաւորի (Sic transit gloria mundi)։

Պօլսի լրագիրներին՝ — մի հարց. Երբ արդեօք դուք պէտք է հաղորդէք լուրեր այն բանի մասին, թէ ինչ է կատարվում և ձեր երկրում։

«Բազմավէպին» և «Հանդէս Ամսօրեային»՝ — չը վարանել և չը տատանվել նոր ուղղութեան մասին հերթական դարձած հարցը համարձակ լուծելու։

«Մշակին»՝ — գնա աներկիւղ դէպ առաջ։ Դու որ կուի մէջ մեծացել ես, կուի մէջ ամրացել, կուի մէջ անընկճելի ոյժ հանդիսացել, շարունակիր քո գործը իբրև մտաւոր զինւոր և մշակ, հաւատալով ապագային։

Մեր ընթերցողներին՝ — ցը գրութիւն։

Մանուկներին՝ — Շնորհաւոր Զատիկ։

CXXXVIII

(13 *ապրիլ* 1093 *թ.*, *«Մշակ»* № 77)

Այն ժամանակ, երբ չարում էի թղթի վրա իմ զատկական բարեմաղթությունները և նուէրները, ինձ թւում էր, որ իմ ականջիս հնչում է կանացի մի ձայն՝

—Իսկ մինե՞ մեզ ոչինչ չէք բարեմաղթում։

Կը ցանկանայի բարեմաղթել։

Բայց նախ անեմ մի փոքրիկ բացատրութիւն։

Մի քանի ժամանակ առաջ մի օրիորդից ես ստացայ նամակ, որի մէջ կային ինձ ուղղւած մի քանի հարցեր։

Նամակը թէև գրւած էր միայն մի անձի կողմից, բայց նա պարունակում էր իր մէջ ընկերուհիների մի փոքրիկ շրջանի արտայայտութիւններ։

Նամակը գաւառից էր։ Ոճը հասարակ և մըտերմական, հարցերը թէև միայն ընդհանուր ձևով գրւած, բայց բաւական չօշափելի։

Գաւառական քաղաքներից մէկում մի քանի օրիորդներ, խմբվելով միասին, կազմել են մի փոքրիկ շրջան, որը զբաղւած է ընկերական ընթերցանութեամբ և ինքնազարգացմամբ։ Կարդում են օրիորդները զանազան յօդուածներ, քննում են նրանց մէջ յայտնւած մտքերը, վիճա-

digitised by A.R.A.R.@

բռնում են և աշխատում լայնացնել իրանց աշխարհահայեացքը։

Սակայն չը կան ձեռնհաս անձեր, որոնք օգնէին օրիորդներին աւելի բեղմնաւոր և օգտաւէտ դարձնելու նրանց պարապմունքները։ Օրիորդների առաջ ամեն օր բուսնում են բազմաթիւ հարցեր, որոնց վերաբերութեամբ նըրանք դժուարանում են պատասխաններ գտնել։

—Ի՞նչ անենք, հարցնում է նամակ գրող օրիորդը։ Ցանկանում ենք առաջ գնալ, խաւարից դէպի լոյս ելնել, բայց մեզ ու մեզ անկարող ենք շատ բան առաջացնել։

Օրիորդները որոնում են առաջ եկող հարցերի պատասխանները իրանց կարդացած գըրուածքների մէջ։

Եւ երբեմն գտնում են։

Իսկ ի՞նչ անեն այն դէպքում, երբ չեն գըտնում։

—Քանի անգամ, շարունակում է նամակ գըրողը, ընկերուհիներիս հետ նստած՝ մտատանջութեան մէջ ենք ընկնում, վշտացած ասում ենք միմեանց՝ «Ո՞ւր էր, եթէ գտնուէին մեր շուրջը անձեր, որոնք մեզ ղեկավարէին, խելացի շրջան ստեղծէին, որպէս զի մենք էլ չը նմանէինք դատարկ օրիորդներին, որոնք ապրում են աննպատակ, մտքի ու բարոյական ձգտումների վերաբերութեամբ անտարբեր...»։

—

Ահա այդ նամակի ձայնն էր, որ ինձանից զատկական բարեմաղթութիւններ էր խնդրում։

Ի՞նչ պէտք է ասէի։

Կարո՞ղ էի արդեօք գոհացնել իմ մի երկու խօսքով։

Մտածեցի, որ աւելի լաւ է օրիորդների

սրտի մրմունջը ներկայացնեմ իմ ընթերցողին։ Գուցէ շատ ուրիշ տեղերում կան նոյնպէս օ-րիորդների և երիտասարդների խմբեր, որոնք նոյն հարցերով են զբաղուած։ Գուցէ այդ մըր-մունջները՝ միացած միասին՝ կազմեն մի զօ-րաւոր կենսական պահանջի գոչիւն և գրաւեն մեր մտաւոր ոյժերը դէպի որոնողները, բաղ-խողները, լոյսի ծարաւները, գաղափարականի ձգտողները։

Եթէ շատ չեն շրջանները և խմբերը, շատ են որոնողները և բաղխողները, որոնք սպասում են աջակիցների և գիտակցական գործողների։

Բայց միթէ ոչինչ չը պէտք է ասեմ ինձ նա-մակ գրողներին։

—Սեղմում եմ ձեր ձեռքը, մի վհատվեցէք, շարունակեցէք ինքնազարգացման գործը։ Եռան-դուն աշխատանքը ձեզ կը մօտեցնէ ձեր տեն-չանքներին։

Ահա իմ բարեմաղթութիւնը։

—

Զատկական այցելութիւններիս ժամանակ մի ընտանիքում ես խօսակցութիւն ունեցայ մի երիտասարդ տիկնոջ հետ, կանանց ձգտումների մասին։

—Առաջ և այժմ միատեսակ չէին իմ ներքին ձգտումները, ասաց նա։

—Ի՞նչ բանի էիք առաջ դուք ձգտում, հե-տաքրքրվեցի ես։

—Փայլել, բացականչեց տիկինը։ Առաջ իմ բոլոր տրամադրութիւնը այդ բառի մէջ էր արտայայտվում «փայլել»։ Փայլել զգեստով, փայլել վայելուչ ձևերով, փայլել կրթութեամբ, փայլել դաշնամուրի նուագածութեամբ, փայլել պարով, խօսքով, ժպիտով. մի խօսքով փայլել,

տպաւորութիւն գործել, հիացում առաջ բերել,

Տիկինը ձեռքովը նշան արաւ, որ այդ բոլորը անցել է։

—Իսկ այժմ, հարցրի ես հետաքրքրութեամբ։

—Այժմ, վրա բերեց տիկինը, այժմ ամենից քիչ մտածում եմ ես փայլելու մասին։ Այժմ ես պահանջ ունեմ միայն շ ր ջ ա ն ի, միայն մարդկանց։ Առաջ ես ուզում էի միակը լինել, իսկ այժմ ցանկանում եմ, որ ես տասնեակների և հարիւրաւորների մէջ լինեմ։ Շրջան է հարկաւոր, շրջան։ Առանց շրջանի ոչ մի կեանք չը կայ, ոչ մի գործ չէ կարելի անել, ոչ մի ստուգական ուրախութիւն չէ կարելի ունենալ։ Երբ որ մենք շատ կը լինենք թւով, երբ որ մենք միմեանց ձեռք կը մեկնենք, միմեանց կը մխիթարենք, այն ժամանակ և կը զգանք մեզ թէ ուժեղ և թէ փոքր ի շատէ երջանիկ։

Տիկինը հետաքրքրեց ինձ իր խօսակցութիւնով։

Տիկնոջ հիւրերից մէկը խօսեց ընտանիքի նշանակութեան մասին։

—Միթէ ես հերքում եմ ընտանիքը, բացականչեց տիկինը։ Ամենևին ոչ։ Ընտանիքը շատ գործ ունի կատարելու։ Ես խօսում եմ խելացի ընտանիքներից կազմուած շրջանի մասին։ Առանձին ընտանիքը շատ բան չէ կարող առաջացնել։ Միթէ առանց շրջանի կարելի է սերունդ ստեղծել։ Ոչ և ոչ։ Այդ բանը ես առաջ չը գիտէի, իսկ այժմ զգում եմ ամեն օր և ամեն մի ժամ։

Հիւրը հակաճառեց։ Նա պնդում էր, որ իւրաքանչիւր ընտանիք կարող է ինքն իրանով մխիթարուել, ինքն իրանով գոհ մնալ։

—Սխալ է և շատ մեծ սխալ, խօսքը կտրեց

digitised by A.R.A.R.@

տիկինը։ Մենք աննկատելի կերպով ստրուկ ենք հասարակութեան և կախված ենք հասարակական կարծիքից։ Որքան էլ ես, օրինակ, իմ զաւակներին ցանկանամ իմ կերպ կրթել, ես անկարող կը լինեմ աջող հետևանքների հասնել, եթէ չը կայ մի շրջան, որ փոքր ի շատէ համապատասխան լինէր իմ կրթական պահանջներին։

—Ի՞նչ էք ուզում ասել։

—Ահա ինչ։ Եթէ այն շրջանը, որի մէջ մենք ապրում ենք, ընկել է չքեղ հագուստների, ճոխ կենցաղավարութեան ետևից, ինձ համար շատ դժուար կը լինի իմ զաւակներին ազատ պահել շրջավայրում ընդունված սովորութիւնից։ Բայց երբ մենք նոր ընտանիքներս մի նոր շրջան կը կազմենք, միմեանց հետ կը պայմանաւորվենք, նոր հասարակական կարծիք կը կազմակերպենք, այն ժամանակ...

Մտաւ նոր հիւր և խօսակցութիւնը խանգարվեց։

—

Մի անծանօթ երիտասարդ ուղարկել է ինձ մի կարճ նամակ, որի մէջ խօսում է ամուսնութեան մասին։

Նա առիթ է բռնում «Մանրանկարներից» մէկում բերված խօսակցութիւնը, որտեղ Փեթակեանը կարծիքներ է յայտնում ամուսնութիւնների նուազ լինելու պատճառների մասին։

Իմ նամակագիրը ամուսնութիւնների աջողութիւնը որոնում է միայն կանանց մէջ և ասում է հետևեալը.

«Մեզ՝ երիտասարդներիս հարկաւոր է ոչ թէ օժիտ, այլ կեանքի ընկերուհի բուն իմաստով։ Մենք վախենում ենք ամուսնու-

digitised by A.R.A.R.@

թիւնից, որ ներկայումս պատճառ է լինում դժբաղդութիւնների։ Այնտեղ, ուր պէտք է ընտանիք կազմելու համար յենարան գըտնէինք, մի ծանր բեռն է բարձվում մեր ուսերի վրա, որի տակ մենք ճնշվում ենք»։

Իսկ օրիորդները մի գլուխ գանգատվում են, որ երիտասարդները ընկերուհի կամ բարեկամուհի չեն որոնում, որպիսին նրանք կը ցանկանային լինել իրապէս, այլ որոնում են օժիտ և բաժինք։

—

Արդեօք միմեանց չե՞ն հասկանում օրիորդները և երիտասարդները, թէ ուրիշ պատճառներ կան։

Արդեօք խելացի շրջանների կազմակերպութիւնը կը լուծէ՞ մասամբ և այս հարցը։

Եւ եթէ այո, ինչպէս պէտք է նպաստել խելացի շրջանների կազմակերպութեան։

Երբ պատասխան ստանամ, ձեզ էլ կը յայտնեմ։

digitised by A.R.A.R.@

CXXXIX

(20 *ապրիլի* 1903 *թ.*, *«Մշակ»* № 83)

Անցեալ օր առաւօտ, երբ ես կարդում էի «Մշակը», իմ աչքերը բևեռվեցին մի քանի տողերի վրա, որոնք զետեղված էին «Պատկերներ Րաֆֆիի կեանքից» բանասիրականի մէջ։

Նրանք գրվել էին քառորդ դար սրանից առաջ, 1877 *թւին։*

Նրանց գրողն է Րաֆֆին։ Խօսքը մեր ներկայ գործողներից մէկի մասին է։

Նրանք գրված են Ագուլիսից, որտեղ Րաֆֆին այդ ժամանակ ուսուցիչ է եղել։

Ահա այդ տողերը՝

«Վանահայրը—հայր Սուրէնեան վարդապետը միանգամայն թէ փոխ առաջնորդ է և թէ տեղւոյս երկսեռ դպրոցների տեսուչը, այլ և դասեր ունի աշխարհագրութիւնից և ընդհանուր պատմութիւնից։ Հայր Սուրէնեանը մի երիտասարդ կրօնաւոր է, որ վարդապետական վեղարի տակ պահպանել է ուսանողի և ուսումնականի մաքուր բնաւորութիւնը։ Շատ եռանդոտ և ազնիւ մարդ է»։

Ես մտածմունքի մէջ ընկայ։

Քսանհինգ տարի առաջ և այժմ։

Որքան գործ կարելի էր կատարել այդ քսանհինգ տարում, հաւատարիմ մնալով այն տիպին, որ նկարել է Րաֆֆին։

digitised by A.R.A.R.@

Նա ասում էր ինձ.

Սուրէնեանը այժմ արքեպիսկոպոս է, առաջնորդ է, գիրք ունի, գուցէ նոյն իսկ մի քանի տասնեակ հազարների տէր է, մի ամբողջ թեմի հոգևոր գործերի ղեկավարն է. մի խօսքով նա բոլոր միջոցներն ունի իրագործելու շատ օգտաւէտ բաներ, որոնք քսանհինգ տարի առաջ անհնարին էին մի փոքրիկ ուսանում գործողի համար։

Իսկ ինչ էր ասում իրականութիւնը։

Ես այդ հարցի պատասխանը ձեզ չեմ ներկայացնի, որովհետև ես ամենևին զբաղված չէի Սուրէնեանի գործունէութեան հաշուեկշռով։ Ես միայն մի բան գիտէի — այն է, որ անկարելի կը լինէր գրել հետևեալ տողերը՝

«Հայր Սուրէնեանը արքեպիսկոպոսական վեղարի տակ ևս պահպանել է, ինչպէս և քսանհինգ տարի առաջ, ուսանողի և ուսումնականի մաքուր բնաւորութիւնը. շատ եռանդոտ և ազնիւ մարդ է»։

Այդպիսի տողեր անկարելի կը լինէր գրել։

Իսկ այդպիսի տողերի, այդպիսի մի վկայականի առաջ կորցնում են իրանց հրապոյրը և գիրքը, և աստիճանը, և տնտեսած գումարները, եթէ գոյութիւն ունեն։

Այդ ժամանակ իմ սենեակը մտաւ բժիշկ Ամոքեանը։

Ես նրան պատմեցի բոլորը, ներկայացրի իմ խորհրդածութիւնները.

—Ինչպէ՞ս էք գտնում իմ ձևակերպութիւնը, հարցրի ես։ Միթէ չարժէր բոլորը զոհել մի այդպիսի համառօտ, բայց գրաւիչ ծառայացուցակի համար։

—Անկասկած, անկասկած, վրա բերեց բժիշ-

digitised by A.R.A.R.@

կը։ Բայց բարեբաղդաբար հանգամանքները այնպէս էին կարգաւորված, որ զոհելու կարիք էլ չը կար և ոչ ոք զոհ էլ չէ պահանջում։

—

Այնուհետև հարցը ընդհանրացաւ և մենք սկսեցինք խօսել մեր նորագոյն վարդապետների, մեր ուսանողների, մեր կեանքի մէջ գործող երիտասարդների մասին։

—Ինձ մի բան շատ վրդովում է, յայտնեցի ես, մեր գործողների վերաբերմամբ։ Ահա ինչ։ Մեղադրել բացարձակ կերպով, թէ ինչու մարդիկ հերոսներ չը հանդիսացան—ես քաշվում եմ։ Ես լաւ գիտեմ, որ կան խոչընդոտներ կեանքի մէջ, որ միջավայրը խեղդող և մաշող ազդեցութիւն է գործում մարդկանց վրա։ Այդ գիտեմ և յաճախ զգուշանում եմ անպայման դատապարտելու նրանց։ Սակայն, մի բանի հետ չեմ հաշտվել և չեմ հաշտվում։

—Հետաքրքրական է։

—Չեմ հաշտվում այն բանի հետ, որ նախկին գործողները կամ գործել ցանկացողները իրանք խանգարող են հանդիսանում ուրիշ աւելի թարմ գործողների համար։ Բաւական չէ, որ իրանք թողել են գործողների շարքերը, դասալիք են դարձել, բաւական չէ, որ իրանք չեն աջակցում և նպաստում նոր գործողներին, այլ և յաճախ ուղղակի իբրև վնասողներ և խանգարողներ են ներկայանում։

—Ճիշդ է։

—Եւ այդ հանգամանքը շատ ծանր է ազդում գործի վրա, որովհետև գործողի հակառակորդը նոյն դասակարգի մարդն է։

—Բայց կեանքը կանգ չէ առնում, վրա բերեց Ամոքեանը։ Երիտասարդական գործունէու-

digitised by A.R.A.R.@

թեան առաջին շրջանի գաղափարները և գործնական ձեռնարկութիւնները իբրև սերմեր տարածվում են այս ու այն կողմ և, արմատ բռնելով յարմար տեղերում, ստեղծում են նոր կեանքի պայմաններ։ Եւ յաճախ նախկին գործողը, որ մոռացել է իր երիտասարդական եռանդները, ուժգին հարուածներ է ստանում այն նոր և թարմ կեանքից, որի կազմակերպութեանը մի ժամանակ նա նպաստել է։ Եթէ նախկին գործողը, ինչպէս ասում էք, շատ անգամ հակառակորդ է դառնում նոր գործողին, միւս կողմից սա, այս նոր գործողը, կարողութիւն ունի նախկին գործողի երեսովը տալ նրա ապիկարութիւնը, նրա դատապարտելի դիրքը և դրանով նրան ոչնչացնել։

Դա էլ մխիթարութիւն է։

digitised by A.R.A.R.@

CXL

(27 ապրիլի 1903 թ., «Մշակ» № 88)

Գնանք ձեզ հետ այսօր մի խուլ անկիւն։
Խուլ անկիւնը Թիֆլիսի մէջն է։
Եւ այդ խուլ անկիւնը ունի իր թատրոնը։
Հետաքրքրական մի երեւոյթի հետ մենք գործ ունենք։
Ուրեմն հետեւեցէք ինձ։

—

Թատրոնի առաջ խռնված էր բազմութիւն։

Սպասում էին ներկայացման սկսվելուն։

Դեռ առաջին զանգակը չէին տուել, ուստի դեռ ոչ ոք չէր մտնում դահլիճ։ Մարդիկ խումբ-խումբ կանգնած խօսակցում էին։

Ես առաջին անգամն էի այդ թատրոնում։ Ինձ հետաքրքրում էր ամբողջ գործի կազմակերպութիւնը։

Թատրոնի գործի ղեկավարներից մէկը տալիս էր բացատրութիւններ։

—Որքա՞ն էք վճարում թատրոնի վարձ իւրաքանչիւր ներկայացման համար, հարցրի ես։

—Տասը րուբլի, պատասխանեց նա։

—Այստեղ միայն տասը րուբլի, նկատեց մի կողմնակի պարոն, իսկ հայոց դրամատիկան խումբը վճարում է արտիստական ընկերութեան թատրոնին երեք հարիւր րուբլի։

digitised by A.R.A.R.@

—Երեսուն անգամ աւելի, բացականչեց մի գպրոցական աշակերտ։

Մի քանի ուրիշ անձեր ևս խառնվեցին խօսակցութեան։

—Որքան ինձ յայտնի է, միջամտեց մի պարոն, հայոց դրամատիկան խումբը երեք հարիւր րուբլի չէր տալիս, այլ երեք հարիւր քան րուբլի։

—Ճիշդ է, վրա բերեց առաջին խօսակիցը, անցեալ տարի տալիս էին 320 րուբլի, իսկ առաջիկայ տարվայ համար վերցրել են 280 րուբլով, ուրեմն միջին թւով անում է 300 րուբլի։

—Այստեղ տասը րուբլին էլ մեծ փող է, վրա բերեց թատրոնի ղեկավար անդամը։

—Ի հարկէ, ի հարկէ, նկատեցին միւսները։

—

Այս խօսակցութիւնը տեղի ունէր Հաւլաբարի ժողովրդական թատրոնի առաջ։

Ես գնացել էի տեսնելու կրթական զուարճութեան այդ հաստատութիւնը, որ հինգ ամսից ի վեր գործում է ժողովրդի համար։

Գործը նոր է, դեռ ամուր կազմակերպութիւն չէ ստացել, բայց ունի իր համար պաշտպաններ, ոգևորված բարեկամներ, ջատագովներ։

—Թատրոնին տալիս ենք 10, երաժշտութեան 5, յայտարարութիւնների և ծրագիրների տպագրութեան 5, վարսավիրին $5^1/_2$, ունենք ուրիշ ծախքեր ևս։ Միջին թւով մենք ունենք ներկայացման ծախք 35 րուբլի, բայց կան դէպքեր, երբ պահանջվում է մի 5—10 րուբլու յաւելուած ևս։

—Օրինակ, բացատրեց մի ուրիշը, Ասլան-

digitised by A.R.A.R.@

Բալասի գնելու համար պահանջվեց աւելորդ ծախք դեկորացիայի վրա։

—Աշխատում ենք, չարունակեց ղեկավար անդամը, որքան կարելի է խնայողութիւն անել. զգեստները բերում ենք մեր տներից, վերցնում ենք ծանօթներից....

—

Զանգը տուեին. մենք ներս մտանք։

Թատրօնական դահլիճը բաւական վայելուչ սենեակ է և կարող է տեղաւորել 200—250 անձ։ Աթոռները դրված են երկու կողմից, իսկ դահլիճի երկարութեամբ միջանցք է թողված հանդիսականների երթևեկութեան համար։

—Ի՞նչպէս են տեղերի գները, հետաքրքրվեցի ես։

—Առաջին կարգը 50 կոպէկ է, իսկ վերջին կարգերը 10 կոպէկ. Երբ ցանկացողները շատ են նրանք կանգնում են, վճարելով դարձեալ 10 կոպէկ։

Շինված են նաև երկու օթեակներ, որոնցից մէկը չէ ծախվում և վերապահված է թատրօնատիրոջ համար, իսկ միւսը տրվում է ցանկացողներին։ Ես վերցրի այդ օթեակը։ Նա բարձր դիրք ունի և այդտեղից կարելի էր տեսնել հանդիսականներին։

Սկսվեց երաժշտութիւնը։

Ոչ եւրոպական էր, ոչ ասիական։

Նուագում էր էրզրումցիների խումբը։ Մէկը սանթուրի, միւսը ջութակի, երրորդը ֆիսհարմօնի, չորրորդը մի ուրիշ գործիքի վրա։

Մի քանի եղանակներ հետաքրքրական էին։ Հասարակութիւնը շատ հաւանեց հայկական երգերից կազմված խառնուրդը։

—Ուրիշ անգամ ունենում ենք և եւրոպա-

digitised by A.R.A.R.@

կան երաժշտություն, բացատրեց ղեկավար անդամը, օրինակ մինչև այժմ նուագում էր Մուրաչկոյի խումբը։

—

Հանդիսականները մաքուր հագնված հասարակ մարդիկ էին։ Կային տիկիններ, օրիորդներ, փոքրիկներ հին և նոր տարազներով։

—Ո՞վքեր են նրանք, հարցրի ես։

—Ահա այս մարդիկը արհեստաւորներ են, այն խումբը Ադէլխանեանի գործարանի ծառայողներից է բաղկացած, սրանք խանութի ծառայողներ են, իսկ աշակերտներին և աշակերտուհիներին ինքներդ գիտէք։

Բաժանեցին մեզ ներկայացման ծրագիրներ։

—Տօ, ինձ էլ տուր, նկատեց մի կինտօ, գանա իս չիմ ուզի իմանայ, թէ ով է խաղացողը։

—Դուն կարդալ չը գիտես, կատակով ասաց նրան հարևանը։

—Ինչի՞ չիմ գիդի, վիրաւորված վրա բերեց կինտօն, քիզմէն ուփրօ լաւ գիդիմ։ Չիմ գիդի, չիմ գիդի. սրան մտիկ տուր։

—

Տուին երրորդ զանգը։

Բոլորի աչքերը ուղղվեցին դէպի բեմը։

Վարագոյրի նկարները բնորոշ են։ Այնտեղ դուք տեսնում էք Հաւլաբարի մի տեսարանը և ս. Սարգսի շրջակայքի մի կտորը։

Վարագոյրը բարձրացաւ։

Դահլիճում տիրեց լռութիւն։

Բեմը մեծ չէ, բայց յարմարեցրած է զանազան տեսակ պիեսների համար։

Դեկորացիաները բաւական ճոխ են։

Խաղացողները—սիրողներ են։ Երբեմն նրանց հետ մասնակցում են դերասաններ և դերա-

digitised by A.R.A.R.@

սանուհիներ։ Այդ օրը մասնակցում էին տիկին Զաբէլ և Ամօ-Խարազեան։

Սիրողների մէջ մի քանիսը փորձւած են և պահում են իրանց բեմի վրա բնական և ազատ։ Բայց կան և շատ անփորձներ։

Հանդիսականները ուշադիր են։

Գործողութիւնը վերջացաւ և ահա դահլիճը թնդաց ծափահարութիւններով և աղաղակներով։

—

Միջարարին դուրս եկանք թատրոնի շուրջը գտնւող այգին։ Հասարակութեան համար շինւած է և բուֆէտ, որտեղ կան ուտելիք և ըմպելիք, բայց չը կան ոգելից խմիչքներ։

Զանգը նորից հրաւիրում է դէպի դահլիճը։

Նուագեց երաժշտութիւնը։

Բացվեց վարագոյրը։

—

Ես լսեցի դատողութիւններ պիեսի մասին, լսեցի կարծիքներ դերակատարների մասին։

Այդ հասարակ հանդիսականների մէջ շատերը արդէն ծանօթ են թատրոնական մի տարւայ ներկայացումների հետ և կարողանում են որոշ հայեացքներ յայտնել տեսած-լսածի մասին։

—Նոր է գործը, նկատեց մի պարոն, եթէ մի 10—15 տարի այսպէս շարունակվի, այն ժամանակ մենք կունենանք մի քանի սերունդներ արդէն ծանօթ թատրոնական մի շարք գրուածքների և նրա մէջ դուրս բերւած երևոյթների ու գաղափարների հետ։

—Սակայն, վրա բերեց ղեկավար-անդամը, անհրաժեշտ է և դրսի օգնութիւն։ Մեր ծախքերը քիչ են, զգուշութեամբ են կատարւում, բայց նրանք մշտական են և անխուսափելի,

digitised by A.R.A.R.@

Մեր մուտքը հազիւ է ծածկում ծախքերը, իսկ երբեմն և չէ ծածկում։ Նոյն իսկ կարող է պարտք գոյանալ։ Հարցնում եմ ձեզ՝ ով պէտք է տայ այդ պարտքը։ Մենք առանց այն՝ և ժամանակ ու աշխատանք ենք զոհում սկսված գործը պահպանելու և շարունակելու համար, իսկ քանի գնայ գործը պէտք է բարդանայ և ծախքեր պահանջէ։

—

Պէտք է օգնել գործին, պէտք է աջակցել սիրողների խմբին։

Եւ որքա՜ն քիչ նպաստներով կարելի է համակրելի և բարի գործը պահպանել։

Տեսնենք, արդեօք չա՞տ կը գտնվեն մարդիկ, որոնք նուիրէին գումարներ մի այդպիսի բարի նպատակի համար։

—

Ես Թողի ժողովրդական թատրօնը շատ քաղցր տպաւորութեան տակ։

Ես գիտէի, ես տեսայ, որ այդ թատրօնը դեռ անկատար է, դեռ շատ պակասութիւններ ունի, բայց այն, ինչ որ արված է, այնքան գնահատելի է, որ այժմ արդէն խօսք կարող էր լինել միայն նրա դրական կողմի մասին։

digitised by A.R.A.R.@

CXLI

(4 մայիսի 1903 թ., «Մշակ» № 94)

Իմ բարեկամ Սօմարեանը մի թուլութիւն ունի դէպի գարունը։ Նա միշտ սպասում է գարնան գալուն և երբէք գոհ չէ մնում այն գարունից, որ արդէն եկել է։

—Ա՜խ, թող մի գայ գարունը, ասում է միշտ Սօմարեանը, և դուք կը տեսնեք. թէ ինչպէս մենք կը թարմանանք և կը վերակազդուրվենք։

Ահա գարունը մեր առաջն է։ Մենք կանաչի, մեղմ օդի և արթնացող բնութեան մէջ ենք։

—Չէ, գանգատվում է Սօմարեան, ներկայ գարունը ինչ որ մի պակասութիւն ունի, նա չէ ոգևորում, չէ ցնցում, հրճուանք չէ բերում, ցնծութիւն չէ տալիս։

Ամեն տարի լսում եմ ես այդ գանգատը։ Բայց Սօմարեանը մոռանում է իր տրամադրութիւնների փոփոխութիւնը։

—Անցեալ տարի էլ դուք դժգոհ էիք գարունից, նկատեցի ես։

—Ճիշդ է, փոքր ինչ դժգոհ էի, որովհետև ես չափազանց ջղային էի և ամեն մի անախորժութիւն ինձ գրգռում էր։

—Իսկ նախանցեալ տարին, վրա բերեցի ես։

—Նախանցեալ տարին, նախանցեալ տարին, կմկմաց Սօմարեանը, այն ժամանակ ես մեծ

յոյսեր և երազներ ունէի և ինձ ոչ մի գարուն չէր կարող գոհացնել։

—Իսկ նրանից առաջ, հարցրի ես։

—Չեմ յիշում, բացականչեց Սոմարեանը, բայց փաստն այն է, որ ես միշտ սպասում եմ գարնան և իմ ամբողջ էութիւնը ասում է, որ միայն գարունը կարող է մեզ սփոփել և մխիթարել։

—

—Արդեօք դա ծերութեան նշան չէ, հարցրեց մեր ընդհանուր ծանօթը, հիասթափուել եղած գարուններից և սպասել մի ինչ որ չնաշխարհիկ գարնան։

—Ինչպէս թէ ծերութեան, բացականչեց Սոմարեանը։

—Ահա ինչպէս։ Դուք մի ժամանակ, երբ երիտասարդ էիք, զգացել էք գարունը իր բոլոր ոյժով և թովիչ ազդեցութեամբ, այդ գարունը դարձել է ձեզ համար մի ոսկէ երազ, մի հէքիաթ, որը այլ ևս չէ կրկնվում ձեզ համար։ Ձեր ջղերը այլ ևս առաջվանը չեն, ձեր զգացմունքները բթացել են։

—Հասկացայ, հասկացայ, խօսքը կտրեց Սոմարեանը, գիտեմ, ինչ պէտք է ասես։ Ոչ, այդ չէ։ Իմ մանկական գարունը յաճախ կրկնվում է և այժմ էլ յաճախ վայելում եմ գարնան հրճուանքը այնպէս, ինչպէս իմ անմեղ և անհոգ մտածողութեան օրերում։

—Ուրեմն, ինչո՞ւ գոհ չէք մնում ձեր սպասած գարուններից։

Սոմարեանը մտածութեան մէջ ընկաւ։

—Ինչու, վրա բերեց մեր ընդհանուր ծանօթը, երևի այն պատճառով, որ բացի բնութեան հրաշալիքներից, անհրաժեշտ են և ուրիշ ու-

digitised by A.R.A.R.@

բախտաւորութիւններ, իսկ դուք ամբողջ յոյսը դրել էք ծաղիկների, կանաչի և գետակի խոխոջիւնի վրայ։

—Գուցէ, գուցէ, մրմնջաց Սօմարեանը։

—Դուք այլ ևս անհոգ մանուկ չէք, չարունակեց մեր ծանօթը, որ ձեզ մոռանայիք ստուերի դալարագոյն ծառերի սօսափիւնի ալիքներում, դուք հասուն երիտասարդ էք և ձեր գլուխն ու սիրտը լիքն են հազար ու մի մտածութիւններով և տենչանքներով։ Ձեզ համար բնութեան տօնը բաւական չէ կատարեալ զարուն ստեղծելու համար։

Սօմարեանը ոչինչ չը պատասխանեց։

---

digitised by A.R.A.R.@

CXLII

(11 *մայիսի* 1903 *թ*., «*Մշակ*» № 99)

Գիւտը եղաւ յանկարծակի։

Եւ ահա ինչպէս այդ տեղի ունեցաւ։

Մենք խօսում էինք օրվայ չարիքի, քաղաքական ընթացիկ դէպքերի և գլխաւորապէս Ալբանիայի և Մակեդոնիայի մասին։

—Երկիրը տանջվում է մշտական աւազակութիւններից և աւարառութիւններից, ասում էր խօսակիցներից մէկը. պէտք է նրանց առաջն առնել և այն ժամանակ երկիրը կը սկսէ առաջ գնալ։

—Րէֆօրմները կօգնեն, յայտնեց միւսը։

—Նայած, թէ ինչպէս են այդ րէֆօրմները, առարկեց երրորդը։

Ամեն մարդ իր կարծիքն էր յայտնում։

—Պարոններ, միջամտեց Մաշիկեանը, դուք ուզում էք աւազակութիւնների առաջն առնել, դուք ուզում էք րէֆօրմներ ծրագրել. բայց նախ քան այդ բանով զբաղվելը անհրաժեշտ է վճռել այն հարցը, թէ ո՞վ և ինչն են աւազակութիւնների պատճառները։

Մենք վիճաբանեցինք։ Մէկը պնդում էր, որ պատճառը ալբանացիները, արնաւուտները և բաշիբոզուկներն են, միւսը ենթադրում էր, որ մահմեդական կրօնն է պատճառը, երրորդը առարկում էր, որ կրօնը մեղաւոր չէ, այլ

digitised by A.R.A.R.@

պաշտօնեաների ստոր բարոյականը՝ նրանց կաշառակերութիւնը, հարստահարող բնաւորութիւնը... Իւրաքանչիւրն իր կարծիքն էր պաշտպանում և բերում էր ապացոյցներ։

—Ես գտայ, բացականչեց յանկարծ Կանաչեանը, գտայ, գտայ։

Նա նստած էր մեր խմբից հեռու, լուսամուտի մօտ և կարդում էր լրագիրներ։ Նա չէր մասնակցում մեր խօսակցութեանը։

—Ի՞նչ գտաք, դիմեցինք մենք նրան։

—Գտայ պատճառը, հանդիսաւոր կերպով յայտնեց նա, գտայ աւազակութիւնների իսկական պատճառը։

—Հետաքրքրական է, բացականչեցինք մենք, դէհ շուտով յայտնեցէք ձեր կարծիքը։

—Ահա լրագրի այս համարը, սկսեց նա, բացատրում է պատճառը։ Աւազակութիւնների և աւարառութիւնների պատճառը պէտք է համարել բօլգարներին, մակեդօնացիներին, սերբերին...

—Ի՞նչ, ինչ էք դուրս տալիս, նկատեցին մի քանիսը բարկութեամբ։

—Այո, այդպէս է, շարունակեց Կանաչեանը, գոնէ այս լրագրի ասածներից ես այդպէս եմ եզրակացնում։

Եւ նա դրեց մեր առաջ մայրաքաղաքի գրական քամէլէօնի վերջին համարը։

—Ահա այդտեղ, ցոյց տուեց Կանաչեանը, յայտնված է, որ կովկասեան աւազակութիւնների պատճառը վերջապէս գտնված է և այդ պատճառը հայն է։

Մեզ համար պարզվեց հանելուկը։ Մենք ծիծաղեցինք։ Բայց վէճը չէր վերջացել։

—Պարոններ, շարունակեց Կանաչեանը, եթէ

digitised by A.R.A.R.@

կամենում էք, այդ կարծիքը մասամբ ուղիղ է, աւազակութիւնների պատճառը կարող է լինել և այն տարրը, որ աւազակութիւնների անմիջական զոհն է։

—Ի՞նչ էք ուզում ասել։

—Լսեցէք, ժպտաց Կանաչեանը։ Աւազակին աւար է հարկաւոր և որտեղ նա կարող է գտնել այդ աւարը, եթէ ոչ աշխատող ու արդիւնաբերող տարրի մէջ։ Եթէ այդ տարրը գոյութիւն չունենար, այն ժամանակ կողոպտելու ոչինչ չէր լինի և գուցէ ներկայ աւազակները սկսէին մտածել աշխատանքի մասին։

—Այո, միջամտեց Մաշինկեանը, բայց ձեր լրագիրը այդ չէ ասում. նա ձգտում է այն միտքը ներշնչել, որ իբր թէ աւազակները արդիւնք են հայերի հարստահարութիւններին, որ իբր թէ աւազակները զոհեր են, հարստահարված խեղճեր են և ակամայ բողոքողներ։

Կանաչեանը ծիծաղեց։

—Շատ բան կասէ, վրա բերեց նա, լեզուի տակ ոսկր չը կայ, խիղճն էլ մեռել է, ինչ կուզէ կասէ։ Հայը իր ամբողջ գոյութեամբ աւազակութեան և աւարառութեան թշնամին է եղել դարերի ընթացքում և այժմ, երբ պէտք է զսպել և սաստել աւազակին, դարձեալ մեղաւոր են ուզում դուրս բերել զոհին։ Դա այնպիսի մի անհեթեթութիւն է, որ ինչպէս ժողովուրդը ասում է «եփած հաւի ծիծաղն էլ կը բերէ»։ Քիւրդը թալանում է հային, մեղաւոր է հայը։ Այդ լօգիկայով պէտք է հետեցնել, որ եթէ ալբանացի աւազակը թալանում է մակեդօնացի աշխատաւորին, մեղաւոր է մակեդօնացին։ Եթէ խունխուզները Մանջուրիայում աւազակութիւններ են անում, մեղաւոր է

digitised by A.R.A.R.@

մանջուր աշխատող ազգաբնակութիւնը, իսկ խունխուզները միայն բողոքողներ են։

—Դա մեր դեկադենտական դարի փիլիսոփայութեան արդիւնքն է։

—Փառք կը լինէր, վրա բերեց Կանաչեանը, եթէ դա դեկադենտութեան սխալ աշխարհայեացքի արդիւնք լինէր, միայն մի թիւրիմացութիւն և մոլորութիւն լինէր, եթէ այդպիսի գրուածքների և դատողութիւնների հիմքում թագցված չը լինէր տգեղ և սառը նպատակ, մի չար դիտաւորութիւն, որի համար նշանակութիւն չունեն ոչ ձեր փաստերը և ապացոյցները, ոչ ձեր արդար ցասումը և ոչ ձեր համակրելի կուլտուրական ձգտումները։

—

Մենք նորից ցանկացանք վերադառնալ նախկին թեմային, բայց անկարող եղանք։

Մենք զբաղվեցինք մի ուրիշ վէճով, որի մասին արժէ մի օր խօսել։ Եւ գուցէ խօսեմ։

digitised by A.R.A.R.@

CXLIII

(18 *մայիսի* 1093 *թ.*, *«Մշակ»* № 104)

Ես կանչված էի Ջան գիւլումի։

Հաւաքվել էին օրիորդներ, տիկիններ և երիտասարդներ։

Սափորի մօտ նստած անմեղ մանուկը հանում էր վիճակը և տալիս տէրերին։

Ամեն մի վիճակ յարուցանում էր քրքիջ, կատակային նկատողութիւններ և չարաճճի հայեացքներ։ Բայց վիճակ ստացողներից գոհ էին ոչ բոլորը։

Վիճակ ասողները երբեմն խմբով էին երգում, երբեմն առանձին։ Մի քանիսն էլ յօրինում էին իրանցից ոտանաւորներ։ Այս վերջինները գրած չունեմ, ուստի առաջ կը բերեմ մի ուրիշ անգամ, երբ կը ստանամ հեղինակներից կոկ ու պատրաստ։

Ջան գիւլում ջան-ջան
Ջան ծաղիկ ջան-ջան

—

Խումբը երգեց՝

Աղջիկ, կապէդ ալ պիտի,
Բօխչէդ ծալ-ծալ պիտի,
Ում տունն էլ որ երթաս՝
Ոսկի սարէսար պիտի։

Վիճակը դուրս եկաւ մի օրիորդի, որ չատ

digitised by A.R.A.R.@

հասարակ էր հագնված և ըստ երևույթին ոսկու մասին չէր մտածում։

—Երևի մտքումդ շատ ես սիրում ոսկին, նկատեցին ընկերուհիները, վիճակը գուշակեց։

—Երևի դրուստ է ասում, ծպտաց օրիորդը, միթե վիճակը սուտ կասի։

Խումբը երգեց՝

Անց կենամ գետի կուռը,
Քաղեմ մի դաստայ նուռը,
Ով իմ սիրածն ինձ չի տայ,
Կը քաշեմ խանի դուռը։

Վիճակը ընկաւ մի փաստաբանի, որը շատ հաւանեց իր բաղդը։ Նա, ի հարկէ, մտադիր չէր խանի միջոցով սիրածն առնել, բայց և առիթ բաց թողնողը չէր։

Խումբը երգեց՝

Մեր դրան առաջ մի դարան՝
Տղեքն եկան նի դառան.
Կուռս տարայ, որ բռնեմ՝
Թագի թուլայ դիփ դառան։

Մանուկը հանեց վիճակը։ Դուրս եկաւ, որ դա պատկանում է մի երիտասարդի։ Օրիորդների ճլվլոցը վիրաւորեց երիտասարդին և նա սպառնալով նկատեց՝ «սպասեցէք, տեսնենք ձերը ինչ կը դուրս գայ»։

Խումբը երգեց՝

Այ տղայ, իր անել տուր,
Մի մատը վիր անել տուր.
Ինձանից քեզ ճար չը կայ,
Քաքուլդ վեր անել տուր։

Մանուկի հանած վիճակը հասաւ մի պարոնի, որ նոր էր հանել հոգևորականի փարաջան և մտել աշխարհականների դասը։

digitised by A.R.A.R.@

Խումբը երգեց՝

Առուիդ տրասին ղուրբան,
Գինուդ կարասին ղուրբան.
Ճամբիցը գալող աղբեր,
Սրտիդ հաւասին ղուրբան։

Վիճակը պատկանում էր մի այգեգործի, որը գնում է Էջմիածին այնտեղի այգիները մշակելու։

Խումբը երգեց՝

Մեր տան տակին վար կանեմ,
Ջալ ագռաւին քար կանեմ.
Թէ իմ սիրածը ինձի տան,
Գժութիւնս թարգ կանեմ։

Վիճակը ընկաւ Թիւրքահայ մի պանդուխտի։
Խումբը երգեց՝

Դու նստել ես գերանին,
Ղարղու չուխն բերանին.
Ոսկէ ղայթան պիտ գործեմ,
Դնեմ ջիբիդ բերանին։

Վիճակը ընկաւ մի բանաստեղծի, որ սակայն դժգոհ մնաց այդ ստանաւորից. Նա վիրաւորվեց «ղարղու չուխ» բառերից։

Խումբը երգեց՝

Արաղը հեչտացել ա,
Ճամբէքը կոչտացել ա.
Իմ Նանին խաբար տարէք
Մուշտարիս չատացել ա։

Վիճակը դուրս եկաւ Երեւանի երկաթուղու ինժեներին։

—Սա աղջկայ վիճակ է և ոչ տղայի, նկատեցին օրիորդները։

—Վիճակի դէմ խօսել չի լինի, նկատեց ին-

digitised by A.R.A.R.@

ժենները, երևի այս անգամ տղայի է վերաբե-րում։

—Ոչ, ոչ, միջամտեց մի ուրիշ պարոն, այդ վիճակը վերաբերում է Երևանի երկաթուղու և Արաքսի մօտ գտնվող բոլոր տեղերին. ինժենե-րը միայն միջնորդ է։

—Դա փիլիսոփայութիւն է, նկատեց մի օ-րիորդ. ինչ որ վիճակը տուել է, պէտք է այն-պէս էլ ընդունենք առանց երկար ու բարակ մեկնութիւնների։

Խումբը երգեց՝

Ջաղացս մանր մանր,
Քունս անուշ կը տանի.
Իմ եարս սարում, քօլում,
Իմ քունը ո՞նց կը տանի։

—Հետաքրքրական է, թէ սա ումը պէտք է լինի, հարցրեց մի երիտասարդ։

—Սա հակասական տանաւոր է, նկատեց մի ուրիշը, մէկ տեղ ասած է, որ քունը կը տանի, իսկ միւս տեղ կասկած է յայտնված, որ քունը ո՞նց կը տանի։

—Հանիր, հանիր վիճակը, դիմեցինք մանու-կին։

Վիճակը դուրս եկաւ քաղաքային ձայնա-ւորին։ Տիրեց մի տեսակ հիասթափութիւն։ Ուրիշ բան էինք սպասում։

Խումբը երգեց՝

Նախշատափին խնկի ծառ,
Խնձոր գցեմ արի, տար.
Ուրբաթ, շաբաթ քեզ մօհլաթ,
Լոյս կիրակի արի տար։

—Ի՞նչ վիճակ պէտք է լինի սա, հարցրեց մի ուսուցիչ, կիրակին մեզ համար հանգստու-

digitised by A.R.A.R.@

թեան օր է և այդ վիճակը աւելի մեզ կը պատչաճէր։

—Այստեղ խօսքը հանգստութեան մասին չէ, նկատեց մի օրիորդ, այդ բոլորովին մի ուրիշ բանի։

—Ի՞նչ բանի, հետաքրքրվեց ուսուցիչը։

Օրիորդը ուզում էր մեկնաբանել, բայց մանուկը հանեց վիճակը և բոլորը հետաքրքրվեցին, թէ ում պէտք է հասնի։

Վիճակը հասաւ կիրակի օրվայ ֆելիետոններ գրողին։

Խումբը երգեց՝

Մի բարձ եմ արել՝ ինն ա,
Մինն էլ եմ արել՝ ինն ա.
Գեանջու քարւանն գալիս ա,
Միջի թաւադն էլ ինն ա։

—Ո՞ւմը պէտք է լինի արդեօք, հարցրեց մի վարժուհի։

—Դա երևի մերը կը լինի, ասաց մի վաճառական։

—Անկարելի է, նկատեց մի վիպասան, դա առհասարակ օրիորդներինն է, որոնք Գեանջու կամ Բագուի ճանապարհով սպասում են փեսացուների։

Վիճակը ընկաւ մի գինեվաճառի և դրանով մի վրդովմունք առաջ բերեց։ Անկասկած՝ վիճակը սխալվել էր։

Խումբը երգեց՝

Սանդ կը ծեծեմ, խաղ-կանեմ,
Մաշիկը ոտիս լախ կանեմ.
Այ տղայ, դու չատ մի խօսալ,
Մուկն ըռխիցդ կախ կանեմ։

digitised by A.R.A.R.@

—Ոչ ոք չի ուզենայ այդ վիճակը ստանալ, բացականչեց մի օրիորդ։
—Ինչու, վատ վիճակ չէ, նկատեց մի երիտասարդ։
Վիճակը ընկաւ բարեգործական ընկերութեան վարչութեան անդամին։
Խումբը երգեց՝

Սարերի սինձը ինչ է.
Կաթն ու բրինձը ինչ է.
Եարն, որ եարին սիրէ,
Խօսք ու զրոյցն ինչ է։

Վիճակը ընկաւ մի ամուրի երիտասարդի։
—Չեմ հասկանում սրա միտքը, յայտնեց նա։
—Եւ երբէք էլ չէք հասկանայ, նկատեց մի տարիքով օրիորդ։
Խումբը երգեց՝

Գիւլում կասեմ կը շարեմ,
Ջուալը կածեմ կը լարեմ,
Թամամ աշխարհ ման կը գամ,
Քեզնից լաւը կը ճարեմ։

Վիճակը ընկաւ մի վաճառականի, որը մնաց իր վիճակից շուարած։

—

Միւս վիճակները համապատասխանում էին յօրինված ոտանաւորների, որոնց մասին այսօր պէտք է լռութիւն պահպանել։

---

digitised by A.R.A.R.@

CXLIV

(25 *մայիսի* 1903 *թ.*, *«Մշակ»* № 110)

Ահա ինչ բանի մասին էինք մենք վիճում։

Թիֆլիսի հասարակական հիմնարկութիւններից մէկում տեղի էր ունեցել երկու պարոնների մէջ անախորժ ընդհարում՝ հայհոյանքներով և ծեծով։ Դէպքը նոյնութեամբ նկարագրըւած էր լրագրում։

—Շատ ծանր տպաւորութիւն է գործում այդ նկարագիրը, յայտնեց մէկը, պէտք էր ուրիշ կերպարանք տալ գործին։

—Ինչպէ՞ս թէ ուրիշ կերպարանք, բորբոքւեց միւսը, մի՞թէ կարելի է կեղծել իրողութիւնը։ Ասացէք, խնդրեմ, հարցնում եմ ձեզ, այն, ինչ որ գրւած է, եղելութիւն է, թէ ոչ։

—Այո, եղելութիւն է, պատասխանեց առաջինը։

—Եթէ եղելութիւն է, վրա բերեց միւսը, ուրեմն նա պէտք է հարազատ կերպով էլ արձանագրւած լինէր, ինչպէս և արւած է։

—Այո, այդ այդպէս է, նկատեց առաջինը, բայց անյարմար է։

Ահա վէճը այն հարցի մէջն էր, թէ արդեօք փաստական ճշդութիւնը և հարազատութիւնը բաւականաչափ իրաւունք էին տալիս, որ հրատարակւած լինէր յայտնի դէպքի նկարագրութիւնը։

digitised by A.R.A.R.@

—Ի հարկէ, իրաւունք են տալիս, պնդում էր երկրորդ խօսակիցը, իրաւունք են տալիս, որովհետև դէպքը տեղի է ունեցել հասարակական հիմնարկութեան մէջ։ Ամենքը խօսում են այդ դէպքի մասին նրա բոլոր մանրամասնութիւններով, իսկ լրագիրը նոյնը արտայայտել է տպված տառերով։

Վէճի մէջ միջամտեցին և միւսները։

Կարծիքները սաստիկ բաժանվեցին, որովհետև իւրաքանչիւրը սկսեց յիշել զանազան դէպքեր և աշխատում էր օրինակներով ապացուցանել իր կարծիքի հիմնաւորութիւնը։

—Մի՛թէ կարելի է հրատարակել հայհոյանքները բոլոր կեղտոտ բառերով, մի՛թէ կարելի է նկարագրել այնպիսի մանրամասնութիւններ, որոնք վիրաւորում են մեր աչքը և լսելիքը, մի՛թէ թոյլատրելի է պատմել այնպիսի խօսակցութիւններ, որոնց մէջ զրպարտված են անմեղ անուններ։

Այդպէս բողոքում էին մի քանիսը։ Մեծամասնութիւնը, սակայն, ինչպէս և պէտք էր սպասել, միանում էին այն կարծիքին, թէ չը պէտք է եղելութիւնը թաքցնել և մանաւանդ խեղաթիւրել նրան։ Մի պարոն էլ համակրելով մեծամասնութեան կարծիքին, պնդում էր, որ որոշ դէպքերում պէտք է բացառութիւններ անել։ Շատերը հաւանութիւն տուին նրա կարծիքին, սակայն երբ սկսեց նա թուել մի առ մի բացառիկ դէպքերը, այնպիսի մի երկար շարք հանդէս բերեց, որ բոլորովին շուարեցրեց իր խօսակիցներին։

—Ձեր բացառութիւնները այնքան շատ են, որ աւելի գերակշիռ են քան ձեր կանոնը, նըկատեցին նրան։

digitised by A.R.A.R.@

—Դուք ձեր բացառութիւններով աւելի վնասեցիք մեր հիմնական հայեացքին, քան մեր հակառակորդները։

—Բացառութիւններ գործ դնելն էլ պէտք է բացառութիւն լինի, կատակով նկատեց մի ուրիշը։

—

—Դուք կարդացի՞ք արդեօք, միջամտեց խօսակիցներից մէկը, Հալեվիի թատրոնական յիշողութիւնները։

—Ի՞նչ բան։

—Հալեվին պատմում է, որ երբ Պարիզում «Opera Comique» թատրոնում առաջին անգամ բեմ դրին Բիզէի «Կարմէն» օպերան, հանդիսականների մի մասի վրա շատ ծանր էր ազդել օպերայի վերջին տեսարանը։ Թատրոնի դիրեկտորը մի կողմ է կանչում Հալեվիին և խնդրում է, որ նա փոխէ օպերայի վերջը։ «Շատ տխուր է վերջը, առարկում է դիրեկտորը, ինչո՞ւ չամուսնացնել հերոսներին։ Գոնէ մի սարքէք, որ նրանք միմեանց սպանեն. ես այդպէս կը բարեփոխէի։ Օրինակ, Կարմէնը հէնց որ տեսնում է դաշոյնը, պէտք է վախենայ և իսկոյն ընկնի իր սիրողի գիրկը. իսկ մի քանի ժամանակից յետոյ փախչէ իր հայրենի լեռները»։

—Հետաքրքրական է, լսվեցին ձայներ, յետո՞յ։

—Ցաւոն այն է, որ Հալեվին ի հարկէ չէ համաձայնում և օպերան մնում է անփոփոխ։ Այժմ ես ձեզ հարցնում եմ, եթէ Հալեվին չէ համաձայնում հնարած հերոսների արարքները փոխել, ինչպէս դուք ցանկանում էք, որ ես իսկական եղելութիւնը ուրիշ կերպարանքով ցոյց տամ։

—Դա ուրիշ հարց է, առարկեց միւսը, այդտեղ տիպի, հոգեբանական անալիզի հարց է։

—Իսկ այստեղ իրականութեան...

—

digitised by A.R.A.R.@

Խօսակցութիւնը փոխվեց այն խեղաթիւրումներին, որոնք տարիներ շարունակ կատարվում են որոշ գոյնի հրատարակութիւնների էջերում զանազան ազգութիւնների և մասնաւորապէս հրէաների վերաբերութեամբ։

—Ամենածանրը և ամենատխուրը այն է, նկատեց խօսակիցներից մէկը, որ Քիշինեվում կատարված յարձակումների մէջ ազդեցիկ և էական դեր են կատարել կուլտուրական դասին պատկանող անձեր, օրինակ, որոշ կրթութիւն ունեցող զանազան պաշտօնեաներ և քաղաքայիններ։

—Տարիներ շարունակ որոշ գոյնի մարդիկ տարածում էին ատելութեան և անհամբերողութեան սերմեր ազգութիւնների և հրէաների վերաբերութեամբ, նկատեց մի ուրիշը։ Մի ժամանակ Քրիստոս կշտամբում էր իր հայրենակիցներին, որ նրանք խտրութիւն են դնում իրանց ու սամարացիների մէջ, իսկ այսօր մենք՝ Քրիստոսի հետևողներս՝ նոյն խտրութիւնը դնում ենք մեր և հրէաների մէջ. շատ տեղերից նրանց վռնդել ենք, շատ դռներ փակել ենք նրանց առաջ. ահա ձեզ նոր սամարացիներ...

Մենք մտաբերեցինք շատ անախորժ դէպքեր ժամանակակից իրականութիւնից. Մենք տեսնում էինք, որ հորիզոնը դեռ խաւար է, որ ժողովուրդը դեռ ենթարկվում է չար ազդեցութիւնների հոսանքին. բայց չէինք յուսահատվում։

—Լոյսը պէտք է յաղթէ, համբերող ոգին պէտք է ոչնչացնէ ոխի և թշնամութեան զգացմունքները ազգերի մէջ։

Այդ հաւատը դեռ կենդանի է։

---

digitised by A.R.A.R.@

CXLV

(1 յունիսի 1903 թ., «Մշակ» № 116)

Երէկ առաւօտեան, երբ անցնում էի փողոցով, նկատեցի, որ ինձնից առաջ դանդաղ քայլերով գնում է իմ ծանօթ Անրիկեանը։ Ես արագացրի իմ քայլերը և հասայ նրան։

Անրիկեանը մտածմունքների մէջ էր և ինքն իր հետ խօսում էր։

—Չեմ հասկանում, չեմ հասկանում, մրմնջում էր ինքն իրան։

—Բարև Անրիկեան, գոչեցի ես։ Այդ ինչ մըտածմունքների մէջն ես։

—Ոչինչ, նկատեց նա։ Ինձ զբաղեցրել էին այսօրվայ հեռագիրները սերբիական գործերի մասին։ Ես ոչինչ չեմ հասկանում։

—Սպասենք մի քանի օր և ամէն բան կիմանանք բոլոր մանրամասնութիւններով, վրա բերեցի ես։

Անրիկեանը ծանօթ էր սերբիական պատմութեան և Սերբիայի քաղաքական կուսակցութիւնների ծրագիրների ու ձգտումների հետ։ Նրան զարմացնում էր զինւորական դասի այնքան մեծ մասնակցութիւնը ներկայ գործերում և ճգնաժամի այդքան սուր և ողբերգական ելքը։

—Այս անգամ, նկատեց նա, հասարակական հոսանքները խառնվել են տոհմական միտում-

digitised by A.R.A.R.@

ների հետ, ծրագիրները խառնվել են կրքերի բռնկումների հետ և ահա առաջ են բերել անսպասելի դէպքեր և յուզիչ տեսարաններ։ Բայց մութ կէտեր դեռ շատ կան։

—Ձեր կարծիքը, հարցրի ես։

—Երկու տարի առաջ սերբիական թագաւոր Ալէքսանդրը շատ սիրելի էր իր ժողովրդին։ Այդ թագաւորը տուեց Սերբիային լայն քաղաքական իրաւունքներ, որոնց մասին երկար տարիներ երազում էր սերբիական ժողովուրդը։ Ո՞վ կարող էր այն ժամանակ կարծել, թէ այդ սիրված ու պաշտված թագաւորը պէտք է այսպիսի ողբերգական վիճակ ունենայ։ Իրերի ընթացքը տակն ու վրա արաւ ամեն բան։ Ալէքսանդրը զաւակ չունէր, իսկ գահը առանց ժառանգի չէր կարող մնալ։ Եւ ահա նրա կնոջ կողմնակիցները ամեն ջանք գործ էին դնում, որ ժառանգ հրատարակվի թագուհու եղբայրը։ Այդ բանը դժգոհութիւն էր պատճառում սերբերին։ Իսկ Ալէքսանդրը այդ ժամանակ իր մերձաւորների թելադրութեամբ մի ճակատագրական սխալ գործեց և յետ խլեց ժողովրդից իր տուած լայն քաղաքական իրաւունքները։ Դա մի անսպասելի խիստ հարուած էր ժողովրդի համար։ Զրկվել լայն իրաւունքներից և տեսնել իր վզին փաթաթված թագուհու ազգականներին, իբրև ժառանգների—ծանր էր սերբ ժողովրդի համար։ Դժգոհութեան հողը պատրաստված էր։ Եւ ահա առաջ եկան մարդիկ, որոնք օգտվեցին այդ տրամադրութիւնից։ Բայց ես չեմ հասկանում, թէ ինչ նոր համախմբումներ են կազմվել և թէ ինչպէս է ժողովրդի իսկական կարծիքը կատարվող եղելութիւնների մասին։

digitised by A.R.A.R.@

—Հեռագիրները ասում են, որ հրճուանք է տիրում Բելգրադում, լսեցի ես։

—Այդ գիտեմ, վրա բերեց Անիկեանը. աւելի հաւանական է կարծել, որ ժողովուրդը շուարված է և սպասողական դիրքի մէջ է. Մի բանի հետ ես չեմ հաշտվում, մի բան ինձ տանջում է, այն, որ այդպիսի սարսափելի սպանդանոց դարձաւ Բելգրադը։ Բայց մե՛նք ինչ դատաւոր կարող ենք լինել։ Մենք կարող ենք ասել սերբերին... արիւն ձեր ի գլուխ ձեր, դուք էք ձեր երկրի տէրը, ձեր գործերի կարգադրողը, և Նրա համար պատասխանատուն մարդկանց և Աստուծու առաջ։

—Պետութիւններն էլ որոշել են թողնել սերբերին կարգադրելու իրանց գործերը, ինչպէս գիտեն և կարող են։

—

Այնուհետև Անիկեանի դէմքը պարզվեց և աչքերը փայլեցին։ Պատմելով ինձ իր գիտեցածը, հաղորդելով ինձ իր ենթադրութիւնները, նա հանգստացաւ և ազատվեց լարված դրութիւնից։ Նա սկսեց կատակներ անել։

Կատակների նիւթը նոյն սերբիական գործերն էին։

—Հետաքրքրական է, ասաց նա, թէ ինչպէս պէտք է թիւրք լրագիրները կ. Պօլսում յայտնեն Սերբիայում տեղի ունեցած եղելութիւնների մասին։ Նրանք իրաւունք չունեն գրել, որ Սերբիայում թագաւորի և մեծաւորների սպանութիւններ են եղել։

—Այս անգամ, ժպտաց Անիկեանը, շատ դըժուար դրութեան մէջ պէտք է լինեն, որովհետև քնած ու անշնչացածների թիւը չափազանց մեծ է։ Թիւրքական լրագիրների ընթեր-

digitised by A.R.A.R.@

ցողները պէտք է չուարած մնան, որ մի անգամից անչնչացել են բազմաթիւ մարդիկ։ Երեւակայեցէք մի այսպիսի նկարագրութիւն։

«Բելգրադում մայիսի լոյս 29-ի գիշերը տեղի է ունեցել դժբաղդութիւն. Թագաւոր Ալէքսանդրը, Թագուհի Դրագան, մինիստր Նախագահը, Թագուհու եղբայրները և մինչև հարիւր անձ պալատական անձերից ողջ առողջ պառկում են քնելու և յետոյ հիւանդանում են, թուլանում, ուշաթափվում և մեռնում։ Սենեակներում նկատված է խառնաշփոթ վիճակ, իրերը դէս ու դէն են թափված անկարգ դրութեան մէջ։ Միջոցներ են ձեռք առնված ամեն բան կարգի բերելու։ Սերբերը խնդրում են սուլթանից թոյլ տալ հրաւիրելու իշխան Պէտր Կարագէորգեվիչին թագաւոր իրանց համար։ Աստուած կարողութիւն տայ աշխարհի հզօրներին»։

Մենք բաժանվեցինք։

---

digitised by A.R.A.R.@

CXLVI

(8 յունիսի 1903 թ., «Մշակ» № 122)

Վաղուց է, որ Խաչիկեանին չէի տեսել ուրախ տրամադրութեան մէջ։ Նա ժպտաց և ամուր սեղմեց իմ ձեռքը։

—Ի՞նչ կայ, բարեկամ, հարցրի ես, տրամադրութիւնդ լաւ է։

—Ինձ վրա լաւ տպաւորութիւն թողեց իմ կարդացած մի փոքր լուրը, պատասխանեց նա։

—Ի՞նչ լուր, հետաքրքրվեցի ես։

Մի լուր, որ վերաբերում է մի հեռաւոր քաղաքի, այն է Օդեսային. բայց որը կարող է վերաբերել և մեզ։

Խաչիկեանը տուեց ինձ լրագրի համարը։

—Կարդացէք այս կտորը, առաջարկեց նա։

Ես կարդացի հետեւեալը.

«Օդեսայի նոր քաղաքապետ գեներալ Արսենիեվ, ընդունելով հրէաների պատգամաւորութիւնը, խնդրեց հաղորդել հրէական հասարակութեանը, որ կառավարութիւնը համահաւասար կերպով հոգում է պետութեան բոլոր հպատակների բարգաւաճման և բարօրութեան մասին։ Քաղաքապետը խընդրեց պատգամաւորութիւնից հանգստացնել հրէական ազգաբնակութիւնը, որ յուզված է Քիշինեվի տխուր եղելութիւնների պատճառով և յայտնել նրան, որ ամեն տեսակ մի-

digitised by A.R.A.R.@

ջոյներ են ձեռք առնված հակահրէական շարժման ամենափոքր փորձերն անգամ իր սաղմի մէջ չքացնելու և ուրեմն թող Օդեսասայի հրէաները այդ բանի վերաբերութեամբ լինեն բոլորովին հանգիստ։ Քաղաքապետի այդ յայտարարութիւնը շատ նպաստաւոր տպաւորութիւն արեց Օդեսայի հրէական հասարակութեան վրա և յուզված մտքերը հանգստացան։

—Ահա այդ լուրն էր, վրա բերեց Խաչիկեանը, որ ինձ վրա շատ լաւ ազդեց։ Միթէ հաճելի երևոյթ չէ ձեր կարդացածը։ Միթէ իրաւունք չունէի ես առանձնապէս նրա վրա կանգ առնելու։

—Անկասկած, յայտնեցի ես. ահա այդ տեսակ հաւաստիացումները կարող են զսպել օտարականների կրքերը և սթափեցնել կուրացած ազգամոլներին։

—Երբ կարդացի լուրը, շարունակեց Խաչիկեանը, ինքս ինձ մտածեցի. ոհ, որքան շատ թիւրիմացութիւնների, անախորժութիւնների ու ընդհարումների առաջն առնված կը լինէր, եթէ իւրաքանչիւր մարդ, լինի դա պաշտօնական անձ, թէ կրթված քաղաքացի, ամեն տեղ խօսէր փոխադարձ համերաշխութեան մասին և բողոքէր խտրութիւնների դէմ

—Իսկ իրական կեանքում, դժբաղդաբար, աւելացրի ես, մենք յաճախ տեսնում ենք, որ մարդիկ չեն քաշվում ազգատեացութիւն սերմանելու և մի տեսակ պարծանքով ընդգծում են իրանց ատելութիւնը դէպի ազգերը և կրօնները, իբրև մի արժանիք, իբրև խրախուսանքի վայել մի յատկութիւն...

—Ահա ինչու թանգ է Օդեսայի նոր քաղա-

digitised by A.R.A.R.@

քապետի այդ յայտարարութիւնը և ահա ինչու մի փոքրիկ լուր ստացաւ իմ աչքում այնքան մեծ նշանակութիւն։

—

Սակայն մեր տրամադրութիւնը փոխվեց, երբ մենք խօսք բաց արինք օրվայ մի չարիքի մասին։

—Լսել էք արդեօք, հարցրեց Խաչիկեանը, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան գըլխին նորից ամպեր են կիտվում։

—Այո, լսել եմ։

—Ինձ ասացին, որ առաջնորդը նորից հարց է յարուցել տեսչի մասին և առաջարկում է հոգևորական տեսուչ ընտրել դպրոցի համար։

—Նոյնն էլ անցեալ տարի էր։

—Այո, յայտնեց Խաչիկեանը, առաջնորդը ուզում է վերջապէս ապացոյցներ տալ, թէ նա ինչ գոյնով է ուզում գործել էջմիածնից վերադառնալուց յետոյ։

—Երբ մի հինգ ու կէս ամիս սրանից առաջ նա մուտք գործեց Թիֆլիս, նա ասում էր ամենքին, որ նա այժմ շատ բաների մասին ուրիշ գաղափար ունի և կապացուցանէ, որ նա կարող է ժողովրդի լաւագոյն յոյսերին բաւարարութիւն տալ։ Սպասում էինք, սպասում ապացոյցներին։ Այժմ տոպրակը բացվում է և մենք պէտք է մի շարք պերճախօս ապացոյցների ականատես լինենք։

—Իսկ մէջտեղից ի՞նչ է դուրս գալիս, բացագանչեց Խաչիկեանը, որ տոպրակի մէջ միայն հին կապերտներ են մնացել և նրանք նոյն իսկ չեն կարկատված փոքր ի շատէ հմուտ կերպով, որ գոնէ պատռուածքները և ծուէն-

digitised by A.R.A.R.@

ները չափազանց աչք չը ծակեն իրանց տգեղութեամբ։

Խաչիկեանը լռեց և մտածմունքի մէջ ընկաւ։ Ես հարցական հայեացք գցեցի նրա վրայ։

—Յիշեցի, ասաց նա, մեր անցեալից մի դէպք։ Բաղդասար միտրոպօլիտը մի ժամանակ հաւատացնում էր շուշեցիներին, որ նա փոխուել է հիմնովին։ «Էլ էն չըմ, էլ էն չըմ» աղաղակում էր նա. բայց ոչ ոք չէր հաւատում և իրականութիւնը հաստատեց, որ «ընա էլի էն ա էն»։ Առակի միտքը ձեզ համար հասկանալի է։

Խաչիկեանը սկսեց պատմել Բաղդասար միտրոպօլիտի և հռչակ ստացած Հաթամի կեանքից եղելութիւններ, որոնք սակայն չեն կարող իմ այսօրվայ «Մանրանկարի» նիւթ լինել։

---

digitised by A.R.A.R.@

CXLVII

(15 *յունիսի* 1903 *թ.*, *«Մշակ»* № 128)

Նստած Ալէքսանդրեան այգու վերին մասի նստարաններից մէկի վրա՝ ես նայում էի մանուկներին։

Այնտեղ մանուկների թագաւորութիւն էր։

Ինձ հետաքրքրում էին և գրաւում մատղաշների զուարճութիւնները։

Նրանցից մի քանիսը թռչկոտում էին իրանք-իրանց, միւսները վազվզում էին միմեանց յետևից, ուրիշները հանդարտ նստած տնտղում էին իրանց շուրջը կատարվող եղելութիւնները և լուռ հրճվում։

Ուրախ և չարաճճի բացականչութիւններ, մանկական գանգատի մրմունջներ և պռոշ-պռունգներ, ծիծաղ և նազ ու նազանքներ արագ փոխանակւում էին միմեանց։

—Ճանաչո՞ւմ էք այս մանուկներին, հարցրեց մի ծեր զինուորական։

—Ոչ, պատասխանեցի ես։

—Ես ես չեմ ճանաչում, յայտնեց նա, բայց ամէն օր նայում եմ նրանց և կարծես թէ բոլորի հետ էլ ծանօթ եմ։ Մանուկները սովոր են ինձ այստեղ տեսնելու և մենք միմեանց բարևում ենք։

Արդարև մի քանի մանուկներ, որոնք նոր

digitised by A.R.A.R.@

էին մտել այգին, հեռուից ողջունեցին ծերունուն ուրախ ժպիտներով։

Մենք չարունակեցինք դիտել։

Ահա մեր առաջ նետվեց սիրուն աչիկներով մի հրեշտակ, ճօճեց գլուխը և փախաւ։ Ահա մի ձիւնափայլ դէմք խարտեաշ խոպոպիկներով գնդակ է խաղացնում ձեռքին։ Ահա մի գրաւիչ մանկական երես, փոքր ինչ մտախոհ և տանջված արտայայտութիւնով և խոր ընկած խելացի աչքերով նայեց ընկերների վրա, մի ակամայ ժպիտ խաղացրեց շրթունքների վրա և վազեց։ Ահա մի հրաշալի պատկեր թաւշեայ հայեացքով և նուրբ շարժումներով պտտում է աւազանի շուրջը։ Ահա մի խումբ չարաճճիներ, որո՜նք կրակոտ աչքերով հետևում են միմեանց շարժումներին և մէկը միւսով լինում։

Ես նայում էի հրեշտակիկների և թռչնիկների այդ բազմութեան և իմ մէջ զանազան տեսակ տպաւորութիւններ էին կազմվում։

Իմ հարևանը, ծեր զինուորականը, լուռ նայում էր մանուկներին։ Ես մի քանի անգամ փորձեցի խօսել, բայց նա կցկտուր պատասխանեց ինձ։ Նա զբաղված էր մանուկներով և երբեմնապէս հրում էր ինձ՝ դարձնելով իմ ուշադրութիւնը այս կամ այն մանուկի վրա։

—

—Ինչո՞վ էք այդպէս զբաղված, որ ծանօթներին չէք ճանաչում, լսվեց մի ձայն։

Ես նայեցի։ Իմ առաջ Անիկեանն էր։

Արդարև՝ ես այնքան զբաղվել էի փոքրիկներով, որ ուշք չէի դարձնում հասակաւորների վրա և չը նկատեցի Անիկեանին, որ մօտենում էր ինձ։

digitised by A.R.A.R.@

Նրան տեղ տուի իմ կողքին և պատմեցի իմ տպաւորութիւնները։

Նա էլ հետաքրքրվեց։

—Մի բան, սակայն, ասացի ես, ինձ մտատանջում էր, երբ ես նայում էի այս մանուկ թագաւորութեան վրա։ Տեսէք որքան անմեղ, անկեղծ, մաքուր, բիւրեղանման հոգիներ են կանգնած մեր առաջ։ Տեսէք, թէ նրանց վրա որքա՜ն հոգ ու խնամք է տարված, ինչպէս նրա՛նք գեղեցիկ հագնված և սանրված են, որքան ուշադրութիւն է դարձված բարեկիրթ ձեւերի վրա...

—Այո, լաւ է, գրաւիչ է։

—Սակայն, ի՞նչ են լինելու սրա՛նք, երբ մեծանան, հասակ առնեն։ Արդեօք մաքուրը և անկեղծը նրանց մէջ պահպանվելու է ուժեղ կերպով և մենք ունենալու ենք աւելի ազնիւ և անձնուէր անձնաւորութիւններ մեր հասարակութեան մէջ։

—Ես մեծ յոյսեր չունեմ, նկատեց Անիկեանը։ Գոնէ մեր բարեկիրթ կոչված Սօլօլակային հասարակութեան մէջ, որ արդէն մի քանի տասնեակ տարիներ է, ինչ նոր կենցաղավարութեան կաղապարներ է վերցրել, չէ նկատվում բարոյական առաջադիմութիւն։ Ոչ մի ժամանակ ես չեմ տեսել այնքան եսասէր, քմահաճոյքներով ղեկավարվող, պարտաւորութիւններ չը ճանաչող երիտասարդներ, որքան ներկայումս մեր իբր կուլտուրական խաւերում, մեր Սօլօլակային հասարակութեան մէջ։ Այս հրեշտակներն էլ կը փոխվեն և կը դառնան ով գիտէ ինչ։

Ծերունի հարևանս դժգոհ շարժումներ արաւ, բայց ոչինչ չասաց։

digitised by A.R.A.R.@

—Այո, հրեշտակ մանուկներ, իսկ սատանայ հասակաւորներ, շեշտեց Անիկեանը։

—Ոչ, միջամտեց ծերունին, ոչ. դա չափազանցութիւն է, լաւ օջախը լաւ էլ ազգ կը դուրս բերէ, վատ օջախը վատ ազգ։

—Մեր արհեստաւոր դասակարգը, հակաճառեց Անիկեանը, շատ «բարեկիրթ» երեխաներ չէ տալիս, բայց նա սովորեցնում է նրանց կատարել պարտաւորութիւններ, եսականը կապել հանրականի հետ, յոյս դնել հալալ աշխատանքի վրա և ամուր կապվել տեղի ու ժողովրդի հետ։ Իսկ սրանք, այս սքանչելի հրեշտակները, ինչ պարտականութիւնների, ինչ սրբութիւնների, ինչ աշխատանքի ոգւով են մեծանում։

—Կամաց-կամաց կը լինի ամեն բան, նկատեց ծերունին։

—Այստեղ կամացի բան չէ, վրա բերեց Անիկեանը, այլ ուղղութեան։ Այսպէս որ գնանք, մի օր կը տեսնենք մեզ բոլորովին դէն շըպրտված։

Մանուկները սկսեցին ընդհանուր խաղեր և այնպիսի աղմուկ բարձրացրին, որ մենք այլ ևս չը կարողացանք շարունակել մեր վէճը։

—

Անիկեանի հետ մենք դուրս եկանք այգուց և գնացինք փողոցով։

Խօսեցինք Ներսիսեան դպրոցի, արձանագրութիւնների, քաղաքական ճառերի, սերբիական գործերի և ուրիշ օրվայ չարիքների մասին։

—Իմ կատակով արած գուշակութիւնը կատարվեց, բացականչեց ժպտալով Անիկեանը։

—Ո՞ր գուշակութիւնը։

—Կ. Պօլսի թերթերի մասին, վրա բերեց

digitised by A.R.A.R.@

նա։ Ես ասացի, որ Պոլսի թերթերը անկարող կը լինեն ներկայացնել Սերբիայում կատարված անցքերը։ Արդարև, այնտեղի լրագիրներին խստիւ հրամայված է ոչինչ չը գրել արած սպանութիւնների մասին և նրանք միայն խուլ կերպով յայտնել են, որ սերբիական Ալէքսանդր թագաւորը վախճանվել է. և միայն այդ։

—Անկասկած, նկատեցի ես, Պոլսում բոլորն էլ բերանացի պատմում են միմեանց ամեն բան ամենամեծ մանրամասնութիւններով։

—Անշուշտ, խօսքս կտրեց Անիկեանը։ Այնտեղ շատերը կարդում են եւրօպական թերթեր, որտեղից ամեն բան նրանց յայտնի է դառնում։

—Ուրեմն։

—Ուրեմն, կան մարդիկ, որոնք գոհ են, երբ իրանք իրանց խաբում են և իրականութիւնը չեղած համարելով—իրանց հանգստացնում։ Բօսֆորի ափերը ամեն բանի վերաբերութեամբ այդպէս են։ Դա սիստեմ է։ Ճիշդ է, մի սպանիչ և աւերող սիստեմ, բայց ժամանակաւորապէս խաբող և թմրեցնող։ Միայն թէ թմրութիւն լինի, անվերջ թմրութիւն։

—Ի՞նչ երջանկութիւն։

digitised by A.R.A.R.@

CXLVIII

(25 *յունիսի* 1903 *թ.*, *«Մշակ»* № 134)

Մի քանի տարի սրանից առաջ, երբ տօներից օգտվելով գնացել էի Բագու, պատահեցի այնտեղ անտառային վերաքննիչներից մէկին։

—Դուք Թիֆլիսից էք գալիս, հարցրեց նա հետաքրքրութեամբ։

—Այո։

—Ինչ նորութիւններ կան Թիֆլիսում, հետաքրքրվեց նա։

Ես պատմեցի իմ գիտեցածները։

—Ճի՞շդ է, արդեօք, հարցրեց վերաքննիչը, որ մեր մինիստրութեան մէջ բարեփոխութիւններ պէտք է կատարվեն։

Խօսքը երկրագործութեան մինիստրութեան մասին էր։

—Զանազան տեսակ ծրագիրներ շատ կան, բացատրեցի ես։ Ցանկութիւն կայ կազմակերպել մասնագէտների շրջական խմբեր՝ երկրի մէջ գործելու համար, բանալ մի երկու տեղ փորձնական կայարաններ, կարգաւորել գիւղական հողերը...

—Ոչ, միջամտեց վերաքննիչը, այդ չեմ հարցնում, աւելի էական բարեփոխութիւնների մասին է իմ խօսքը։

—Չը կայ, չէ լսվում, պատասխանեցի ես։

—Բայց հաւատացնում էին, վրա բերեց նա,

digitised by A.R.A.R.@

որ պէտք է էական բարեփոխութիւններ լինեն և ես էլ սպասում եմ օրէցօր։

Ինձ համար փոքր ինչ անհասկանալի թւաց պարոնի մտքերի ձևակերպութիւնը։

—Ի՞նչ էական բարեփոխութիւն էք դուք սպասում, հարցրի ես երկմտված։

—Չէ որ, յայտնեց նա, ասում էին, թէ չուտով պաշտօնեաների կազմութեան մէջ պէտք է բարեփոխութիւններ կատարվեն, որ ռոճիկները պէտք է աւելացնվեն, որ կենսաթոշակների վերաբերութեամբ արտօնութիւններ պէտք է տրվեն։ Ես անհամբեր սպասում եմ պաշտօնական կարգադրութիւնների հրատարակութեան։ Չը կայ ու չը կայ։ Ես կարծում էի, թէ դուցէ դուք աւելի տեղեկութիւններ ունէք այդ բանի մասին։

—Չէ, չունեմ, հիասթափեցրի ես։ Ես կարծեցի ընդհանուր բարեփոխութիւնների մասին է ձեր խօսքը։

—Էհ, դարդ չունէք, կատակեց նա, ինչ գըլխիս եմ տալիս այդ բարեփոխութիւնները։ Նրանցից փոր չի կշտանայ։ Քսան ինն տարի է, որ տեսնում եմ ամեն տեսակ փոփոխութիւններ ու մէջտեղ կարգին բան չը կայ։ Ես հիմի մտածում եմ այնպիսի բարեփոխութիւնների մասին, որոնք մեզ պաշտօնեաներիս համար էական նշանակութիւն ունենան։ Խոստանում են, խոստանում ու ոչինչ չեն անում մեզ համար։

Այնուհետև սկսեցինք խօսել այն լուրերի մասին, որոնք պտտում էին էական փոփոխութիւնների մասին։

—

digitised by A.R.A.R.@

Այդ դէպքը յիշեցի ես նորերս մի վարդապետի ծրագրի առիթով։

Մի ընտանիքում, ուր պատահեցինք վարդապետի հետ, հիւրերից մէկը խօսք բացեց Էջմիածնի միաբանութեան մասին։ Առաջ եկան համեմատութիւններ։ Էջմիածին, Վենետիկ, Վիէննա, Երուսաղէմ, Արմաշ ասպարէզ եկան իրանց չար ու բարիներով։

—Պէտք է Էջմիածնի միաբանութիւնը լուրջ հոգ տանէ իր հեղինակութիւնը բարձրացնելու մասին։

Հիւրերը մի քանի խորհրդածութիւններ արին, բայց մանրամասն կանգ չառին խնդրի վրա։

Վարդապետը իր կողմից յայտնեց, որ նա առանձնապէս զբաղվել է այդ խնդրով և դիտաւորութիւն ունի առաջարկել Էջմիածնին էական փոփոխութեան մի ծրագիր։

Երբ ծանօթացանք վարդապետի ծրագրի ընդհանուր իմաստի հետ, ես այլ ևս չը զարմացայ, երբ լսեցի վարդապետից «էական» բառը։ Ինձ միայն հետաքրքրեց հոգեբանական մի կէտ՝ թէ ինչպէս զանազան տեղերում, զանազան կոչման մարդիկ մի և նոյն տեսակ բառեր են գործ ածում։

Դա երևի շատ բնական է։

Որովհետև հիմնաքարը երկու դէպքերումն էլ մի և նոյնն է։

Վարդապետի ծրագրով ենթադրվում է սահմանել վայելուչ ռոճիկներ, որոնցով կարելի լինէր թէ ապահովել հոգևոր հայրերի առօրեայ պիտոյքները և թէ որոշ դիրք պահպանելու հնարաւորութիւն տալ նրանց։

—Կարևոր խնդիր է, ասաց ինձ վարդապե-

digitised by A.R.A.R.@

տը: Մինչև այդ խնդիրը դրական կերպով չը լուծվի, անհնարին է բարձրացնել մեր կուսակրօնութիւնը և պահպանել նրա վարկը հասարակութեան մէջ: Ժամանակն է, որ այդ էական բարեփոխութիւնը իրականանայ կեանքի մէջ:

Վարդապետը ոգևորվեց և մի փոքրիկ ճառ ասաց:

—Ճիշդ չէ՞ արդեօք իմ ասածը, հարցրեց նա յաղթական ոճով. խօմ քաղցած մնալ չենք կարող, ձեզ եմ հարցնում:

—Ի հարկէ, քաղցած մնալ չէ կարելի, համաձայնեցինք մենք:

—Խօմ գջլտած չորերով չենք կարող ուրիշների առաջ դուրս գալ, շարունակեց վարդապետը:

—Ի հարկէ, գջլտած չորերով անյարմար է, պատասխանեցինք մենք:

—Խօմ մուրացկանութիւն անել չենք կարող՝ մի երկու կոպէկ ձեռքին ունենալու համար:

—Ի հարկէ, անախորժ բան է, յայտնեցինք մենք:

Վարդապետը բաւականացաւ այդ հարց ու պատասխանով:

—Ահա, շարունակեց նա, դուք էլ համաձայն էք, որ անհրաժեշտ է ապահովել մեր հոգևոր հայրերին և նրանց դիրքը արժանավայելուչ դարձնել:

—Այո, այդ այդպէս է, նկատեց իմ բարեկամ Խաչիկեանը, սակայն դուք չափազանցնում էք եղած դրութիւնը: Վարդապետներից ոչ ոք քաղցած չէ և կարող է գջլտած երևան չը գալ ուրիշների առաջ: Իսկ եթէ նրանք չեն կարողացել իրանց յարգել տալ, իրանց համար

digitised by A.R.A.R.@

հեղինակաւոր գիրք ստեղծել, դրա պատճառը նիւթական վիճակը չէ եղել և յամենայն դէպս ձեր էական բարեփոխութեամբ դուք չէք բարձրացնի ձեր վարդապետների հեղինակութիւնը։ Ձեր մէջ այժմ փող ունեցողներ էլ կան, լաւ հագնվողներ էլ կան, չքեղութիւն ցոյց տուողներ էլ կան,—բայց այդ արտաքինը չէ ստեղծել նրանց համար ոչ հեղինակութիւն, ոչ յարգանք և չէ էլ կարող ստեղծել։

Վարդապետը զայրացաւ։

—Այդ ինչո՞ւ դուք՝ աշխարհականներդ, բռնկվեց նա, այդքան նշանակութիւն էք տալիս կենցաղավարութեան պայմաններին, իսկ մեզ զլանում էք։

—Դուք խօսքը կտուրն էք գցում, ինչպէս ասում է ժողովուրդը։ Ձեր նիւթականը, եթէ վատ է, լաւացրէք, բայց ես ասում եմ, որ հեղինակութիւն ձեռք բերելու և ձեր ցանկացած գիրքը ստեղծելու համար անհրաժեշտ են ուրիշ պայմաններ։

Վարդապետը նայեց ժամացոյցին և նկատեց, որ նրա գնալու ժամանակն է, որ նա չափազանց ուշացել է, ուստի շտապեց կորցրածը վերականգնելու։

Իսկ մենք չէինք ափսոսում մեր կորցրած ժամերը։

Ինչո՞ւ։

Այդ հարցի պատասխանը ձեզ եմ թողնում։

---

digitised by A.R.A.R.@

CXLIX

(29 յունիսի 1903 թ., «Մշակ» № 139)

—Կարդացի՞ք արդեօք այն ծաղրը, թէ կատակը «С. Петербургскія Вѣдомости» լրագրի մասին։

Այդ հարցով դիմեց ինձ Խաչիկեանը։

Ես հասկացայ, որ նա աչքի առաջ ունի տեղական լրագիրներից մէկում տպված հեռագրական լուրը, որ իբր թէ «С.-Петербургскія Вѣдомости» լրագիրը իշխան Ուխտոմսկու ձեռքից անցնում է տխրահռչակ Վելիչկոյի ձեռքը։

—Կարդացի։

—Եթէ ճիշդ չէ լուրը, խօսեց Խաչիկեանը, այն ժամանակ դա մի անտեղի կատակ է, որ, աններելի է, անել հեռագրական բաժնում, իսկ եթէ իսկապէս ճիշդ է, այն ժամանակ դա մի չար ծաղր է այն լրագրի ընթերցողների համար, որոնք մինչև այժմ սովոր էին կարդալ իշխան Ուխտոմսկու հրատարակութեան մէջ միայն հակառակը այն բոլորի, ինչ որ քարոզել է և պէտք է քարոզէ Վելիչկոն։

—Այո, եթէ լուրը ճիշդ է, վրա բերեցի ես, այն ժամանակ ընթերցողների մի նշանաւոր մասը կը թողնէ այդ լրագիրը, որտեղ վաղը պէտք է անարգված և արհամարհված լինի այն, ինչ որ երէկ իբրև ազնիւ և սուրբ գաղափար, ամեն յարգանքով մեծարված էր։

digitised by A.R.A.R.@

Իմ առաջ դրված էր իշխան Ուխտոմսկու լրագրի վերջին համարներից մէկը, որի մէջ խմբագիրը մի ամփոփ տեսութիւն է անում իր եօթն տարւայ գործունէութեան։ Դա ուշադրութեան արժանի մի տեսութիւն էր։

Մենք նորից կարդացինք նրան։

Ուխտոմսկին այդտեղ ներկայանում է իր գործունէութեան մէջ, իբրև մշտական մի բողոք և մաքառումն այն խաւար հոսանքի դէմ, որի ներկայացուցիչներից մէկն էլ Վելիչկօն է և որը հիմնել է իր քաղաքականութիւնը ուրիշ ազգերի և կրօնների հալածանքի վրա։

Մենք կանգ էինք առնում բնորոշ և լաւ ձևակերպված կտորների վրա։

Ուխտոմսկին ասում է՝

«Մենք մեր համոզմունքի հիման վրա չենք կարող յարել այն հրապարակախօսներին, որոնք ծաղկեցրած ֆրազներով աշխատում են խունկ ծխել իշխանութիւն ունեցողներին։ Մենք դիտաւորութիւն չունենք ինկվիզիտորական եղանակով փոփոխել ուրիշի հոգու խորքերը։ Մենք ձեռք չենք բարձրացնի զուր տեղը պետութեան ծայրերի պատմական կազմի վրա և օտարադաւան—օտարացեղ տարրի վրա։ Մեր հոգեկան կազմուածքի ամրութիւնը այդ բանի մէջը չէ, որ մենք կեղծ բարեպաշտական և նեղ ազգայնական ձևով դատապարտենք այն բոլորը, ինչ որ օտարերկրեայ է և այլացեղ։

Դարձնել կրօնը ազգայնութեան յատկանիշներից մէկը—շատ հին տեսակէտ է։ Նրա անունով աթենացիները մահվան դատապարտեցին Սօկրատէսին։ Այդ բանի դէմ հոռ-

digitised by A.R.A.R.@

մէկական պետութեան մէջ մաքառում էին քրիստոնէական նահանգները...»

Մի ուրիշ տեղ Ուխտօմսկին ասում է հետեւեալը՝

«Յարգելով սեփական իր ազգութիւնը, պէտք է յարգել և օտար ազգութիւնները, թողնելով իր ազգութեան զարգանալու իր կերպ, բայց մի և նոյն ժամանակ թոյլատրելով և ուրիշներին զարգանալ իրանց կերպ: Այդպիսի քաղաքականութիւն բանեցնելով՝ ռուս ազգը իր մեծ քանակութեամբ չէ կարող երկիւղ կրել ուրիշ ազգութիւնների մրցութիւնից: Ընդհակառակը, նա գտնում է և կը գտնէ նրանց չարքում իրան վերապահված առաջնակարգ տեղը: Նա կը գրաւէ այդ տեղը ոչ թէ բռնութեամբ, այլ իբրև առաջինը հաւասարների մէջ և ոչ թէ իբրև յաղթողը նուաճվածների մէջ: Այդտեղ և միւս ազգերը հնարաւորութիւն կը ստանան հանդարտ առաջ տանելու իրանց խաղաղ և կուլտուրական ձգտումները»:

Մենք կանգ առինք և չատ ուրիշ բնորոշ և նշանաւոր հատուածների վրա, որոնց մէջ փայլում է իշխան Ուխտօմսկու լայն հայեացքը պետութեան զարգացման և համերաշխութեան գաղափարի փրկարարութեան վրա:

—Այս բոլորից յետոյ, տաքացած բացականչեց Խաչիկեանը, նոյն լրագրում պէտք է բոլորովին հակառակը խօսէ Վելիչկօն: Դա մի և նոյնն է, թէ Նորագոյն դարերից մենք փոխվենք միջին-դարերի:

Խաչիկեանը լռեց և սկսեց սաստիկ ծխել:

Ես մտածմունքների մէջ ընկայ:

—

digitised by A.R.A.R.@

Յանկարծ նա սթափվեց և դիմեց դէպի ինձ։

—Միթէ ճիշդ է տուգանքի լուրը։

—Ի՞նչ տուգանքի, հետաքրքրվեցի ես։

—Այն տուգանքի, որ նշանակված էր Ղևոնդ Ալիշանի հոգեհանգստի համար։

—Այս ճիշդ է, ասացի ես։

Գուցէ հնարված բան է, կասկածեց Խաչիկեանը։

—Դժբաղդաբար, բացատրեցի ես, ճիշդ է։ Ես տեսայ պաշտօնական թղթերը։ Այս թղթերից մէկում Քութայիսի գործակալի օգնականը յիշեցնելով Փօթիի քահանային, որ Թիֆլիսի կօնսիստօրիան 1902 թւի հոկտեմբերի 28-ին գրել է № 5134 համարով թուղթ այդ մասին, իր գրութեամբ յունիսի 17-ին առաջարկում է վճարել հոգեհանգիստ կատարելու համար նշանակված տուգանքը՝ քսանհինգ րուբլի։

—Միջին-դարեր, միջին դարեր, մրմնջաց Խաչիկեանը։

—Փօթիի քահանայի դէմ, նկատեցի ես, եղել են ուրիշ, հիմնաւոր, բողոքներ, բայց նրանք չեն արժանացել ոչ մի լուրջ ուշադրութեան և այժմ քահանայի մեղքն է համարվում այն, ինչ որ յամենայն դէպս, նրա թերութիւնը չէ կարող լինել։

—Միջին դարեր, միջին դարեր... շարունակեց Խաչիկեանը՝ գլուխը թափ տալով։

Խաչիկեանը այլ ես մտադիր չէր ձեռք վերցնել այդ բառերից և նա ժամանակ-ժամանակ կրկնում էր նրանց։

—Դուք սխալվում էք՝ մենք քսաներորդ դարումն ենք ապրում։

digitised by A.R.A.R.@

CL

(6 *յուլիսի* 1903 *թ*., *«Մշակ»* № 145)

— Գիտէք, պարոններ, ես ինչ իմացայ, ասաց Խաչիկեանը։

— Լսում ենք։

— Ուսանողների և երիտասարդների մի շարք պահանջների մասին, շարունակեց Խաչիկեանը, ահա ինչ իմացայ։

— Հետաքրքրական է։

— Ուսանողները պահանջում են, որ եւրոպական կարգերը վերցվեն և նրանց տեղ հաստատվեն հին աւանդական կարգերը։

— Ի՞նչ, բացականչեցին խօսակիցները։

— Այո, շարունակեց Խաչիկեանը, ես կատակ չեմ անում։ Ուսանողները պահանջում են, որ օտար ցեղի և կրօնի մարդկանց պաշտօններ չը տրվեն վարչութեան մէջ։

— Ուսանողնե՞րը։

— Այո, ուսանողները։

— Տօ ի՛նչ ես դուրս տալիս, անհամբեր խօսեց Մարտինեանը։ Գժվե՞լ ես, ինչ է։

— Բան եմ ասում, շարունակեց Խաչիկեանը, ուսանողները պահանջում են, որ եւրօպական լեզուների ուսուցումը վերացվի դպրոցներից։

— Ի՞նչ ուսանողներ, ո՞ր համալսարանում, ի՛նչ առիթով, ինչե՞ր ես ասում, բացականչեցին շատերը։

digitised by A.R.A.R.@

Խաչիկեանը ժպտաց։ Նա բաւական էր իր խօսքերի գործած տպաւորութիւնից։

—Այդ ուսանողները, բացատրեց նա, կոչւում են Թալաբաներ կամ սոֆտաներ։ Թաւրիզում նրանք յայտնի են Թալաբաներ, իսկ Կ. Պօլսում սոֆտաներ անունով։

—Ահա ի՛նչ ուսանողների մասին էիք խօսում, քրքջաց Մարտինեանը, այժմ հասկանալի է բոլորովին։

—Արա ինչո՞ւ էիք ինձ գժի տեղ դնում, հարցրեց Խաչիկեանը։

—Որովհետև, միջամտեց օրիորդ Մանաֆեանը, «ուսանող» խօսքով մենք հասկանում ենք լուսաւոր, ազատամիտ, առաջադէմ մի անձնաւորութիւն, ազատ հին նախապաշարմունքներից, ձգտող դէպի նորը, լայն աշխարհահայեացքով, ընդարձակ մարդասիրութեամբ։

—Ի հարկէ ի հարկէ, վրա բերեցին մի քանի ուրիշ ձայներ։

—Բայց արի ու տես, նկատեց Խաչիկեանը, որ ուրիշ տեսակ ուսանողներ էլ գոյութիւն ունեն։

—Ցամենայն դէպս ոչ մեզանում, չտապեց աւելացնել օրիորդը։ Այդպիսի ուսանող կարող է Պարսկաստանում և Թիւրքիայում միայն գոյութիւն ունենալ։

—Բայց մեզանում էլ միատեսակ չեն ուսանողները...

—Դա վիրաւորական է, աղաղակեց օրիորդը։

Սկսեցինք վիճել։

Պարսկաստանի գործերին ծանօթ մի երիտասարդ պատմեց, թէ ինչ է Թալաբան։ Նա այդ անունով կոչեց և ուսանողներին և տիրացու-

digitised by A.R.A.R.@

ներին և նորընծայ մօլլաներին—ամբողջ երիտասարդութիւնը։

—

—Իմ կասկածը արդարացի էր, խօսեց մի քանի ժամանակից յետոյ Խաչիկեանը, սուտ դուրս եկաւ Վելիչկօի մասին լուրը։ Ուխտօմսկու յաջորդը կը լինի ոչ թէ Վելիչկօն, այլ Սլուչևսկին։

—Լուրը սուտ դուրս եկաւ, նկատեց Մարտինեանը, բայց նա մի փոքր իրարանցում գցեց և փորձաքար դարձաւ։

—Բնորոշ էր, յայտնեց Խաչիկեանը, «Իվէրիա» լրագրի բռնած դիրքը։

—Ինչպէ՞ս։

—Այդ լրագիրը, բացատրեց Խաչիկեանը, այն կարծիքն է յայտնում, որ Սլուչևսկին ծեր է։

—Եւ ահա տեսնում էք, շարունակեց Խաչիկեանը, «Իվերիայի» շրջանում երիտասարդ Վելիչկօն աւելի բարձր է դասվում, քան ծեր Սլուչևսկին։ Ճիշդ չէ՞ արդեօք, որ «երիտասարդ» բառը այստեղ նոյն վիճակի մէջն է, ինչ որ «ուսանող» բառը թալաբաների և սօֆտաների վերաբերութեամբ։

—Ճիշդ է, ճիշդ է։

—Ի՞նչ կը լինի Սլուչևսկին, վրա բերեց Մարտինեանը, կարո՞ղ կը լինի արդեօք նա վարել լրագիրը այնպէս, ինչպէս իշխան Ուխտօմսկին, յայտնի չէ մեզ, բայց մի բան պարզ է, որ լրագիրը գոնէ ազատ կը լինի Վելիչկօի անազնիւ արշաւանքներից և յամենայն դէպս մի մեծ անպատեհութիւն վերացված կը լինի ասպարէզից։

digitised by A.R.A.R.@

— Պարոններ, միջամտեց օրիորդ Մանաֆեանը, դուք շատ էք զբաղվում Վիլիչկօի անձնաւորութեամբ։ Նա արդէն պարզվել է ռուս հասարակութեան աչքում և խայտառակվել։ Նա ինքը իրան ծաղրելի դարձրեց և կորցրեց վստահութեան վերջին նշոյլն անգամ։

—Իսկ արդեօք ունէր վստահութիւն, հարցրեց Մարտինեանը։

—Եթէ միայն ունեցել է մի փոքր, աւելացրեց օրիորդը։

—

«Ուսանող» «երիտասարդ» բառերի թիւր ըմբռնողութիւնից յետոյ ես կանգ կառնեմ մի անձնաւորութեան վրա, որ ամեն իրաւունքով կրել է այդ անունները և թողել է ջերմ յիշատակ իր շրջապատողների մէջ։

Դա մի շաբաթ առաջ մեռած բժիշկ Գէորգ Տատեանի համակրելի և ազնիւ անձնաւորութիւնն է։

Նա երկար չապրեց մեր մէջ և չը գործեց այնքան, որքան նա կարող ՚էր և կը ցանկանար. բայց նա այդ կարճ միջոցում կարողացաւ կապել իր անձնաւորութեան հետ բազմաթիւ մարդկանց։

Նրա յուղարկաւորութիւնը Գօրիում դարձաւ հասարակական յարգանքի հազուագիւտ արտայայտութիւններից մէկը։ Եւ մօտ ազգականներ ու ընկերներ, և հեռու ծանօթներ ու յարգողներ, և հայ, վրացի ու ռուս համակրողներ—բոլորը միասին համախմբվել էին յարգանք մատուցանելու անձնուէր և ազնիւ քաղաքացուն։

Տատեանը դեռ նոր էր կեանքի մէջ մտել. նա պէտք է գործէր այսուհետև, նա միայն մի

digitised by A.R.A.R.@

քանի տարի առաջ վերջացրել էր իր ուսանողութիւնը, մի տարի տեսուչ եղաւ Երեւանում, երկու տարի բժշկութիւն արաւ, բայց և այնպէս, նա կարողացաւ գրաւել դէպի ինքը հասարակութեան ուշադրութիւնը։

Եւ մի և նոյն ժամանակ նա չափից դուրս համեստ և հասարակ մի անձնաւորութիւն էր։

Բայց նա հաւատում էր գաղափարին, հաւատում էր ազնիւ գործունէութեան, հասարակութեան մէջ կեղծ դիրք չէր բռնում և իր ոյժի չափ նպաստում էր արդար մաքառումներին հասարակութեան մէջ։

---

digitised by A.R.A.R.@

CLI

(13 յուլիսի 1903 թ., «Մշակ» № 150)

Մի քանի օր սրանից առաջ ես ներկայ էի մի շատ տխուր տեսարանի։

Միքայէլեան հիւանդանոցից դուրս էին բերում մի քանի դիակներ տանել թաղելու։

Ցուզարկաւորների աղեկտուր և սիրտ պատառող հեծեծանքը, աղքատ հագուստները, չուարված և յուսահատ դէմքերը ցոյց էին տալիս, որ մի տարօրինակ դէպքի հետ մենք գործ ունենք։

—Ինչո՞վ էին հիւանդ հանգուցեալները, հարցրի ես մի պարոնից։

—Հիւանդ չեն եղել, բացատրեց նա, այլ բերվել են հիւանդանոց մեռած դրութեան մէջ։

—Ի՞նչպէս։

—Նրանք հողի տակ էին մնացել Սաղում չինվող մի տան փլվելու միջոցին, աւելացրեց նա։

—Ուրեմն, բացականչեցի ես, սրա՞նք են այն խեղճ զոհերը, որոնք մահ ընդունեցին Ցապինի յանցաւոր անփութութեան պատճառով։

—Այո, այո, հէնց նրանք են։

Ցապինի դէպքը մեր տխուր իրականութեան պատկերներից մէկն է։ Սա առաջին անգամը չէ, որ փլուածքներ են առաջանում Նրա հողի վրա։ Դեռ ապրիլ ամսին նա անդամալոյծ չի-

digitised by A.R.A.R.@

նեց մի գերմանացի արհեստաւորի՝ Գօտլիբ Էրկէ անունով՝ և նրան առ միշտ զրկեց աշխատելու ընդունակութիւնից։ Այժմ Ցապինը նորից զոհեր տուեց և այս անգամ աւելի բազմաթիւ և աւելի աղէտալի կերպով։ Չորս խեղճ հայեր անմիջապէս մեռան՝ Ամիրեան, Եղիազարեան, Թաթօսեան և Արտօ. Նրանց հետ միասին կիսամեռ դրութեան մէջ գտնվեց և մի ռուս բանուոր Ստարչիկօվ։

Եւ այդ բոլորը անփութութեան, ասիական տնավարի գործավարութեան պատճառով։ Ցապինը պէտք է յայտնէր քաղաքային վարչութեան՝ շինութեան մասին և թոյլտուութիւն ձեռք բերէր շինութիւններ անելու—նա այդ չէ անում։

Ցապինը պէտք է զգուշութիւններ գործ դնէր, նեցուկներ կանգնեցնէր փլուածքների առաջն առնելու համար—նա այդ չէ անում։

Նրան զգուշացնում են հարևանները. նա ականջ չէ դնում։

Ապրիլ ամսի դէպքը արդէն ցոյց էր տուել, որ կարող են դժբաղդութիւններ տեղի ունենալ, բայց Ցապինը շարունակում էր առաջվանը։ Նա յոյս ունէր իր բաղդի և իր գործնական հմտութեան վրա։

Եւ ահա ձեզ անմեղ զոհեր, աշխատաւոր մարդկանց մահեր, իսկ այդ զոհերից յետոյ մնում են խեղճեր, որոնք մինչև այժմ ապրում էին նրանց վաստակով։

Զոհերի մի շարք։

Դժբաղդաբար Ցապինը բացառութիւն չէ։ Թիֆլիսում շատ տներ են շինվում առանց մասնագիտական վերահասութեան։

Եւ միայն կարելի է զարմանալ, որ դժբաղդ

digitised by A.R.A.R.@

դէպքերի թիւը համեմատաբար այնքան քիչ է մեր քաղաքում։

Շրջեցէք Թիֆլիսի փողոցները և դուք շատ շուտով կը համոզվէք, որ անփոյթ վերաբերմունքը շարունակվում է ամեն մի քայլափոխում։

—

Երէկ պատահեցի Անիկեանին։

—Ի՞նչ կարծիքի էք այժմ սերբիական գործերի մասին, հարցրի ես նրանից։

—Ի՞նչ բանի մասին։

—Սերբիական գործերը, ասացի ես, որոնք ձեզ անչափ հետաքրքրում էին։

—Սերբիական գործերը շատ շուտ կորցրին իրանց հետաքրքրութիւնը ինձ համար, յայտնեց Անիկեանը։

—Ինչո՞ւ։

—Որովհետև նրանք անսովոր, արտակարգ երևոյթներ էին, ինչպէս մի երկրաշարժ, մի անսպասելի հեղեղ, մի կայծակի հարուած, որոնք կարող էին և այնպիսի հետևանք առաջ բերել, որպիսին իրապէս տեղի ունեցաւ, բայց կարող էին և բոլորովին ուրիշ արդիւնք առաջացնել։

—Հասկանում եմ։

—Ես այժմ հետաքրքրվում եմ ուրիշ բանով, աւելացրեց Անիկեանը, ես այժմ տեղափոխվել եմ Հռոմ։

Անիկեանը պատմեց, որ պապի հիւանդութեան և նոր պապի ընտրութեան առիթով նա կարդացել է մի երկու գրքոյկ Հռոմի մասին, նոյն իսկ նորից թերթել է Սենկեվիչի «Ցո՜ երթաս» վէպը։

—Բայց անհրաժեշտութիւն չը կար կրկնել այդ վէպը, նկատեցի ես։

—Առիթից օգտվեցի, վրա բերեց Անիկեանը։ Ի միջի այլոց ինձ ծիծաղեցրեց լրագրական մի լուր։

—Ո՞ր լուրը։

—Լրագրում ասված էր պապական թեկնածուներից մէկի, այն է կարդինալ Գոտտիի մասին, որ նրա թեկնածութեան դէմ եղողները առարկում են, թէ նա անյարմար է, որովհետև ձկնորսի որդի է։ Ձկնորսի, հասկանում էք, ձկնորսի։

—Այո, կարդացել եմ, յայտնեցի ես։

—Պետրոս Առաքեալի փոխանորդը չէ կարող ձկնորսի որդի լինել, ի՞նչպէս էք գտնում այդ բանը։ Իրանք առաքեալները մեծ մասամբ ձկնորսներ էին, իսկ նրանց յաջորդների համար անյարմար է դատվում ձկնորսի որդի լինել։ Պահանջվում է, որ կոմսերի, իշխանների որդիներ լինեն։ Բնորոշ զուգադիպութիւն է, կամ ուղիղն ասած հա՛կադիպութիւն։

digitised by A.R.A.R.@

CLII

(20 *յուլիսի* 1903 *թ.*, *«Մշակ»* № 154)

Դասախօսութիւնը տեղի ունէր գիւղում։ Լսողները գիւղացիներ էին, հասարակ երկրագործներ և հովիւներ իրանց գիւղական հագուստներով։

Մասնագէտը բեմից ցոյց էր տալիս գործիքները և բացատրում նրանց կազմութիւնը։

Գիւղացիները լսում էին հանգիստ կերպով։

—Այժմ ցոյց կը տամ գործիքների արած գործը, որ դուք ձեր աչքով տեսնէք և ինքներդ համոզվէք իմ ասածների ճշտութեան մէջ։

Գործիքները գործի գցվեցին։ Փոքրիկ անիւները սկսեցին շարժվել։

Լսողները սկսեցին լարված ուշադրութեամբ հետևել գործիքների գործողութեանը։

—

Այն, ինչ ես պատմում եմ, տեղի ունէր Փամբակի Մեծ-Ղարաքիլիսա գիւղում։

Այնտեղ այս տարի մի հետաքրքրական փորձ է արվում։ Գիւղացիներին գործնականապէս սովորեցնում են, թէ ինչպէս պէտք է կատարելագործել տեղական կաթնատնտեսութիւնը։

Գիւղացիներին ցոյց են տալիս սեր զատող գործիքը կամ սեպարատորը։

Իսկ դա մի գործիք է, որ շատ դիւրացնում

digitised by A.R.A.R.@

է գիւղացու գործը, երբ նա պէտք է կաթից սեր ստանայ։

Գիւղացին սեր ստանալու համար պէտք է կաթը փռէ և սպասի մի կէս օր, կամ մի օր, երբեմն և աւելի. իսկ սեպարատորը կարողութիւն է տալիս նոր կթած կաթից իսկոյն ստանալ սերը։

—Ահա կաթը կարծենք, ասում է դասախօսը, գործիքի մէջ և տեսէք թէ ինչ է լինում։

Արդարև մի քանի րօպէից յետոյ արդէն սերը բաժանվում է կաթից.

Փորձը համոզեցուցիչ է։

Սակայն դրանով դեռ չէ վճռվում հարցը։

—

Գործիքը երեք շաբաթ շարունակ գործում է գիւղի շրջանում, նրա լեռնային արօտներում, գիւղացիների աչքի առաջ նրանց դիտող և քըննող վերահասութեան տակ։

Գիւղացիները կարծես տեսնում են և չեն տեսնում, կարծես համոզվում են և չեն համոզվում.

Կասկածը հալածում է նրանց։ Զգուշութիւնը թելադրում է նորից նայել, նորից համեմատել, նորից հաշւել։

—Պէտք է լաւ համեմատել, ասում է գիւղացիներից մէկը.

—Պէտք է, պէտք է, կրկնում են միւսները։

Եւ սկսում են համեմատել։

—Նոր գործիքով ամեն բան մաքուր է, ասում է մէկը, այդ ճիշդ է, ուրանալ չէ կարելի։

—Եւ շուտ է կատարվում ամեն բան, ասում է միւսը, այդ էլ ճիշդ է.

—Եւ ստացված իւղը աւելի քաղցր է, նկատում է երրորդը։

digitised by A.R.A.R.@

Այդտեղ սկսվում է փոքր վեճ, որ վերաբերում է ճաշակի տարբերությանը։

—Բայց գուցե նոր գործիքով ավելի քիչ յուղ է ստացվում, նկատում է մեկը։

—Պետք է անպատճառ կշռել և համեմատել թե կաթը և թե յուղը, համաձայնում են բոլորը։

Անցնում են օրեր։ Վերջապես կարելի է համեմատություն անել։

Նոր գործիքից յուղ շատ է ստացվել։

—Այն, ինչ որ առաջ ստանում էինք եօթն օրում, այժմ ստացվեց հինգ օրում, բացականչում է գյուղական կանանցից ամենակրտսերը։

Նոր գործիքի աջողությունը կարծես անախորժ տպավորություն է թողնում ավելի հասակավորների վրա։

Ասացի անախորժ։

Բայց միայն ժամանակավորապես անախորժ։

Փորձված տանտիկինը, բազմամյա տնտեսուհին չէ ուզում հաշտվել այն բանի հետ, որ նրա նախկին հմտությունը և նրա խաշված, դաղված, մրսած ու փորձված ձեռքը այժմ պետք է զիջեն մի գործիքի, որ անփորձ ջահիլներն էլ կարող են շարժել։

Բայց փաստը անուրանալի է։ Նա լուռ կանգնած թելադրում է իր պատվերները։

Դարձյալ «գուցեներ», դարձյալ «բայցեր», դարձյալ կասկածներ լսվում են այս ու այն կողմից։ Եվ լինում են րոպեներ, որ բացասական ձայները յաղթում են։

—Ինչպես եղել ենք, այնպես էլ լինենք, ասում են այդ ձայները։ Հարիւր տարիներ եոլա ենք գնացել և ապրել ենք մի կերպ, այժմ էլ թող նույնը մնա։

digitised by A.R.A.R.@

Սակայն սկսում են միւս կողմից ուժ ստանալ և հակառակ ցոյցերը։

—Ինչու չը ստանանք աւելի լաւ, աւելի շատ և աւելի թանգագին արդիւնք, երբ այդ կարող ենք, ասում են նորամուծութեան պաշտպանները։

—

Գիւղացին զգոյշ է և կասկածոտ։

Բայց երբ նա համոզվում է մի բանի օգտակարութեան մէջ, այն ժամանակ ընդունում է նրան։

Ես շատ անգամ լսել եմ գիւղի պատահական այցելողներից, որ նրանց ասածների վրա ոչ մի ուշք չեն դարձրել գիւղացիները։

—Մենք խրատեցինք գիւղացիներին, ասում են այդ պարոնները, որ նրանք բարելաւեն իրանց տնտեսութիւնը, ձեռք բերեն նոր բոյսեր, նոր գործիքներ, իսկ նրանք ուշք չը դարձրին։

—Իսկ դուք բացատրեցի՞ք, արդեօք, հարցնում էի ես, թէ ինչ բոյս պէտք է բերեն և ո՞րտեղից, ինչ գործիք պէտք է ձեռք բերեն, ո՞րտեղից, կամ ո՞վ կարող է նրանց ցոյց տալ գործիքների կազմութիւնը և նրանց գործադրութիւնը, արդեօք պարզեցի՞ք, թէ ինչ է նպատակայարմար նրանց հողի և տեղական պայմանների համար։

—Ոչ, առարկում էին նրանք, այդ մենք չէինք կարող անել, որովհետև մենք շատ չը մնացինք գիւղում և վերջապէս ինքներս էլ չը գիտենք, թէ ինչպէս պէտք է կազմակերպել գործը։

Անկասկած, ասում էի ես, գիւղացին շատ անգամ չէ մտցնում նորմուծութիւններ չափա-

digitised by A.R.A.R.@

զանց հակված լինելուց դեպի իր նահապետական կարգերը, Այդ այդպես է։ Բայց մենք էլ շատ քիչ ենք աշխատել կարգին ուսուցիչներ և օգնականներ լինելու ժողովրդի համար։ Մենք այդ կողմից շատ և շատ մեղավոր ենք։

—

Մենք պետք է սովորենք խօսել ժողովրդի հետ և գործել նրա շրջանում։

Խօսքը, քարոզը կամաց կամաց կանեն իրանց ազդեցությունը։ Իսկ գործնական օրինակը, փաստային ապացոյցը կը լուծեն դժուարագոյն խնդիրները։

Մեր գիւղացիների մի ընդարձակ շրջանում այժմ տարածվել են եւրօպական գութաններ, մանգաղներ և սկսում են մուտք գործել և ուրիշ գործիքներ։

Օրինակը այդտեղ մեծ դեր է կատարել։ Գիւղացու գիւղացուց օրինակ վերցնելով՝ տարածվել է գործիքների մուտքը նոյն իսկ խուլ տեղերում։

—Իսկ մենք մեր կողմից, հարցնում եմ ես, որքան ներգործական քայլեր ենք արել աւելի արագացնելու բարւոքումների գործը։

Դրական պատասխան տալը կարծեմ կը դըժուարանայ։

CLIII

(27 յուլիսի 1903 թ., «Մշակ» № 160)

Պոստը բերին. ես սկսեցի քրքրել նամակները։

Նրանց մէջ կային հետաքրքրական գրութիւններ։

Մի նամակ գրաւեց իմ առանձին ուշադրութիւնը։ Նա գրված էր գիւղական մի խուլ անկիւնից գիւղական մի գրագէտ երիտասարդի ձեռքով։

Նամակի մէջ պատմված էր մի համալսարանական ուսանողի այցելութիւնը գիւղերին։ Նամակ գրողը յայտնում է իր հրճուանքը այդ առիթով։

Բերեմ մի կտոր այդ նամակից.

«Մեզ մօտ հիւր էր եկել մի ուսանող։ Մեր գիւղական հասարակութեան կեանքի մէջ մենք առաջին անգամն էինք տեսնում ուսանողի, որը հետաքրքրվում էր մեզանով և խօսում էր մեզ հետ մտերմաբար։ Նա ապացուցանում էր, որ մենք կարող ենք սեփական ոյժերով մեր կարիքները լրացնել և առաջ գնալ, եթէ լուրջ կերպով ցանկանանք։ Ի՞նչ դժուար բան է նոր երկրագործական գործիքներ ձեռք բերել, ասում էր նա։ Եթէ մի քանի գիւղական հասարակութիւններ միանան, կարող են բժիշկ էլ հրաւիրել, փոքրիկ

digitised by A.R.A.R.@

դեղատուն էլ պահել, պոստային բաժանմունք էլ ունենալ, ճանապարհներ էլ շինել, դպրոցներ էլ բանալ զանազան արհեստներ սովորեցնելու համար։ Ամեն մի գիւղ հեշտութեամբ կարող է շատ բարեփոխութիւններ անել, գրքեր ու լրագիրներ ստանալ և հետևել ուրիշ տեղերի կեանքին ու արագ առաջադիմութեան։

Նամակը գրված էր Արագածի հիւսիսային լանջի վրա գտնվող մի գիւղից։

Ես ճանաչում եմ այդ կողմերը։

Այդտեղ բնութիւնը խիստ է և ձմեռը երկարատև, այդտեղ գիւղացու ցանքերը վնասվում են ցրտից և կարկտից, այդտեղ գիւղացու տնտեսութիւնը ճնշված է շրջապատող ծանր պայմաններից։

Նամակը դեռ չէի գցել ձեռքիցս, որ ընդհատեց ինձ Սալեմեանը։

—Ի՞նչ մտատանջութեան մէջ ես, հարցրեց նա ձեռքս սեղմելով։

Ես տուի նրան նամակը։ Նա կարդաց, գլուխը շարժեց։

—Պարզամիտ գրուածք է, ասաց նա, բայց հետաքրքրական։

—Ուրախալի է, վրա բերեցի ես, որ գիւղական երիտասարդութիւնը ոչ միայն չէ վախենում նոր խօսքից և նոր խրատներից, այլ և սկսում է ոգևորվել բարեփոխութիւնների գաղափարով։

—Այդ ճիշդ է, նկատեց Սալեմեանը, սակայն երևի հետևեալ օրը ամեն բան մոռացվել է և օդը ցնդվել։

—Բայց մի փոքրիկ կաթիլ արդէն ընկել է գիւղական մտածողութեան դաշտում։

digitised by A.R.A.R.@

—Ես չեմ հերքում, առարկեց Սալեմեանը, ոչ մի քարոզի, ոչ մի խրատի նշանակութիւն, բայց մեծ բան չեմ սպասում պատահական այցելութիւններից։ Առաջին կաթիլին, առաջին քայլին պէտք է հետևեն երկրորդը, երրորդը, չորրորդը և այլն։ Այն ժամանակ կարելի է յոյս ունենալ դրական հետևանքների վրայ։

—Ուրեմն, նկատեցի ես, հարցը նրա մէջն է, թէ ինչպէս անենք, որ գործը դառնայ աւելի սիստեմական, աւելի նպատակայարմար։ Մանաւանդ կարեւոր են գործնական օրինակներ։

—Անշուշտ, անշուշտ, վրայ բերեց Սալեմեանը. ես նորերս կարդացի մի չինացու ասացուած, որ այժմ Չինաստանում առած է դարձել։ Այդ չինացին, որ աչքի ընկնող զօրապետ է եղել և յայտնի իր խելացի կարգադրութիւններով, ասել է հետևեալը՝ «աւելի լաւ է մի անգամ տեսնել, քան հարիւր անգամ լսել»։

—Հետաքրքրական է։

—Այդ զօրապետի անունն է Չժաօ-Չուն-Գօ, ես կամաւ միտքս եմ պահել այդ անունը։ Սակայն բնորոշ է մի բան, որ չինացիները դարեր շարունակ չէին ուզում տեսնել եւրոպացիների երեսը, այլ բաւականանում էին միայն լսելով նրանց մասին։ Տեսնենք թէ այժմ, երբ նրանք սկսել են տեսնել շատ բան իրանց աչքերով, ինչ պէտք է անեն, որքան արագ պէտք է առաջանան։

—Իսկ մենք, հարցրի ես, ասացէք խնդրեմ, ինչպէս անենք, որ Չժաօ-Չուն-Գօի խրատը կամ կանօնը մուտք գործէ մեր գիւղերում։ Ո՞վ պէտք է գնայ գիւղը և այնտեղ ամեն բան գործնականապէս ցոյց տայ գիւղացուն, այն-

digitised by A.R.A.R.@

պէս անէ, որ նա ոչ միայն լսէ, այլ և տեսնէ։

Մենք յայտնեցինք մի քանի խորհրդածութիւններ, որոնց մասին մի օր գուցէ պատմենք։

—

«Մշակի» մէջ դուք կարդացիք Լևոն Խան-Աղեանի մահվան մասին։

Հանգուցեալի կեանքի և գործունէութեան մի գծի վրա ես մտադիր եմ կանգ առնել մի քանի խօսքով։

Դուք գիտէք, որ նա տուեց մեր ժողովրդին մի գեղեցիկ գիրք երկրագործական գործիքների մասին, կազմած իր ջանքերով։

Դուք նոյնպէս գիտէք, որ նա տուեց մեզ մի ջրամբարձ մեքենայ, որով նա հնարաւորութիւն էր տալիս գետերի ջուրը բարձրացնել դէպի ափ գործադրութեան համար,

Նա հետևում էր երկրագործական գործիքների տարածմանը և ժողովում տեղեկութիւն նրանց պիտանիութեան աստիճանի մասին։

Եւ այդ նա անում էր ոչ իբրև պաշտօնեայ, ոչ իբրև մի անձ, որին յանձնված էր այդ գործերը անելու։

Ահա այդ գիծը ես հանդէս եմ հանում, իբրև մի համակրելի և ուշադրութեան արժանի մի գիծ։

Խան-Աղեանը սիրում էր իր գործը, իր մասնագիտութիւնը, ձգտում էր անդադար կատարելագործութեան իր արհեստի մէջ և ապացուցեց, որ նա կարող է օգտաւէտ ոյժ հանդիսանալ իր հասարակութեան համար։

Այդ սէրը և այդ անձնուէր վերաբերմունքը դէպի գործը, այդ ցանկութիւնը տարածել իր գիտեցածը շրջապատողների մէջ, բացակայում է մեր մասնագէտների շրջանում, որոնցից իւրաքանչիւրը նայում է իր գործի վրա, ինչպէս

digitised by A.R.A.R.@

մի տխուր պարտականութեան վրա, որ պէտք է մի կերպ կատարէ, որպէս զի յետոյ Նուիրվի իր զուարճութեան և անձնական կեանքին։

Ես ամենևին չեմ ուզում իդէալացնել հանգուցեալին։ Նա հանգամանքների շնորհիւ շատ կղզիացած կեանք էր վարում և անկարող էր ընդարձակ շփումներ ունենալ ուրիշների հետ։

Բայց չեմ կարող անտես անել, որ նա աննպաստ հանգամանքներում գտաւ գործելու և օգտակար լինելու ձև։

Ես շատ կը ցանկանայի, որ մեր միւս մասնագէտներն էլ կարող լինէին հետևել Խան-Ազեանի օրինակին, թէ տային գիտամատչելի գրքեր իրանց հասարակութեան և թէ ինքնուրոյն գործողներ լինէին իրանց մասնագիտութեան մէջ։

Այդ արժանաւորութիւնը այնքան շատ տարածված չէ, որ Նրան անտես անենք։

Միթէ այդպէս չէ։

---

digitised by A.R.A.R.@

CLIV

(30 օգոստ. 1903 թ., «Մշակ» № 166)

—Հանաք են արել, իրանց խելքով հանաք են արել,

Այս նկատողութիւնը արաւ իմ ծանօթը երբ ես պատմեցի նրան նորերս տեղի ունեցած յարձակման մի դէպք։

—Ի՞նչ խօսք, լաւ հանաք է. տրտնջացի ես։

—Դրան կասեն արջի հանաք, պատասխանեց ծանօթս գլուխը թափ տալով։

—Ի՞նչ է սակայն այդ դէպքը կամ հանաքը։

—Պատմեմ։

—

Գործողութիւնը տեղի է ունեցել Գանձակում
Երկու շաբաթ սրանից առաջ՝
յուլիս ամսի 19-ին
և լուսնի 9-ին,
երեկոյեան հովին—զովին։

Գանձակի քաղաքային այգում մի խումբ պատանիներ, մեծ մասամբ գիմնազիստներ, խօսելով Հաջիբեկեանց ամարանոցի մասին, պայմանաւորվում են միասին գնալ այնտեղ ոտով։

—Բայց ոչ ցերեկով, նկատում է մէկը։

—Պէտք է գիշերով գնանք, որ լուսածագին այնտեղ լինենք, պատասխանում է միւսը։

—Ի հարկէ՝ գիշերով, համաձայնում են միւսները։

digitised by A.R.A.R.@

Ընկերովի գնալու գաղափարը ոգևորում է պատանիներին.

—Ուրեմն որոշված է, պարոններ.

—Որոշված է և ստորագրված, պատասխանում են բոլորը.

—Ո՞ր ժամին.

—Գիշերվայ ժամի 1-ին, համաձայնում են բոլորը։

—Ուրեմն ցտեսութիւն.

—Ցտեսութիւն.

Պատանիները պայմանաւորված ժամին ճանապարհ են ընկնում դէպի Հաջիքեանդ։

Դեռ չատ չը հեռացած քաղաքի տներից, Մելիք-Շահնազարեանի այգու մօտ, նրանք հանդիպում են դժբաղդութեան։

Նրանց ճանապարհը կտրում են չերքեզկա հագած և մահակներով զինված հինգ ստուերներ։

—Կանգնեցէք, հրամայում են չարագործները։

Պատանիները չէին սպասում մի այդպիսի անախորժ արգելքի.

Նրանք հպատակվում են։

—Տուէք, ինչ որ ձեզ մօտ ունէք, հրամայում են չարագործները։

Պատանիները տալիս են իրանց մօտ եղած փողը, յետոյ հանում են բաճկօնները և կօշիկները, որպէս զի այդ էլ յանձնեն չարագործներին։

—Բաւական է, յայտնում են յանկարծ յարձակվողները, մենք ձեզ խղճում ենք, և վերադարձնում ենք բոլորը։ Վերցրէք.

Չարագործները վերադարձնում են բոլորը, իրանց մօտ թողնելով միայն մի քսակ։

Սակայն ինչ է դուրս գալիս բանից։

digitised by A.R.A.R.@

Այն, որ այդ բոլորը սարքովի բան է եղել՝ Համաք է եղել՝

Հանաք ընկերների կողմից։

Դուրս է գալիս, որ այն ժամանակ, երբ Գանձակի քաղաքային այգում պատանիները պայմանաւորվում են եղել Հաջիքեանդ ուղևորվելու, պատանիների մի ուրիշ խումբ (մի վրացի և չորս հայ), հեռուից լսելով բոլորը և ցանկանալով փորձել իրանց ընկերների քաջութիւնը և սրտոտութիւնը, վճռում է մի հանաք անել և ծպտված կերպարանքով նրանց վրա յարձակվել ճանապարհին։ Այդ պատճառով մի կէս ժամ առաջ ճանապարհ է ընկնում և Մէլիք-Շահնազարեանի այգու մօտ սպասում գիշերվայ ճանապարհորդներին։

Ահա ովքեր են եղել պատանիների վրա յարձակվող չարագործները։

Այս բոլորը հանաք է եղել։

Երբ լուրը հասել է Գանձակ և Հաջիքեանդ, մի քանիսը սաստիկ վրդովվել են այս հանաքից, միւսները սաստիկ ծիծաղել։

Հաջիքեանդի փիլիսոփաներից մէկը խնջոյքի ժամանակ այս առիթով ասել է հետևեալը։

—Ես շատ կը ցանկանայի, որ մեր նահանգի մէջ եղած բոլոր յաձակումներն էլ այդպէս հանաքներ լինէին, բայց ես ինքս երբէք չէի ցանկանայ ենթարկվել նոյն իսկ այնպիսի անմեղ մտքով սարքած հանաքի, ինչպէս ներկայ հանաքն է։

Նրա կենացը խմել են մեծ աղմուկով։

—

—Սակայն նկատեց իմ ծանօթը, ամեն մի հանաքի համար, որ վտանգաւոր հետևանքներ չէ ունեցել, կայ մի թեթև ելք, այդ այն է, որ

digitised by A.R.A.R.@

կարելի է ներողութիւն խնդրել և դրանով ամեն թիւրիմացութիւն էլ կը վերջանայ։

—Ի հարկէ, ներկայ դէպքում այդ ելքը բը-նական է։

—Եւ ընկերները երևի արդէն ներել են և իրանք էլ ծիծաղել եղածի վրայ։ Ինչպէս չը ներեն, երբ մարդիկ չար դիտում չեն ունեցել, երբ մարդիկ միայն հանաք են արել, ճիշդ է անախորժելի հանաք, բայց առանց վտանգաւոր հետևանքների։

Իմ ծանօթը սկսեց խօսել մի շարք հանաք-ների մասին, որոնք հեշտութեամբ փոխարկվում են տխրութիւնների։ Նա պատմեց մի քանի դէպքեր հրացանով հանաքների մասին, որոնք վերջացել են մահով, նա նկարագրեց մի դէպք, երբ հանաքը պատճառ է եղել ընտանեկան մեծ երկպառակութեան։

—Հանաքը—դանակ—ահա նրանց ընդհանուր անունը, բացականչեց նա։

Այնուհետև նա խօսեց ներողութիւն խնդրելու մասին։

—Երբ ես պատահաբար ձեզ դիպել եմ, ա-սում էր նա, ձեզ հրել եմ, ձեր շորը փոշոտել եմ, ներողութիւն եմ խնդրում—դա հասկանալի է. բայց եթէ ես ձեր տունը կրակ եմ տուել, այն ժամանակ ներողութիւն խնդրելը շատ քիչ գոհացում է տալիս ձեզ, մըսավողիդ, և կարծես մի տեսակ ծաղր է դառնում։

—Անկասկած, նկատեցի ես, ամեն մի դէպք իր չափը ունի բաւարարութեան ձևի համար։

—Չը գիտեմ, շարունակեց ծանօթս, թէ ինչ դրութեան մէջ է զգում իրան Թիւրքիան, երբ ստիպված է լինում ներողութիւն խնդրե-լու օտար հիւպատոսների սպանութեան հա-

մար։ Թիւրքիան յայտնեց իր մեծ վիշտը և ցաւակցութիւնը Շչերբինայի սպանութեան առիթով։

—Նոյնը նա անում է այժմ Ռոստկովսկու վերաբերութեամբ։

—Սակայն, վրա բերեց ծանօթս, ով է երաշխաւոր, որ վաղը տեղի չի ունենայ նոյնպիսի մի դէպք մի ուրիշ պետութեան հիւպատոսի հետ։ Միթէ դարձեալ ցաւ և վիշտ յայտնելով, դարձեալ ներողութիւն խնդրելով կարելի է գոհացնել վրդովված սրտերը և բողոքող ձայները։

—Այդպէս է առ այժմ։

—Անկասկած, աւելացրեց նա, ամէն անգամ ներողութեան չափը և ոյժը փոխւում է. նա կրկնապատկւում, տասնապատկւում է, նա արտայայտւում է ամենասրտաշարժ բառերով և յուզիչ ձևերով, բայց էութիւնը նոյնն է՝ ներողութիւն տեղի ունեցածի համար։

—Իսկ դուք, հարցրի ես, ինչ խորհուրդներ կը տայիք նրանց։

—Ինձ նրանք չեն հարցնի, վերջացրեց նա, ուստի և իմ պատասխանը թող մնայ գաղտնիք։

digitised by A.R.A.R.@

CLV

(10 օգոստ. 1903 թ., «Մշակ» № 172)

—Նա մեղաւոր չէ, ես նրան զրպարտել եմ։ Այդ ձայնը շարունակ լսւում է իմ ականջում ամբողջ շաբաթ։

Մեղաւոր չէ, բայց զրպարտուած է։

Զրպարտուած, անուանարկուած, խայտառակուած։

—Ես դիմում եմ նրա ներողամտութեան, ասում է ձայնը։

Դարձեալ ն ե ր ո ղ ո ւ թ ի ւ ն խօսքը հանդէս է գալիս քաւելու մեղքերը։

Չը գիտեմ, ընթերցող, դուք գուշակեցիք արդեօք, թէ ինչ դէպքի և ինչ ձայնի մասին եմ ես ակնարկ անում։

Ես ձեզ յիշեցնեմ։

Դէպքը բնորոշ է։

—

Մի շաբաթ սրանից առաջ «Մշակի» մէջ տըպւեց ուսուցիչ Աբրահամեանի նամակը։

Այդ նամակի մէջ ասուած էր հետևեալը՝

«Ես վարձուած լինելով ուսուցիչ, (Պարսկաստանի Ղազվին քաղաքում) ամբողջ տարւայ ընթացքում միայն 90 րուբլի էի ստացել, իսկ 350 րուբլին մինչև յուլիս ամիսը մնում էր հոգաբարձութեան վրա։ Ես, չը ստանալով ռոճիկ, ապրում էի պարտքերով.

«Իմ դրութիւնը անել էր…

«Մի օր քաղաքում, երէցփոխը և մի երկու համախոհներ դիմում են ինձ և առաջարկում ազատել պարտատէրերից և վճարել իմ մնացած 350 ռուբլին, եթէ ես կը ստորագրեմ նրանց թելադրած մի դրութիւնը»։

Ուսուցիչը նախ մերժում է, բայց յետոյ տեսնելով իրան անել դրութեան մէջ՝ ստորագրում է։

Սակայն ինչ է ստորագրում։

Մի ցած զրպարտութիւն արժանաւոր և անկեղծ մի մարդու մասին։

Բացատրեմ գործի էութիւնը։

Հոգաբարձութեան մօտ եղած մի տոմս, որ գումար է տարած լինում, անհետանում է։ Սակայն նրա փոխարէն դրված է լինում մի ուրիշը։

Բացվում է տեղի ունեցած մի քստմնելի խարդախութիւն։

Գումարվում է ընդհանուր ժողով, որ

հայր նախագահի խոստովանութեամբ հաստատելով խարդախութիւնը, վճռում է անմիջապէս դուրս վռնդել քահանային…

Սակայն վճիռը չէ իրագործվում և գործը ուրիշ ընթացք է ստանում։

Հնարվում է մի ուրիշ մեղաւոր, որի վրա և բարդվում է յանցանքը։

Ինչպէս։

«Մի քանի պարոններ, որոնք անձնական թշնամութիւն ունեն Բէգլար Աղայեանցի դէմ, կամենում են օգտվել հանգամանքից և իմ միջոցով այդ խայտառակութիւնը բարդել Աղայեանցի վրա։ Ի պատիւ վերջինիս՝ պիտի խոստովանեմ, որ այդ թշնամութիւնը առա-

digitised by A.R.A.R.@

ջանում է նրա դէպի հասարակական խնդիրները բռնած անկեղծ դիրքից»։

Եւ ցած ինտրիգան աջողութեամբ է պըսակվում։

Ուսուցիչը զանազան սպառնալիքների ծանրութեան տակ ստորագրում է յիշված թելադրութիւնը, ստանում ռոճիկի մնացորդը, վճարում պարտքերը և հեռանում ինտրիգայի որջից։

Հեռանում է և այժմ գալով Թիֆլիս, նա խոստովանում է ամէն բան։

«Ի սէր Աստուծոյ, խիղճս ծանրաբեռնված է, ազատեցէք ինձ այդ անել դրութիւնից։ Ես յայտարարում եմ ի լուր աշխարհի, որ Բ. Աղայեանցը այդ կեղծիքի մէջ ոչ մի մասնակցութիւն ոչ ունի, ոչ էլ կարող էր ունենալ և ես գիմում եմ նրա ներողամտութեան»։

Ահա բոլորը։

—

Ո՞վ է իսկապէս կեղծիք գործողը—դա չէ ներկայ դէպքում գլխաւոր հարցը։ Այլ այն, որ մի բոլորովին անմեղ մարդ կարող է ինտրիգայի շնորհիւ զրպարտվել և խայտառակվել։

Լրագրի այն համարը, որտեղ տպվել է ուսուցչի խոստովանութիւնը և յայտնած ներողութիւնը (№ 165) պէտք է կատարեն այն բարձր դատաւորի պաշտօնը, որ բացակայ էր Ղազվինի երկնքի տակ։

Առանց այդ խոստովանութեան մի անմեղ անձնաւորութիւն կը մնար զրպարտված և անուանարկված։

Ուսուցչի կատարած զրպարտութիւնը բացում է մեր առաջ ամսիական իրականութեան

ամենածանր և ամենատգեղ երևույթներից մէկը։

Այն, որ գոնէ մարդը վստահութիւն ունեցաւ հրապարակորէն խոստովանելու իր արած զըրպարտութիւնը և մաքրել Բ. Աղայեանցի անունը արատից։

Իսկ որքա՜ն մարդիկ մնում են զրպարտված.
Ես անթիւ օրինակներ գիտեմ։
Գուցէ դուք էլ գիտէք ինձնից ոչ պակաս։

—

Իմ պատմած դէպքում զրպարտութիւնը տեղի է ունեցել ճնշման և սպառնալիքների ազդեցութեան տակ։

Սակայն յաճախ զրպարտութիւնները կատարվում են առանց ճնշումի, առանց այնպիսի անհրաժեշտութիւնների, որոնցով գոնէ կարողանային մարդիկ իրանց արդարացնել։

Ինչո՞ւ։

Յայտնի չէ։

Ղազվինի Բեգլար Աղայեանցը իբրև կենդանի նահատակ, անշուշտ շատ ծանր խորհրդածութիւններ է արել մարդկային բաղդի և առհասարակ մարդկանց մասին։

Ուսուցիչն էլ, որ իր շահը ձեռքից բաց չէ թողել, չարաչար մտատանջվել է և այսօր նա կանգնած է մեր առաջ իր ծանր խոստովանութեամբ։

Արժէ, որ ուրիշներն էլ մտածեն նոյնպիսի դէպքերի մասին։

Զրպարտվածներին մնում է Աղայեանցից սովորել համբերութիւն, իսկ զրպարտութիւն անողներին՝ գոնէ մեղքը խոստովանելու և անմեղի անունը մաքրելու համարձակութիւն։

—

—Ինչո՞ւ, կը հարցնէ ընթերցողը, ես չեմ

digitised by A.R.A.R.@

հարուածում ուսուցչին, որ թոյլ է տուել իրան այդքան տմարդի գործ, այդքան սոսկալի ոճիր մարդու պատուի դէմ։

Ահա ինչու։

Որովհետև այսօր ես զբաղված եմ ոչ մեղք գործելու թեմայով և ոչ քրէական քննութեամբ։

Այլ։

Այլ մի կողմից գրպարտված լինելու սոսկալի դրութեան, իսկ միւս կողմից զղջման և խոստովանութեան երևոյթներով։

Զրպարտութիւնը կատարվում է ամեն օր, ամեն մի ժամ։

Ի հարկէ մեծ ու փոքր չափով։

Բայց զղջացողներ և խոստովանողներ շատ քիչ են։

Զրպարտողը յաճախ սկսում է աւելի ևս յամառվել, որպէս զի նա չը համարվի զրպարտող։

Եւ նրան ինչ փոյթ, թէ զրպարտվածի անունը վնասվում է։

Իսկ զրպարտված կարող են լինել ոչ միայն առանձին անհատներ, այլ և հիմնարկութիւններ ու համայնքներ։ Էութիւնը նոյն է։

—

Վերջացնում եմ բարոյախօսութեամբ։

Չը զրպարտենք անմեղին և չը խաղանք ուրիշի անուան և պատուի հետ, իսկ եթէ դըժբաղդութիւնը տեղի է ունեցել և մեղքը գործված է, խիղճ ունենանք զղջալու և քաջութիւն ունենանք մեր արածը խոստովանելու։

digitised by A.R.A.R.@

CLVI

(17 օգոստ. 1903 թ., «Մշակ» № 178)

Ես հրաւիրուած էի մի ընտանեկան զրոյցի, որտեղ պէտք է մենք ժամանակ անցկացնէինք և մեր բարեկամ Լարեանը պէտք է կարդար մի զեկուցում։

Գնացի և այնտեղ պատահեցի թէ մօտ և թէ հեռաւոր ծանօթներիս։

Առաջին ողջոյնից յետոյ սկսեցինք հարց ու փորձ անել միմեանցից օրւայ չարիքների մասին։

Այդ հարց ու փորձը պարզեց իմ առաջ մի անսպասելի հանգամանք։

Դուրս եկաւ բանից, որ այն ժամանակ, երբ ես գրում էի Պարսկաստանում կատարուած գրպարտութեան դէպքի վրդովեցուցիչ մանրամասնութիւնները և ընդհանուր խորհրդածութիւններ էի անում գրպարտողների մասին, նոյն այդ միջոցին ամենաստոր գրպարտութիւնները եկել էին ծանրանալու իմ բարեկամների և նոյն իսկ իմ վրայ։

Այն մարդիկ, որոնք կարդալով Ղազուինի անգամ գրպարտութիւնը՝ վրդովուած և զայրացած էին երևում, իրանք անզուսպ և կրքոտ բերանով գրպարտութիւններ են սփռել ամեն կողմ մի շարք ազնիւ գործողների դէմ։

—Ճի՞շդ են արդեօք, հարցնում էր մէկը, ձեզ վերագրուած այս և այն խօսքերը։

digitised by A.R.A.R.@

—Ոչ, բոլորովին սուտ է, պատասխանում եմ ես։

—Ճի՞շտ է արդեօք, որ դուք Ա. Բ. Գ.-ի գործերին խանգարել էք։

—Ոչ։

Ես լսեցի մի շարք զրպարտութիւնների մասին հարցումներ, որոնց միայն մի պատասխան ունէի տալու՝ ոչ, ոչ և ոչ։

—Արդ ինչու՞ են այդպէս լուրեր տարածում։ Ինձ համար պարզվեց, որ հին ինտրիգայի հիդրան, որ միշտ հրապարակ է եկել մեզանում զանազան ընտրութիւնների և խոշոր դէպքերի ժամանակ, նորից գլուխ է բարձրացրել և միամիտներին մոլորեցրել։

—Դա մեզ յիշեցնում է, ասաց Թաչիկեանը, այն, որ կան մեզանում մարդիկ, որոնք երբէք չեն մոռանում իրանց մասնաւոր դիտումները և հաշիւները և, օրինակ, մի երկրաշարժի կամ հրդեհի ժամանակ, փոխանակ իսկական աղէտի մասին մտածելու, զբաղված են այն ծրագրով, թէ իրանք ինչ կերպ կարող են վնասել իրանց վաղեմի հակառակորդներին և ինչ բանսարկութիւններով մարդկանց մոլորեցնել յուզված րոպէներում։

Ես յիշեցի դէպքեր։

Յիշեցի, ինչպէս անցեալ տարի, գաղթականների վերադարձի ժամանակ, «Մշակը» ստիպված էր զգուշացնել ընթերցողներին հաւատ չընծայելու զանազան լուրերին, որոնք տարածվում էին լրագրի անունից, յիշեցի նոյն տեսակ դէպքեր անցեալում և ուրիշ հանգամանքների առիթով։

—

Բայց այսօրվայ իմ խօսքը զրպարտութեան

digitised by A.R.A.R.@

մասին չէ, ուստի դիմեմ Լարեանի զրոյցին։

Ամենքս յարմարեցրինք մեզ համար նստելու տեղեր և պատրաստվեցինք լսելու։

Լարեանը փոքր ինչ զուարճախօսեց, յայտնեց, որ նա իսկապէս զեկուցում չէ կարդալու, այլ զրոյց է անելու մեզ հետ և դիմելու է հարց ու պատասխանների։

—Պարոններ, ասաց Լարեանը, ես պէտք է խօսեմ գիտութեան և գաղափարների փրկարար նշանակութեան մասին, բայց մի մեծ առաջաբանից յետոյ։ Թոյլ տուէք ինձ խօսել օրինակներով։

—Աւելի լաւ, յայտնեցինք մենք։

—Մեր գիւղում, ասաց Լարեանը, աղջիկները ուսում չէին առնում. բայց ահա տասը տարի է, որ դպրոց են յաճախում։ Մեր աղջիկների նոր սերունդը կարդալ գրել գիտէ։ Աղջիկները և ջահել հարսները կարողանում են նամակ գրել իրանց պանդուխտներին, պահում են տան մի քանի կարևոր հաշիւները, սովորեցնում են փոքրիկներին գրագիտութիւն։

—Մխիթարական երևոյթ է, ասացինք մենք։

—Դուք ասում էք, առարկեց Լարեանը, մխիթարական է. բայց գիտէք, որ գիւղում կան հակառակորդներ, որովհետև այնտեղ երկու անախորժ դէպքեր են տեղի ունեցել։

—Պատմեցէք։

—Մի աղջիկ վերցրել է և սիրահարական մի նամակ է գրել մի երիտասարդի և բռնվել է։ Մի ուրիշ աղջիկ գրքերի ազդեցութեան տակ մերժել է փեսայացուին, որ ընտրել են ծնողները։ Քիչ մնաց, որ դպրոցը փակվի։

—Յետոյ։

—Սակայն, շարունակեց Լարեանը, գիւղի

digitised by A.R.A.R.@

մեծամասնութիւնը պաշտպանեց դպրոցը։ Գիւղացիները կշեռքի մի թաթում դրին եղած անախորժութիւնները, իսկ միւս թաթում ուսման տուած օգուտները և վճռականապէս պաշտպանեցին դպրոցը։

—Փառք Աստուծու, բացականչեցինք մենք։

—

—Այժմ լսեցէք մի ուրիշ օրինակ, խօսեց Լաբեանը։ Նոյն գիւղում ահա տասը տարի է, որ կանայք սկսել են խօսել տղամարդկանց հետ և երեսները բաց ման գալ։ Ի՞նչ էք կարծում, դա լաւ երևոյթ է, թէ ոչ։

—Անկասկած, վրա բերեցինք մենք։

—Բայց գիտէք, որ շնորհիւ այդ նորամուծութեան, մի քանի անախորժութիւններ տեղի ունեցան։

—Ի՞նչպէս։

—Մի կին ունեցել է հարևանի հետ խոշոր կռիւ և հայհոյել է տղամարդին։ Մի ուրիշ կին, խօսակցութիւններ ունենալով գիւղական մի երիտասարդի հետ, գրաւուել է վերջինի հաճոյախօսութիւններից և ընտանեկան դժբաղդութեան պատճառ դարձել։ Եթէ այդ նախկին չըխօսկան և փակված կանայք չարունակէին չը խօսել, երևի տեղի չէին ունենայ այդ անախորժութիւնները։

—Գուցէ այդ իսկ դէպքերը տեղի չէին ունենայ, առարկեցինք մենք, բայց դրանց փոխարէն գիւղերում աւելի կը լինէին ուրիշ անախորժութիւններ։ Չըխօսկանութիւնը և փակվածութիւնը ինքն ըստ ինքեան այնպիսի մեծ անյարմարութիւններ են, որ այստեղ խօսք չէ կարող լինել բացառութիւնների մասին։

—Գիւղի վիճաբանողները, յայտնեց Լարեա-

digitised by A.R.A.R.@

նը, դարձեալ կշեռքի մի թաթում դրին անախորժութիւնները, իսկ միւս թաթում տուած օգուտները և յարմարութիւնները և գտան, որ անվերադարձնալի կերպով վերջացել է չըխօսկանութեան և փակված կեանքի դարը։

—

—Դարձեալ օրինակ, շարունակեց Լարեանը։ Մեր գիւղում մի քանի մարդիկ վայելուչ տըներ շինեցին լուսամուտներով և քաղաքի կահաւորութեամբ, միւսները սկսեցին ժամացոյցներ կախել, պատերով սենեակները լուսաւորել, լրագիրներ ստանալ, մի խօսքով սկսեցին փոքր ինչ քաղաքացիների կեանքին հետևել։ Բայց մի անյարմարութիւն խօսակցութեան նիւթ դարձաւ. այդ այն է, որ գիւղացու տան ծախքերը աւելացան։ Մի քանի գիւղացիներ էլ առարկում էին, թէ վայելուչ տներով և մաքուր նիստ ու կացով նրանք կարող են թշնամու նախանձը շարժել և ճնշումներ կրել։

—Այդ ճիշդ է, ասաց խօսակիցներից մէկը, բայց այդ ծախքերը լաւ ծախքեր են և ապագայում կարող են աւելացնել թէ արդիւնագործութիւնը և թէ բարձրացնել գիւղի բարոյական մակերևոյթը։

—Գիւղի վիճողները, նկատեց Լարեանը, դարձեալ կշեռքի վրա դրին դրական և բացասական կողմերը և այժմ միւսներն էլ սկսեցին հետևել առաջինների օրինակին։

—

—Էլի մի օրինակ, շարունակեց Լարեանը։ Մեր գիւղում մի տղայ, որ զանազան տեղերում վարպետութիւն էր արել, սկսեց նոր գործիքներ բերել տալ և շինեց մի նոր տեսակի ջրաղաց։ Մի ուրիշը շինեց մի լաւ ձիթա-

digitised by A.R.A.R.@

հանք, երրորդը սկսեց ցանել ծխախոտ, որ մինչև այդ ժամանակը չէին փորձել գիւղում և աջողութիւն ունեցաւ։

—Ուրախալի երևոյթներ են, բացականչեցինք մենք։

—Բայց գիտէք, որ գիւղական հասարակութիւնը իր կողմից աւելացրեց այդ երիտասարդների տուրքերը, իսկ միւս կողմից ասպարէզ եկաւ և ընդհանուր տուրքը։

—Ճիշդ է այդ լաւ չէ, առարկեցինք մենք։ Բայց օգուտը աւելի մեծ է, քան կորուստը։

—Այո, վրա բերեց Լարևանը, գիւղում այդպէս էլ վճռեցին։

—

—Թոյլ տուէք դարձեալ մի օրինակ, առաջարկեց Լարևանը։

—Խնդրում ենք։

—Մեր գիւղում երկու հաստ մէջք մարդիկ կային, որոնք շատերին վնասել էին։ Նրանցից մէկը որբերի փողեր էր անուշ արել և մուրացիկ դարձրել խեղճերին, միւսը չնչին պարտքի փոխարէն իր հարևանի տունը գրաւել։ Այդ մարդիկ մեծ դիրք ունէին և բոլորը նրանցից վախենում էին։ Մի օր վերջապէս գիւղի երիտասարդները ամեն բան բաց արին, երես արին և խայտառակեցին պատուելիներին։ Նոյն իսկ աջողվեց որբերի փողերը մասամբ յետ ստանալ։

—Շատ լաւ է, այդպէս էլ պէտք է անէին։

—Բայց դժբաղդութիւն էլ տեղի ունեցաւ, պատուելիներից մէկը չը դիմացաւ խայտառակութեան—հիւանդացաւ և այժմ անդամալոյծ ընկած է իր տանը։

digitised by A.R.A.R.@

—Նա իր պատիժն է կրել, նկատեց խօսակիցներից մէկը։

—Գիւղում, աւելացրեց Լարեանը, դարձեալ նրան խղճում են նրա ընտանիքի պատճառով, որի մէջ կան օրինաւոր մարդիկ։ Ի հարկէ, գիւղում դարձեալ վիճում էին եղած դէպքերի մասին և գտնում էին, որ չէր կարելի թագցնել մարդկանց չարագործութիւնը և պէտք էր բոլորը մերկացնել ու վնասվածներին պաշտպանել։

—Ի հարկէ, այդպէս է։

—Պարոններ, ասաց Լարեանը, ես կարող էի իմ օրինակները շարունակել։ Ես կարող էի ցոյց տալ, որ երկաթուղին իր մեծ օգուտների հետ և մասնաւոր վնասներ էլ է տուել և տալիս է, որ ապառողական և փոխատու խնայողական ընկերութիւնները իրանց ընդհանուր օգուտների հետ վնասում են վաճառականների մի դասին։ Այդպէս օրինակներ կարելի է շատ բերել, բայց բաւական եմ համարում առաջ բերածները։ Եթէ կամենում էք, դարձեալ շարեմ։

—Բաւական է, յայտնեցինք մենք, այժմ եզրակացութիւն տուէք։

—Իմ միտքը այն էր, յայտնեց Լարեանը, որ ձեր առաջ դնեմ մեր նոր կեանքի սկզբունքները և պահանջները։ Ես կը խօսեմ նրանց մասին մանրամասնօրէն, բայց նախօրօք ուզում էի ասել, որ չը պէտք է կորցնել վստահութիւնը դէպի գիտութիւնը և գաղափարները, այլ հաւատալ և պինդ հաւատալ նրանց յաղթանակներին։ Անկասկած, երբ մտցնում ենք մեր կեանքի մէջ փրկարար լայն եւրոպական սկզբունքներ և գաղափարներ, կարող են տեղի ունենալ և այնպիսի հանգամանքներ, երբ մարդիկ կը վնասեն ձեզ և ի չարը գործ կը

digitised by A.R.A.R.@

դնեն ձեր անկեղծությունը։ Սակայն չը պէտք է վհատվել։ Գիտությունը և գաղափարները փրկարար զէնք են տալիս մարդկությանը. հասարակական քննադատությունը վերանորոգում է և թարմացնում է կեանքը։ Ճիշդ է, կարող է պատահել, որ մէկը կօգտվի նոյն գիտությունից և հասարակական քննադատությունից կողմնակի նպատակների համար, բայց դա չէ նշանակում, թէ մենք պէտք է հերքենք գիտությունը, մերժենք հասարակական քննադատությունը։

—Իսկ միթէ կան հերքողներ և մերժողներ:

—Դժբաղդաբար պատահում են, վրա բերեց Լարեանը։ Գիտությունը և ինքնաքննությունը պարունակում են իրանց մէջ ստեղծագործական բեղմնաւոր տարրեր և առանց նրանց անկարելի է առաջադիմել և կուլտուրական ժողովուրդ դառնալ։

—Անկասկած:

—Ինքնաքննությունը պէտք է մեր պարծանքը լինի, իսկ կատարելագործութեան ձգտումը մեր նշանաբանը։ Մենք չենք եղել վայրենիներ և չենք ցանկացել լինել այդպիսին։ Մենք եղել ենք կուլտուրական և շինարար տարր. այդպիսին էլ պէտք է մնանք մշտապէս։

Այնուհետև Լարեանը սկսեց դասախօսել սկզբունքների մասին։

Նա ամփոփեց այն, ինչ որ կէս դար շարունակ մեր գրականութեան լաւագոյն մասը քարոզում է։

Գուցէ դասախօսությունը տպվի, այն ժամանակ դուք էլ կը կարդաք անշուշտ։

digitised by A.R.A.R.@

CLVII

(24 օգոստ. 1902 թ., «Մշակ» № 183)

Ես գնացել էի Փամբակի Մեծ-Ղարաքիլիսա գիւղը:

Աստուածածնի տօնը գրաւում է այնտեղ մեծ բազմութիւն: Հաւաքվում են ուխտաւորներ ոչ միայն շրջակայքից, այլ և հեռաւոր տեղերից: Այստեղ դուք կը տեսնէք և լօռեցիների, և հաղբատցիների, և դիլիջանցիների և նոյն իսկ Թիֆլիսից, Ալէքսանդրօպօլից և Երևանից եկածների:

Երկաթուղին հնարաւորութիւն է տալիս, որ հեռաւոր տեղերն էլ մասնակցեն տօնին:

Ես կը հաղորդեմ իմ ստացած մի քանի թռուցիկ տպաւորութիւնները:

—

Ինձ ասացին, որ ուխտաւորները հաւաքվում են շաբաթ օրը, իսկ հետևեալ օրը պատարագից յետոյ սկսում են ցրվել իրանց գիւղերը:

Շաբաթ օր, երեկոյեան դիմեցի դէպի եկեղեցին:

Փողոցները լիքն էին ուխտաւորներով և հետաքրքրվողներով: Ամենքը դիմում էին դէպի նոյն կէտը:

Ամենից բնորոշ խմբերը գիւղական խմբերն էին:

Ահա մի ջահել գիւղացի երկու կողմից թե-

digitised by A.R.A.R.@

ւանցուկ երկու ջահիլ գեղջկուհիների հետ առաջ են գնում։

—Ախպէր, սպասիր, մոտիկ տանք այս կօշիկները, ասաց գեղջկուհիներից մէկը։

—Յետոյ, յետոյ, պատասխանեց գիւղացին յետոյ կը գանք, կը տեսնենք։

Ահա մի ուրիշ խումբ, բաղկացած հինգ կանանցից և աղջիկներից՝ մէկը միւսին կուռ գցած կամ չորերից բռնած։

—Շուտ եկէք, շտապեցնում էր հասակաւորը։

Միւսները հետևում էին նրան, պատռելով ամբոխի միջով տեղ իրանց համար։

Երկու փոքրիկ մանուկներ միմեանց գրկած առաջ էին գնում և կամաց երգում։

—Երգիր, ուրախանանք, գրգռում էր նրանցից մէկը։

Միւսը նորից սկսում էր երգել։

Մի կին շուարած դէս դէն էր նայում ու առաջ վազում։

—Մեր խիզանոնց կորցրի, բացականչեց նա, ո՞ր կողմը գնացին, Մանուշակ, Մանուշակ։

—Հարսը, լսվեց մի կողքից, այստեղ ենք, շուտ արա այս կողմ անցիր, հարսը եկ, հարսը։

Հարսը գնաց։

Պատանիներից մէկը սրախօսեց՝

Շատ լաւն է հարսը
Սկեսուրն է թարսը։

—

Քանի մօտենում էինք եկեղեցուն, այնքան աղմուկը մեծանում էր։ Միրգ ծախողները բարձր ձայնով գոռում էին իրանց ապրանքը և հրաւիրում գնողներին։

—Շատ լաւ է, շատ լաւը, բղաւում էր մէկը։

digitised by A.R.A.R.@

—Պահ, պահ, պահ, կանչում էր միւսը, ինչ խաղող է, ինչ ձմերուկ է։

—Շէն կենաք, խրախուսում էր երրորդը, առէք, առէք, ուխտներդ ընդունելի լինի, Աստուած բարաքեաթ տայ մուշտարուն, փողներդ անհատնում լինի։

Երկու միրգ ծախողներ, որոնք փողոցի երկու կողմից դէմուդէմ առուտուր էին անում, միմեանց ողջունեցին։

—Ինչպէս է գնում բանդ, հարցրեց նրանցից մէկը միւսին։

—Փառք Աստուծու, լաւն է. ինչպէ՞ս է քոնը։

—Վատ չէ, պատասխանեց միւսը, միատեսակ կը լինենք էլի, թող խերներս չառներս մէկ լինի։

—Հա, հա, վրա բերեց առաջինը, միատեսակ թող լինի, հաւասար լինենք։ Փոխենք գդակներս։

Միրգ ծախողները փոխանակեցին իրանց գդակները և դրին իրանց գլխին։

—

—Ջուկ անուշ արէք, բղաւում էր մի ձայն, լաւն է, Հաղբատի կողմից է բերված, լաւ փիչխալ է, առէք, էժան եմ տալի։

Մօտեցան գիւղացիներ, սակարկեցին և գնեցին։ Ջուկը մանր տեսակիցն էր, եփված և քթոցի մէջ լցրած։

—Հին չը լինի, տարակուսում էր գնողը։

—Այս առաւօտ է բռնված, հաւատացնում էր ծախողը և առաջարկում էր համը տեսնել։

Միրգ ծախողների մօտ խմբված էին մեծ մասամբ տղամարդիկ և երեխաները, իսկ կանանց մեծ խմբեր հաւաքվել էին կանաչի առարկաներ ծախողների մօտ, որտեղ կային գոյնզգոյն

սապոններ, կոճակներ, ժապավեններ, թելեր, մատնոցներ, հայելիներ։

—Ի՞նչ է սապոնի գինը, հարցնում է նրանցից մեկը։

—Տասնհինգ կոպեկ, պատասխանում է ծախողը։

—Ի՞նչ ես ասում, թանգ է։

—Չէ թանգ չէ։

Կանայք ծածուկ խորհրդակցում են։ Իրանք էլ չը գիտեն իսկական գինը։

—Վերցրէք 12-ով, համաձայնում է ծախողը։

—Չէ, երկու շահուց աւել չեմ տայ։

—Լաւ, թող ասածդ լինի, դէ շուտ արա, ուրիշին տեղ տուր, ժամանակ չը կայ։ Դէ շուտ, շուտ։

Գեղջկուհին դժուարութեամբ դուրս է բերում փողը և տալիս։

Առաջինի օրինակին հետևեցին միւսները։ Նրանք էլ գնեցին սապոններ։

—Հոտը անուշ է, նկատում է նրանցից մեկը, նման է այն սապոնին, որ անցեալ տարին Սեբոըը բերեց Թիֆլիսից։

—Հա նման է։

—

Եկեղեցու մօտ կանգնել են խմբեր և այստեղ նրանք աշխատում են թէ իրանց ցոյց տալ, թէ իրանց զարդերը և զգեստները։

—Ինչ լաւ ճակատնոց է կապել, չորն էլ գեղեցիկ է, լսվում է մի ձայն, քա այն ում աղջիկն է։

—Զարէքենց հարսն է։

—Դա է՞ Զարէքենց հարսը։ Այնքան էլ տեսուկ չէ։

digitised by A.R.A.R.@

—Առաջ շատ տեսուկ էր․ հիւանդացաւ ան-ցեալ տարի։

Մի քանի կանանց գլխի ոսկեշարերը խօսակ-ցութեան առարկայ դարձան։

—Հին ոսկիներ են, բացատրում էր մէկը, հարիւր տարվայ։

—Դրանց էլ ոսկեշարն է մնացել, վրա բե-րեց միւսը, թէ չէ ամեն բան կորցրել են։ Դրանց փառքը անցաւ։

Հրճուանքի, գովասանքի, նախանձի, բամ-բասանքի ձայներ և նկատողութիւններ լսվում են զանազան անկիւններից։

Փոքր ինչ աւելի հեռու տեղաւորվել էին փոքր երեխաներով շրջապատված կանայք։

Մայրերը հանգստացնում էին նրանց, ինչ-պէս կարող էին. մեծերին միրգ և գաթայ տա-լով, ծծկերներին իրանց կաթով կերակրելով։

Գիւղական բարքերը, փոքր ինչ զսպված, մեր առաջն են։

—

Ուխտաւորները մտնում են եկեղեցին, գնում են մոմ և վառում, յետոյ համբուրում աւետա-րանը և խաչը, համբուրում եկեղեցու պատերը և դուրս գալիս։

Եկեղեցում աշխատում են լուռ լինել, բարձր ձայնով չը խօսել։

Եկեղեցու մուտքի մօտ երկու կողմից էլ շարված են աղքատներ—մեծ մասամբ իսկական թշուառներ՝ կոյր, անդամալոյծ մարդիկ։

Մի չքաւոր կին, առողջ մարմնով, բայց շատ աղքատ հագնված, պտտում է հասարակութեան մէջ։

—Օգնեցէք, միակ տղաս զինուորութեան մէջ է, ես անօգնական եմ բոլորովին։

digitised by A.R.A.R.@

Ով ինչ կարող է տալիս է։ Խեղճ կինը շտապով վազում է դէս ու դէն և չէ նկատում, որ նոյն մարդկանց նա դիմում է երկրորդ և երրորդ անգամ։

—Մենք քեզ տուինք, նկատում են նրանք։

—Կը բաշխէք, մրմնջում է խեղճը, ես ոչ ոքի չեմ ճանաչում։

—

Ահա մօտեցան Թուրքերի խմբեր։

—Ովքե՞ր են, հարցրի ես։

—Հարևան գիւղերի Թիւրքերն են, կան և լեռնային Թափառականներից։

—Մի՞թէ դրանք էլ յարգում են մեր սուրբերին։

—Այո, և շատ երկիւղած կերպով են վերաբերվում։

Թիւրքերը մտան եկեղեցի, գնեցին մոմեր և վառեցին։

Յետոյ խորը գլուխ տուին սեղանին և դուրս եկան։

—

Ես ուղղեցի քայլերս դէպի գետի եզերքը։ Այդտեղ մի քանի տեղերում իջել էին ուխտաւորները իրանց սայլերով։ Տղամարդ, կին, երեխայ և լծկան եզը միմեանց կողքին կազմում էին մի ընտանիք։ Սայլերը յարմարեցրած էին այնպէս, որ նրանց վրա ձգած կարպետների և Թաղիքների միջոցով կազմվել էին վրաններ։

Երեխաները զբաղված էին ուտելով։ Մի փոքրիկի դրել էին եզան մէջքին և նա հրճվում էր։ Մի ծերունի հանաքներ էր անում և խրախուսում էր բոլորին շատ մանգալու և շատ բան տեսնելու։

—Դէ, յաւ, պառաւ, նստիր, դիմեց նրան կինը։

digitised by A.R.A.R.@

—Ես գնամ ու գամ։

Ծերունին գնաց դէպի եկեղեցին, յետոյ ծռուեց դէպի միրգ ծախողները, գնեց այնտեղից միրգ և շուտով վերադարձաւ։

Երեխաների աչքերը փայլեցին։

—Պապի, պապի։

—Դէ խելօք կացէք, բոլորին էլ կը հասնի։

Մանուկները նստեցին նրա շուրջը և նրա ծնկների վրա։ Նա սկսեց բաժանել։ Տանձը հինգ բաժին արաւ դանակով և տուեց նրանց օրհնելով։

Մանուկները հիացել էին հիւթալի և քաղցր տանձից։ Նրանցից իւրաքանչիւրը մի որ և է նկատողութիւն էր անում։

—

Շուտով պէտք է մթնէր։

—Լապտերներ առէք, լապտերներ առէք, լըսվեց զիլ ձայն։

Լապտեր ծախողը մի քանի տասնեակ լապտերներով մտաւ ամբոխի մէջ։

—Թանգ չէ, հատը հինգ շահի՝ առանց խօսելու։

Շուտով մի հատ լապտեր էլ չը մնաց չը ծախուած։

Երեխաները շտապում էին, որ շուտով վառվեն լապտերները. հասակաւորները դիմադրում էին։

—Սպասիր, կը մթնի, այն ժամանակ կը վառենք։

—

Ուխտաւորների շարքերը շարունակւում էին ստուարանալ։

Մի քանիսը գալիս էին կառքերով։

—Դա էլ մի առանձին շիկ է, որ թոյլ են

digitised by A.R.A.R.@

տալիս գիւղական հարուստները, բացատրեց հարեւանս:

Բայց այդ չիկի հետ զուգընթաց էր և այն, որ մի կառքի մէջ նստած էին մինչև վեց և ութ հոգի:

—

Զուռնայի ձայնը ուրախութեան հանդիսաւորութիւն էր տալիս տօնին:

Մի խմբում երիտասարդը պարում էր և նրա չուրջը կանգնած միւսները ծափ էին տալիս: Միւս տեղ կլոր պար են բռնել: Մի ուրիշ տեղ երգ են երգում խմբովին:

Քաղաքացի ուխտաւորների մի շրջանում դուդուկ ածողները ոգեւորում են մարդկանց և գինին առատ կուլ է գնում:

—

Մի ուրիշ տեղ ժողովել է իր չուրջը հետաքրքրվողներին մի պարոն, որ բերել է հետը գրամօֆօն:

—Դէ փող հաւաքեցէք, ցոյց տամ սրա զօրութիւնը:

—Ի՞նչ պէտք է անէ, հարցրին հետաքրքրվողները:

—Պէտք է երգէ, բացականչեց տէրը:

—Ես տեսել եմ Թիֆլիսում այդ բանը, նկատեց մէկը:

—Դու տեսել ես, բաղդաւոր ես, նկատեց տէրը, ով չէ տեսել, թող նա էլ տեսնէ:

Փող հաւաքեցին և գրամօֆօնը երգեց:

Ձայնը խռպոտ էր փոքր ինչ: Շատ էլ լաւերիցը չէր:

Բայց հետաքրքրվողները գոհ մնացին:

—

digitised by A.R.A.R.@

Մթնեց։

Լապտերները վառվեցին, իւրաքանչիւրը մօտեցաւ իր սայլին և խմբին։

Նրանք, որոնք ծանօթներ և ազգականներ ունէին Ղարաքիլիսայում, սկսեցին ցրվել տները։

Մի քանի խմբեր պառկեցին քնելու, որպէս զի առաւօտը վաղ վերկենան։ Միւսները սկսեցին ուրախութիւն՝ երգ, պար և կերուխում։

—Տղայիդ նշանիր, լսվում էր մի անկիւնում։

—Համարեա նշանեցի, ուրախացած ասում էր մայրը։

—Ո՞վ է, բա, հարսնացուդ, հետաքրքրվեց հարևանուհին։

—Դեռ խօսքը չէ վերջացած, էգուց յայտնի կը լինի, կասեմ քեզ անպատճառ։

—Գիտեմ ով է, ժպտաց հարևանուհին։

—Դէ եթէ գիտես՝ աւելի լաւ։

—Աստուած չնորհաւոր անէ։

—

Առաւօտեան վաղ բոլորը ոտքի էին։ Երեխաները միայն քնած էին։ Նրանցից մի քանիսը քնաթաթախ աշխատում էին վերկենալ և տեսնել ամեն բան։

Մատաղները մորթվեցին, սկսվեց իրարանցում։

Զարթնեցին բոլորը։ Արեգակը սկսեց տաքացնել օդը։ Մանուկները մրսել էին։

—Վազվզեցէք, տաքացէք։

Երեխաները սկսեցին վազվզել, թռչկոտել, կաթսաների չուրջը պտտել։

—

Ժամերգութիւնը վաղ սկսվեց։

Ուխտաւորները հերթով մտնում էին դուրս գալիս։

digitised by A.R.A.R.@

Զուռնաները հեռուում չարունակում էին իրանց գործը։

Նրանց համար ժամերգությունը խոչընդոտ չէր։

Ահա և խաղողը օրհնվեց։

Ամեն մարդ աշխատում էր մի կտոր օրհնված խաղողից ճաշակել։

Մէկը բերաւ մի ճիթ և մեզ բաժանեց։ Իւրաքանչիւրս վերցրինք մի մի պտուղ։

—Շնորհաւոր տօն, բարեմաղթեցին բոլորը միմեանց։

Շուրջը ուխտաւորներ են։ Ամեն տեղ կերուխում, ուրախութիւն։ Երեխաները հետաքրքրված են մի քանի գերեզմանների վրա դրված գեղեցիկ քարերով։ Մանաւանդ գրաւում է նրանց մի հրեշտակի արձանիկ։

—Հրեշտակ է։

Մի քանիսը բարձրանում են վանդակի վրա և չօշափում։

Ժամը 2-ին արդէն շատ քիչ մարդ է մնացել։ Առևտրականները հաւաքում են իրանց վաճառքը։

Տօնը վերջացաւ։

digitised by A.R.A.R.@

CLVIII

(31 *օգոստ.* 1903 *թ., «Մշակ»* № 189)

Գիշերվայ մթութեան մէջ ես լսեցի երգի սրտառուչ խօսքերը՝

«Մօրս համբոյրը ես զգացի»
«Բայց ափսոս, որ երազ էր»։

Երգը հնչում էր տարածութեան մէջ և յիշեցնում տենչանքների և իղձերի մասին։

Ծերացած մօր արցունքը տպաւորվել էր որդու սրտում և դէպի ինքն էր քաշում նրան։ Ահա և մայրական զգուանքը իր անպաճոյճ, բայց մտերմական արտայայտութեամբ՝

«Կուրծքին սեղմեց կարօտագին,
«Աչքերը սրբեց, շատ թաց էր.
«Եւ արտասուք փնում էին.
«Բայց ափսոս, որ երազ էր։

—

Երգիչը մի հասարակ մարդ էր, մի պանդուխտ բաղէշցի։ Նա երգում էր ոչ նուրբ և մշակված եղանակով, բայց շատ զգացված սրտով։

Նա լռեց, երբ տեսաւ անցորդների. բայց մի քանի ժամանակից յետոյ, երբ մենք հեռացանք, նորից լսվեց նրա ձայնը մելամաղձ հընչիւններով։

Կամաց-կամաց ձայնը մարեց և մենք այնքան

digitised by A.R.A.R.@

հեռացանք նրանից, որ այլ ևս նա լսելի չեղաւ մեզ համար։

Վերադարձին մենք դարձեալ տեսանք պանդուխտին, բայց այս անգամ նա լուռ էր և նայում էր երկնքի աստղերին։

—

Մենք խօսքի բռնվեցինք։ Պանդուխտը բացատրեց, որ նա մնալով անտէր անօգնական, գտաւ մի բարերարի, որի շնորհիւ նա սկսեց ոտքի կանգնել։

—Ի՞նչ բարերար է, հարցրինք մենք։

—Գտնվեց, ասաց նա, մէկը, որ տուեց ինձ խողանակ և վաքս և ահա այժմ ես ինքս իմ աշխատանքով ապահովում եմ ինձ։ Բայց չը գիտեմ, թէ երբ կարող կը լինեմ իմ մօրը տեսնել։

Եւ պանդուխտը պատմեց մի սրտաշարժ պատմութիւն։ Դա մի հարուստ, բայց մի շարք թշուառութիւնների ենթարկված հարուստ ընտանիքի պատմութիւն էր։

—Մնացինք միայն մայրս և ես, բացատրեց նա։ Բայց ես չեմ յուսահատվում. ինձ սպասում են իմ մայրը և իմ սիրած Աշխէնը, մեր հարևանի աղջիկը։

Պանդուխտը հաւատով և յոյսով լիքն էր իր ապագայի վերաբերութեամբ։

—Բայց կարօտը ինձ մորմոքում է և սպանում, յայտնեց նա։ Ես չեմ յուսահատվում, միայն թէ նրանք էլ չը յուսահատվեն։

—Ո՞րտեղ էք սովորել այդ երգը, հարցրի ես։

—Այստեղ, բացատրեց նա, մեր բակում ապրող երիտասարդներից։ Նրանք շատ բաներ են

digitised by A.R.A.R.@

երգում, բայց ես ամենից շատ հաւանեցի այդ երգը, նա աւելի էր համապատասխանում իմ տրամադրութեան և զգացմունքներին։

—

Մենք հեռացանք։ Երգը չը կրկնվեց։ Բայց մի քանի ժամանակից յետոյ նորից տեսայ պանդուխտին ճանապարհորդական շորով։

—Ո՞ւր, հարցրի ես։

—Գնում եմ մօրս տեսնելու։

—Եւ Աշխէնին, հետաքրքրվեցի ես։

—Միթէ յիշում էք, հարցրեց նա. գնամ տեսնեմ, ինչ եղան նրանք։

—Գնաք բարի, բարեմաղթեցի։

digitised by A.R.A.R.@

CLIX

(7 սեպտ. 1903 թ., «Մշակ» № 195)

Երեք օր առաջ Թիֆլիսի նահանգական դատարանում քննվում էր մի փոքրիկ դատաստանական գործ։

Մեղադրվում էր Սերգիէնկո անունով մի երիտասարդ՝ մի քանի գդակների գողության համար։

Բայց ինչ հանգամանքներում։

Գողությունը կատարվել էր հրդեհի միջոցին։ Այն ժամանակ, երբ թէ հրդեհին ենթարկվածները և թէ շրջապատողները զբաղված են եղել մարդկանց օգնելու հոգսով, այդ իսկ ժամանակը մեղադրվողը յարմար առիթ է համարել գողանալու մի քանի գլխարկներ... և բռնվել է։

Պատահաբար ես ականատես եմ եղել այդ հրդեհին։ Նա տեղի ունէր այս տարվայ գարնանամուտի գիշերը, մարտի 9-ին, Թիֆլիսի Մադաթեան կղզու վրա։ Հրդեհը սկսվեց խանութների մէկից և շատ կարճ միջոցում այնպէս սաստիկ ուժեղացաւ, որ երկիւղ կար, թէ մի գուցէ այրվեն բոլոր խանութները։

Քամին մի կողմից և փայտեայ շինութիւնները միւս կողմից նպաստում էին հրդեհի զարգացման և տարածման։ Խանութպանները, երկիւղ կրելով, որ հրդեհը կարող է անցնել և իրանց կողմը, շտապում էին ազատել իրանց ապրանքները։

Ով կարող էր՝ օգնում էր նրանց։ Ապրանք-

digitised by A.R.A.R.@

ները դուրս էին բերում և դարսում փողոցի ապահով անկիւնում։

Ես իմ ծանօթի հետ միասին մօտեցանք հրդեհի տեղին։ Տիրում էր մի աննկարագրելի իրարանցում։ Կրակը խժռում և լափում էր ամենը, ինչ նրա բերանն էր ընկնում։

Խանութպանները յուսահատված էին։ Մէկի ապրանքը, որ ոչ մի ընկերութեան մէջ ապահովված չէր, կարճ միջոցում մոխիր դարձաւ։ Ախ ու վախի ձայնը լցրել էր օդը։

Ահա այդ խառնաշփոթ ժամանակ մեղադրվող պարոնի խելքում միտք է ծագում թաքցնել մի քանի գլխարկներ։

Սակայն լինում են նկատողներ։ Կազմվում է արձանագրութիւն և գործը յանձնվում է դատարանին։

Մեղադրվողը փորձեց դատարանում իրան արդարացնել, բայց անաջող։

—Ես հարբած էի, ասաց նա, և գդակները վերցրել եմ անգիտակցաբար։

Սակայն պէտք էր բացատրել, թէ ինչու նոյն իսկ հարբած ժամանակ նա պէտք է ուրիշի գդակները վերցնէր։

—Ես հանգցնում էի հրդեհը, բացատրեց նա, և կորցրի իմ գդակը։ Երևի այդ պատճառով էլ վերցրել եմ ուրիշի գդակները։

Սակայն նոր հարց էր ծագում, թէ ինչու մեղադրվողը պէտք է վերցնէր ոչ թէ մէկ, այլ մի քանի գդակներ և ինչու պէտք է նա թաքցրած լինէր նոյնպէս մի մկրատ։

Մեղադրվողը աշխատեց իրան արդարացնել, բայց դատարանի համար այդ արդարացումը նշանակութիւն չունեցաւ։

Դատարանը դատապարտեց մեղադրեալին ութ ամսվայ բանտարկութեան։

digitised by A.R.A.R.@

Դատարանի որոշումը առիթ եղաւ մի քանի նկատողութիւնների։

—Երեք գդակի համար, նկատեց մի տիկին, ութ ամսւայ բանտարկութիւն, միթէ կարելի է. շատ է խիստ։

—Ընդհակառակը, նկատեց նրա հարևանուհին. ոչինչ խիստ բան չը կայ։ Միթէ կարելի է երևակայել աւելի վրդովեցուցիչ բան, քան այն, երբ տեսնում ես, որ մարդիկ աղէտի ժամանակ ոչ թէ աղէտի մասին են մտածում, ոչ թէ մարդկանց օգնելու հոգսով են զբաղված, այլ ընդհակառակը նրանց վնասելու դիտումներով և իրանց անձնական հաշիւները և շահերը առաջ տանելու մտածումներով։

—Ճիշդ է, հաստատեց մի պարոն։

—Միթէ, շարունակեց երկրորդ խօսող կինը, նոյն իսկ աղէտի ժամանակ մարդկանց կրքերը և շահերը չը պէտք է լռեն և տեղի տան աւելի բարձր զգացմունքների։

—Սակայն, մէջ մտաւ մի օրիորդ, այդպիսիները բացառութիւններ են։

—Եւ գոհութիւն Աստուծու, վրա բերեց տիկինը։ Եթէ այդպիսի երևոյթները բացառութիւններ չը լինէին, այն ժամանակ աշխարհումս ապրել չէր կարելի։

—

Ես մտաբերեցի ուրիշ դէպքեր, երբ մարդիկ օգտվում են աղէտներից իրանց անձնականը առաջ տանելու համար, երբ մարդիկ հրդեհի կրակի ու ծխի մէջ իրանց հաշիւներն են ուզում դրստել։ Ես մտածմունքի մէջ ընկայ։

Նորերս իմ մանրանկարներից մէկում ևս մատնացոյց եղայ մի այդպիսի դէպքի վրա։

Եթէ որոնէք, դէպքեր շատ կը մտաբերէք։

digitised by A.R.A.R.@

CLX

(14 *սեպտ.* 1903 *թ.*, *«Մշակ»* № 21)

Այցելեցի մի քանի տեղեր, ծանօթացայ մի քանիսի հետ, տեղեկութիւններ ժողովեցի մարդկանց նիստ ու կացի մասին, լսեցի բնորոշ պատմութիւններ։

Շատ բան իրականութեան մէջ փոխված էր, բայց չէր բարեփոխված դէպի լաւը, դէպի կուլտուրականը։

—Ինչո՞ւ թղթախաղով էք զբաղված, հարցրի ես։

—Եւրոպայում թղթախաղը շատ տարածված է, պատասխանեցին ինձ։

Եւ ինձ բացատրեցին, որ Եւրոպայում ոչ միայն թղթախաղը, այլ և շատ ուրիշ տեսակ խաղեր սաստիկ զարգացած են։ Ինձ պատմեցին Մօնակօյի մասին։ Իմ առաջ շարեցին դժբաղդ հերոսների անուններ։

—Ինչո՞ւ էք սնձնատուր դարձել զեղխութեան, շռայլութեան, չուայտութեան, հարցրի ես։

—Եւրոպայի քաղաքներում դա ընդունված է, պատասխանեցին ինձ։ Գնացէք Պարիզ, Վիէննա, Լօնդօն և շատ ուրիշ քաղաքներ, գնացէք և տեսէք, թէ ինչ զեղխութիւն և շռայլութիւն այնտեղ գոյութիւն ունի։

Եւ ներկայացրին իմ առաջ իրանց տեսածլսածից շատ բնորոշ նկարագրութիւններ։

digitised by A.R.A.R.@

—Ինչո՞ւ մեղադրում էք ընտանեկան մաքրութեան դէմ, հարցրի ես, ինչո՞ւ մատնել էք ձեզ տռփանքների և վաւաշոտ զգացմունքների։

—Դուք միամիտ էք, պատասխանեցին ինձ, նոյնը կը տեսնէք աւելի մեծ ծաւալով Եւրոպայի զանազան անկիւններում։

—Ինչո՞ւ դուք այդքան խիստ էք վարվում ձեր ծառայողների հետ, հարցրի ես։

—Դուք չը գիտէք, առարկեցին ինձ, թէ ինչ է կատարվում Եւրոպայում. եթէ գիտենայիք, մեզ փառք կը տայիք։

Եւ պատմեցին պահանջողութեան և բծախնդրութեան սոսկալի նմուշներ, ծառայողների ստրկութեան սարսափելի դէպքեր։

Ես դարձեալ հարցեր տուի՝ թէ ինչու նրանք թոյլ են տալիս հարստահարել աշխատանքը, խրախուսել ճրիակերութիւնը, վաճառքի հանել մարդկային արժանաւորութիւնը։ Իմ հարցերը շատ էին։ Սակայն պատասխանները տրվում էին շատ հեշտ։ Պատասխանողների համար Եւրոպան առատ նիւթ էր ամբարել նրանց համար։

—Եւրոպայումն էլ այդ բոլորը կայ, բացատրում էին ինձ։

—Բայց Եւրոպայում, առարկում էի ես, շատ դրական բաներ կան, քաղաքակրթական հրաշալիքներ, կուլտուրական մեծագործութիւններ, որոնց նշոյլն անգամ ես չեմ տեսնում ձեր շրջանում։

—

Ես յիշեցի մի դէպք անցեալից։

Մայրաքաղաքի շրջաններից մէկում, ուր ես լինում էի յաճախ, կար մի երիտասարդ, Օստաֆին, որ գրաւում էր բոլորին իր ուրախ

digitised by A.R.A.R.@

ընաւորութեամբ, բայց մի և նոյն ժամանակ ամէն օր հանդէս էր բերում իր անձնաւորութեան մի որ և է թերի կողմը։

—Դուք չափազանց մոռացկոտ ու ցրված էք, ասաց նրան մի անգամ մէկը, դուք հագել էք իմ մի կրկնակօշիկը, իսկ միւսը թողել և գնացել էք տուն առանց գդակի։

—Այդ բանում, վրա բերեց Օստաֆինը, ես նման եմ Նիւտօնին։ Նա էլ մոքամոլոր ժամանակ այդպէս բաներ էր անում։ Մի անգամ նա փոխանակ ձուն գցելու եփած ջրի մէջ և նայելու ժամացոյցին, արել է հակառակը․ ժամացոյցը գցել է ջրի մէջ և սկսել է նայել ձուին։

Ծիծաղեցինք, մտաբերեցինք Օստաֆինի մոռացկոտութեան ուրիշ դէպքեր։ Նա իր կողմից յիշեց դէպքեր Դեկարտի և ուրիշների կեանքից։

—Դուք ձեզ կը բթացնէք ձեր շատ խմելով, նախատեցինք նրան մի անգամ։

—Հոգ մի արէք, պատասխանեց նա։ Բելինսկին էլ շատ էր խմում, բայց նրա հաւասար կրիտիկոս չունենք մինչև այժմ։ Ուսպենսկին էլ այժմ խմում է (Ուսպենսկին այն ժամանակ դեռ կենդանի էր և տպաւորութիւն էր գործում իր գրուածքներով), բայց տեսէք ինչ գրական գոհարներ է տալիս։

Օստաֆինը բերեց բազմաթիւ օրինակներ այնպիսի նշանաւոր մարդկանց կեանքից, որոնք ոգելից ըմպելիքների վերաբերութեամբ անժուժկալ են եղել։

—Դուք չափազանց քիչ էք գնահատել ձեր գրագրի աշխատանքը, նկատեցինք նրան մի

digitised by A.R.A.R.@

անգամ. դուք չահագործել էք նրա աշխատանքը անգութ կերպով։

—Նեկրասօվն էլ այդպէս էր վարվում իր աշխատակիցների հետ, առարկեց Օստաֆինը։

Նա մտաբերեց դէպքեր և ուրիշ շրջաններից։

—Դուք շատ անհոգ էք գրում և ձեր գրածը կարդալ անկարելի է, նկատում էինք նրան յաճախ։

Նա թուեց մեր առաջ նշանաւոր հեղինակների մի շարք, որոնք շատ անճոռնի և անընթեռնելի գրիչներ ունէին։

Մի խօսքով ինչ պակասութեան վրա մատնացոյց էինք լինում, Օստաֆինը իսկոյն դնում էր մեր առաջ մի նշանաւոր մարդու անունը, որ ունեցել է այդ պակասութիւնը։

Եւ մենք գիտէինք, որ նա կազմած ունի երևելի անձերի մի մեծ ցուցակ՝ մշտական վկայութիւններ բերելու համար։

Օստաֆինը իր վկայութիւններով ծիծաղեցնում և կարծես զինաթափ էր անում։ Բայց կատակը անցնելուց յետոյ մնում էր մի աննպաստ տպաւորութիւն։

Մի անգամ, երբ մենք նստած էինք ընթրիքի սեղանի շուրջը, ուր ներկայ էր և Օստաֆինը, մեր սեղանակիցներից մէկը, որ մի տեսակ թամադայի դեր էր կատարում, բնորոշեց Օստաֆինին հետևեալ բառերով։

—Ահա, բարեկամներ, ձեր առաջ մի պարոն, որ միացրել է իր անձի մէջ բոլոր մեծ մարդկանց պակասութիւնները, առանց ունենալու նրանց առաքինութիւնները։

Բոլորը ծիծաղեցին։ Օստաֆինը կատակի տեղ

digitised by A.R.A.R.@

դրեց ասածը և ինքն էլ իր կողմից յայտնեց հետևեալը.

—Ես նման եմ Սոկրատէսին, որ յիմարութիւններ շատ էր լսում, բայց չէր նեղանում։

Սեղանակիցները հաւանեցին սրախօսութիւնը։

—

Ցետոյ կեանքի մէջ մեր շրջանի մարդիկ շատ անգամ յիշում էին Օստաֆինին և մեր թամադայի ձևակերպութիւնը։

—Եւրոպան, ասում էինք՝ մենք, օրինակ թող լինի իր դրակամ, և ոչ թէ բացասական կողմերով։

digitised by A.R.A.R.@

CLXI

(21 սեպտ. 1903 թ., «Մշակ» 206)

—Կարդացել էք արդեօք այս լուրը։

Այս հարցով դիմեց ինձ Խաչիկեանը և ցոյց տուեց լրագրի արտաքին տեսութեան բաժնի մէջ զետեղուած մի լուր։

Նայեցի։ Լուրը ծանօթ էր։ Ես մի ժամ առաջ էի կարդացել նրան։

—Բնորոշ է, վրայ բերեց Խաչիկեանը։ Գործող անձերը տիպեր են յատուկ գծերով և գոյներով։

Ծանօթացնեմ և ձեզ, ընթերցող, այդ լուրի հետ։

Վիէննա քաղաքում գտնուող թիւրքաց դեսպանը նորերս ենթարկուեց վիրաւորանքի՝ դեսպանատան բժիշկ Աբդուլ-Դըվդէթ-բէյի կողմից։ Բժիշկը՝ դեսպանատան պաշտօնեաների ներկայութեամբ՝ սկսեց ապտակներ տալ դեսպանին։

Պատճառը։

Պատճառն այն է եղել, որ դեսպանը տեղեկացրել է Կ. Պոլիս, թէ բժիշկը խարդախ և վտանգաւոր մարդ է և ծառայում է երիտասարդ թիւրքերի խմբերին։

Դեսպանը սուտ է ասել և զրպարտել է բժշկին, որպէս զի հեռացնէ վերջինիս դեսպանատնից։

Իսկ ինչ է եղել դրա պատճառը։

digitised by A.R.A.R.@

Դրա պատճառն այն է եղել, որ բժիշկը հաղորդել է Բ. Դրան՝ թէ դեսպանի զեկուցումները կեղծ են։

Դեսպանը թոյլ է տուած եղել Նորերս հետեւալը։ Սուլթանի գահակալութեան օրվայ առիթով նա ուղարկել է իր վեհապետին շնորհաւորական մի հեռագիր, որի մէջ աւելացրել է, թէ «բոլոր պետութիւնների դեսպանները իր մօտ հաւաքվելով սուլթանի պատուին կազմած ճաշին, խնդրում են տանտիրոջը (այսինքն Թիւրքաց դեսպանին) արտայայտել Թիւրքիայի վեհապետին Նրանց յարգանքի զգացմունքները և նրանց բարեմաղթութիւնները սուլթանի արեւշատութեան մասին»։

Սակայն ինչ է դուրս գալիս դրանից։ Մի խայտառակ, եթէ ոչ զաւեշտական գործ։ Դեսպանը կեղծ զեկուցում է արած եղել։ Նա ոչ մի ճաշ սարքած չէ եղել, պետութիւնների դեսպաններից ոչ ոք Նրա մօտ չէ եղել և ոչ ոք դիտաւորութիւն չէ ունեցել շնորհաւորելու սուլթանի գահակալութեան տարեդարձը։

Ահա այդ կեղծիքի մասին բժիշկը գաղտնի կերպով յայտնել է Բարձր Դրանը։

Ահա ձեր առաջ այն զեկուցումներից մէկը, որոնց վրա հիմնված տրամադրութիւններ են ստեղծվում Բոսֆորի ափերում։

Իսկ ինչ մարդ է բժիշկը։ Ինչու է նա իր վրա աշխատանք վերցրել հաղորդելու Բարձր Դրան դեսպանի արարքների մասին տեղեկութիւններ։

Բանից դուրս է գալիս, որ բժիշկը կատարում է եղել Թիւրքաց լրտեսի դեր և հետեւում է եղել թէ երիտասարդ թիւրքերի գործողութիւններին և թէ դեսպանատան գործերին։ Երբ դեսպանը համոզվել է, որ բժիշկը

լրտեսում է և իրան, թշնամանում է և զեկուցանում է Բարձր Դռան, որ բժիշկը կեղծ մարդ է և երկդիմի դեր է կատարում, ծառայելով թէ սուլթանին և թէ երիտասարդ թիւրքերի կուսակցութեան։

Ահա այս էր լուրը։

—Բնորոշ են տիպերը, համաձայնեցի Խաչիկեանի հետ։ Դեսպանը իր կեղծ զեկուցումներով, բժիշկը իր ստոր դերով, բանսարկութիւններ միմեանց դէմ, կեղտոտ հաշիւներ ոսկեզօծ պատեանների մէջ պարփակված, այդ բոլորը բնորոշ է։

—Կեղծ զեկուցումնե՛ր, բացականչեց Խաչիկեանը։ Միթէ դրանց վրա չեն հիմնված շատ պաշտօնեաների աջողութիւնը։

—Մինչև որ կը յայտնվի ճշմարտութիւնը, վրա բերեցի ես։ Թիւրքական դեսպանը այժմ մերկացված է և նրա զեկուցման արժէքը արդէն յայտնի է։

—Իսկ հազարաւոր կեղծ զեկուցումներ, որոնք չեն մերկացված, իրանց վնասակար դերը կատարում են, խտացնելով թիւրիմացութիւնները և ստեղծելով կեղծիքի նորանոր հանգոյցներ։

—

Կեղծիքի, կեղտոտութեան, խղճի վաճառքի այդ զզուելի պատկերը առիթ դարձաւ երկար խօսակցութեան։

Մենք յիշեցինք հասարակական և գրական դէպքեր։

—Մարդու սիրտ մխիթարվում է, նկատեց Խաչիկեանը, երբ լուսաւոր աւանդութիւնների ձայնը ժամանակ-ժամանակ հնչում է մեր ականջին զանազան դէպքերի առիթով։ Ես նո-

ներս մի այդպիսի ձայնի ազդեցութեան տակ էի։

—Ի՞նչ ձայնի, ի՞նչ առիթով, հետաքրքրվեցի ես։

Դա մի ազնիւ թերթի քառասնամեակի ձայնն էր, բացատրեց Խաչիկեանը։ Մի երկու շաբաթ սրանից առաջ լրացաւ «Русскія Вѣдомости» լրագրի գոյութեան քառասնամեակը։ Լրագիրը իր քառասնամեակի առիթով գրեց մի յօդուած, որի մէջ յիշեցրեց իր գործունէութեան գլխաւոր գծերի մասին։

—Արդարև լուսաւոր և ազնիւ գործունէութեան, աւելացրի ես։ Լրագիրը երբէք իրան չը դաւաճանեց և հաւատարիմ մնաց այն սկզբունքներին, որ աւանդել էին վաթսունական թւականները։

Խաչիկեանը կանգ առաւ յօդուածի մի քանի կէտերի և ի միջի այլոց հետևեալի վրայ։ Լրագիրը յայտնում է, որ նա միշտ յարգանքով է վերաբերվել Ռուսաստանում ապրող այլացեղ տարրերին։ «Մենք միշտ այն կարծիքն ենք պաշտպանել, որ խելացի քաղաքականութեան բարձրագոյն նպատակը կայանում է նրանում, որ համապետական շահերը հմուտ կերպով համաձայնեցրված լինեն ազգաբնակութեան զանազան ցեղական տարրերի հետ»։

—Սակայն լսող և իրագործողը քիչ է, վրա բերեց Խաչիկեանը։

—

Այնուհետև մենք կանգ առանք մամուլի օրգանի քառասնամեայ անշեղ գործունէութեան գաղափարական նշանակութեան վրայ։

—Այդ երկարատևութիւնը, նկատեցի ես, այդ տոկունութիւնը որոշ գծագրած և իրագործված

digitised by A.R.A.R.@

ծրագրի վերաբերութեամբ ինքն ըստ ինքեան մի չափազանց հրահանգիչ և քաջալերող երևոյթ է։

—Այո, այդ շատ կարևոր հանգամանք է, նըկատեց Թաչիկեանը. դժբաղդաբար կեանքի մէջ և այն մեր ինտելիգէնտների շարքերում ես յաճախ պատահել եմ անձերի, որոնք ծաղրել են այդ անշեղ, անդրդուելի, չերերվող և չը տատանվող գործունէութիւնը, որ նրանց համար աչքի փուշ է դարձել, որովհետև յիշեցրել է սկզբունքների, սրբազան երդումների և հասարակական պարտականութիւնների մասին։

—Կարծես մենք շատ հարուստ ենք, յարատևեցի ես, հաստատ գաղափարական մարդկանցով և գործունէութեամբ, որ շռայլութիւն և աւելորդութիւն համարենք այդ իսկապէս հազուագիւտ երևոյթը։

Մենք մտաբերեցինք բնորոշ խօսակցութիւններ և հանդիպումներ։

—Սրբազան գաղափարներ, բացականչեց Թաչիկեանը, հանդէս եկէք ձեր բարոյական ուժով սթափեցնելու մարդկանց և նրանց խիղճերը։

digitised by A.R.A.R.@

CLXII

(28 սեպտ. 1903 թ., «Մշակ» № 212)

Խաչիկեանը մելամաղձ տրամադրութեան մէջ էր։

—Ի՞նչ կայ, հարցրի ես։

—Մի անհամ վիճակի մէջ եմ ես ինձ զգում, պատասխանեց նա ակամայ։

—Ինչո՞ւ։

—Անցեալ օր, բացատրեց նա, ես հիւր էի մի տան, ուր խմբուած էին մի քանի ծանօթ և ինձ անծանօթ անձեր։ Նրանցից ես շատ լուրեր լսեցի։ Լուրերը հետաքրքրեցին մեզ և մենք զանազան մեկնութիւններ ու դատողութիւններ տուինք։ Ես յուզուած խօսում էի և նոյն իսկ տպաւորութիւն գործեցի։ Սակայն կարող էք երևակայել, որ բոլոր լուրերն էլ սուտ դուրս եկան։

—Գուցէ բերանից բերան անցնելուց լուրերը խեղաթիւրուած էին, նկատեցի ես։

—Ոչ, վրա բերեց Խաչիկեանը, իմ լսած ութ լուրից միայն մէկն էր խեղաթիւրուած. իսկ մնացածները բոլորովին չինծու էին։ Եւ ես ժամերով զբաղուած էի նրանցով։

—Ի՞նչ լուրեր էին, հետաքրքրուեցի ես։

Խաչիկեանը հաղորդեց մի քանի նմուշներ։ Լուրերը պատասխանատու բնաւորութիւն էին

digitised by A.R.A.R.@

կրում և վերաբերում էին դէպքերի, անձնաւորութիւնների և երևոյթների։

Ես կարող էի առաջ բերել այդ լուրերը, իբրև բնորոշ երևոյթներ, բայց ինչ օգուտ։ Ինչու սուտ լուրը կրկնվի և դարձեալ խօսակցութեան առարկայ դառնայ։

Անկասկած սուտ լուրը հերքելը ինքն ըստ ինքեան մի լաւ բան է և կը փարատէ շատ թիւրիմացութիւններ, բայց պտտող անհիմն լուրերի թիւը այնքան մեծ է, որ հերքումների համար հարկաւոր կը դային բազմաթիւ էջեր։

—Ես չեմ ըմբռնում, աւելացրեց Խաչիկեանը, լուր հնարողների լօգիկան։ Միթէ չեն մտածում նրանք, որ վաղը միւս օր կը պարզվի ամէն բան և այն ժամանակ զրպարտված անձը աւելի ևս մաքրված կը հանդիսանայ հասարակութեան առաջ։

—Երևի րոպէական տպաւորութեան վրա են յոյս դնում։

—Բայց դա սխալ հաշիւ է, բորբոքվեց Խաչիկեանը։ Այդպիսի տպաւորութիւն գործելու ցանկութիւնը այժմ այն արդիւնքն ունի, որ ես ոչ մի լուրի չեմ հաւատում, մինչև որ չը ստուգեմ։ Այժմ ամենաճիշդ և ճշմարտագոյն լուրերին էլ ես կասկածով եմ վերաբերվում, մինչև որ հաստատ վաւերացումներ չունենամ։

Մենք կանգ առանք մի քանի չինծու լուրերի բնաւորութեան վրա և տեսանք, որ շատ դէպքերում թագնված են կրքեր և մասնաւոր հաշիւներ։

—Ջոկ բան է ակամայ խեղաթիւրումը, սխալը և թիւրիմացութիւնը, եզրափակեց Խաչի-

digitised by A.R.A.R.@

կեանը. այդտեղ էլ երևոյթը տխուր է, բայց նա ունի և մեղմացնող կողմեր։

—

Բանալով իր սիրտը և խօսելով ինձ հետ, Խաչիկեանը հանդստացաւ սկսեց կատակներ անել և ի միջի այլոց պատմեց հետևեալը։

Հին ժամանակները, երբ Արաքսի աւազանում իշխում էր Հասան խանը, մի անգամ տեղի ունեցաւ մի մեծ թիւրիմացութիւն, որ քիչ էր մնացել մի մեծ աղէտի փոխարկվէր։

Ահա ինչ թիւրիմացութիւն էր։

Հասան խանը տեղեկութիւն է պահանջում իր ստորադրեալ կառավարիչներից ժողովրդի տրամադրութեան մասին երկրի զանազան մասերում։ Կառավարիչները հաղորդում են, թէ տարվայ բերքը լաւ է եղել և հարկերը աջող հաւաքվում են, թէ մուսուլմաններից շատերը պատրաստվում են Մեքքա գնալու, իսկ հայերը դէպի Երուսաղէմ։ Միայն Նախիջևանի խանը իր զեկուցման մէջ ակնարկում է եղել, որ հայերը պէտք է Սուրբ Խաչին կոտորած ունենան և այդ պատճառով պէտք է աղմուկ անեն և փառաւոր կեր ու խում ունենան։ Նախիջևանի խանը աւելացնում է իր նամակի վերջում, որ կոտորածը պէտք է լինի ընդհանուր։

Հասան խանը թէ զարմացած է, թէ վրդովված։ Նա զարմացել է, որ կոտորած պէտք է լինի, այն էլ ընդհանուր և նա այդ մասին ոչ մի գաղափար չէ ունեցել։ Նա վրդովված է, որ այդպիսի մի կարևոր և պատասխանատու գործի մասին նա ստացել է միայն մի զեկուցում և այն էլ չափազանց համառօտ և թեթևամիտ կերպով հաղորդված։

digitised by A.R.A.R.@

Հասան խանը հաշվում է և տեսնում, որ մինչև կոտորածի օրը մնացել է միայն երեք օր, իսկ նա դեռ ոչ մի կարգադրութիւն չէ արել։

Կանչում է իր մերձաւորներին, տալիս պատուէրներ և ուղարկում զանազան տեղեր հսկելու և անկարգութիւնների առաջն առնելու։

Սակայն գալիս, անցնում է Սուրբ Խաչը և ամեն բան հանգստութեամբ անցնում է։ Ոչ մի յուզմունք, ոչ մի խլրտում, ոչ մի փորձ անկարգութիւններ անելու։

Հասան խանը բացատրութիւն է պահանջում Նախիջևանի խանից։

—Ի՞նչու էիր ինձ անհանգստացնում քո զեկուցումներով, հարցնում է նա, ինչ կոտորածներ ես դու հնարել, ուր է աղմուկը։

Նախիջևանի խանը շուարում է։ Նա ոչ մի կոտորածի մասին զեկուցում արած չէ եղել։

—Ինչպէս թէ չես արել, բարկանում է Հասան խանը։ Մոռացել ես քո վերջին նամակը։

—Այդպէս բան չեմ գրել, պատասխանում է Նախիջևանի խանը։

Հասան խանը կարգադրում է նամակը բերել։ Եւ ահա այդտեղ բացվում է գաղտնիքը։

Նախիջևանի խանը իր նամակի մէջ գրում է, որ հայերը զբաղված են իրանց պասով և հինգ օրից յետոյ սուրբ Խաչի տօնի առիթով թոյլ կը տան իրանց աղմուկ և զուարճութիւններ։

Սուրբ Խաչի տօնը յայտնի է Արաքսի ափերի թուրքերի մօտ «Օղլախ-ղրան» անունով, որ նշանակում է «ուլերի-կոտորած»։ Սուրբ Խաչի օրը հայերը սովորութիւն ունեն ուլ մորթել ամեն տեղ։ Եւ որովհետև ուլ մորթվում է

digitised by A.R.A.R.@

մեծ տարածութեան վրա և մեծ քանակութեամբ, այդ պատճառով Թուրքերը անուանել են նրան ուլեջարդ կամ ուլի կոտորած։

Բանից դուրս է գալիս, որ նամակի մէջ Օղլախ-Ղրան բառը լաւ չեն կարդացել և դրանից առաջացել է մեծ թիւրիմացութիւն։

Հասան խանը տեսնում է իր սխալը և ընծաներով յետ դարձնում Նախիջևանի խանին իր տեղը։

—

Խաչիկեանը պատմեց այդ տեսակ դարձեալ երկու աւանդութիւն։ Նրանց մասին մի ուրիշ օր։

---

digitised by A.R.A.R.@

CLXIII

(5 հոկտ. 1903 թ., «Մշակ» № 218)

—Ես գոհ եմ վերջապէս։

Այս խօսքերը ասողը մի օրիորդ էր, որ միշտ գանգատվում էր իր կեանքից, գտնելով նրան տաղտկալի և անբովանդակ։

—Ի՞նչ է պատահել, հետաքրքրվեցի ես։

—Գտել եմ գրաւիչ գործ, պատասխանեց օրիորդը, մի գործ, որը ինձ զբաղեցնում է։

—Շատ ուրախալի է, վրա բերեցի ես, բայց ասացէք խնդրեմ, այդ ինչ գործ է։

—Ես ընթերցանութիւն կազմակերպելով և գրքեր բաժանելով եմ զբաղված, պատասխանեց օրիորդը։ Շատ գրաւիչ գործ է։

Օրիորդը ինձ հետաքրքրեց։ Մանաւանդ ինձ վրա ազդեցին այն ոգևորութիւնը, որով նա խօսում էր, այն փայլը, որ շողում էր նրա աչքերում, այն ժպիտը, որ խաղում էր նրա շրթունքների վրա։

—Հետաքրքրական է, ասացի ես, պատմեցէք, թէ ինչ էք անում և ինչն է ձեզ այդքան գրաւել։

Օրիորդը մի քանի կում խմեց իր առաջ դրած թէյից և սկսեց խօսել։

—Ես երկար ժամանակ որոնում էի գրաւիչ գործ ինձ համար և չէի գտնում։ Գիրք կարդալուց յոգնել էի։ Յանկարծ իմ գլխում ծագեց

digitised by A.R.A.R.@

մի այսպիսի միտք՝ «Թող փորձ անեմ գիրքը կարդալու ուրիշների հետ և տարածեմ ընթերցանութիւնը, որտեղ այդ բանի կարօտութիւն կայ»։ Ես ժողովեցի մեր հարևանութեան մէջ գտնվող օրիորդների և տիկինների և մենք սկսեցինք ընթերցանութիւնը։ Ես կարդում էի նրանց համար և գրքեր և լրագիրներ և խօսակցում էի մեր կարդացածի մասին։ Տէր Աստուած, որքան հետաքրքրութիւն իմ հարևանների կողմից, որքան մտերիմ վերաբերմունք դէպի ինձ և իմ գործը։ Նրանք վերաբերվում էին ինձ այնպիսի երախտագիտութեամբ, որ ինձ զարմացնում էին։ Ես շատ շուտով համոզվեցի, որ գիտութիւնը շատ մեծ զուարճութիւն է եղել մարդկանց համար, որ մարդիկ կարօտ են նոր տեղեկութիւնների, մտքի փոխանակութեան, և առհասարակ բարոյական խրախոյսների։

Օրիորդը կանգ առաւ և մտածմունքի մէջ ընկաւ։

—Շարունակեցէք, խնդրեցի ես։

Օրիորդը սթափվեց, նորից ճաշակեց իր թէյը և շարունակեց։

—Իմ շրջանը, բացատրեց նա, բաղկացած է այնպիսի անձերից, որոնք քիչ պատրաստութիւն ունեն, սովորել են տարրական դպրոցում, գիմնազիայի ստորին դասարաններում. իսկ երկուսը բոլորովին անգրագէտ էին։

—Էին։

—Այո, անգրագէտ էին, պատասխանեց նա, բայց սովորեցին ինձնից կարդալ գրել և այժմ ազատ կարդում են գրքեր։

—Շարունակեցէք, խնդրեմ։

—Այդ շրջանից մի երկուսը կապ ունէին

digitised by A.R.A.R.@

գիւղերի հետ, շարունակեց օրիորդը: Նրանց միջոցով մենք կապ հաստատեցինք գիւղի հետ և ընտելացրինք գիւղացիների մի մասը ընթերցանութեան: Գիւղից երկու աղջիկներ հիւր եկան քաղաք և սկսեցին յաճախել մեր ընթերցանութեան երեկոները. Սկսեցին հետաքրքրվել: Խնդրեցին, որ մենք կազմակերպենք մի այդպիսի գործ էլ գիւղում: Մեր շրջանը մեծ համակրութեամբ վերաբերվեց: Ես օգտվեցի այն դէպքից, որ իմ ընթերցուհիներից մի քանիսը ազգակցական կապեր ունէին գիւղում, գնացի նրանց հետ գիւղ, ամբողջ երկու շաբաթ մնացի, ընթերցանութեան գործը կազմակերպեցի և եկայ: Ինձնից յետոյ գնացին մեր շրջանից դարձեալ երկու հոգի: Ես կարողացայ մի երիտասարդի ես գրաւել դէպի մեր գործը և նա գնաց գիւղ նոյնը իրագործելու գիւղական երիտասարդութեան մէջ:

—Եւ արդեօք աջող է գնում գործը:

—Այո, վրա բերեց օրիորդը, տղամարդկանց մէջ այդ գործը գիւղում աւելի պարարտ հող գտաւ իր համար, քան կանանց շրջանում. բայց երկու փորձն էլ բաւարար կերպով առաջ են ընթանում: Սակայն մեր գործը սկսեց բարդանալ և մեր հոգսերը դարձան բաղադրեալ:

—Ինչպէս:

—Գրքերի պակասութիւնը, բացատրեց օրիորդը, ընթերցանութեան յարմար նիւթի բացակայութիւնը մեզ շատ դժուար կացութեան մէջ է դրել: Ճիշդ է, օրվայ հետաքրքրութիւնը լիացնելու համար շատ օգտաւէտ դեր են կատարում մեր լրագիրները, բայց գործնական օգտաւէտ գրքոյկներ, վէպեր և պատմութիւններ շատ քիչ են թւով: Եղածների համար ծախս

digitised by A.R.A.R.@

է հարկաւոր, որ մինչև այժմ մենք հոգացել ենք. բայց գործը լայնանում է և ընդարձակւում... Սկսել են մեզ դիմել և հարևան գիւղերից և մենք արդէն գիրք ենք ուղարկում մի նոր գիւղ էլ, որտեղ ընթերցանութեան գործը սկսում է նոյն նուաճումները անել, ինչ որ առաջին գիւղում։

—Այո, համաձայնեցի ես, գործը լաւ ճանապարհի վրա է և կարող է շատ զարգանալ։ Պէտք է նրան պահպանել և նրա ընդարձակման համար ամեն ջանք գործ դնել, միջոց չը խնայելով։

—Ես գրաւուած եմ իմ գործով, բացականչեց օրիորդը և օրէցօր աւելի և աւելի եմ սիրում նրան։

—Իրաւունք ունէք։

—Այժմ ես չը գիտեմ, թէ ինչ է տխրութիւնը և տաղտկութիւնը, որոնք առաջ տանջում էին ինձ։ Այժմ ես գտայ մի զբաղմունք, որ իր մէջ պարունակում է ինձ համար մեծ հետաքրքրութիւն և գրաւչութիւն։

—Ես ձեզ հասկանում եմ, ասացի ես և բոլոր սրտից սեղմում եմ ձեր ձեռքը։

—Բայց սա մի այնպիսի գործ է, վրա բերեց օրիորդը, որտեղ հարկաւոր են շատ գործողներ։ Պէտք է լինեն մարդիկ, որոնք կազմակերպեն ընթերցանութեան գործը նոր տեղերում, որոնք տարածեն գրքեր, որոնք գտնեն լաւ գրքեր և կամ հրատարակեն այդպիսիները, եթէ դրանք գոյութիւն չունեն։

—Օրիորդ, ասացի ես, կոչ արէք հասարակութեան։ Ինչո՞ւ չէք մի դիմում անում մեր երիտասարդներին և դրդում նրանց գործու-

digitised by A.R.A.R.@

նէութեան այդ մեծ և արգասաւոր ասպարէզում։

—Միթէ փորձեմ։

—Փորձեցէք։

—Յօդուածիս, կամ ինչպէս դուք ասում էք, կոչիս վերնագիրը կը դնեմ «Օրվայ պահանջ»։

—Շատ յաւ։

—Իսկ ստորագրութի՞ւնս, հարցրեց օրիորդը, ես չեմ ուզում իմ անունը ստորագրել։

Օրիորդը շուտ կը գրէ իր կոչը, թէ բոլորովին չի գրիլ—այդ չը գիտեմ, բայց անհրաժեշտ համարեցի իմ խօսակցութիւնը հաղորդել ձեզ՝ իմ ընթերցողին։

digitised by A.R.A.R.@

CLXIV

(12 հոկտ. 1903 թ., «Մշակ» № 224)

Երէկ ինձ մօտ եկաւ իմ վաղեմի ծանօթ Աթօնեանը։

—Ձեր բարեկամը եկել է այսօր ձեզ հետ վիճելու, ասաց նա բարեւելով։

—Համեցէք, ժպտացի ես։

—Թունդ վէճ եմ ունենալու, աւելացրեց նա։

—Ինչպէս մոլորված հակառակորդ, նկատեցի ես։

Աթօնեանը զարմացական հայեացք գցեց ինձ վրա և աչքերը լայն բացեց։

—Մի՞թէ դուք էք անուանում ինձ հակառակորդ, զանգատվեց նա, ինձ, որ ձեր մշտական գաղափարակիցն եմ եղել, ձեզ համակրողը և ձեզ ջատագովողը։ Դա վիրաւորական է։

Աթօնեանը արդարև փոքր ինչ վիրաւորվեց։

—Ես պէտք է բացատրեմ, ասացի ես, թէ դուք ինչպիսի հակառակորդ էք։ Դուք անցեալի և ապագայի վերաբերութեամբ միշտ գաղափարակից և համամիտ էք մեզ հետ. դուք դաւանում էք նոյն ընդհանուր սկզբունքները, ինչ որ մենք։

—Ուրեմն, հարցրեց նա։

—Բայց ներկայի վերաբերութեամբ, բացատրեցի ես, ժամանակակից երեւոյթների վերաբերութեամբ դուք միշտ հակառակորդ էք եղել

digitised by A.R.A.R.@

մեզ։ Երբ անցել են ժամանակներ, դուք փոխել էք ձեր կարծիքը և ընդունել էք մերը. բայց ամեն մի նորագոյն երևոյթի վերաբերմամբ դուք ներկայացել էք իբրև հակառակ հայացքի տէր մարդ։

—Երբէք, երբէք, բացասեց Աթօնեանը։

Ես յիշեցրի դէպքեր։ Նա ստիպված էր, համաձայնել գոնէ մասամբ։

—

Աթօնեանը հետաքրքրական է, իբրև մի երևոյթ, եթէ կամենում էք, նոյն իսկ իբրև մի տիպ։

Առաջ բերեմ մի քանի դէպքեր մեր ընդհարումների պատմութիւնից։

Մի անգամ լրագրի մէջ տպված էին մերկացումներ մի շրջանի վաշխառուների կեանքից, հանդէս էին բերված անթիւ ոճիրների և զոհերի նկարագրութիւններ։ Բացված էր հասարակական խոր վէրքերից մէկը։ Մենք ստանում էինք համակրական նամակներ գիւղացիներից, որոնց պաշտպանն էր հանդիսացել լրագիրը։ Ամենքը անհամբեր սպասում էին արդարութեան յաղթանակին։

Այդ ժամանակ հանդիպում եմ մի օր Աթօնեանին։

—Լաւ եղաւ, որ պատահեցինք, ասաց նա, ես ուզում էի ձեզ հետ տեսնվել։ Թողէք ձեր սկսած արշաւանքը։

—Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել, հետաքրքրվեցի ես, ձեզնից ես սպասում էի համակրական խօսքի։

—Այո, վրա բերեց նա, ես առհասարակ համակրում եմ ձեր գործին, ատում եմ վաշխառուներին և խղճում եմ նրանց զոհերին. բայց

digitised by A.R.A.R.@

լաւ տպաւորութիւն չէ թողնում այդ արշաւանքը։ Վաշխառուների անունների մէջ կան մի քանիսը, որոնք գիրք ունեն հասարակութեան մէջ։

Վիճեցինք, միմեանց չը համոզեցինք և բաժանվեցինք։

—

Մի ուրիշ անգամ Աթօնեանը կանգնեցրեց ինձ փողոցում։

—Ես չեմ հաւանում ձեր բռնած համակրական դիրքը բուրերի վերաբերութեամբ, ասաց նա։

Այդ ժամանակ սկսված էր Անգլիայի պատերազմը Տրանսվաալի բուրերի հետ։

—Ինչո՞ւ։

—Ես համարում եմ անգլիացիներին աշխարհիս ամենակուլտուրական ազգերից մէկը և համակրում եմ նրանց։

—Այո, ասացի ես, անգլիական կուլտուրայի առաջ ես խոնարհվում եմ, բայց բուրերին ինչու չը պէտք է ցաւակցեմ։ Մի՞թէ այն ամենը, ինչ որ անգլիացին անում է, ներելի պէտք է համարվի հէնց այն պատճառով, որ նա միւս ազգերից աւելի կուլտուրական է։ Մի՞թէ ես իրաւունք չունեմ պախարակելու, օրինակ, նրա իռլանդական քաղաքականութիւնը։ Մի՞թէ հէնց այն պատճառով, որ նա անգլիացի է, ես պէտք է նրան փառաբանեմ, եթէ նա վաղը կամ միւս օր ճնշէ և հայերին։

—Այդպիսի բան տեղի չէ ունեցել, բացականչեց նա։

—Իսկ եթէ տեղի ունենար։

—Ապարդիւն հարց է։

digitised by A.R.A.R.@

Աթօնեանը չը համաձայնեց ինձ հետ, և շուտով հեռացաւ։

—

—Ես չեմ հաւանում ձեր ներողամտութիւնը, ասաց Աթօնեանը մի օր։

Այդ ժամանակ Թիֆլիսում քաղաքային ընտրութիւնների պատրաստութիւններ էին տեսնվում և ընտրելիների ցուցակներ էին կազմվում։

—Դա ներողամտութիւն չէ, բացատրեցի ես, այլ որոշ դաւանանքի արդիւնք։

Հարցը զանազան ազգութիւնների մասնակցութեանն էր վերաբերում։

—Եթէ մեր դէմ կռւում են, փաստաբանում էր նա, այն ժամանակ մենք էլ պէտք է կռւենք։

—Ինչո՞ւ չը փորձենք, առարկեցի ես, համերաշխութեան գաղափարը իրագործել հէնց այժմ, ինչո՞ւ հէնց այժմ չը ցոյց տանք, որ մենք անկեղծ և հաստատ համոզմունքով ենք նայում իրերի և երևոյթների վրա, որ մենք չենք կորցնում մեզ, չենք կուրանում ինտրիգաներից, կրքերից և ծանր օրերում գիտենք չը մոռանալ մեր դաւանանքը։ Ինչո՞ւ հէնց այժմ չապացուցանենք մեր դրացի ազգերին, որ մենք չենք ուզում օգտվել մեր բացառիկ դիրքից և ոյժից, այլ զիջում ենք գաղափարի անունով։

—Դա թուլութիւն է, բացականչեց Աթօնեանը, դա վիրաւորանք ընդունել է, դա վնասակար քայլ է։

Մենք միմեանց հետ չը համաձայնեցինք։

—

Աթօնեանը հարկաւոր համարեց իր կարծիքը յայտնել և այն դէպքում, երբ մենք պաշտպանում էինք թեմական դպրոցների հոգաբարձու-

digitised by A.R.A.R.@

թիւնները, երբ սխալ էինք համարում հակաժողովրդական մի քանի կարգադրութիւններ՝ վերաբերեալ դպրոցական կազմակերպութեան, տեսուչների և ուսուցիչների ընտրութեան։

—Այս դէպքում, առարկում էր նա, պէտք է համակերպուել, պէտք է զիջել։

—Ամբողջ կեանքն էլ առանձին դէպքերից է կախուած, ասում էինք մենք, ցոյց տուէք դուք մեզ այն դէպքերը, թէ երբ մենք պէտք է մեր սկզբունքներից չեղվենք և երբ նրանց պաշտպան լինենք։

Աթօնեանը միշտ գտնվում էր օրվայ տպաւորութիւնների տակ և սկզբունքների վերաբերութեամբ միայն տեսական և օդային իղձեր էր արտայայտում։

Մանաւանդ նա մեզ զարմացրեց, երբ յանկարծ մի օր հանդէս եկաւ, իբրև հակառակորդ Ղևոնդ Ալիշանի համար հոգեհանգիստ կատարելուն։ Իսկ մի քանի օր առաջ նա մի մասնաւոր երեկոյթում ճառ էր խօսել և այն միտքն էր յայտնել, որ մեր նորագոյն հասարակական չարժման ամենախոշոր արժանաւորութիւններից մէկը պէտք է համարել համբերողութեան հաստատուելը և այլակրօն համազգայինների համերաշխութեան զարգանալը։

—Մի՞թէ դուք էք, Աթօնեան, հոգեհանգստի դէմ խօսողը, կշտամբում էինք նրան։

—Այո, առարկեց նա, ներկայ դէպքում պէտք է ուրիշ դիրք բռնել։ Որքան էլ համակրելի լինի Ալիշանը, բայց մեր կողմից հոգեհանգիստ կատարելը թև կը տայ կաթօլիկութեան և վիրաւորական կը լինի մեզ համար։

—Էլ ո՞ր օրվայ համար էր ձեր այն ճառը,

digitised by A.R.A.R.@

որը նոյն իսկ մեծ տպաւորութիւն գործեց անցեալ երեկոյ։

Աթօնեանի համար ախորժելի էր լսել գովասանք իր ճառի մասին։ Նա յիշեց մի քանի դէպքեր երեկոյթից և սկսեց կատակներ անել։

—

Ներկայի ազդեցութեան տակ գտնվելով՝ Աթօնեանը միշտ խուսափում է որ և է նորութիւնից և բողոքից։

—Միայն ոչ այս անգամ, ոչ այժմ, ասում է նա մշտապէս։

Նա այդպիսով խօսում էր մի օր քառաձայն երգեցողութիւն մտցնելու դէմ մեր եկեղեցիներում և սկսեց իր ասածները յետ վերցնել, երբ զրոյցին մասնակցող երկու քահանայ ջատագովեցին քառաձայն երգեցողութիւնը։ Նա մի օր վրդովված էր, որ մեր բուրժուազիայի դէմ լոյս էին տեսել յօդուածներ լրագիրների մէջ։

—Այժմ դա վատ տպաւորութիւն է թողնում, առարկում էր նա։ Դա գրգռմունք է առաջ բերում։

—Իսկ երբ է նա գոհունակութիւն պատճառում։

—Թողէք մի ուրիշ անգամի համար։

Եւ տարիներ շարունակ լսվում է նոյնը։

—

Աթօնեանը եկել էր ինձ համոզելու, որ թիւրքահայերը պէտք է մի ուղերձ տան սուլթանին և բարեկամական զգացմունքներ արտայայտեն նրան։

—Մի՞թէ այն սուլթանին, որի օրով հարիւր հազար հայ կոտորվեց և որին Գլադստոն այդ պատճառով· «մեծ-մարդասպան», իսկ եւրոպա-

կան հասարակական կարծիքը «կարմիր սուլթան» անուանեցին։

—Անհրաժեշտութիւնը այդ է պահանջում, մրմնջաց Աթօնեանը։

Ի՞նչով կը զանազանվենք այն ժամանակ մենք յոյներից, որոնք այժմ մի գլուխ ուղերձներ են տալիս սուլթանին։

—

Աթօնեանի համակրութիւնները ընդհանրապէս ազատամիտ և նոյն իսկ արմատական գաղափարների կողմն են. բայց այդ հանգամանքը նրա համար նշանակութիւն չունի, երբ նա ներկայի ազդեցութեան տակ է։ Նա իր ամբողջ կեանքում միշտ բացառութիւններ է անում այն կանոնների և սկզբունքների դէմ, որոնց անունից նա խօսում է իր ընդհանուր ճառերում։ Եւ որ բնորոշն է, շատ վիրաւորվում է, երբ մարդիկ մատնացոյց են լինում նրա հակասութիւնների վրայ։

Աթօնեաններ շատ կան։ Մտաբերեցէք ձեր ծանօթներին և ձեզնից իւրաքանչիւրը կը գտնէ իր շրջանում մի քանիսներին։

digitised by A.R.A.R.@

CLXV

19 հոկտ. 1903 թ., «Մշակ» № 230

—Երկար սպասեցինք, բայց ոչ ոք մեզ մօտ չեկաւ։

Այդ խօսքերը ես վերցնում եմ գաւառական մի նամակից, որից քաղուածքներ կանեմ փոքր ինչ ներքեւ։

Նամակագիրը մի գիւղացի է։ Նա իր համագիւղացիների կողմից յայտնում է, որ նրանք սպասում են ղեկավարող, հրահանգող, կրթված երիտասարդների։

Ժողովուրդը սպասում է և սպասում, իսկ այդ ժողովրդի մօտ գնացող չը կայ։

—Գոնէ հեռուից, քաղաքից օգնեն մեզ, ինչով որ կարող են, ասում է նամակագիրը, ուղարկեն մեզ ընթերցանութեան գրքեր, տան օգտաւէտ ցուցումներ։

Ես պատմել եմ ձեզ, ընթերցող, այն փոքրիկ փորձի մասին, որ արել էր օրիորդների մի խումբ ընթերցանութիւն տարածելու նպատակով։ Այդ փորձը հաւանութիւն է գտել շատ տեղերում և ես ստացայ մի քանի նամակ, որոնց հեղինակները ցանկութիւն են յայտնում նոյնը իրագործելու, սակայն գանգատվում են, որ եռանդուն գործողներ չունեն, որ բաւականաչափ գրքեր չունեն։

—Թող սկիզբը դնեն, ասում է մի հասարակ նամակագիր, յետոյ մենք ինքներս կը շարունակենք լաւ գործը։ Մենք կարօտ ենք

digitised by A.R.A.R.@

խրատների և մխիթարութեան։ Մեր չուրջը ցաւ կայ ամեն տեսակ։ Օգնութիւն է հարկաւոր։ Մեր կենցաղավարութիւնը աղքատ է, մեր գիւղերը լիքն են հիւանդներով, մեր արհեստը կարգին արդիւնք չէ տալիս։

Թերթեցի և մի քանի ուրիշ նամակներ։ Հետաքրքրական էին իրանց բովանդակութեամբ և ոճով։ Կային և ոտանաւորներ։

Այդ նամակներից երեւում է, որ գիւղում սկըսւում է մտնել գիտակցութիւն, որ գիւղացին սկսում է զգալ իր շրջապատի թերութիւնները, որ նա ձգտում է դէպի լոյս, դէպի աւելի խելացի կեանք։

Ես առաջ կը բերեմ մի նամակ, որ ուղղված է դէպի «Մշակ» լրագիրը, և որի մէջ լսվում է գաւառացու ձայնը։ Դուք կը նկատէք, որ նա պահանջի ձայն է, մի պահանջի, որը անտես անել չէ կարելի։

Ահա նամակից մի խոշոր կտոր։

«Լրագիր—ջան։

Ինձ էլ իրաւունք տուր մի քանի խօսք գրուցելու։ Ես հողագործ մարդ եմ, հասարակ շինական, մէկ ռամիկ մարդ, բայց կարդալ սիրում եմ ու քեզ հետ ծանօթ եմ։

Դու միշտ համոզում ես երիտասարդներին, որ նրանք գան մեզ մօտ մեր գիւղերը ու մեզ լուսաւորեն, մեր աչքերը բանան, մեզ բան հասկացնեն։

Սպասեցինք, տարիներով սպասում ենք, բայց այդ երիտասարդ ասածներից ոչ մէկն էլ մեզ մօտ չեկաւ, ոչ ոքի չը տեսանք մեր գիւղական տան մէջ։ Եւ երբ պէտք է գան, այդ չը գիտենք և յոյս էլ չունենք թէ գան չուտով։

Մեր յոյսը էլի քեզ վրա է։ Քո երեսը տես-

digitised by A.R.A.R.@

նելով, քեզ կարդալով միայն իմանում ենք, թէ ինչ կայ աշխարհքում։ Քո խօսքով, քո խորհրդով, քո խրատներով մեզ տալիս ես մի փոքր մխիթարութիւն, որից զուրկ ենք խեղճերս։ Էհ, ձեր քաղաքի երիտասարդները շատ երկար են պատրաստվում մեզ մօտ գալու, այնքան երկար, որ երևի կը պառաւեն և յետոյ մեզ էլ կը մոռանան։ Մենք նրան գալուն այլ ևս չենք հաւատում, ուստի հասցրու այս մեր խնդիրքը նրանց։ Թող նրանք, մեր բանիմաց երիտասարդները, գոնէ լրագրի միջոցով յայտնեն, թէ ինչ օգտաւէտ բան ունեն մեզ համար պատրաստած։ Եթէ մենք իմանանք, որ օգտաւէտ բան կայ, ինքներս մարդ կուղարկենք նրանց մօտ տեղեկանալու, սովորելու և խրատ վերցնելու։

Լրագիր-ջան։ Քաղաքի մարդիկ պաշտպան շատ ունեն, իսկ մենք խեղճ ենք։ Դու գործիր մեզ համար։ Քաղաքի մարդիկ քեզ շուտ կը դաւաճանեն, իսկ մենք կը մնանք հաւատարիմ։ Քո սերմանած հատիկները, եթէ արմատ բռնեն մեզանում, առատ հունձ կը տան։ Դու մեզ մի թող, մեր սիրտն էլ քեզ հետ կը լինի. երախտիքդ ժողովուրդը չի մոռանայ»։

Նամակը թողեց ինձ վրա տպաւորութիւն։ Ես լաւ գիտեմ, որ ժողովուրդը կարօտ է օգնութեան և որ նա իսկապէս չի մոռանայ երախտիքը իր գործողների, բայց մի հարց ինձ հանգիստ չէ տալիս՝ ինչո՞ւ մեր երիտասարդները միայն գինու բաժակներ բռնած միջոցին են յիշում ժողովրդին և լուրջ կերպով չեն նուիրվում նրա բարօրութեան գործին։ Ինչո՞ւ, ինչո՞ւ։

Ո՞վ կը տայ պատասխան։

digitised by A.R.A.R.@

CLXVI

(16 հոկտ. 1903 թ., «Մշակ» № 235)

Մի անգամ ես ճանապարհորդում էի մի պարոնի հետ պոստային սայլակով։ Ուղեկիցս ջղային մարդ էր, դիւրագրգիռ, շուտ ոգևորվող, բայց և շուտ յուսահատվող։ Նա սիրում էր գովել իր խելքը, իր ույժը և իր համարձակութիւնը, երբ աջող էր գնում բանը։ Նա այդ աջողութիւնը իրան էր վեր-ագրում։ Սակայն երբ ձախորդութեան էինք հանդիպում, այն ժամանակ մեղաւորը դուրս էր գալիս ես։

Երեկոյ էր, երբ մենք հասանք մի կայարան։

—Գնանք արդեօք առաջ, թէ մնանք և գիշերենք, հարցրինք մենք միմեանցից։

Խորհրդակցելուց յետոյ վճռեցինք գնալ։

Շուտով դուրս եկաւ լուսինը և բացեց մեր առաջ չքնաղ տեսարաններ։

—Տեսաք, բացականչեց ուղեկիցս, որքան լաւ եղաւ, որ դուք ինձ լսեցիք և մենք շարունակեցինք ճանապարհը։

—Այո, նկատեցի ես, հրաշալի գիշեր է։

—Արեգակը չէ այրում, վրա բերեց ուղեկիցս, և ուրեմն հարկաւոր չէ հովանեակ պահել ձեռքներիս։ Չէ, ես շատ ուրախ եմ, որ պնդեցի ճանապարհորդութիւնը շարունակելու։ Եթէ ձեզ նայած լինէի՝ դուք անպատճառ կը մնայիք գիշերելու, իսկ այժմ մենք արդէն մի

digitised by A.R.A.R.@

ամբողջ արշաւ անցած կը լինենք գիշերը և հետևեալ կայարանից էլ դուրս կը գանք հանգստացած ձիերով.

—Լաւ եղաւ, մրմնջացի ես. միայն թէ շուտ հասնենք։

Ճանապարհը երկար էր։ Շուտով մենք սկըսեցինք յոգնութիւն զգալ։ Գիշերվայ զովութիւնը սկսեց թմրեցնել մեզ։ Իսկ մենք պէտք է աշխատէինք արթուն և զգաստ լինել, թէ այն պատճառով, որ երբեմն հանդիպում էինք ուրիշ սայլերի և թէ այն, որ մենք մտանք անտառի մէջ, ուր մութն էր և ճանապարհը քարքարոտ։

Ուղեկիցս սկսեց տրտնջալ։

—Ճանապարհը սկսում է ձանձրացնել, գանգատվեց նա։

—Դիմանանք, շուտով վերջ կը լինի։

Սայլակը մի տեղ թեքվեց և քիչ մնաց շուռ գար։

—Մի՞թէ այսպիսի ժամանակ կարելի է ճանապարհորդել, զայրացած խօսեց ուղեկիցս։

—Շուտով անտառից դուրս կը գանք, հանգըստացրի ես։

Ուղեկիցս լռեց, բայց երբ հասանք մի կամուրջի, որով պէտք է անցնէինք, այդտեղ նա կատաղեց։ Կառապանը առաջարկեց քշել սայլակը ուղիղ գետակի միջով։

—Ջուրը շատ չէ, բացատրեց կառավարը, վնաս չի լինիլ և դուք չէք թրջվիլ։

Ուղեկիցս յիշոց տուեց և իջաւ սայլակից։

—Ես կը գնամ կամուրջով, յայտնեց նա, իսկ սայլակը թող անցնի գետակով։

Ես էլ իջայ։

digitised by A.R.A.R.@

Կամուրջը անցնելուց յետոյ նորից նստեցինք։ Ուղեկիցս բարկացած էր։

—Մի կէս ժամից յետոյ, նկատեցի ես, մենք կայարանում կը լինենք։

—Իմս ինձ հասաւ, խօսքս կտրեց ուղեկիցս։ Սա ինչ խայտառակութիւն է։ Դուք էք մեղաւոր, դուք։

Նա փոքր ինչ լռեց և յետոյ շարունակեց։

—Դուք էք մեղաւոր, դիմեց նա ինձ։ Դուք լաւ ծանօթ էիք ճանապարհներին. ինչու էիք ուրեմն դրդում, որ մենք շարունակէինք ճանապարհը, միթէ չէինք կարող մնալ գիշերը այն կայարանում և լաւ հանգստանալ, մանաւանդ որ գեղեցիկ սենեակներ կային այնտեղ. իսկ առաւօտը վաղ ճանապարհ կընկնէինք դեռ լոյսը չը բացված։

—Բայց միթէ չէք յիշում, որ մենք խորհըրդակցեցինք, նկատեցի ես, ծանր ու թեթև արինք և յետոյ վճռեցինք մեր գնալը։

—Ես ամենևին ծանր ու թեթև չարի, բացականչեց ուղեկիցս, ես հաւատ ընծայեցի ձեր փորձառութեանը։ Դուք էք մեղաւորը։

Շուտով անտառը վերջացաւ և մենք նորից լուսնի լոյսի մէջ ընկանք։ Կայարանը մօտ էր, մեր տրամադրութիւնը սկսեց լաւանալ։ Մենք զբաղվեցինք շրջակայքով և աննկատելի կերպով հասանք կայարան։

—Չէ, բացականչեց ժպտալով ուղեկիցս, լաւ եղաւ, որ ճանապարհ ընկանք։ Այստեղ լաւ կը քնենք և յետոյ առաջ ու առաջ։ Չէ, ես չեմ փոշմանում, որ առաջարկեցի այստեղ գալ, այժմս ես պատրաստ եմ դարձեալ մի արշաւ առաջ գնալու։

Ճանապարհորդութեան շարունակութեան ժա-

digitised by A.R.A.R.@

մանակ իմ ուղեկիցը դարձել մի քանի անգամ փոխեց իր տրամադրութիւնը։ Նա աջողութիւնը գլխովին վերագրում էր իրան, իր խելքին և կամքի ույժին, իսկ անաջողութիւնները ուղարկում էր իմ հասցէին։

—

Կեանքի մէջ յաճախ յիշում եմ այդ իմ ուղեկցին։

Այն մարդիկ, որոնց հետ միասին գործել ենք և չար ու բարի օրեր տեսել, ոգևորվել են տեսնելով գործի աջողութիւնը և բեղմնաւորութիւնը։ Նրանք շատ բարձր տեղ և գին են տուել իրանց մասնակցութեանը, իրանց ջանքերին և աշխատանքին։ Սակայն, երբ հասել են ձախորդութեան օրեր, այն ժամանակ, նրանք դուրս են եկել անպարտ, իսկ մեղաւորը մնացել ենք ես կամ մի քանի մօտ ընկերներս։

—Մի մխիթարութիւն ունէք դուք, ասաց ինձ իմ բարեկամ Խաչիկեանը, երբ պատմեցի նոր մեղադրանքների մասին։

—Ի՞նչ մխիթարութիւն։

—Այն, բացատրեց Խաչիկեանը, որ այսօր գոնէ ձեզ յատկացնում են այն դերը, որը ուրիշ ժամանակ զլանում էին իրանց ձեռքից բաց թողնելու և ձեր ու իրանց մէջ բաժանելու։

—

Խաչիկեանը սկսեց պատմել իր մի ազգականուհու մասին, որ չափազանց ջղային է։

—Երբ որ եղանակը ամպած է լինում, ասաց Խաչիկեանը, ազգականուհուս ջղերը սաստիկ գրգռվում են և Նա մի գլուխ մեզ յիշոց է տալիս։

—Դուք ի՞նչ մեղաւոր էք։

—Այո, մեղաւոր չենք, բայց ջղային մարդուն

digitised by A.R.A.R.@

բան հասկանալ դժուար է լինում։ Մենք ամեն կերպ աշխատում ենք Նրան հանգստացնել, բայց Նա մեր ամեն մի քայլից, ամեն մի հնարից աւելի ու աւելի է գրգռվում։

—Դժուար է։

—Սակայն դրա փոխարէն, եզրափակեց Խաչիկեանը, երբ ջղերը հանգստանում են, այն ժամանակ մենք դառնում ենք աչքի լոյսեր, սիրելիներ և սրտի հատորներ Նրա համար։

—

Ես մի նամակ ստացայ Պարսկաստանից, որի բովանդակութիւնը ջղային մարդու գրուածքի տպաւորութիւն թողեց ինձ վրա։

Այդ նամակի մասին մի ուրիշ անգամ։

digitised by A.R.A.R.@

CLXVII

(2 նոյեմբ. 1903 թ., «Մշակ» № 241)

Նստած Խաչիկեանի հետ խօսակցում էինք։

—Գիտես ինչ, դիմեց ինձ Խաչիկեանը։

—Ի՞նչ։

—Ես յանկարծ յիշեցի մեր ուսանողական երկու ընկերներին, որոնց վրա մենք ծիծաղում էինք հէնց նրանց ծիծաղի համար։

—Աղօցեանին և Մատուսեանին, նկատեցի ես։

—Այո, այո, վրա բերեց Խաչիկեանը և ժպտաց։

Աղօցեանը և Մատուսեանը մեր ընկերութեան մէջ յայտնի էին ի միջի այլոց իրանց օտարոտի ծիծաղով։ Երբ տեղի կունենար մի որ և է ծիծաղաշարժ տեսարան, կամ մէկը կը պատմէր մի զուարճալի բան, Աղօցեանը իսկոյն չէր ծիծաղի և չէր մասնակցի ուրիշների ծիծաղին։ Եւ միայն շատ ուշ, երբ արդէն բոլորը վերջացրած կը լինէին իրանց ծիծաղելը, նա յանկարծ կը փռթկար և կսկսէր անզուսպ կերպով հռհռալ։ Իսկ Մատուսեանը կը ծիծաղէր, ինչպէս բոլորը, բայց ժամանակ անցնելուց յետոյ նորից կը յիշէր ծիծաղաշարժ դէպքը և կը սկսէր քչքչալ։

—Ինչո՞ւ յիշեցիր Աղօցեանին և Մատուսեանին, հարցրի ես։

digitised by A.R.A.R.@

—Ես յիշեցի, բացատրեց Խաչիկեանը, մեր կարդացած նամակի առիթով։

Այդ այն նամակն է, որի մասին ես ակնարկել էի իմ անցեալ «Մանրանկարում» և որի մասին խոստացել էի մի ուրիշ անգամ խօսել։

Կատարում եմ խոստումս։

—

Նամակը Պարսկաստանից էր և կրում էր գրողի անուն-ազգանունը և մանրամասն հասցէն։

Նամակը երկար էր և ես կը բերեմ նրա միջից միայն մի քանի բնորոշ կէտեր։

Նամակագիրը բացասում է մեր գրականութեան մէջ յայտնի անունները։ Նազարեան, Նալբանդեան, Արծրունի, Պատկանեան, Րաֆֆի, Պռօշեան, Աղայեան, Պարոնեան և ժամանակակից երիտասարդ գրողները բոլորը դէն են շպրտւում։

Ահա ինչ է ասում նամակագիրը։

«Նազարեան, Նալբանդեան և Արծրունի անխնայ յարձակւում էին մեր ազգի պակասութիւնների վրա և ի ցոյց համայն աշխարհի վայր գցում հայի անունը։ Պատկանեան իր ընդհանուր բանաստեղծութիւններով և Նախիջևանի բարբառով գրված երկերով ծաղրալի և զզուելի հանդիսացրեց ժամանակակից հային։ Րաֆֆի իր «Խաչագողի յիշատակարանով», «Ոսկի Աքաղաղով», «Անմեղ վաճառքով», խայտառակեց իր համազգայիններին։ Պռօշեան իր «Հացի խնդիր», «Ցեցեր», «Բղդէ» և ուրիշ վէպերով էլ ողջ տեղ չը թողեց հայ գիւղական իրականութեան մէջ։ Աղայեան իր յիշողութիւններով և յօդուածներով սևացրեց շատերին։ Պարո-

digitised by A.R.A.R.@

նեան էլ բան չը մնաց, որ չը ծաղրեց հայութեան մէջ։

Այնուհետև Նամակագիրը անցնում է ժամանակակից երիտասարդ գրողներին և շարունակում է նոյն ուղղութեամբ պախարակել նրանց գրիչները։

«Ո՞ւմ համար է այս բոլորը, բացականչում է Նամակագիրը։ Մենք մեր պակասութիւնները լաւ գիտենք, դուք ուրիշ բան ասացէք։ Ինչո՞ւ ենք մինչև այժմ մենք մեզ խայտառակել և ինչո՞ւ ենք մեր պակասութիւնների մասին խօսում։ Դա միթէ մի զէնք չէ մեր դէմ, մի նիւթ չէ մեր պատուասիրութեան դէմ ուղղված»։

Խաչիկեանը ձանձրանում էր ընթերցանութիւնից, բայց և այնպէս շարունակեցինք կարդալ նամակը մինչև վերջ։

—Վերջապէս, բացականչեց նա։ Այդ բոլորն էլ հին ծամծմված առարկութիւններ են, վաղուց դէն դրված դատողութիւններ։ Ձանձրալի է։

—Այո, ճիշդ է, նկատեցի ես, բայց այդպիսի առարկութիւնները և դատողութիւնները ժամանակ-ժամանակ հանդէս են գալիս, կարծես դիտմամբ, որպէս զի…

—Որպէս զի, վրա բերեց Խաչիկեանը, հասարակութիւնը նորից վստահութեան քուէ տայ իր թէ անցեալ և թէ ներկայ գործողներին։ Ինչո՞ւ չէ Նամակագիր պարոնը նայում իր շուրջը։ Իր բնակած տեղում, Պարսկաստանում, արդէն իրագործված է իր իդէալը. այնտեղ ոչ մի քննադատութիւն, ոչ մի կասկած, ոչ մի մերկացում, ոչ մի մտքի պայքար չը կայ։ Միթէ բոլոր աշխարհը, սկսած Նեվայի ափերից մինչև

digitised by A.R.A.R.@

Սենայի և Թեմզայի ափերը, մինչև Եապոնիայի ափերը, որ գնում է ինքնաքննութեան և ինքնաուսումնասիրութեան ճանապարհով, միայն մի մեծ սխալ է անում։

Խաչիկեանը լռեց, փոքր ինչ քայլեց սենեակում և յանկարծ ինձ դիմեց իր յիշողութիւններով ուսանողական երկու ընկերների մասին։

—Ինչո՞ւ յիշեցիր Աղօցեանին և Մատուռեանին, հարցրի ես, ինչ կապ ունեն նրանք ներկայ նամակի հետ, ինչ առնչութիւն ունի նրանց ծիծաղը այստեղ դրված լուրջ հարցերի հետ։

—Բանը ծիծաղի և լրջութեան մէջը չէ, բացատրեց Խաչիկեանը, այլ երևոյթի բնաւորութեան։ Եթէ Աղօցեանի ծիծաղը ուշացած ծիծաղ էր, այնպէս էլ այս նամակագրի դատողութիւնները շատ ուշացած և հնացած են։ Եթէ Մատուռեանի հեհռոցները միայն աւելորդ կրկնութիւններ էին, նոյնն էլ այս տեսակ դատողների առարկութիւններն են։ Նամակագիրը անկասկած լուրջ նպատակներ ունի և ամենեւին ծիծաղի մասին չէ մտածում, բայց նա շատ է յետ մնացել, շատ քիչ ծանօթութիւն ունի թէ ընդհանուր և թէ մասնաւորապէս մեր զարգացման պատմութեան հետ։ Սակայն ես եթէ կատակ անէի նամակագրի հետ, նրան մի հարց կը տայի։

—Ի՞նչ հարց, հետաքրքրվեցի ես։

—Ահա ինչ, ասաց Խաչիկեանը։ Եթէ բացասելը, քննադատելը և պախարակելը լաւ չէ, ինչո՞ւ նա, այդ նամակագիրը, նոյնը անում է մեր գործողների վերաբերութեամբ և այն, ինչով ժողովուրդը այժմ պարծենում է, նա ուզում է ոչնչացնել։

digitised by A.R.A.R.@

Խաչիկեանը ծիծաղեց և սկսեց դարձեալ քայլել։ Մենք խօսեցինք մի շարք հարցերի մասին։

—Այդ այդպէս է, ասացի ես, բայց իրողութիւնը մնում է իրողութիւն և Մաստուեանի ծիծաղի նման հինը կրկնվում է, հին տարկութիւնը և դատողութիւնը դարձեալ ձեր առաջն են դրվում։

—Ես միայն մի բան գիտեմ, ասաց Խաչիկեանը, և այս իմ գիտեցածը։

Խաչիկեանը սեղմեց իմ ձեռքը և տուեց բարեկամական համբոյր։

—Ուսանողութեան ուխտը թող քաջալերի մեզ։ Ձեզ հետ է ձեր ընկերը։

Խաչիկեանը հեռացաւ։

—

Անցել է մի շաբաթ։ Նորից նստած սեղանի առաջ կարդում եմ զանազան նամակներ։ Ուրախ և տխուր տրամադրութիւններ յաջորդում են միմեանց։

Որքան հաճելի է կարդալ գաւառական խուլ անկիւններից գրված նամակները։ Երկիրը և ժողովուրդը մեծ ու փոքր չափով արտայայտված են նրանց մէջ։ Անկեղծութիւնը և մտերմութիւնը թափվում են ձեզ։

Ահա և ուրիշ նամակներ։ Կան հետաքրքրականներ, բայց կան և անհասկանալիներ։ Շուռ եմ տալիս ձեռքերումս, ուզում եմ նրանցից օգուտ քաղել գործի համար, բայց չեմ կարողանում։

Իսկ ես ցանկանում էի այսօր իմ «Մանրանկարի» նիւթը վերցնել նամակներից, նրանց մէջ գտնել կեանքի և նրա բնորոշ արտայայտութիւնների պատկերներ և գծեր։

—

digitised by A.R.A.R.@

Ի՞նչ են եղել իմ «Մանրանկարները»։

Կեանքի և նրա արտայայտութիւնների նկարագրութիւններ։

Ես կանգ եմ առել այն գծերի և երևոյթների վրա, որոնք ունեցել են հասարակական նշանակութիւն։ Նրանց մէջ պատկերացել է մեր հիմնարկութիւնների և գործողների ընթացիկ կեանքը բնորոշ երևոյթներով, որոնք կազմել են օրւայ չարիքը։

Նիւթը առել եմ ինձ սեփական տպաւորութիւնները, անմիջական դիտողութիւնը, մարդկանց պատմածը, նամակների հաղորդածները. այն ամենը, ինչ որ ցոլանում է իր մէջ կեանքը և նրա արտայայտութիւնները։

Նիւթը անսպառ է, որովհետև անսպառ է կեանքը։

Անկատար հարկաւոր են և խոշոր նկարագիրներ, ընդարձակ ծաւալով ուրուագծեր, սրտի զեղմունքների և հնչիւնների նուագներ։

Կեանքի արտայայտութիւնները բազմազան են և նրանց նկարագրութիւններն էլ ընդունել են մի շարք ձևեր։

«Մանրանկարը» ցանկացել է անել այն, ինչ որ կարող էր իր շրջանակում։

digitised by A.R.A.R.@

CLXVIII

(9 նոյեմբ. 1903 թ., «Մշակ» № 247)

Իմ ճանապարհորդութիւններից մէկի ժամանակ Արաքսի ափերում, քրդերի մէջ, ես նկատեցի մի քանի երիտասարդ կանանց և աղջիկների ոչ քրդական զգեստներով։

—Ովքե՞ր են այս հիւրերը, հետաքրքրվեցի ես, որտեղից են եկել։

—Ո՞ր հիւրերը, հարցրին ինձ քրդերը։

—Ահա այս օտար զգեստով հագնուածները բացատրեցի ես։

—Դրանք մեր քրդուհիներն են, միայն թէ հայի շոր են հագել։ Ժամանակը փոխվել է և փոփոխվում է։ Մեր քրդուհիները սկսել են գլուխ բարձրացնել և միշտ էլ մեզ համար օրինակ են բերում հայ կանանց ու աղջիկներին։ Սկսել են հայ կանանց մէջ ընդունված զարդեր գնել, հիւրասիրութեան ձեւեր իւրացնել և մեզնից պահանջում են աւելի մեղմ և քաղաքավարի վարվեցողութիւն։ Մենք տղամարդիկս էլ սկսել ենք դութան բանեցնել հայերի նման և սովորում ենք երկրագործ դառնալ։ Ուզես-չուզես՝ ընդունում ենք հայի նիստ ու կացը։

Այս փոփոխութիւնները, որոնց մասին խօսում էին քրդերը, դեռ մեծ չէին օտարի համար և աչքի շատ չէին ընկնում չափազանց

digitised by A.R.A.R.@

սուր կերպով, բայց քրդերի համար նրանք շատ նկատելի էին։

Քրդերի կուլտուրական հարևանները հայերն էին և նոր կեանքը մտնում էր քրդերի մէջ հայերի միջոցով։

—

Մի ուրիշ անգամ ես ներկայ էի նոյնանման դէպքի Կարսի գիւղերի շրջանում, բայց ոչ քրդերի, այլ հայերի մէջ։

Հայ գիւղացին ձեռք էր բերել ֆուրգօն, խոտահարքում գործում էր նոր տեսակի մանգաղ, ինքը գիւղացին հագել էր երկար կօշիկներ, աղջիկների մէջ կային նոր տեսակ հագնուածներ։

—Մեր հարևան ռուսներից օրինակ վերցրինք, բացատրում էին ինձ։ Մերը ու նրանցը շատ բաներում չէ բռնում, բայց այն, ինչ որ օգտաւէտ է ու յարմար, ինչո՞ւ չը վերցնենք։

Գիւղացիները քննութեան ենթարկեցին լաւ և վատ կողմերը թէ իրանց կեանքի և թէ ռուս հարևանների նիստ ու կացի մէջ։

—

Գանձակի գաւառում գտնվող Զարդախլու գիւղում ինձ հետաքրքրեցին այն փոփոխութիւնները, որոնք առաջ էին եկել նրանց նիստ ու կացի և տնտեսութեան մէջ։

—Այո, կան բաներ, որ փոխել ենք, բացատրեցին գիւղացիները։ Օգտվել ենք մեր հարևաններից։

Գիւղում գործում է եւրոպական գութան, որ արդէն ընդհանրացել է։

—Օրինակ վերցրինք գերմանական գիւղերի, Աննենֆելդի և Ելենենդօրֆի բնակիչներից, պատմեցին գիւղացիները։ Բայց այժմ մենք

digitised by A.R.A.R.@

ինքներս ենք շինում գութանները, մեր գիւղերում կամ սեփական վարպետներ։

Այդ գիւղում շատերը ազնուացրել են իրանց ոչխարների տեսակը և պահում են սպանիական մերինոս ոչխարներից։

—Օրինակ վերցրինք, յայտնեցին գիւղացիները, մեր հարևան դուխոբորներից, որոնք պահում են մերինոսներ։

Զարդախլուի գիւղացիները սկսել են եզները փոխարինել ձիերով, տները ծածկել կղմինդրով և նիստ ու կացի մէջ մտցնել մի շարք փոփոխութիւններ։

—Մի բան վերցրել ենք, բացատրում էին նրանք, գերմանացիներից, մի ուրիշը դուխոբորներից, մի երրորդը քաղաքի հայերից։

—

Մի անգամ ես այցելեցի մօլօկանների մի գիւղ, որ ընկած է մեր երկրի խուլ անկիւններից մէկում։ Դա Բազարչայ գիւղն է Զանգեզուրի գաւառում, Սիւնիքի մասում։

Մօլօկանները մտցրել են փոփոխութիւններ իրանց տնտեսութեան մէջ, օրինակ վերցնելով տեղացիներից։

—Մենք նկատեցինք, ասացին նրանք, որ այստեղ պէտք է հետևենք հայերի և թուրքերի տնտեսութեան մի քանի ձևերին, որպէս զի օգուտ ունենանք մեր աշխատանքից։

Մօլօկանները սկսել են կթել ոչխարներին և պանիր պատրաստել տեղացիների նման, ձիերի հին տեսակը փոխել են Կովկասի պահանջների համեմատ և աշխատում են հեծնելու ձիու տեսակը ազնուացնել։ Նրանք սկսել են շինել տաք գոմեր, ինչպէս ընդունված է հայերի և թիւրքերի մօտ։

—

digitised by A.R.A.R.@

Ես ներկայացրի մի շարք նկարագիրներ։ Այժմ դնենք դրանց կողքին այն ախուր տեսարանները, որոնք տեղի ունեցան անցեալ տարի Ատրպատականում, երբ պարսիկ ամբոխը գրգռված էր բելգիացիների և ուրիշ եւրոպացիների դէմ։

—Մենք չենք ուզում ֆրանկների կարգերը, աղաղակում էր ամբոխը, չենք ուզում օտար նիստ ու կացը, մենք չենք ընդունում պարսկականից դուրս ուրիշ ոչ մի բան։

—

Հազիւ վերջացրել էի այս նկարագիրները, որ սենեակիս դուռը բացվեց։

Իմ բարեկամ Խաչիկեանը ներս մտաւ։

—Ինձ փոքր ինչ օտարոտի թուաց ձեր անցեալ «Մանրանկարը», յայտնեց նա։

—Ի՞նչ կողմից, հարցրի ես։

—Ինձ այնպէս թուաց, յայտնեց նա, թէ դուք վերջացրել էք «Մանրանկարները»։ Դուք ասում էք, որ նիւթը անսպառ է, ինչպէս կեանքն է անսպառ։ Ուրեմն։

—Այո, պատասխանեցի ես, բայց պատուէրներ եմ ստացել նոր նկարագրական շարքերի՝ պատկերների, տեսարանների, ուրուագծերի, ստուերագծերի և դեղանկարների։ Կը փորձեմ, նոր նկարագրական ձևերով հանդէս գալ։

—Իսկ այսօր ինչ էիք անում, հետաքրքրվեց Խաչիկեանը։

—Այսօր օգտվեցի պատրաստ թղթերից ու պատառներից և ներկերի մնացորդներից մի քանի գծեր ներկայացնելու։

Ես կարդացի վերև յիշատակած նկարագիրները։

Խաչիկեանը հետաքրքրվեց և գտաւ նրանց ժամանակակից։

digitised by A.R.A.R.@

—Այդ նկարագիրների համախումբը պարզում է մի հայեցակէտ, բացականչեց Նա։

—Ես ենթադրում եմ, նկատեցի ես, որ մենք մի և նոյն հայեցակէտն ունենք երևոյթների իմաստի վրա։

—Անշուշտ, վրա բերեց Խաչիկեանը։ Ազգերը և ժողովուրդները պէտք է օգտվեն միմեանցից՝ լաւը, լուսաւորը, ազնիւը և օգտաւէտը փոխ առնելու համար։

—Անկասկած։

—Եթէ պարսիկը կը հերքէ եւրոպական գաղափարները, հէնց այն պատճառով, որ նա թըշնամի է բելգիացուն, անգլիացուն, ռուսին, ֆրանսիացուն կամ նոյն իսկ հային, այն ժամանակ նա միայն իրան կը վնասէ։ Եթէ քիւրդը, թշնամանալով հայի հետ, կը մերժէ այն լաւ բաները, ինչ որ նա ստացել է հայի հարևանութեան միջոցով, նա վնասած կը լինի միայն իրան։ Եթէ հայը կը հերքէ եւրոպական լուսաւորութիւնը, որովհետև դա օտար է, նա վտանգի ենթարկած կը լինի միայն իր բարգաւաճման խնդիրը։

—Այո, նկատեցի ես, եւրոպականութիւնը հերքել՝ դա նշանակում է զարգացումը հերքել։ Ազգեր և ժողովուրդներ պարտաւոր են միմեանցից փոխ առնել այն ամենը, ինչ որ լաւ է։ Լաւը և ազնիւը պատկանում են և պէտք է պատկանեն ամբողջ մարդկութեան։

—

Այս տրամադրութեամբ ես գնում եմ վերջակէտ։

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/31 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@